


6842

ՅԻՍՈՒՍԻ
ԿԵԱՆՔԸ



28 [Հիւռու]
P- 17



V.R

220
660-ԲԿ

ՔԸՄԱԼԵՑՆՅ Ս. ԴՊԻՐ
Կրօնուայց Թիֆլ. II առեւոր. դպրոցի

ՅԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔԸ

ԿՐՈՆԻ ԴԱԱԱԳԻՐՔ

Ժխակ. դպրոցների Ե. տարրուայ
եւ

միջն. դպրոցների Դ. դասարանի համար

220
662-ԲԿ

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

ԹԻՖԼԻԶ

Տպարան «ՀՊՕԽԱ» Մուղէյսկի պերէու. № 8
1914

29.08.2013

2 NOV 2009

28 [zhuŋku]

~~4-17~~

ԳԱՄԱԼԵԱՆՑ Ս. ԴՊԻԲ
Կրօնւանց Թիել. II առեւտ. դպրոցի

ՅԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔ

ԿՐՈՆԻ ԴԱՍՏԻՐՔ

ծխակ. դպրոցների Ե. տարուայ
իւ

միջն. դպրոցների Դ. դասարանի համար



የኢትዮ

Տպարան «ՀՊՕԽԱ» Մուգէյսկի պերեուլ. № 5
1914

Ազնուամեծար պարոն

Քամալեանց շնորհունակ
Սարգիս Ղալրին

Նորին Վեհափառութեան Դիւանը յունիսի 23-ի
№ 915 զրութեամբ յայտնում է, որ Թոյլատրուում
է տպագրել ձեր կազմած «ՅԻՍՈՒԽՍԻ ԿԵԱՆՔ» կրօնի
դասագիրքը։

Առաջնորդ Մեմին Մեսրոպ Եպիսկոպոս
№ 1119

Ա յունիսի 1914 թ. Թոյլիս.

ԱՊԵՖՍԱՆԴՐ

ՄԵԼԻՔ ԱԶԱՐԵԱՆՑԻՆ

Խորին յարգանքով

նուիրում է

ՅՈՐԻՆՈՉԸ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Մեր «Մարգարէներ» դասագրքի նախաբանում շեշտել էինք հետեւեալը. «Որպէսզի կրօնի դասի միջոցով աշակերտները կարող լինեն Յիսուսի դէմքը ճիշտ ըմբռնել, անհրաժեշտ է, որ նրանք դեռ Յովհաննէս Մկրտչին շըհասած ծանօթանան Աստծու արքայութեան առաջին կարապետներին—մարգարէներին, նրանց գրածների ընտիր կտորները վերլուծութեան ենթարկելով դասարանում»:

Յիսուսի կեանքն ու գործունէութիւնը լրումն է բոլոր մարգարէութիւնների: Այդ հասկանալու համար հարկաւոր է որոշ հասունութիւն աշակերտների կողմից: Սովորաբար մեր գպրոցներում նոր Ուխտը մանրամաս անցնում ու վերջացնում են Բ. դասարանում, բայց հազիւ թէ այդ դասարանի փոքրահասակ մանուկները կարող լինեն վերլուծել Յիսուսի արտայայտած մտքերը, ինչպէս հարկն է: Եթէ շատ շատերը դպրոցն աւարտում են առանց Յիսուսի վարդապետութեան ի մօտոյ ծանօթ լինելու, անշուշտ վերոյիշեալ հանգամանքի հետեւանքն է: Այդ մանկավարժական սխալն ուղղելու համար պիտի նոր Ուխտը դասընթաց դարձնել աւելի չափահաս աշակերտների համար. ամենայարմարն է Դ. դասարանը, որի սաներն ընդհանուր առարկաներից բաւականաչափ պաշար ունենալով կարող կըլինեն Աւետարանից վերցրած նիւթը պատմական-բարոյական կողմից լաւ վերլուծել և կարևոր եղբակացութիւններ հանել: Յիսուսի կեանքի համար ամենալաւ դասագիրքը նոր Կտակարանն է, բայց այժմեան հանգամանքներում աշակերտների ձեռը գրաբառ Աւետարան տալն անհնար է: Դժբաղ-

Դարար մինչև օրս էլ Ս. էջմիածինը աշխարհաբառ թարգմանած նոր Կտակարան չունի:

Ներս. դպրոցում (1903—07 ուս. տ.) պաշտօնավարելիս կազմել էինք կրօնի դասերի ամփոփումներ, Դրանք հիմնայեցին կազմելու ներկայ աշխատութիւնը: Աւետարանիների համապատում չենք հիւսել, այդ ձևը համարելով աշակերտների համար ապարդիւն: Մեր ցանկութիւնն էր դասարանում աշակերտներին պահել հետախուզող դերի մէջ, որ դասի նիւթին վերաբերող համանման գլուխներն ու տները գտնեն միւս աւետարանիչների մօտ ու վերլուծելով վիճաբանութեան առարկայ դարձնեն: Դասարանական այդպիսի աշխատանքը, մեր կարծիքով, ամենաուղիղ ճանապարհն է որոշ եղակացութիւններ հանելու համար: Այդ ձևով ձեռ բերած բարոյական սկզբունքներն իրեւ անկապտելի սեպհականութիւն պատանին իրա յիշողութեան մէջ հասցնում է մինչև խորին ծերութիւն:

Նիւթի վերլուծութիւնը դիւրացնելու համար ամեն մի զլուխ բաժանել ենք հատուածների: Հատուածի սկզբում չակերտների մէջ դրել ենք աւետարանչի խօսքերը աշխարհաբարի վերածած, ապա պատմական տեղեկութիւններն ու բացարութիւնները շատ հալիր: Իւրաքանչիւր գլուխ վերջանում է ամփոփումով: համեմատութեան համար նշանակուած են միւս աւետարանիչների համանման բովանդակութիւն ունեցող գլխների ու աների թուահամարները:

1914 թ. գետըար
Թէֆլու:

Քամ. Ս. դպիր

1. ՅՈՎՀԱՆՆԵՍԸՑ—ՎԵՐԶԻՆ ՄԱՐԳԱՐԵՒ

Ա. Աստծու արքայութիւն: Ապաշխարութիւն: «Յիսուս Քրիստոսի, Աստծու որդու աւետարանի սկիզբն այս է, ինչպէս գրուած է մարգարէների ձեռուկ. «Ահա առաքում եմ իմ հրեշտակին քո առջեւից, որ նախապատրաստի ճանապարհները քո առջեւից, որ նախապատրաստում ձայն է լսում—պատրաստեցէք Տիրոջ ճանապարհները և ուղեցէք նրա շաւիդները»: Ահա եկաւ Յովհաննէսը անապատ, յորդորում էր ապաշխարել, մեղքերը քաւել և մկրտուել: Նրա մօտ էին խարել, մեղքերը քաւել և մկրտուել: Նրա մօտ էին գնում համարեա ամբողջ Հրէստան աշխարհը, Երուսաղէմի բոլոր բնակիչները. Նրանից մկրտում էին Յորդանան գետում, առաջուց խոստովանելով իրանց գործած մեղքերը: Յովհաննէսի հագուստն էր ուղտի բրդից և մէջքի գօտին մաշկից, ուտելիքն էր մարտի վայրի մեղք: Քարոզելիս ասում էր. «Ապաշխարեցէք, որովհետեւ մօտեցել է երկնքի արքայութիւնը»:

(Մարկ. Ա. 1—6. Մատթ. Գ. 2):

Հին մարգարէների ասութեամբ, Եհովան իրեւ սուրբ, արդար և դթուտ Տէր, Դաւթի տնից պիտի յարուցանէր մի արդարագատ թագաւոր, Խօսայէլի հետ նոր ուխտ կուելով իրա օրէնքը քարէ տախտակների փոխարէն պիտի գրէր նրա զաւակների սրտերի մէջ: Ժողովուրդը ապրէր բարօր վիճակում, ազատ՝ օտարի լծից: և բոլոր ազգերը պիտի զարին երուսալէմից բան ուսանելու:

Այդ խոստումները կըկատարուէին ան ժամանակ, երբ Խօսայէլն էլ իրա կողմից որոշ պայմաններ կատարէր, այ-

սինքն անօրէն ճանապարհով գնալը թողնէր, իրաւազուրկ այրիներին, տկար որբերին չընաըստահարէր, գողութիւնից, սպանութիւնից, շնութիւնից ձեռ վեր ցնէր:

Հրէաները որքան աւելի էին հալածանք ունեղութիւն կրել այլազգիներից, այնքան աւելի սրտանց էին ապաւինել Եհովային. անվհատ հոգով հասել էին մինչև Հերովդէսի օրերը ու հաստատ յոյս ունէին, որ երուսաղէմը կորցրած փառքը շուտով յետ կըստանայ: Նրանք ոգիորեւում էին լըսելով երկնքի արթայութեան մերձենալու և ակնկալած Մեսիայի ծնուելու մասին. դա իորտակելու էր օտարի լուծը և իրանով նոր գարագութ սկսելու իսրայէլի պատմութեան մէջ:

Հերովդէսի օրով քարոզում էր վերջին մարգարէն—Յովհաննէսը, Զաքարիայի և Եղիսարէթի որդին: Նա դէմ չէր ժողովրդի ակնկալութեան, սակայն նրան Տիրոջ (Եհովայի) երևալու օրը թուում էր գատառտանի օր, որի համար հարկաւոր էր նախապատրաստուել: Նա ժողովրդին չէր գրգռում, որ կրիւ սկսի հոռմայեցոց ու այլոց դէմ, այլ մեծ եռանդով յորդորում էր ապաշխարել, մտածողութիւնն ու գործողութիւնը ազնուացնել, Աստծու արքայութեան գալուստն արագացնել: Նրա ասելով, Աստծու արքայութիւնը կըդայ այն ժողովրդի մօտ, որ մաքուր ձեւների հետ կունենայ և մաքուր սրտեր, այսինքն արտաքինի հետ նաև ներքին մաքութիւն: Տիրոջ օրուայ գալստեան վրայ նա իրաւունք ունի ուրախանալու, ով նորոգած սիրտ կունենայ:

Բ. Յովհաննէսի տուա՛ խորհուրդները

«Ժողովրդի միջից հարցնում էին Յովհաննէսին և ասում. «Ի՞նչ անենք այժմ, որ լաւ լինի: Նրանց պատասխանում էր. «Ով երկու հանդերձ ունի, թող մէկը տայ չունեցուին, ով աւելորդ կերակուր ունի, նա էլ այդպէս վարուի: Մաքսաւորները գալիս էին մկրտուելու, հարցնում էին. «Վարդապետ, մենք ի՞նչ անենք»: Նրանց պատասխանում էր. «Ի՞նչ որ օրէն-

քով հրամայած է, նրանից աւելի մաքս մի պահանջէք» Զինուորները մօտենում հարցնում էին և ասում. «Մենք ի՞նչ անենք»: Նրանց պատասխանում էր. «Ոչ ոքի վրայ մի բռնանաք, զբարարտելով ոչ ոքի մի վասէք, բաւականացէք ձեր թոշակներով»:

(Պուկ. Գ. 10—14):

Ժողովրդի զանազան դասակարգերից շատ անձինք կամենալով բարոյական մաքրութիւն ձեռ բերել, գնում էին Ցովհաննէսին խոստովանում իրանց գործած մեղքերը: Նրա ապաշխարութեան քարողներին ունկնդրողները ցանկանում էին նոր մարդիկ դառնալ և աշխատում էին մաքուր լինել իրանց խղճի ու Աստծու առաջ:

Գ. Սալուկեցիք, փարիսեցիք.

«Յովհաննէս տեսաւ, որ սակուկեցիք ու փարիսեցիք էլ եկել են նրանից մկրտուելու, գարձաւ նըրանց ասեց. «Իժերի ծնունդներ, ովք խորհուրդ տուեց ձեզ փախչել այն ցասումից, որ գալու է: Զուր էք պարծենում, թէ Աբրահամ հայր ունէք. հաւատացնում եմ ձեզ, Աստծուած կարող է այս քարերից ևս Աբրահամի ժառանգներ յարուցանել: Ահա տապարը դրած է ծառերի արմատի մօտ, նրանցից որը բարի պտուղ չի բերիլ, կը կտրուի և կը ակը կը գցուի»:

(Մատթ. Գ. 7—10):

Թորան—Օրէնքը հասկացողները, մեկնողները կոչւում էին դպիրներ, օրէնսդէտներ: Դրանք մեծ հեղինակութիւն ունէին ժողովրդի աչքում, զրանց մեկնածը տարածողներն ու գործադրողներն էին փարիսեցիք, իբրև աւանդապահ հրէաներ: Սալուկեցիք կազմում էին բարձր դասակարգը. քահանայապետները միայն նրանց միջից էին ընտրում, գրաւոր Թորայից դուրս ոչ մի աւանդութիւն կամ մեկնաբանութիւն չէին ընդունում դպիրների կողմից: Դործնա-

կան մարդիկ էին, բարձր պաշտօններն իրանց ձեռին պահելու համար հոռմատեցոց հետ միշտ լաւ յարաբերութեան մէջ էին: Այդ էր պատճառը, որ մեսկական ակնկալութեան վրայ ուշ չէին դարձնում, բայց հրէայ ժողովրդին իրանց դէմ չըգրգուելու համար փարիսեցոց հետ որոշ կէտերում համերաշխ էին գնում: Այդ երկու կուսակցութիւնները պարծենում էին, որ Աքրահամից են սերուած, Եհովայի ընտրեալ ժողովուրդն են, տաճար ունեն, Մովսէսի գրած օրէնքի պատուէրները կատարում են, բաւական է, էլ կարիք չունեն մկրտութեան համար նախապատրաստուելու: Ուստի Նրանք Յովհաննէսի հայեացքով նման էին օձերին, որոնք արտաքուստ փայլուն են, բայց ներքուստ լի մահաբեր թոյնով:

Դ. Յովհաննէս եւ Մեսիա.

«Հրէայ ժողովուրդն սպասողական դրութեան մէջ էր, տմենն էլ իրանց սրաերում խորհում էին Յովհաննէսի վրայ. «միթէ սա է լինելու Քրիստոսը»: Յովհաննէսը պատասխանում էր ամենին ասելով. «Ես ձեզ մկրտում եմ ջրով, բայց ինձնից աւելի զօրաւորը գալիս է, որի կոշիկները հանելուն ես արժանի չեմ: Նա կըմկրտի ձեզ սուրբ հոգով և կրակով: Հեծանոցը ձեռին պիտի սրբի իրա կալը, ցորենը ժողովելու է շտեմարանները, իսկ յարդն այրելու անշէջ հրով»: (Ղուկ. Գ. 15—17),

Յովհաննէսն իրա անձի մասին շատ համեստ կարծիք ունէր, չընայած նրա վաստակած մեծ հեղինակութեան, Համոզուած էր, որ ինքն անզօր է երեմիայի գուշակած սրտերի ներքին փոփոխութիւնն առաջ բերել, ուստի ահեղ զատաստանի օրը յիշեցնելով սաստում էր, որ մարդիկ երկիւղից սկսն նոր կեանք վարել: Իրա մկրտութիւնը Զրի մկրտութիւն էր կոչում, որ միայն արտաքուստ է մարդում, դրա դէմ յիշեցնում էր կրակի մկրտութիւնը, որ զղացող-

ների սիրու պիտի մաքրի, իսկ անզիդ մեղաւորներին ու շընչացնի:

Ա. մ փ ո փ ո ւ մ.—Հրէաներն ինչ պայմաններ պիտի կատարէին Աստծու արքայուրեան զալուստն արագացնելու նամար, ի՞նչ ակնկալուրիններով էին ոգեւորւում նրեաները: Մեսիան ինչ պիտի աներ: Ո՞վ էր Յովհաննէսը, ինչ կենցաղ ուներ: Գլխաւորապէս ինչի վրայ էր շեշտում: Դիմողներին ինչ խորհուրդներ էր տալիս, ինչն էր զայրանսւմ սաղուկեցոց եւ փարիսեցոց վրայ: Ի՞նչ տեսակ մաքրուրին էր պահնջում Յովհաննէսը: Ի՞նչպէս էր լերաբերուում դեպի Մեսիան եւ դեպի նրա մկրտուրինը:

Համեմատութեան համար կարդալ Մատթ. Գ. 1—6, 11—12. Մարկ. Ա. 7—8, Ղուկ. Գ. 7—9,

2. ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Ա. Յիսուս մկրտուեց Յովհաննէսից.

«Այդ օրերին Յիսուս Գալիլիայի Նազարէթ քաղաքից եկաւ Յորդանան և մկրտուեց Յովհաննէսից: Եւ այն ժամին, երբ Զրից դուրս էր գալիս, տեսաւ երկինքը պատուուած և Աստծու հոգին աղաւնու կերպարանքով իջնում էր նրա վրայ: Զայն լսուեց երկը կընթից, որ ասում էր. «Դու ես իմ սիրելի որդին, քո կողմն է իմ հաճութիւնը»: (Մարկ. Ա. 9—11):

Յիսուս ապրում էր Նազարէթ քաղաքում իրա ծնողների մօտ: Յովհաննէսի քարոզների ու գործերի համբաւը տարածուել էր նոյնպէս Գալիլիայում: Շատերի հետ Յիսուսն էլ վերկացաւ, զնաց Յորդանանի ափը ու Յովհաննէսի քարոզութիւնը լսելով շատ հաւանեց: Նա էլ այն բաներն էր խօսում, ինչ որ իրա հոգու մէջ վազուց պտըտում էին: Յովհաննէսն ասում էր՝ մօտեցել է այն ժամանակը, երբ աշխարհի մարդիկ պիտի հասկանան, որ իրանք

հաւասար են, էլ իրանց մէջ բարձր ու ցածր չըկայ, բոլոր մարդիկ իրար հետ պիտի ապրեն սիրով ու քաղցրութիւնով: Յիսուս նոյնպէս որոշել էր թողնել ընտանեկան խաղաղ կեանքը, գուրս գալ նազարէթից ու գնալ իսրայէլի տան կորած ոչխարներին Աստծու արքայութիւնը քարոզելու: Իբրև նշան իրա ընտրած կոչումի, նա մկրտուեց Յովհաննէսից, որ նրա կարծիքով, առաքուած էր Աստծուց մարդկանց նոր կեանքի կոչելու:

Որովհետև Յիսուս մեծ գործի էր ձեռնարկում, ուստի կարիք ունէր նախապէս իրա մէջ ամփոփուել հոգին զօրացնել խոկալով ապագայ գործունէութեան մասին: Մկրտուելուց ետ քաշուեց Յուդայի (Հրէաստանի) անապատի հիւսիսակողմը, մի ապաւաժուտ լեռան վերեւ:

Ա. մ փ ո փ ո մ ն.—Յիսուս որտեղ էր ապրում: Ժողովուրդներն ինչո՞ւ էին Յօվհաննէսի մօտ զալիս: Յիսուսն ինչ արեց նրա քարոզութիւնը լսելիս: Ի՞նչ նշանակութիւն ունէր նրա մկրտութիւնը Յովհաննէսի ձեռովի: Յիսուս ինչո՞ւ քաշուեց անապատ: Ի՞նչպիսի հարցեր աւելի կըզբագեցնէին նրան:

Համեմատ. համար կարդալ Մատթ. Գ. 13—17, Ղուկ. Գ. 21—22:

3. ՅԻՍՈՒՍԸ ՆՈՐ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՔԱՐՈԶԻՉ

Ա. Քառորդութեան սկիզբը եւ աշակերտներ.

«Յովհաննէսի բանտարկութիւնից ետ Յիսուսն եկաւ Գալիլիա. քարոզում էր Աստծու Աւետարանը և ասում. «Արդէն լրացել է ժամանակը, հասել է Աստծու արքայութիւնը, ապաշխարեցէր և Աւետարանին հաւատացէք»: Երբ անցնում էր Տիբերիայի ծովի ափով, տեսաւ Սիմոնին և նրա եղբայր Անդրէասին, ուուկանները ձուլ էին զցել, որովհետև ձըկ-

նորսներ էին: Յիսուս ասեց նրանց. «Եկէք իմ ետեւից, ես ձեզ մարդկանց որսորդ կըդարձնեմ»: Նրանք շուտ թողին ուուկանները և գնացին նրա հետ: Փոքր առաջ գնալով Յիսուս տեսաւ Զեբեղիայի որդի Յակոբոսին և նրա եղբայր Յովհաննէսին: Նրանք նաև մէջ ուուկանները կարկատում էին. նրանց կանչեց: Նրանք շուտ թողին իրանց հօրը նաև մէջ վարձկանների հետ և գնացին Յիսուսի մօտ: Դրանք բեթսայիդացի էին»: (Մարկ. Ա. 14—21):

Յիսուս քառասուն օր անապատում պահեցողութեամբ մնալուց ետ դարձաւ Յորդանանի ափերը ու այնտեղից Գալիլիա: Նրա քարոզութեան տեղը Կափառնաումի մօտերն էր. քարոզութեան հետ սկսեց աշակերտութիւն կազմել. նրա առաջին հետևողները եղան ձկնորսները. Փիլիպոսը ոչ միայն ինքը հետեւց, այլ իրա ծանօթ Նաթանայէլ-Բարդուղիմէսին էլ համոզեց, որ գայ Յիսուսին աշակերտի:

Բ. Զայրացողը Ենթակայ է Աստծու դատաստանին.

«Լսեցիք, որ առաջուայ մարդկանց ասուեց, թէ սպանութիւն մի անիլ, որովհետև սպանութիւն անողը դատաստանին պարտական կը մնայ: Բայց ես ասում եմ ձեզ, ով որ զուր տեղ բարկանայ եղբօր վրայ, նա ևս պարտական կը մնայ դատաստանին: Նա որ իրա եղբօրը կասի յիմար (դատարկագլուխ), պատասխանատու է Մեծ ատեանի (Սինետրիօնի) առաջ, իսկ նա, որ իրա եղբօրը կասի մորոս (խելառ), նա պարտական է գեհենի կրակին»: (Մատթ. Ե. 21—22)

Մովսէսի դրած օրէնքով պատիժ կրում էին յանցանք և ոճիր գործողները: Այդպիսիներին անպատիժ չէր թողնում նոյնպէս հռոմայեցոց օրինագիրքը: Յիսուսի նոր արդարութիւնը չէր բաւականանում տիսուր հետևանքով, այլ

փհնտրում էր նրա պատճառը: Նրա հայեացքով շատ ոճիրներ գործւում են մարդու յուղուած, զայրացած միջոցին, ուստի զայրացողն էլ պիտի ենթարկուի նոյն դատաստանին, ինչի որ միայն մարդասպանն է ենթարկում: Վիրաւորական բառ արտասանելն անգամ Յիսուսի նոր արդարութեամբ նկատում է մի մեծ յանցանք:

Գ. Նախ հաշտուել եղջօր հետ, ապա զո՞յ մատուցանել.

«Եթէ սեղանի վրայ քո զո՞յը մատուցանելիս միտդ ընկնի, որ եղբայրդ որևէ խէթ ունի քո դէմ, թնդ քո զո՞յը սեղանի առջե, գնա դեռ հաշտուիր եղբօրդ հետ և յետոյ արի և քո զո՞յը մատուցիր:— Իրաւախոհ եղիր, մի կերպ հաշտութեան արի քո սոսիսի հետ վաղօրօք, քանի որ նրա հետ ճանապարհի վրայ ես (դէպի դատարան), չըլինի թէ ոսոսիը քեզ գցի դատաւորի ձեռը, դատաւորն էլ կահճի և ընկնես բանտ: Ճշմարիտ եմ ասում քեզ, բանտից դուրս չես գալ, մինչև վերջին նաքարակիտը (սև փող) չը ծախսես»: (Մատ. Ե. 23—26)

Յիսուսին հետեւ կամեցողը պիտի ցաւի, որ անկարող լինելով իրան զսպել, կոուել է մէկի հետ ու խոռվել: Այդքան խոր զգացողը պիտի աշխատի հաշտուել ու դրա համար առաջին քայլն ինքն անի:

Առհասարակ կեանքում գանգատաւորի համար խելացի ճանապարհն է զիջելն ու ներելը, քան գանգատ շարունակելը: Դերադասելի է, որ ամեն հնար գործ դնուի ու խանգարուած խաղաղութիւնը կրկին հաստատուի:

Դ. Մեղսալի ցանկութիւնը շնութիւնն է.

«Լսեցիք, որ ինձնից առաջ ասուեց՝ շնութիւն մի անիլ. բայց ես ասում եմ ձեզ՝ ով որ կինարմատի վրայ նայի ցոփ մաքով, արդէն նա շնութիւն ա-

բեց իրա սրտում: Եթէ աջ աչքը քեզ գայթակղեցնում է (վնաս է տալիս), հանիր և հեռացրու քեզանից. աւելի լաւ է անդամներից մինը կորցնել, քան թէ ամբողջ մարմնով ընկնել գեհենի մէջ»:

(Մատթ. Ե. 27—30):

Հին հրէաները ամուսնութեան վրայ նայում էին միայն իրաւունքի տեսակէտից և իրանց արգելքներով ապահովում էին տղամարդի իրաւունքները, ընդունելով կնոջը իբրև ապրանք, իբրև սեպհականութիւն: Սակայն Յիսուս ամուսնութիւնն ըմբռնում էր իբրև սրտերի ուխտ. ոչ ոքի իրաւունք չէր տալիս, որ իրա ցոփ հայեացքով պղտորի միամիտ կնոջ հոգին:

Երբեմն հիւանդը աջ աչքը հանել է տալիս ձախն ազատելու համար. կամ աջ ձեռը կտրել է տալիս ողջ մարմինը փրկելու համար. երկնքի արքայութեանը ձգտողի համար առաւել անհրաժեշտ է հրաժարուել սիրելի դարձած մի քանի սովորոյթներից, զուարձութիւններից, եթբ տեսնում է, որ նրանք իրա մէջ անհանդուրժելի ցանկութիւններ են ծնեցնում:

Ե. Կին արձակելը շնութիւնն է.

«Զէ որ ասուեց, ով որ արձակի իրա կնոջը, թնդ նրան տայ արձակման թուղթ, բայց ես ասում եմ ձեզ, ով որ իրա կնոջը կարձակի առանց պուընկութեան պատճառի, նա դրանով առիթ է տալիս նրան շնութեամբ պարագելու, իսկ ով որ արձակուած կնոջը կառնի, նա նոյնպէս շնութիւնն է ան ում»:

(Մատ. Ե. 31—32):

Հրէական ռաբբիները չափազանց գիւրացընել էին ամուսնալութիւններ: Յիսուս ընդհակառակ աշխատում էր կայուն զարձնել ամուսնական կապը: Եթէ մարդիկ կրքից դրդուած են կանանց արձակման թուղթ տալիս, զրանով նրանք սեղսակից են այն շնութեան մէջ, որ արձակուած

կանայք պիտի անեն: Յիսուսի գաղափարն էր, որ ամուսինների մէջ տիրէ վորսագարձ վստահութիւն ու հաւատարմութիւն:


Զ. Երդում ուժելու մասին.

« Դուք դարձեալ լսեցիք, ո՞ր ասուեց առաջուայ
մարդկանց՝ սուտ մի՛ երդուիլ և Տիրոջն արած եր-
դումդ պիտի պահես, բայց ես ասում եմ ձեզ՝ ամե-
նախն մի՛ երդուիլ, ոչ երկնքով, որովհետեւ Օստծու
աթոռն է, ոչ երկրով, որովհետեւ նրա ոտների պա-
տուանդանն է և ոչ էլ Երուսաղէմով, որովհետեւ մեծ
թագաւորի քաղաքն է։ Մի՛ երդուիլ և քո գլխով, ո-
րովհետեւ չես կարող մի մազ ճերմակացնել կամ թը-
խացնել. այլ ձեր խօսքը թող լինի—այսն՝ այս, և
ոչն՝ ոչ, որովհետեւ սրանից աւելին բղխում է չարից։

Երդուելը, երդում ուտելը հեթանոսութիւնից մնացած
բան է, երդուղի նպատակն էր Աստծուն ծառայեցնել իրա
կամքի համեմատ: Շատերն այս ըոպէիս էլ ասում են՝ որ
դուցս դադարկ նստեմ, եթէ սուտ խօսելիս լինեմ... Գլուխս
վկայ է, այսինքն զլուխս մեռնի, թէ սուտ ասելիս լինեմ
և այսն: Մարդիկ երդուելով ի չար են գործ դնում Աստծու
անունը. նրանք այդ միջոցին չեն դիմիլ, եթէ ճշմարտա-
սիրութիւնը նրանց մէջ նուազած չը լինէր: Երդուելը կը
վերջանայ, երբ մարդիկ անպայման ազնիւ, ճշմարտասէր
կրդառնան, ասած խօսքի տէրը կը մնան:

Է. Զարր շարոս մի՛ հատուցանիլ.

«Լսեցիք որ ասունց. աշըի տեղ աչք պիտի հա-
նել, ատամի տեղ ատամ, իսկ ես ասում եմ ձեզ,
չարը չարով մի հասուցանիլ։ Մինչև անգամ եթէ
մէկը ապտակ է խփում քո աջ ծնոտին, դարձրու-
նրան միւսն էլ։ Եթէ մէկը կամենայ քեզ դատաս-



ლ. Սիրեցէք ձեր թշնամիներին եւ եղէք երկնա-
լոր չոր որդիրը.

«ԶԵ՞ որ լսեցիք, որ ասուեց. սիրիք քո ընկերին և ատիր քո թշնամուն, իսկ ես ասում եմ ձեզ. սիրեցէք ձեր թշնամիներին, օրհնեցէք ձեզ անիծողներին. բարութիւնն արէք ձեզ ատողներին և աղօթքի մէջ յլշեցէք նրանց, որոնք ձեզ լկում են ու հալածում. Դրանով դուք կըլինէք որդիքը ձեր հօր, որ երկրումն է, որովհետև նա իրա արևի ճառագայթները տարածում է չարերի և բարիների վրայ և իրա անձեղ հաւասար կերպով թափում է արդարների ու մեղաւորների վրայ: Եթէ դուք միայն սիրէք ձեզ սիրող-

ներին, էլ ի՞նչ է ձեր առաւելութիւնը, չէ՞ որ մաքսաւոր ներն ու մեղաւորները նոյնն են անում։ Ուրեմն կատարեալ եղէք սիրոյ մէջ, ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է։ (Մատթ. Ե. 43—48)։

Հին ուխտի օրէնք գրողները կամ նրանց մեկնողները կարծում էին թէ հրէայի պարտականութիւնն է սիրել միայն արիւնակիցներին, ցեղակիցներին, իսկ այլազգուն տաել իբրև թշնամու, Յիսուս դէմ էր այդ հայեացքին, յոր դորում էր սիրել թշնամուն և նրա համար աղօթել, այսինքն վարուել ծնողների նման, որոնք աւելի շատ սիրում են այն զաւակին, որի պատճառով աւելի ցաւ ու հոգս են քաշել։ Բոլոր մարդիկ մի Հօր որդիք են, ուստի հարկաւոր է մի տեսակ աչքով նայել ու սիրել բոլոր մարդկանց։ Յիսուսի դրած այս բարձրագոյն զաղափարին ձգտելով մարդու կըդառնայ Աստծու կամակատարը և հոգեպէս նրա որդին։

Ա. մ փ ո փ ո ւ մ. — Յիսուս անապատից նոր դարձու։ Առ նացին քարոզի իմաստն ինց էր, Ա՞վեր եղան նրա առաջին աշակերտները։ Ինչի մէջ էր երեսում Յիսուսի նոր արդաշուրինը։ Ինչն բարկանալը դատապարտելի էր համարում։ Ինչպէս էր ըմբռնում «մի զնար» պատուիրանց։ Ինչ նոր հայեացք ունէր ամուսնուրեան մասին։ Երդուելն ինչի նետեանք է։ Ե՞րբ կը վերջանայ երդուելը։ Ինչն նա հակառակ էր վրէժինդրաւութեան։ Երկնաւոր Հօր որդիք դառնալու նամար վրէժինդրաւութեան։ Աստծու հիշտ իրազորձելի էր Յիմարդիկ ինց պիտի անէին։ Արդեօր հիշտ իրազորձելի էր Յիսուսի պահանջած նոր արդարութիւնը։

Համեմատ. համար կարդալ Մատթ. Դ. 12—22, Ղուկ. Զ. 27—36։

4. ԿԵՂԾ ԵՒ ՃՇՄԱՐԻՏ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Ա. Ողորմութիւն տալը.

«Յիսուս ասում էր. — զգոյշ եղէք ողորմութիւն անելիս. մարդկերանց առաջ մի տաք, որ չերևայ թէ

ցոյց տալու համար էք անում. այլապէս դուք վարձ չէք ընդունիլ ձեր Հօրից, որ երկնքումն է։ Երբ ողորմութիւն էք անում, կարիք չըկայ ձեր առաջփող փշել տալու, ինչպէս կեղծաւորներն են անում. Ժողովականների և հրապարակների մէջ մարդկանցից փառաւորուելու համար։ Ճշմարիտ եմ ասում ձեզ, նրանց վարձը հէնց այդ է։ Բայց երբ դուք ողորմութիւն անելիս լինէք, այնպէս արէք, որ ձեր ձախ ձեռը չիմանայ, թէ ի՞նչ է անում ձեր աջը, որպէսզի ձեր արած ողորմութիւնը գաղտնի մնայ։ Չեր Հայրը երբ տեսնի գաղտնապէս արածը, կըհատուցանի ձեզ յայտնապէս։ (Մատթ. Զ. 1—4)։

Յիսուսի ժամանակ բարիք անելը արտաքին գործողութիւն էր, որի միջոցով կամենում էին թէ Աստծուն հաճելի լինել և թէ մարդկանց առաջ բարեգործի անուն վաստակել. զբա համար հրապարակում էին բաժանում իրանց տուրքը, որ իրանց բարեգործութիւնն երևայ։ Յիսուսի հայեացքով այդ տեսակ բարեգործութիւնը միայն անձնասիրութիւն ու կեղծաւորութիւն է, հետևապէս անարժան բան Աստծու առաջ։ Անկեղծ սրտով բարութիւն անողը դրդուած է լինում կարեկցութեան զգացմունքից։ Երբ մէկը բարիքն անում է հոչակուելու, գովաբանուելու համար, էլ ապագայում Աստծուց վարձատրուելու յոյս չըպիտի ունենայ—հոչակ էր փափագում, արդէն ստացել է։ Ողորմութեան մէջ զլխաւորը տուրքի մեծութիւնը չէ, այլ զոհարեցող սրտի անկեղծութիւնը, որից բղխածը միշտ ազնիւ է։

Բ. Աղօթեցէք առանձին եւ շատախօսութիւնից զգոյշ կացէք.

«Երբ աղօթքի էք կենում, մի լինէք կեղծաւորի պէս, որ սիրում են ժողովարաններում, հրապարակների անկիւններում աղօթք անել մարդկանց երեա-

լու համար։ Ճշմարիտ եմ ասում ձեզ, հէնց այդ է նրանց վարձը։ Բայց երբ դուք աղօթել կամենաք, մտէք ձեր սենեակը, փակէք դռները և աղօթք արէք ձեր Հօրը ծածկապէս։ Հայրը, որ ամեն ծածուկ բան տեսնում է, կը հատուցանի ձեզ յայտնապէս։ — Աղօթելիս հարկաւոր չէ շատախօս լինել հեթանոսների նման, որովհետեւ նրանք կարծում են, եթէ շատ խօսեն, անպատճառ լսելի կը լինի նրանց աղօթքը։ Նըրանց օրինակին մի հետեւէք, որովհետեւ դուք գեռ չըլինդրած, ձեր Հայրն արդէն գիտէ, թէ ի՞նչ է հարկաւոր ձեզ։ (Մատթ. Զ. 5—8)

Փարիսեցիք աղօթելը դարձրել էին Աստծու հաճութիւնը վաստակելու միջոց։ Շատ և երկար աղօթելը բարեպաշտութեան նշան էր. որոշ ժամեր ունէին դրա համար. փառասէր փարիսեցիք այնպէս էին բերում, որ աղօթքի ուրոշ ժամին կանգնած լինէին բազմամբոխ հրապարակներում կամ փողոցի անկիւնում. և սկսում էին աղօթել բացողեայ, արձակ։ Ճիշտ աւանդապահ լինելու համար օրէնը 18 աղօթք պիտի ասէին։ Յիսուսի հայեացքով աղօթել նշանակում էր սրտով խօսել Աստծու հետ. ուրիմն որտեղ սիրտը խօսում է, այնտեղ աւելորդ է լեզուով շաղակրատութիւն անելը։ Անկիրթ զաւակները ծնողներին ձանձրացնում են իրանց ցանկութիւնը 100 անգամ լիշեցնելով, իսկ բարեկիրթները համոզուած են, որ ծնողները քայլ գիտեն թէ ի՞նչ է կարևոր իրանց, թողնում են նրանց կամքին, ինչպէս չաւ կը համարեն, այնպէս անեն։

Գ. Ճշմարիտ պաս պահելը.

Ենրք որ ծոմ էք պահում. կեղծաւորների պէս երեսներդ մի տրամեցնէք. նրանք ապականում են իրանց գէմքերը, որպէսզի մարդկանց ցոյց տան թէ ծոմ են պահում. Ճշմարիտ եմ ասում ձեզ. հէնց այդ է նրանց վարձը։ Բայց երբ դուք ծոմ պահելիս լի-

նէք, իւղով օծեցէք զլուխներդ, մաքուր լուացէք երեսներդ, որ մարդկանց շերեաք թէ ծոմ էք պահում, այլ գաղտնապէս յայտնի լինի ձեր Հօրը և ձեր Հայրը, որ ամեն ծածուկ բան տեսնում է, կը հատուցանի ձեզ յայտնապէս։ (Մատթ. Զ. 16—18)։

Հին ժամանակներից սկսած հրէաները պաս, ծոմ պահելիս սովորութիւն ունէին երեսները թթուացնել, գլխակախ, տրատում մնալ, որ ցոյց տան ամենին, թէ Աստծու ոիրուց այդպիսի զրկանք են յանձն առել. Դրա դէմ արդէն բողոքել էր գերութեան մեծ մարդարէն և ճշմարիտ պասը հասկացրել—անիրաւ տեղ բանտարկուածին ազատ թողնելը, հարստահարուածին բեռից ազատելը, քաղցածին իրահացից բաժին հանելը։ Յիսուս պաս պահելու համար էլ պահանջում էր խելացի չափաւորութիւն և մտածողութեան յստակութիւն, որ պահեցողութիւնն էլ մարդիկ միջոց չը գարձնեն իրանց անձի շահն ու հոչակը բարձրացնելու։ Երբ պաս պահելը նկատելի է մարդու գէմքին, դա դառնում է ինքնասիրութիւն, կեղծաւորութիւն։ Իսկական պասն այն է, երբ մէկը հրաժարում է սովորական վայելքներից ընկերին օգնելու, աղքատին կերակրելու, տնանկին ձեռ բըռնելու համար։

Ա. մ փ ո ւ մ.—Հրէաները բարեգործութիւնն ինչ նպատակով եին անում. ինչն նրապարակներն եին ընտրում ողորմութիւն տալու համար. Յիսուսի կարծիքով ողորմութիւնն ինչպէս պիտի տրուեր։ Փարիսեցիք աղօրքի միջոցով ինչի եին ձգուում. Աւանդապահներն օրական քանի աղօրք պիտի ասէին։ Յիսուսի հայեացքով աղօրել ինչ էր նշանակում. Հրէաները պաս պահելիս ի՞նչ եին անում. Մարգարէն ճշմարիտ պասն ի՞նչպէս պահելիս էր որոշել. Ծոմ պահելու համար Յիսուս ի՞նչ խորհութիւն էր տալիս։

5. ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻ ԲԱՐԻՔՆԵՐԻ ՈՒՂԻԴ ԳՆԱՀԱ-
ՏՈՒՄԸ

Ա. Սրտով, հոգով կուլ մի՛ զնաք զանծին.

«Յիսուս ասում էր.—մի ժողովէք ձեր գանձերը երկրի վրայ. այնտեղ ցեցը և ուտիճը կապականեն կամ զողերը ական փորելով կըգողանան, այլ ձեզ համար գանձեր ժողովեցէք երկնքում, ուր ոչ ցեց և ուտիճը կարող են ապականել և ոչ զողերը ական փորել և զողանալ:—Որտեղ որ ձեր գանձերն են, այնտեղ կըլինեն և ձեր սրտերը: Աչքը ձեր մարմին է, եթէ ձեր աչքը բարի է, ամբողջ ձեր մարմինն էլ լուսաւոր կըլինի, իսկ եթէ ձեր աչքը չար է, ձեր ամբողջ մարմինն էլ խաւար կըլինի: Այժմ, եթէ ձեր մէջ եղող լոյսը խաւար է, ինչքան վատթար կըլինի խաւարն ինքը:—Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել—կամ մէկին կատի ու միւսին կըսիրի, կամ մէկին կըմեծարի և միւսին կարհամարի: Միաժամանակ չէք կարող և Աստծուն ծառայել, և մամոնային:

(Մատթ. 9. 19—24):

Աստծու արքայութիւնը պահանջում է մարդու ամբողջ սիրտը. այդ պատճառով Յիսուս պախարակում էր նրանց, որոնք սրտով ու հոգով կուլ են գնում գանձին, նիւթականին: Գանձ ժողովելը միջոց է վայելուշ վիճակ ստեղծելու համար, բայց ապագայ վայելըների համար շարունակ գանձեր ժողովելը միջոցից գանձում է նպատակ և մարդը գանձերի ստրուկը: Զափազանց անկայուն են աշխարհի բարիքները, նրանց մի մասը մարդ իրա կենդանութեան օրով է վատնում, իսկ մահանալիս ձեռ է վերցնում ամեն բանից: Յիսուս կամենում էր ցոյց տալ, որ ընչասիրութիւնը մարդուս դարձնում է կոյր ու անտարբեր գէպի կեանքի ճշմարդիտ բարիքներն ու նպատակները՝ նրա խղճի ճրագը հանդի-

չում է, գանձամոլի համար աստուածսիրութիւնն ու ընկերսիրութիւնը այլևս առաջնորդող աստղեր չեն կեանքի ճանապարհին: Մամոնան իրա անյաղթելի ուժով մարդու ուղեղին, մտածմունքին այնպիսի ուղղութիւն է տալիս, որ բոլորովին ներհակ է գէպի Աստծու արքայութիւն զնացող ուղուն: Մարդս զգում է իրան կաշկանդուած. գժուարանում է միաժամանակ ծառայել և Աստծուն և մամոնային:

Բ. Հոգսեղով մի՛ պաշարուէց

«Յիսուս ասում էր.—ես ձեզ ասում եմ, անհանգիստ մի լինէք ձեր անձի համար, թէ ի՞նչ պիտի ուտէք, կամ ի՞նչ պիտի խմէք, նոյնպէս ձեր մարմինների համար թէ ի՞նչ պիտի հագնէք, չէ՞ որ անձն առաւել է քան կերակուրը և մարմինն առաւել է քան հանդերձը: Նայեցէք երկնքի թռչուններին, նրանք ոչ վարում են, ոչ հնձում են և ոչ շտեմարան են ժողովում, բայց ձեր երկնաւոր Հայրը կերակում էնրանց. չէ՞ որ դուք առաւել էք քան թէ նրանք: Զեղանից ով կարող է իրա հասակին մի կանգուն աւելացնել, ինչքան էլ չարչարուի:—Հանդերձի համար ինչու էք անհանդիստ լինում. Նայեցէք վայրի շուշանին, ինչպէս է աճում, ոչ ջանք է թափում և ոչ գործում: Հաւատացնում եմ ձեզ, Սողոմոնն ինքը իրա բոլոր փառահեղութեան մէջ չըհագաւ նրա նման մի բան: Եթէ Աստուած վայրի խոտը, որն այսօր կայ, վաղը հսոցի մէջ է ընկնելու, այսպէս է զարդարում, ինչքան առաւել ձեզ, այ թերահաւատներ: Այսուհետեւ մի անհանդստանաք (մեասրտիլ) և ասէք, թէ ի՞նչ ենք ուտելու, ի՞նչ ենք խմելու կամ ի՞նչ ենք հագնելու: Ուժովինետեւ այդ ամենը հեթանոսներն են խնդրում: Զերերկնաւոր հայրը գիտէ թէ այդ բաները ձեզ հարկա-

ւոր են: Ամենից առաջ խնդրեցէք Աստծու արքայութիւնը և նրա արդարութիւնը, մնացածը ձեզ կը տըրուի: Եյսուհետեւ անհանգիստ մի լինէք վաղուայ համար, որովհետեւ վաղն իրա համար հոգս կըքաշի, ամեն մի օր ունի իրա ցաւն ու նեղութիւնը»:

(Մատթ. Զ. 25—34):

Յիսուս դէմ չէ, որ ապրուստի մասին հոգանք. ձեռները ծալած նստողը քաղցած կըմնայ: Յիսուս պախարակում է այն հոգսը, որ գժբաղութիւնը, նեղ օրը դեռ չեկած մարդիկ վըսվըսում, լաց ու կոծ են անում: Հոգս քաշելն իրա օգուտներն ունի, բայց լըուելը, ջղային դառնալը մարդուց խլում է եռանդը այդ բոպէին, էլ զօրութիւնի լինում սրտով գործելու, վստահօրէն ստեղծելու: Բայց երկնքի արքայութեան քաղաքացին այլ հայեացք ունի, նա ասում է՝ երբ Աստուած չըվարող, չըհնձող թռչուններին կերակրում է և ծաղիկներին սիրուն զարդարում, ինչպէս անտես կանի մարդ արարածներին, որոնք կենսուրախ գործում են ու աւելի են հասկանում Արարչին, քան բնութեան միւս արարածները: Հարկ անկրաժեշտ է, հոգով ու մարմնով յարել երկնքի արքայութեան և աշխատել, որ երկրի վրայ Աստծու կամքը միշտ անխափան կատարուի:

Ա մ փ ո փ ո ւ մ.—Երբ մարդս սրտով, հոգով կուլ է զընում զանձին, ի՞նչ է դասենում նա: Յիսուս ինձն եր ասում քէ զանձեր մի ժողովէք: Գաճճ ունենալը մարդու համար միջն պիտի լինի թէ նպատակ: Ո՞վեր են երկնային զանձեր ժողովում: Ի՞նչպէս պիտի հասկանալ մի հոգալ ուտելիքի խմելիքի, հազնելիքի մասին: Յիսուս հոգալ բառի տակ մարդու որ յատկութիւնն եր պախարակում:

6. ՅիՍՈՒՍ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆԱՐԱՐ Զէ.

Ա. Ժառանգութեան վէճը

«Ժողովրդից մէկը Յիսուսին ասեց.—վարդապետ, իմ եղօրն ասա, որ ժառանգութիւնը հետո հաւասար բաժանի:—Այ մարդ, ասեց նրան Յիսուսը, ինձ ով դատաւոր կամ բաժանարար կարգեց ձեր վրայ:—Յետոյ գառնալով շրջապատողներին ասեց.—տեսէք և զգոյշ կացէք ամեն տեսակ ագահութիւնից, որովհետեւ ոչ ոքի կեանքը կախուած չէ նրա ժողոված հարըստութիւնից»:

(Ղուկ. ԺԲ. 13—15):

Ժառանգութեան առիթով ծագած կիւների առաջնաժմ առաջմ առնւում է կոտակի միջոցով կամ ժառանգութեան օրէնքով: Անրաւական կողմը դիմում է դատարանի օգնութեան: Հրէից մէջ անդրանիկ որդին Մովսէսի կարգադրութեան համեմատ ստանում էր հօր ունեցածի $\frac{1}{3}$ մասը, իսկ երկրորդ որդին ֆեացածը: Հոռմայեցոց օրէնքի համար այդ որոշումը պարտաւորական չէր, շատ հրէաներ ժառանգութեան վէճերը վերջացնելու համար դիմում էին նրանց դատարանին: Բայց Յիսուսի օրով հրէաներն ատում էին իրանց ձնշող հոռմայեցոց, չէին ցանկանում նրանց դիմել: Երկու հրէայ եղբայրներ կուռել էին, կրտսերը չէր կամենում Մովսէսի որոշած բաժնով բաւականանալ եկաւ ժողովրդից մեծ յարգանք վայելող Յիսուսի մօտ, խնդրեց Մովսէսի ուրոշումը փոխել, որ ինքը կարողանայ հօր կարողութեան կէսն ստանալ: Յիսուս տեսաւ, որ գլխաւոր շարժառիթը մամոնասիրութիւնն է, չըկամեցաւ զործի մէջ խառնուել: Նրա փափազն էր մարդկանց սրտերը մամոնայի ազդեցութիւնից ազատել, ինչպէս կարող էր գանձ բաժանելուն մասնակցել:

Բ. Անմիտ մեծատունը.

«Յիսուս մի առակ պատմեց նրանց և ասեց.—

Մի մեծատուն մարդու հայրական դաշտերն առատ բերք տուին. նա ինքն իրան մտածեց ու ասեց, «Ի՞նչ անեմ, տեղ չըկայ, որ դաշտերիս արդիւնքը ժողովեմ»: Յետոյ աւելացրեց. «Հնարը գտայ, գիտեմ թէ ի՞նչ կանեմ, կը քանդեմ շտեմարաններս և նրանցից աւելի մեծն ու ընդարձակը կը շինեմ, այնտեղ կը ժողովեմ ցորեններն ու բոլոր բարիքները: Յետոյ կասեմ իմ անձին.—անձ, անթիւ բարիքներ ունես, երկար տարիք քեզ բաւական է. նստիր, կեր, խմիր և ուրախացիր»: Բայց Աստուած ասեց նրան. «անմիտ մարդ, այս գիշեր քո հոգին քեզնից պիտի պահանջեն, այդ քո պատրաստածներն ում կը մնան»: Այսպէս է և այն մարդը, որ գանձ է ժողովում միայն իրա անձի համար, նա երբէք մեծ և հարուստ չի լինիլ Աստծու առաջ»:

(Ղուկ. ԺԲ. 16—21)

Յիսուսին աշակերտ համարուողը պիտի խոյս տայ ազգան լինելուց, որովհետև նա թունաւորում է մարդկանց յարաբերութիւնը, հարազատ եղբայրներին իրար դէմ կը սուեցնում: Աչքածակութիւնն էլ մարդու յիմարացնում է, ինչպէս պատահեց շտեմարանները ընդարձակող մեծատան հետ, որ դաշտերի բերքերի առատութեամբ մեծամտած մըտածում էր միայն ապագայ անհուն վայելքների վրայ, իսպառ մոռանալով Աստծուն, որ նրա կեանքի ու մահուան տնօրինողն է: Անմիտ մեծատունն իրա անձի մասին հոգալով չէր կամենում սիրել իրա նմաններին և Աստծուն գոհութիւն անել տուած բարիքների համար:

Ամփոփում.—Մովսէսն ի՞նչ որոշանմ էր արել ճառանգութեան մասին: Հոռմայեցոց օրենքն ի՞նչպէս էր վերաբերում դրան: Շանասէր հրեաներն ի՞նչ սիջոցի էին դիմում: Իրա բաժնով դժգու կրտսէր եղբայրն ինչն Յիսուսին դիմեց: Յիսուս ինքո՞ւ ջուզեց նրան օգնել: Այդ վեճի առիրով Յիսուս

ի՞նչ առակ պատմեց զրջապատռողներին: Ճշմարիտ հարուստ լինելու համար ի՞նչ պիտի ժողովել:

7. ԽԵՂԱՑԻ ՏՆՏԵՍ

Ա. Տնտեսն ապահովում է իրա ապագան.

«Յիսուս ասեց իրա աշակերտներին.—Մեծատան մէկը մի տնտես ունէր: Գանգատներ հասան նրա ականջը թէ տնտեսը նրա ստացուածքը վատնում է. կանչեց նրան և ասեց. «Այս ի՞նչ բան է, որ լսում եմ քո մասին, շուտով տուր քո տնտեսութեան հաշիւը, այլ ևս չեմ կարող քեզ պահել»: Տնտեսն իրա մէջ մտածեց, վի՞նչ եմ անելու այսուհետեւ, երբ տէրս տնտեսութիւնից ինձ հեռացնի: Գետին մշակելու շընորհք չունեմ, մուրալն էլ ամօթ է ինձ համար: Սպասիր, հսարը գտայ, այնպէս կանեմ, որ գործից հեռանալուց ետ մարդիկ ինձ իրանց տներում ընդունեն»: Տիրոջ պարտապաններին մէկ մէկ կանչեց իրա մօտ և հարցըց առաջինին. «Ի՞նչքան ես պարտական իմ տիրոջը»:—Հարիւր մար ձէթ, պատասխանեց մէկը:—«Ահա պարտամուրհակդ, նստիր շուտով, գրիւր յիսուն»: Դիմեց երկրորդին. «Դու ի՞նչքան ես պարտ»:—Հարիւր քոռ ցորեն, պատասխանեց նա:—Առ պարտամուրհակդ ու գրիւր ութսուն: Հաշուի օրը տէրը գովեց անիրաւ տնտեսին նրա խելացի արարքի համար, որ այս աշխարհի որդիքն աւելի խելացի են քան թէ լուսոյ որդիքն իրանց ցեղի մէջ»: (Ղուկ. ԺԶ. 1—8): Տնտեսի, կառավարչի գործն այն էր, որ կալուածները կապալով տալիս էր և նրանց եկամտով թէ ինքն ապրում և թէ կալուածների (այդիների, վարելահոգերի) ծախ-

սերը հոգում: Հսկելու համար հաշուեմատեան չըկար հին ժամանակ, ամենը կախուած էր այն վստահութիւնից, որ տէրն ունէր տնտեսի վրայ: Տնտեսն օգտուելով իրա ունեցած լիազօրութիւնից այնպիսի պայմանագիրներ էր կապել գետինները մշակողների հետ, որոնք շահաւետ չէին տիրոջ համար: Տէրը մեղաղբեց տնտեսին ու պաշտօնանկ արեց, ոչ թէ որովհետև նա անիրաւ մարդ էր, այլ որովհետև իրը և տնտես նրա համար անպէտք էր: Յիսուսը տնտեսին գորվում էր նրա համար, որ թէ ուրիշներին ծառայութիւն մատուցեց, թէ իրա ապագան ապահովեց:

Ա. մ. փու մ.—Տնտեսն ի՞նչ իրաւունքներ ունէր: Ի՞նչ լուրերի նիման դժգոհ մնաց կալուածատերը: իրա ապահովելու համար ի՞նչ միջոցի դիմեց: Տէրն ինչո՞ւ գովեց տնտեսին:

8. ՄԵՇԱՏՈՒՆ ՈՒ ԱՂՔՍԸԼ

Ա. Փարիսեցիք.

«Յիսուս ասում էր.—ոչ չի կարող միանգամից երկու տէրերի ծառայել, որովհետև եթէ նա մէկին ատի, միւսին պիտի սիրի. կամ եթէ մէկին մեծարի. միւսին պիտի արհամարի. չէք կարող և՛ Աստծուն ծառայել և՛ մամոնային»: Երբ փարիսեցիք լսում էին այս ամենը—որովհետև արծաթասէրներ էին իրանք—ծաղրում էին նրան: Այդ պատճառով նրանց ասեց.—դուք էք, որ մարդկանց առաջ ձեր անձերն արդարացնում էք, բայց Աստուած ճանաչում է ձեր սրտերը, որովհետև ինչ որ բարձր է մարդկանց մօտ, նոյնը պիղծ բան է Աստծու առաջ»:

(Ղուկ. ԺԶ. 13—15):

Երբ մէկը հարուստ էր, հրէաների կարծիքով, դա Աստծու աշքում արդար մարդ էր: Փարիսեցիք, որ ապահովուած գասն էին, կարծում էին թէ իրանք իրը և արդարներ կա-

ըիք չունեն Յիսուսի խրատին, քարոզին, այլ համոզուած էին թէ ծիսական օրէնքները կատարելով երկնքին արժանի կըլինեն:

Բ. Մեծատունն ու Ղազարոսը այս եւ հանդերձնեալ աշխարհում.

«Կար մի մեծատուն մարդ, հագնում էր մեծագին բեհեզ և ծիրանի, ամեն օր լիառատ, ուրախ կեանք էր անցկացնում: Մի աղքատ մարդ էլ կար, անունը Ղազարոս, մարմինը վէրբերով պատած, ընկած էր նրա դռան մօտ, նա ցանկանում էր իրա փորը կշտացնել այն փշրանքներով, որ ընկնում էին մեծատան սեղանից, շներն էլ գալիս էին և լիզում նրա վէրբերը, Պատահեց, որ աղքատը մեռաւ, հրեշտակները նրան տարան Աբրահամի գոզը: Հարուստն էլ մեռաւ և թաղուեց: Մինչ նա գժոխըլ կրակների մէջ տանջում էր, աշքերը վեր բարձրացըրեց, տեսաւ Աբրահամին հեռուում և Ղազարոսին էլ նրա գոզում: Ազաղակեց և ասեց. «Հայր Աբրահամ, զութ ունեցիր գէպ ինձ, Ղազարոսին ուղարկիր, որ մատի ծայրը ջրով թրջի և նրանով իմ լեզուն հովացնի, որովհետև այս բոցերի մէջ պապակւում եմ»: Աբրահամն ասեց. «Ո՞րդի, յիշիր, որ զու այն կեանքում բարիքներ էիր վայելում, իսկ Ղազարոսը չարչարւում էր: Այժմ սա այստեղ միսիթարւում է, զու էլ այդտեղ պապակւում ես: Բացի այդ՝ մեր ու ձեր մէջ ահազին վին կայ փորած, եթէ կամենան էլ, չեն կարող ոչ ձեզանից մեզ մօտ անցնել և ոչ մեզանից ձեզ մօտա:

(Ղուկ. ԺԶ. 19—26):

Յիսուս դէմ էր հրէական հայեացըլին, որի համեմատ հարուստը սիրուած էր Աստծուց, իսկ աղքատը արհամար-

հուած: Առակի մէջ դուրս բերած մեծատունը ինքնագոճ փարիսեցին է, նա չարտիանձ չէ, բայց ներքին արժանիքի տէր էլ չէ. իբրև անձնապաշտ վայելում է կեանքի բոլոր վայելքները առանց մազաշափ ուշ դարձների կարիքին. փոյթը չէ, թէ այս կեանքից ետ իրան ինչ կըպատահի:— Փարիսեցիք հաւատում էին հանդերձեալ կեանքին, կարծելով մի ինչոյքի պէս բան, որի հիւրերը տարածած սեղանի մօտ նստում էին ոչ թէ ծալպատակ, այլ պարկում էին փուծ ձորձի վրայ: Աբրահամն իբրև նահապետ գտնւում էր ինչոյքի վերի կողմը. նրա առջեկց պարկած էր Դազարոսր, գրեթէ կպած:— Հին ժամանակ արեելքում զները համարւում էին ամենաստոր կենդանիները. երբ աղքատի ետնից շրջում էին, այդ նոյն է թէ դիակի ետնից են գնում:

Գ. Եղբայրնելի համար ցաւելը

«Մեծատունն ասեց. «Երբ այդպէս է, հայր Աբրահամ, աղաչում եմ քեզ, Դազարոսին ուղարկիր իմ հօր տունը, ես հինգ եղբայր ունեմ, թնդ նրանց լոգուշացնի, որ նրանք էլ չըգան այս տանջանքի մէջ ընկնեն»: Աբրահամն ասեց. «Նրանք իրանց մօտ ունեն Մովսէս և ուրիշ մարգարէներ, թնդ նրանց լսեն և զգուշանան»:— Ո՛չ, հայր Աբրահամ, ասեց մեծատունը, եթէ մեռելներից մինն այնտեղ դնայ, նրանք իսկոյն կապաշխարեն»: Աբրահամն ասեց. «Մովսէսին ու մարգարէներին չը լսողները ամեննին չեն համոզուիլ, եթէ մեռելներից մինը յարութիւն առնի ու նրանց մօտ գնայ»: (Ղուկ. ԺԶ. 27—31):

Մեծատունն Աբրահամից անկարելի բան էր ինդրում. Աբրահամը չարեց այդ, որովհետեւ համոզուած էր, թէ նրա խնդրած միջոցով չէր կարելի ոչ որի գրաւել դէպի բարձրագոյն կեանք: Եթէ մեռելներից յարութիւն առնողն էլ գնար աշխարհ, գուցէ մեծատան եղբայրները սարսափից արտաքին վարժունքները փոխէին, բայց դա ներքին փոփոխու-

թիւն չէր լինիլ: Խսկական ապաշխարում այն ժամանակ է լինում, երբ մարգարէների քարոզածների ճշմարտութեան մէջ համոզուելով մարդ ոկում է իրա ներքին աշխարհը բարեփոխել, նոր կեանքով ապրել:

Ա. մ. գոփում.— Ի՞նչ հայեացք ունելին նրեաները հարուստների մասին: Փարիսեցիք ինչոյնի դաս ՚ին կազմում: Ի՞նչպէս իին երեւակայում հանդերձեալ կեանքը: Հարստութիւնից ծագելիք զայրակղութիւնից զգուշացնելու համար ինչ առանկ պատմեց Յիսուս: Հրեական հայեացքով աղքատն Աստծու ացքում ինչ էր: Ի՞նչ վիճ էր, որ կար Պազարսի ու մեծատան մէջտեղ: Մովսէսն ու մարգարէներն ինչ առանելու րիւն ունելին յարուցեալից:

9. ԵՐԿՆԱՔԸՂԱՔԸՑՈՅՑ ԹԻՒԼ ԵՒ ՃԱՆՇՁԵԼՈՒ ԿԵՐՊԸ.

Ա. Նեղ եւ լայն դռները.

«Մաէք նեղ դռնով, որովհետեւ քանի որ դռւուր լայն է և նրա ճանապարհը ընդարձակ, նա դէպի կորուատն է տանում և շատ շատերն են, որ մտնում են նրանով, բայց բանի որ անձուկ է դռւուն և նեղ նրա ճանապարհը, նա տանում է դէպի կեանքը և շատ սակաւներն են, որ գտնում են այն»:

(Մատթ. կ. 13—14):

Երկնրի արքայութեան քաղաքացոց վրայ Յիսուս չափանց գժուար պահանջներ էր գնում. աշխարհին դիմաց դրելու համար այնքան անձնութիւն, ինքնամուացութիւն էր պահանջում նրանցից, որ միայն սակաւները ցանկութիւն կըյայտնէին նրա քարոզած արքայութեանը յարուել: Ունայնութիւն ու վայելքներ սիրելը, մարդահաճութիւնն ու անձնասիրութիւնը նրանց աշքերը խսպառ փակում էին, չէին թողնում դէպի ճշմարիտ կեանք տանող դռները նշմարել:

Աւելի հեշտ ու ձեռնտու էր մեծամասնութեան ճանապարհով ընթանալը, որ լայն էր ու արձակ նրանց առաջ: Այդպիսի ուղղութեան հետևողը կարիք չունէր իրա գէմ մաքառելու, ուրիշների հետ ընդհարուելու, ոչ գոհ տալու և ոչ դրկանք կրելու: Մարդ լայն ճանապարհով գնալիս գործում է ինչպէս մեծամասնութիւնը. նրա նշանաբանն է անձնասիրութիւնը, զուարձասիրութիւնը. Սակայն այդ ճանապարհի վերջն է հոգեկան մահ. բայց նեղ, անձուկ շաւզի վերջն է յախտենական կեանք: Նեղ գոնով գնալ նշանակում է կը-ուուել անձնական թուլութիւնների, աշխարհի վայելքների դէմ:

Բ. Կեղծաւոր մարզարէներ.

«Զգոյշ կացէք սուտ մարզարէներից, որոնք գալիս են ձեզ մօտ ոչխարի հանդերձով, բայց տակից յափշտակող գայլեր են: Նրանց պառւղներից կարող էր ճանաչել նրանց. միթէ փշերից խաղող կըքաղուի կամ տատասկից թուզ: Առհասարակ բարի ծառը բարի պտուղ է բերում և չար ծառը՝ չար պտուղ: Բարի ծառը չի կարող չար պտուղ բերել և ոչ էլ չար ծառը բարի պտուղ: Այն ծառը, որ բարի պտուղ չի բերում, կտրում է և կրակն է գտնում: Ուրեմն նրանց պտուղներից ճանաչեցէր նրանց: Ինձ Տէր, Տէր կանչող ամեն մի մարդ չի մտնելու երկնքի արքայութիւնը, այլ նա կըմտնի, ով կատարում է իմ հօր կամքը: Շատերը կասեն ինձ այն ժամանակ, «Տէր, Տէր, չէ որ անունով մարզարէութիւն արինք, քո անունով դեկ հանեցինք և քո անունով շատ զօրութիւններ (հրաշքներ) գործեցինք»: Այն ժամանակ ես կասեմ նրանց. «ձեզ երբէք չեմ ճանաչել, հեռացէք աշքից գուշ ամենդ, որ անօրէնութիւն էիք գործում»:

(Մատթ. է. 15—23)

Ով որ Աստծու արքայութեան ճանապարհը գտնելու համար դիմում է ուրիշների խորհրդին, պիտի հեռու մնայ կեղծմարզարէներից, սրանք իրանց ապահանուած ներքինը ծածկելով բարեպաշտութեան կեղելով՝ սիրում են առաջնորդի, խորհրդատուի գեր խաղալ. գառնազգեստ գայլերի պէս ներս են պրծնում անփոյթ հօտի մէջ և խեղդուում, այսինքն արտաքին բարեպաշտ վերաբերմունքով մտնում են միամիտ սրտերը և նրանց հոգու վրայ գնում իրանց կեղծաւոր կնիքը: Յիսուս այդպիսիներից զգուշացնելու համար ասում էր՝ երբ տեսնէք, որ մէկի մօտ չըկան հոգու պատուղներից՝ սէր, խաղաղութիւն, համբերութիւն, բարեսրտութիւն, հաւատ և այլն, իմացէք, որ առաջներդ կանգնած է կեղծ մարզարէն, ուշ մի դարձնէք նրա ճարտարախօսութեան վրայ: Բայց երբ տեսնում էք, որ մէկն իրա թշնամուն բարիք է անում, իրա երկրաւոր գանձերը Աստծու արքայութեան օգտին է ծառայեցնում—վստահելի անձն է, նա արդէն գտել է երկնքի արքայութեան ճշմարիտ ճանապարհը, կարող է ուրիշներին էլ վստահելի առաջնորդ լինել:

Գ. Իմաստոյն եւ յիմար մարդը

«Այն մարդը, որ լսում է իմ խօսքերը և կատարում է, կընմանուի այն իմաստուն մարդին, որ իրա տունը շինել էր վէմի վրայ: Թափուեցին անձրևներ, վարարեցին գետեր, շառաչեցին հողմեր ու զարկեցին տանը, բայց նա անսասան մնաց, որովհետև վէմի վրայ էր հաստատուած: Իսկ նա, ով լսում է իմ այս խօսքերը և չի կատարում, կընմանուի այն յիմար մարդին, որ իրա տունը շինել էր աւազի վրայ: Անձրևներ եկան, գետերը վարարեցին, հողմերը շառաչեցին, զարկեցին տանը և նա վլուեց. նրա կործանումը շատ սարսափելի էր»: (Մատթ. է. 24—27):

Յիսուսի խօսքերին ուշ դարձնողը չէր կապել երկրաւոր գանձերի հետ, որ վերջն էլ խիստ վշտանար

նրանց կորցնելով։ Սրտի խորքից կը հաւատար Աստծուն, իրա երջանկութիւնը որոնելով ընկերսիրութեան մէջ, այդքանը նրանից խլել ոչ ոք չէր կարող. կեանքի փոթորիկներից վախ չունի. տունը քարի վրայ է կառուցած։ Բայց երբ մէկն իրա սէրն ու հաւատը նուիրել է երկրաւոր զանձերին և յոյսը դրել մարդկանց արտաքին համարմունքի վրայ, այդպիսի մարդը խաղալիք է ճակատագրի բոլոր փոթորիկներին ու փոփոխութիւններին, չի կարող խաղաղութիւն ու երջանկութիւն ունենալ հոգու մէջ, որովհետև տունը աւազի վրայ է շինած։

Ա. մ փ ո փ ո ւ մ. Ի՞նչո՞ւ եր երկնաքաղաքացոց թիւք սակաւ։ Ի՞նչ է նշանակում նեղ դուռ, եւ նեղ ճանապարհ, կամ լայն դուռ ու լայն ճանապարհ։ Աշխարհիս վրայ նվիքը են լայն դանով մտնողները ու նեղ զալով գնացողները։ Յիսուսնամ եր ճամարում սուտ մարդարեներ, որոնցից հարկաւոր եր զգուշանալ։ Ի՞նչ նշաններով կարելի էր ճանաչել սուտ եւ ճշմարիտ մարդարեներին։ Յիսուս ինչ էր ուզում ասել իմաստուն եւ յիմար մարդու առակով։ Այժմ զնեկ բազմացն է ներ Յիսուսի ակնարկած երկնաքաղաքացիք։

Համեմատու համար կարդալ Ղուկ. Զ, 43—49:

10. ՅիՍՈՒՍԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՅԱՏԿՈՒԹԻՒՆԸ

Ա. Առաջին աշակերտները.

«Յիսուս Գալիեայի ծովի ափով շրջելիս տեսաւ երկու եղբայրների՝ Սիմոնին, որ Պետրոս էր կոչւում և նրա Անդրէաս եղբօրը։ Նրանք ձկնորս էին, ուուկան էին զցել ծովը։ Յիսուս ասեց նրանց. «Եկէք իմ ետեւց, ես ձեզ կը դարձնեմ մարդկանց որսորդ»։ Նըսանը շուտով թողին իրանց գործիքները և գնացին նրա ետևից։ Յիսուս այստեղ լինելու են աղ, լոյս եւ լերանվարի քաղաք։

սաւ ուրիշ երկու եղբայրների՝ Յակոբոսին և Յովհաննէսին նաւի մէջ իրանց հայր Ջեթեղեայի հետ, նրանք սարքում կարկատում էին իրանց ուուկանները։ Նրանց նոյնպէս կանչեց, նրանք շտապով թողին թէ նաւը, թէ իրանց հօրը և գնացին Յիսուսի ետևից։

(Մատթ. Ա. 16—20)

Յիսուս աշակերտներ ընտրելիս չը գիմեց հարուստներին. լի ու փարթամ կեանքին ընտելացածների համար դժուար էր հալածանըների համբերելը։ Նա նոյնպէս չը գիմեց բոլորովին չբաւորներին. հացի կտորի ետևից վագողները հազիւ թէ սիրտ ունենացին ուրիշների վիճակով հետաքրքրուելու, բարձրագոյն բարիքների ձգտելու։ Յիսուս չիմեց փարիսեցոց ու սազուկեցոց, որոնք իրանց ժամանակի հասկացող ու գրագէտ հրէաներն էին, որովհետև զըսրանք իրանց անուաններով Աբրահամի թոռներ, աւելորդ էին համարում ապաշխարելը։ Նրանք անանկին ու աղքատին արհամարհող ձնշողներն էին, բնչպէս կը յօժարուէին հասարակ գասի օգտին ծառայել, նրա ներքին աշխարհը լուսաւուրել։ Յիսուս բարւոք համարեց զիմել ձկնորսներին, սրանք այնքան ունեւոր չէին, որ ստորին դասին արհամարհէինք այնքան էլ ձնշուած չէին կարիքի կողմից, որ զուրկ լինէին բարձրագունին ձգտելու զգացմունքից, Յիսուսին ընդունելով Աստուծոյ առաքեալ, յանձն առան ամեն ինչ զոհել է սէր Աստծու արքայութեան։ ապահով ապրուստից հրաժարուելով, ընտանեկան խաղաղ կեանքը թողնելով կամեցան մասնակից լինել Յիսուսի զրկանքներով լի կեանքին։ Այդ օրերին Յովհաննէս Մկրտիչը կալանաւորուած էր արդարութիւնը բարողելու պատճառով։

Բ. Աշակերտները լինելու են աղ, լոյս եւ լերանվարի քաղաք։

«Յիսուս իրա հետևողների միջից ընտրեց տասներկու հոգի, անուանեց նրանց առաքեալ։ Երբ լեռան

Ձրայ նստած էք, դիմեց աշակերտներին. «Դուք երկրի աղն էք, եթէ աղն իրա համը կորցնի, ի՞նչով կ'աղիանայ, նրանից ետ բանի պէտք չի, մնում է փողոց շպրտել, որ ոտնակոխ լինի մարդկանցից»:

Դուք աշխարհի լոյսն էք, լեռան վրայ շինած քաղաքը չի կարող թագկենալ: Ճրագը վառելուց ետ չեն դնում զրուանի տակ, այլ աշտանակի վրայ, որ տան մէջ եղողներին լոյս տայ: Թաղ ձեր ճրագն էլ լոյս տայ մարդկանց առաջ, որ նրանք տեսնեն ձեր բարի գործերը և փառաւորեն ձեր հօրը, որ երկընքումն է»: (Մատթ. Ե. 13—16)

Յիսուսի ցանկութիւնն էք մարդկանց սրտերը նորոգել քարոզի ու կենդանի օրինակի միջոցով և այդպիսով երկընքի արքայութեան համար ճանապարհ պատրաստել: Աշակերտներին համեմատում էք մի խիստ անհրաժեշտ առարկայի—աղի հետ, որ գնի կողմից ամենարժան բանն է, բայց առանց որի չի կարելի ամենաթանկապին կերպակուրը գործածել Աշակերտները նոյնպէս հասարակ ձկնորս մարդիկ էին, բայց կոչուած էին վեհ պաշտօն կատարելու: Յետոյ նրանց լոյսի հետ էք համեմատում, որ շատ սովորական բան է մարդկանց աչքում, բայց աշխարհն առանց լոյսաի ի՞նչ արժէք կունենար: Նրանք ինչպէս վառուած ճրագներ պիտի լուսաւորէին, իրանց ստացած նոր կեանքը հազորդէին ուրիշներին, անահ և աներկիւղ պիտի երեային ամեն կողմից, ինչպէս բարձր տեղ շինած քաղաք:

Երբ աշակերտը դադարէր իրա կեանքի օրինակով և համոզմունքի ուժով ազգել իրա շրջապատի վրայ, նշանակում է՝ նա անհամացել, անպէտքացել է ինչպէս հրէական աղի կտոր, որ երբ թրջուելուց միջի աղը լուծւում է, տեղը մնում է լոկ հողի քոռոչը, դէն շպրտելու մասը:

Ա. մ փո փո մ. Յիսուս աշակերտներ ընտրելիս ի՞նչպէս պարուեց: Ինչո՞ւ ձկնորսներին դիմեց եւ ոչ փարիսեցոց ու

ուադուկեցոց: Ի՞նչ էր սպասում աղակերտներից: Ինչի՞րի հետ էր համեմատում նրանց: Ի՞նչ էր նշանակում զրուանի տակ դրած ձրագ կամ անալի դարձած աղ:

Համեմատ, համար կարդալ. Մատ. Դ. 18—22. Ղուկ. ԺԱ. 33 Ժ. 33—35

11. Ո՞վ Զէր ԿԱՐՈՂ ԱՇԱԿԵՐՏ ԼԻՆԵԼ ՅԻՍՈՒԽԻՆ

Ա. Դպիր կամ օրինական

«Յիսուս տեսաւ, որ իրա շուրջը շատ ժողովուրդ է հաւաքուած, աշակերտներին հրամայեց, որ գնան ծովի միւս ափը: Այդ ժամանակ մօտեցաւ մի զպիր և ասեց. «Վարդապետ, իրաւունք տուր, որ ես էլ քո ետևից գամ, որտեղ էլ գնալու լինես»: Յիսուս ասեց նրան. «աղուէսները որջեր ունեն, երկնքի թռչունները բոյներ, իսկ մարդի որդին մի տեղ չունի, որ գլուխը վէր գնի»: (Մատ. Ղ. 18—20)

Դպիրը միշտ զբազուած էք հին կտակարանի մութակերը մեկնելով, բացատրելով և յանկարծ ցանկացաւ հետեւող դառնալ Յիսուսին. երեխ կամենում էք աւելի ուսանել և յետոյ ուրիշներին ուսուցանել: Բայց Յիսուս գիտուն դպիրի տեղ որոնում էք այնպիսի մարդկանց, որ լուրջ կերպով ձգտէին նախապատրաստուել մօտեցող երկնքի արքայութեան համար: Յիսուս գրանով դպիրին հասկացրեց, որ նա պիտի ունենայ զոհաբերութիւններով, զրկանքներով լի կեանք, եթէ տուն ու տեղ, ամեն հարստութիւն իրա պատճառով թողնելու պատրաստ է, թող գայ իրա ետևից:

Բ. Յիսուսին հետեւողը նոսի ցանկանում էք իր հօրը թաղել.

«Աշակերտներից մինն ասեց. «Տէր, իրաւունք տուր գեռ առաջ գնամ հօրս թաղեմ, յետոյ գամ քո

ետևից»։ Յիսուս ասեց. «Դու ինձ հետեւիր և թող
մեռելներին թաղել իրանց մեռելները»։ Երբ Յիսուս
նաւը մտաւ, բոլոր աշակերտները հետևեցին նրան»։

(Մատ. Բ. 21—23)

Յիսուս աշակերտից պահանջում էր՝ Աստծու արքայու-
թեան համար տառապելը բարձր դասել ընտանիքի ծոցում
խաղաղ ապրելուց։ Նրա հայեցքով եթէ ծնողները, քոյրը,
եղբայրը գաղափար չունեն բարձր կեանքի մասին, մա-
մոնայի իշխանութեան տակ են ու երկրաւոր հոգսերով պա-
շարուած, Յիսուսին աշակերտողը ի սէր երկնքի արքայու-
թեան պիտի ամեն յարաբերութիւն կտրի նրանց հետ։

Գ. Հրաժեշտ տալու կարիք չը կայ.

«Մի ուրիշ երիտասարդ ասեց Յիսուսին. «Ես
դալու եմ քո ետևից, բայց, Տէր, նախ իրաւունք
տուր գնամ մեր տանեցոց մնաս բարև ասեմ»։ Յիսուս
ասեց նրան. «ոչ ոք յետ չի նայում գութանի մաճը
բոնած ժամանակ, եթէ կամենում է Աստծու ար-
քայութիւնը իրան յաջողութիւն»։ (Ղուկ. Թ. 61—62)

Յիսուսի արգելածը հասարակ հրաժեշտ առնելը չէր, նա
պահանջում էր հետեւողներից խզել ամեն կապերը, որ ունէին
հին աստուածաշատութեան ու նրա կողմանիցների հետ,
իսպառ հրաժարուել նրանց հեա յարաբերութիւն ունենալուց։
Թող հին մտածելակերպ ունեցողները թաղեն իրանց հա-
մախոններին։ Մաճկալի առակով Յիսուս հասկացնում էր՝
ինչպէս նրա պարտըն է միշտ առաջ նայել, որ ակօսներն
ուղիղ գծով լինեն, այնպէս էլ, ով նպատակ է գրել Աստ-
ծու արքայութիւնը ժեռ բերել, չըպիտի յետ նայի այն
կեանքի ու շրջանների վրայ, որոնց հետ խզել է կա-
պը։ Հին բարեկամներից լացով, վշտով բաժանուելը ցոյց
է տալիս, որ Յիսուսին հետեւողը կէս սրտով է կպած նոր
նպատակի ու նոր պարտաւորութիւնների հետ։ Աստծու ար-
քայութեան համար հարկաւոր է ամբողջ մարդը. յետ նայողը
կէս մարդ է։

Ա. մ փ ո փ ո մ, ի՞նչ դասակարգ էին կազմում. զպիր-
ները նրեաների մէջ։ Դպիրն ի՞նչ դիտաւորութեամբ էր եկել
Յիսուսի մօտ։ Ինչո՞ւ Յիսուս ջըկատարեց նրա խնդիրը։ Յի-
սուս ինչո՞ւ չէր բողնում աշակերտներին իրանց որդիական
պարտքը կտարարել։ Յիսուսի աշակերտ եղողին ի՞նչ էր հար-
կաւոր։

12. ՅԻՍՈՒՍ ՄԱՔՍԱԼՈՐՆԵՐԻ ՄԷՋ

Ա. Յիսուս ըարեկամութիւն է անում մաքսա-
լորների եւ մեղաւորների հետ.

«Յիսուս ծովեզրից այն կողմն անցնելով տեսաւ
Մատթէոս անունով մարդ, որ նստած մաքսաւորու-
թեամբ էր պարապում։ Ասեց նրան. «թող այդ, արի
իմ ետևից»։ Մատթէոսը վեր կացաւ ու գնաց նրա
ետևից։ Երբ Յիսուս բազմած էր նրա տանը, շատ
մաքսաւորներ ու մեղաւորներ եկան և նոյնպէս բազ-
մեցին Յիսուսի և նրա աշակերտների հետ։ Փարի-
սեցիք այս բանը տեսնելով ասին աշակերտներին։ «Ին-
չու ձեր վաղողապետը հացի է նստում մաքսաւոր-
ների ու մեղաւորների հետ»։ Երբ Յիսուս լսեց փարի-
սեցոց արտունջը, ասեց նրանց. «բժիշկն աւելի հիւանդ-
ներին է հարկաւոր, քան թէ առողջներին։ Գնացէք
և սովորեցէք թէ ինչ է նշանակում ողորմութիւն
(աէր) եմ կամենում և ոչ թէ զոհ։ Ես չեմ եկել
կանչելու արդարներին, այլ մեղաւորներին»։

(Մատթ. Բ. 13—17)

Հոռմայեցիք հրէաներից գետնահարկ առանձին էին
պահանջում, ստացուածքի, կարողութեան համար էլ առան-
ձին հարկ. բացի այդ՝ վերցնում էին սահմանի մաքս, կա-
մըրջով, ճանապարհով անցնելու տուքերը։ Տուքերի գան-
ձումը կապակով յանձնում էին մաքսաւորներին, սրանք

ունէին իրանց ստորագրեալները, որոնք նշանակածից մերան էլ աւելորդ էին ժողովում իրանց օգտի համար: Այդ կեզեքումներից հրէայ ժողովուրդը չափազանց ճնշուած էր. մաքսանը անձը ատելի էր նրան: Հրէաները միւս ազգերից խորշում էին, իրանց բարձր համարելով արժան չէին տեսնում նրանց հետ ոչ խօսել և ոչ գործ բռնել: Յիսուս գրանց հակառակ բարեկամութիւն էր անում մեղաւորների ու մաքսաւորների հետ, իրա խօսքով ու կեանքով գրաւելով նրանց սրտերը կարողանում էր աստուածսիրութիւն և ընկերութիւն ներշնչել:

Ա. մ. փոփոխ. Փարիսեցիք ինջն էին մեղադրում Յիսուսին: Նրանց կարծիքով մաքսանորներն ու մեղաւորներն ինչ էին: Ի՞նչպիսի էր վերաբերում Յիսուս դեպի նրանց եւ իրա այդ արարքն ինջնվ էր արդարացնում:

Համեմատ. համար կարդալ, Մատ. Ը. 23—27 թ. 1—13
Ղուկ. Ը. 22—35:

13. ՓԱՐԻՍԵՑՈՒ ՏԱՆ ԽՆՁՈՅՑՔԸ

Ա. Մեղաւոր կինն օծում է Յիսուսի ոտները.

«Մի փարիսեցի աղաչում էր Յիսուսին, որ իրա տուն ճաշի գայ և հետը հաց ուտի: Յիսուս մտաւ փարիսեցու տունը և բազմեց: Քաղաքի մէջ մի մեղաւոր կին կար, երբ իմացաւ, թէ Յիսուս փարիսեցու տանն է, բերեց մի շիշ անուշանոտ իւղ, նըստեց նրա ոտների մոտ. լալիս էր և արտասուքներով թրջում նրա ոտները, իրա զլիսի մազերով սրբում, համբուրում ոտները և իւղով օծում: Նրան հրավիրող փարիսեցին այս տեսնելով ասում էր մտքի մէջ. «Եթէ սա մարգարէ լինէր, կիմանար թէ ով է և Բնչակի մեղաւոր կին է իրան մօտեցող»:

(Ղուկ. Է. 36—39)

Հրէաստանում հացի ժամանակ չէին նստում սեղանի մօտ ինչպէս այժմ, այլ պարկում էին փափուկ օթոցի կամ բարձի վրայ: Յիսուս զղացող մաքսաւորին այցելելուց ետ յօժարուեց հիւր լինել և փարիսեցու տանը: Այդտեղ եկաւ մեղաւոր կինը, որին արդէն ծանօթ էր Յիսուսի վարդապետութիւնը, նրա շնորհով թողել էր նա իրա անբարոյական ընթացքը ու սկսել էր արդէն նոր կեանք վարել: Այժմ կամենում էր իրա երախտագիտութիւնը հրապարակով արտայայտել: Հատ հրէական սովորութեան ամենայն մարդ կարող էր ներս գալ և խնջոյքին նայել:

Բ. Երկու պարտապանները.

«Յիսուս պատասխանեց փարիսեցուն և ասեց. «Սիմոն, մի բան եմ ուզում ասել քեզ:—Հրամայիր, վարդապետ, ասեց նա: Յիսուս հետեւեալ առակն ասեց. «մի փողատէր երկու պարտապան ունէր, նրանցից մէկը 500 դահեկան էր պարտ, միւսը 50: Երբ նրանք միջոց չունէին, որ իրանց պարտը վճարեն, երկուսին էլ բաշխեց: Այժմ ասա, նրանցից ով շատ կըսիրի փողատիրոջ:—Իմ կարծիքով, նա, որին շատ գումար բաշխեց, պատասխանեց Սիմոնը: Յիսուս ասեց. «ուղիղ դատեցիր»: Եւ երեսը դէպի կինը դարձնելով, խօսքը Սիմոնի հետ շարունակեց. «տեսնում ես այս կնոջը: Երբ քո տուն մտայ, ջուր չըբերիր ոտներիս համար, իսկ սա իրա արտասուքներով թըրջեց ոտներս և իրա ծամերով սրբեց: Դու ինձ մի համբոյր չը տուիր, սա այստեղ մտնելու վայրկեանից չի դադարում ոտներս համբուրելուց: Դու իմ գլուխը հասարակ իւղով չօծեցիր, սա ազնիւ, անուշանոտ իւղով օծեց: Ուստի ասում եմ քեզ. ներուած լինեն սրա շատ մեղքերը, որովհետեւ շատ սիրեց: Ում շատ

է ներւում, նշանակում է՝ շատ է սիրել, ում քիչ
քիչ»: (Ղուկ. է. 40—47)

Մեղաւորներից հեռու մնալը փարիսեցիք համարում
էին առաջինութիւն, այն ինչ գա աւելի շուտ բարոյական
թուլութիւն էր: Ցիսուս բարոյապէս զօրեղ լինելով մեղա-
ւորների հետ յարաբերութիւն ունենալը պարտք էր համա-
րում: Փարիսեցիք անկարող լինելով ըմբռնել Ցիսուսի վե-
րաբերմունքը, կարծում էին թէ նա մարդ ճանաչել չը
գիտէ:

Գ. Մեղաւոր կինը արժանացաւ ներման.

«Ցիսուս ասեց մեղաւոր կնոջը: «Թող ներուած
լինեն քո մեղքերը»: Խնջոյքի վրայ նստածներն ըսկը-
սան իրանց մէջ ասել. «ո՞վ է սա, որ մեղքերը նե-
րում է»: Եւ Ցիսուս ասեց կնոջը. «քո հաւատը քեզ
փրկեց, գնա խաղաղութեամբ»: (Ղուկ. է. 48—50)

Կինն զգացել էր իրա վատ ընթացքը, և սրտում զղա-
ցել: Հասկանալով իրա մեղքի շատութիւնը, երախտագի-
տութիւնն էլ բուռն կերպով արտայայտեց: Նա մեծ պար-
տապան էր, իրան բաշխուած մեծ պարտքի փոխարէն աւե-
լի սէր ցոյց տուեց զէպի բարեսիրտ պարտատէրը: Օրէնքի
պատուէրներ կատարող փարիսեցին գոռող էր, ապաշխա-
րութիւն ասած բանը չէր ընդունում, ուստի անտեղեակ
էր կնոջ սրտում տեղի ունեցած փոփոխութեանը ու նրա
արտասուելու պատճառին: Բայց սրտագէտ Ցիսուսը տես-
նում էր Աստծու ողորմութեամբ նրա մէջ զարթած նոր
կեանքը, ուստի սփոփում էր նրան ներելով անցեալ մեղ-
քերը:

Ամփոփում. Փարիսեցին ինչո՞ւ էր նրանիրել Ցիսու-
սին: Մեղաւոր կինն ինչո՞ւ գնաց նրա տուն: Հրեաներն ինչ-
պէ՞ս էին խնջոյքի նատում: Մեղաւոր կինն ինչո՞ւ էր իւղով
օծում Ցիսուսի ուները: Փարիսեցիք ի՞նչ նայեացը ունեին
դեպի մեղաւորները: Կնոջ արարքն ինչի՞ նշան էր: Ցիսուս
ինչո՞ւ միամտացրեց, որ նրա մեղքերը ներուած են:

14. ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՓՆՏՐՈՂ ՍԷՐԸ

Ա. Կողած ոչխար.

«Ցիսուս փարիսեցիներին ու դպիրներին ասեց այս
առակը. «ո՞վ է ձեզանից այն մարդը, որ հարիւր ոչ-
խար ունենայ ու մէկը կորցնի: Արդեօք չի թողնիլ
իննըսունիննը հանդում ու գնալ կորածը փնտրելու:
Երբ գտնի, ուրախանալով կը գնի ուսերի վրայ, տուն
կը գայ, բարեկամներին ու դրացիներին կը կանչի
ու կասի. «ուրախացէք հետա, որովհետև կորած ոչ-
խարս գտայ»: Հաւատացնում եմ ձեզ, որ այդպէս
ուրախութիւն կը լինի երկնքում մէկ մեղաւորի հա-
մար, որ ապաշխարում է, քան թէ իննըսունինն ար-
դարների համար, որոնք պէտք չունեն ապաշխարու-
թեան»:

(Ղուկ. ժԵ. 3—7)

Գիտենք որ Ցիսուս որոնում էր մեղաւորներին, որ
միխթարելով բուժի նրանց հիւանդ սրտերը: Հօտից մո-
լորուած ոչխարն անկարող է ինքն իրան օդնել, որովհետև
անսառն է: Այդ լաւ իմանալով հովիւը փնտրում է, մինչև
գտնում է նրան որևէ թփի տակ: Եթէ մի ոչխարի համար
այսքան խնամք է պէտք, որքան առաւել մի մոլորուած
մարդու համար, եթէ ցանկանում ենք նրան վատ ընթաց-
քից յետ կացնել, հիւանդ հոգին բուժել:

Բ. Կողած դրամ.

«Ցիսուս երկրորդ առակն ասեց փարիսեցի-
ներին ու դպիրներին. «կամ ո՞վ կը լինի այն կինը,
որ տաս դրամ ունենայ. եթէ նրանցից մէկը կորցնի,
արդեօք ճրագ չի վառիլ, տունն աւելիլ ու խնամքով
որոնիլ մինչև կորածը գտնի: Երբ գտնի, կը կանչի
որոնիլ մինչև կորածը գտնի. «ուրախացէք
բարեկամներին, դրացիներին և կասի. «ուրախացէք

ինձ հետ, որովհետև կորցրած դրամը գտայ: Հաւատացնում եմ ձեղ, այսպէս էլ Աստծու հրեշտակների առաջ ուրախութիւն կըլինէ մէկ ապաշխարող մեղաւորի համար»: (Ղուկ. ՓԵ. 8—10)

Ոչխարն իբրև միամիտ արարած անկարող էր իրան ազատել մոլորութիւնից, բայց իբրև շնչաւոր կարող էր գունէ շարժուիլ վտանգի վայրկեանին, իսկ անշունչ դրամն մի տեղ անշարժ ընկած, ինչպէս զգար թէ ինքը կորած է: Նրան կորցնող պառաւը հանգիստ չի կարողանում նստել, մինչև դէն փնտրելով գտնում է ու գործազրում իրակարիքի վրայ: Բայց որքան անհրաժեշտ է փնտրելը, երբ կորածը ոչ թէ ոչխար է կամ դրամ, այլ մարդկային հոգի:

Գ. Կորած որդի.

«Յիսուս երրորդ առակն ասեց վարիսեցիներին, «մի մարդ երկու որդի ունէր: Կրտսերն ասեց հօրը. «հայր, քո ապրանքից և ունեցածից տուր իմ բաժինը, չեմ ուզում այստեղ մնալ»: Հայրը տուեց նրաբաժինը: Մի քանի օրից ետ որդին վերցրեց իրաբաժինը ու գնաց հեռու աշխարհ և այնտեղ վատնեց ունեցած չունեցածը անառուկ կեանք վարելով: Երբ բոլորը վերջացրել էր, սաստիկ սով ընկաւ այդ երկում: Որդին սկսեց յետին չքաւորութեան մէջ ապրել: Գնաց այդ երկի բնակիչներից մէկի մօտ ծառայ մտաւ, որը նրան ուղարկեց հանդը խոզեր արածեցնելու: Տղան յօժար էր իրա բաղցը յազեցնել խոզերի ուտելու եղջիւրներով, բայց այդ էլ չէին տալիս նրան, Միտք անելով ինքն իրան ասեց: «Իմ հայրը քանի քանի մշակներ ունի, որոնք առատօրէն հաց են ուտում. իսկ ես այստեղ սովամահ եմ լինում: Արի, վերկենամ գնամ հօրս մօտ և ասեմ նրան, «հայր,

մեղանչել եմ Աստծու և քո դէմ, ես արժանի չեմ քեզ որդի կոչուելու, ընդունիր ինձ քո մշակների թւում»: (Ղուկ. ՓԵ. 11—16)

Ինչպէս յայտնի է հրէից մէջ աւագ եզրայրը ժառանգում էր հօր ունեցածի $\frac{2}{3}$ մասը, իսկ փոքրը $\frac{1}{3}$ -ը: Կըրտսերն իրան զրկուած և հօր տանը նուաստացած համարելով, աւելի լաւ համարեց գնալ օտարութիւն ու հօր աչքից հեռու գուարձանալ սրտի ուզածի չափ: Իրա բաժին հարըստութիւնը վատնելուց հետ տղան կարիքի երեսից դարձաւ խոզարած, որ ամենաամօթալի բանն էր: Փարիսեցու աչքում այդպէս վարուող որդին կորած ու մեռած էր, բայց Յիսուսի նոր ուղղութեամբ որդին կարող էր զղջալ ու հօր մօտ վերադառնալ: Դրանով ուզում էր հասկացնել, թէ Աստծու առաջ մոլորուած մարդիկ աւելի կարեոր են, քան թէ կորած անշունչ դրամն ու միամիտ ոչխարը:

Դ. Կորածի վերադառնալը.

«Այսպէս մտածելով կրտսեր որդին, թողեց խոզերը և ճանապարհ ընկաւ դէպի հայրական տունը: Դեռ հեռու էր, հայրը նկատեց ու գթաշարժուեց, շտապեց, նրա զզով փաթաթուեց, համբուրեց նրան: Որդին ասեց. «հայր, մեղանչել եմ Աստծու և քո դէմ, այլ ևս արժանի չեմ քեզ որդի կոչուելու, ինձ ընդունիր քո մշակների շաբքում»: Հայրը հրամայեց ծառաներին. «զուտով բերէք ամենաարնտիր պատմուճանը և հազցրէք սրան. մատանի դրէք նրա մատին և կոշիկներ տուէք, որ հագնի: Պարարտ եզ բերէք, մորթեցէք, ուտենք, ուրախանանք, որովհետև իմ այս որդին մեռած էր, կենդանացաւ, կորած էր, գտնուեց»: Պատուէքը կատարելով ուրախութիւն արին»:

(Ղուկ. ՓԵ. 17—24)

Բազմագութ հայրը չէր մոռացել անառակ որդուն. եռ բեկի ինքն իրան ասում էր. «ահա որտեղ որ է կը վերադառնայ»: Մի օր նոտած տխուր մտածելիս, յանկարծ աշքով ընկաւ զզզորուած շորերով ճանապարհորդ, հօր սուր աշքը շարժուածքից, կերպից ճանաչեց, որ իրա որդին է, բայց ոչ նախկին ամբարտաւանը, այլ մի ողորմելի տեսքով երիտասարդ, վրան բարկանալու փոխարէն սրտով մորմոքուեց, երբ որդուն այդ թշուառ վիճակում տեսաւ, յական կորած-մեռածին կենդան տեսնելով ուրախացաւ, հայրաբար զբկախառնելով կամեցաւ որդու վերադարձը խնջոյքով տօնել:

Ե. Աւագ որդու բարկութիւնը.

Աւագ որդին հանդումն էր, երբ տանը մօտենալիս լսեց պար գալու և երգի ձայներ. ծառաներից մէկին հարցրեց. «Սա ի՞նչ բան է»: Ծառան առեց. «կրտսեր եղբայրդ եկել է, հայրդ հրամայեց պարարտ եղ մորթել, որովհետեւ ողջ և առողջ վերադարձ է տուն»: Աւագ եղբայրը զայրացաւ հօր արարքի վրայ և չէր ուզում ներս մտնել, բայց հայրն ինքը գուրս եկաւ և խնդրեց, որ տուն մտնի: Որդին առարկեց. «այսքան երկար տարիք քեզ մօտ ծառայում եմ, երբէք չի պատահել, որ քո պատուէրից գուրս գամ, ինձ մի ուզ չես տուել, որ մորթեմ, բարեկամներիս հետ ուրախութիւն անեմ, իսկ այն որդին, որ քո կարողութիւնը պոռնիկների հետ է կերել, վերադարձաւ թէ չէ, պարարտ եղն ես մորթել նրա համար»: Հայրն ասեց. «որդին, դու ամեն ժամանակ ինձ հետ ես, իմ ունիմ-չունիմը քոնն է, բայց հարկաւոր էր այսօր ցնծալ, ուրախանալ, որովհետդ քո այս եղբայրը մեռած էր, կենդանացաւ, կորած էր գտնուեց»:

(Դուկ. ԺԵ. 25—32)

Աւագ եղբօր կարծիքով հայրն անարդար էր, որ իրապարկեցտ կենցաղն անուշադիր թողած վարձատրում էր անառակ որդուն: Հայրական սիրտը սիրոյ զգացմունքը լայն էր ըմբռնում և կրկին գտնուած որդու պատճառով հրճւում, իսկ աւագ որդին իրա իսուարհութեամբ այսքան ամբարտաւան էր դարձել, որ տնից հեռացածին եղբայր չէր ընդունում, թէկ հայրն այդ յիշեցրեց: Հօր սէրն անհուն էր, ուստի և անհասկանալի էր նեղսիրտ աւագ որդու համար:

Ա. Վիսիոն. Փարիսեցիր ինչն չէին կարողանում հաջու աղքով նայել Յիսուսի վրայ: Կորած ոչխարբ ինչո՞վ և տարբերում կորած դրամից: Ի՞նչ բան տարաւ կրտսեր որդուն օտարութիւն: Հրեից կարծիքով այդպիսի որդին ինչ էր: Ի՞նչ զրկանքներ կրեց անառակր: Հայրն ինչն սիրով ընդունեց զղացած որդուն: Աւագ որդին ինչո՞ւ էր զայրացել հօր դէմ: Ի՞նչ ներգործութիւն կաներ կրտսեր որդու սրտի վրայ հօր քաղցր ընդունելու բիւնը: Յիսուսի հակառակորդները ո՞ր որդու նման էին:

15. ԶԲԴԱՏԵԼ ՈՉ ՈԲԻ

Ա. Ի՞նչպէս պիտի դատել

«Յիսուս ասում էր, «մի դատէք, որ դուք ևս չըդատուէք, որովհետեւ ինչ դատանանով որ դատէք, նոյն տեսակ դատուելու էք, ինչ չափով որ չափէք, նոյն կերպով էլ չափուելու էք: Ինչու ես տեսնում քո եղբօր աշքի շիւղը և քո աշքի գերանը չես տեսնում: Կամ ինչու ես ասում եղբօրդ՝ թող քո աշքի միջից շիւղը հանեմ, բայց ահա, քո աշքի մէջ գերան կայ: Կենծաւոր, նաևս քո աշքի գերանը հանիր և յետոյ ուշ դարձրու քո եղբօր աշքից շիւղ հանելու»:

(Մատթ. Է. 1—5):

Դատելը վատ բան է, երբ գործ է ածւում զրպարտեալու, բամբասելու մտքով: Ճշմարտասէրը միշտ լաւ բարեկամ է, նա նկատած թերութիւնը երեսին է ասում և ոչ ետևից բամբասում: Երեսին ասողի նպատակն է նրան ուղղել, ետեւից խօսողի, դատողի նպատակն է վնասել Բամբասուածը մեծ մասով հնար չունի պաշտպանուելու, յաճախ նրան արհամարհում են անիրաւ տեղը: Դատել—խօսել կարելի է անխնայ ճշմարտութիւն ասելով և ոչ թէ բամբասել կեղծաւորել:

Բ. Սրբութիւնը շների առաջ մ'ի՛ գցիլ.

«Յիսուս շարունակեց խօսքը. «Սրբութիւնը շների առաջ մ'ի գցէք և մարգարիտները խողերի առաջ մ'ի թափէք, չըլինի թէ ոտի տակ կոխուեն և դառնալով ձեզ ծաղրի առարկայ շինեն»:

(Մատթ. Է. 6):

Դժուար բան է ուրիշի գլխին դատաւոր դառնալը, ոռովհետև ով կայ, որ մեղքից, սխալմունքից զերծ լինի: Ուրիշին ուղղելուց առաջ մարդ դեռ իրան պիտի ուղղի: Ընկերի թերութիւնն անկեղծօրէն ուղղողը պիտի լինի զգոյշ, խոհեմ: Իսկ երբ զիմացի անձը ոչ անկեղծութիւն է հասկանում, ոչ բարեսրտութիւն և ոչ Աւետարանի սրբութիւն, այդպիսի անդէտին աւելորդ է բան ասել, նա օդտուելու փոխարէն կըսկսի քո խօսքերը ծաղրի առարկայ շինել:

Ա. մ փ ո փ ո ւ մ: Յիսուս ի՞նչ պարագայում էր արգելում դատել ընկերի բերութիւնների վրայ: Ի՞նչպիսի պարագայում կարելի է բոյլատրելի համարել: Յիսուս մաս համար էր շներ խօսքը զործ ածում: Ի՞նչ էր հասկանում մարզարիտներ ասելով: Ո՞վքեր եին խոզերը, որ մարզարիտները պիտի կոխուեին:

Համեմատ, համար կարդալ Ղուկ. Զ. 37.

Ե6. Յիսուսի գթամրտութիւնը եհ ԱՇԱԿԵՐՏ-ՆԵՐԻՆ ՔԱՐՈՉԵԼՈՒ ՈՒՂԱՐԿԵԼԸ.

Ա. Կարենկցելը եւ Աստծուց օգնութիւն հայցելը.

«Յիսուս անդադար շըջում էր քաղաքները, գիւղերը, քարոզում էր նրանց ժողովարաններում, ուսուցանում էր արքայութեան աւետարանը, բուժում էր ժողովրդի մէջ եղած ամեն տեսակ ախտերն ու հիւանդութիւնները: Այցելելով ժողովրդին կարեկցում էր նրան, որովհետեւ հարստահարուած էր ու ցրուած զանազան կողմեր ինչպէս անհովիւ ոչխարներ: Այդ պատճառով ասեց աշակերտներին. «Ճերքելը մեծ են ու շատ, իսկ մշակները սակաւ, այժմ աղաչեցէք բերքերի Տիրոջը, որ իրա բերքերի համար մշակներ հանիս:» (Մատթ. Թ. 35—38):

Իսրայէլի ժողովրդի առաջնորդները ըստ կրօնականին մարդիսեցիններն էին, որոնց աստուածպաշտութեան մէջ մեծ տեղ էին բռնում ծէսերը, երկար աղօթքները ու հակակրում էին այն անձանց, որոնք իրանց պէս չէին անում. մաքսաւոր ու մեղաւոր անձանց բոլորովին ողջոյն չէին տալիս: Ֆրան հակառակ էր Յիսուսը, նրա հայեացքով ճշմարիտ աստուածապաշտը նա էր, որ ուրիշի վիշտն իրա սեպհականն էր համարում: Այս նեղ ճանապարհով, ուր զրկանք քաշել էր հարկաւոր, մեծամասնութիւնը չէր զնում, ընչափիրութիւն արգելում էր: Իսկ Յիսուսի գութը շարժւում էր, երբ տեսնում էր ժողովրդին մոլորուած ոչխարների նման թափառելիս, Ցանկանում էր նրան պատրաստել Աստծու արքայութեան համար. այդ մեծ գործը մարդկային ուժերից քայլութեան համար. այդ մեծ գործը մարդկային ուժերից գեր էր, ուստի աշակերտներին յորդորում էր, որ Աստծու գոնութիւնը հայցեն:

Բ. Յիսուս ի՞նչ պատուիրեց աշակերտներին.

«Յիսուս տամներկու աշակերտներին կանչեց

իրա մօտ և երկ-երկու ուղարկեց, նրանց իշխանութիւն էր տալիս պիղծ դկերի վրայ: Նրանց պատուիրում էր, որ ճանապարհի համար ոչինչ չըվերցնեն բացի մի գաւազանից. ոչ պարկ, ոչ հաց և ոչ պղնձէ դրամներ գօտու մէջ: Հողաթափներ գցեն ոտները, բայց հետները երկու պարեգօտ չըվերցնեն»:

(Մարկ. Զ. 7—9):

Յիսուս աշակերտներին պատուիրեց Աստծու արքայութիւնը ամենից առաջ քարոզել հրէաներին, որովհետև նըրանք աւելի նախապատրաստուած են ըմբռնելու, կեանքի օրինակը ամենազօրեղ միջոցն էր Աստծու արքայութիւնը տարածելու համար, դրա համար Յիսուսի պատուէրն էր շրջել տները, մօտ յարաբերութիւն ունենալ ընտանիքի անդամների հետ և նրանց դարձնել Աստծու արքայութեան կողմակիցներ:

Գ. ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷջ ապրելը.

«Յիսուս աշակերտներին ասում էր. «ինչ տուն որ մտնէք, մասցէք այնտեղ մինչեւ այն քաղաքից կամ գիւղից դուրս գալը, որը ձեզ չի ընդունիլ, ձեզ ականջ չի դնիլ, այն քաղաքից դուրս գալիս թափտուէք ձեր ոտների փոշին իբրև վկայութիւն նրանց արարքի: Ճշմարիտ եմ ասում ձեզ, աւելի հեշտ կը լինի դատաստանի օրը Սոդոմ ու Գոմոր քաղաքների համար քան թէ այն քաղաքի»:

(Մարկ. Զ. 10—11. Մատ. Ժ. 15):

Յիսուս կամենում էր, որ աշակերտները մարդկանց սրտերը գրաւեն առանց իրանց գրպանի շահն աչքի առաջ ունենալու, այդ պատճառով պահանջում էր, որ նրանք ոչ մի վարձ չառնեն քարոզութեան կամ բժշկութեան համար, ժողովուրդը պիտի համոզուէր, որ աշակերտները Աւետարանը քարոզում են ներքին մղութից, անկեղծ կարեկցութիւնից և ոչ թէ փողի սիրուց: Յիսուս գիտէր, որ ունկնդիր-

ների մէջ երախտազէտ սրտեր միշտ կըլինեն և յօժարակամ նուէրներով կըվարձատրեն նրանց, ինչ որ անհրաժեշտ է ապրուստի համար:

Դ. Եղէք խորագէտ.

«Յիսուս ասում էր աշակերտներին. «ահա ուղարկում եմ ձեզ իբրև ոչխարներ գայլերի մէջ, այսուհետև եղէք օձերի պէս խորագէտ և աղաւնիների պէս միամիտ: Զգոյշ կացէք մարդկանցից, չըլինի թէ ձեզ մատնեն իրանց դատարանների առաջ և իրանց ժողովարաններում ձեզ տանջեն: Դատաւորների ութագաւորների առաջ կըտանեն ձեզ իմ պատճառով, որ վկայէք նրանց ու հեթանոսներին»:

(Մատ. Ժ. 16—18):

Յիսուս պահանջում էր, որ աշակերտները կեանքները չըխնայեն Աստծու արքայութիւնը քարոզելու համար, բայց միւնոյն ժամանակ լինեն խելօք, որ զուր տեղ իրանց անձը վտանգի չենթարկեն: Խորագիտութիւնով պիտի կըսադատեն պարագաները, մարդկանց և նրա համեմատ գործեն անկեղծօրէն: Վտանգներին դիմացրելիս պիտի ապաւինեն միայն Աստծուն:

Ե. Չըվախննար.

«Յիսուս շարունակեց պատուէրը. «բայց երբ ձեզ մատնեն, հոգ մի՛ անէք, թէ ի՞նչպէս կամ ի՞նչ պիտի խօսէք, որովհետև այն ժամին ցուցում կը տրուի, թէ ի՞նչ էք խօսելու. դուք չէք, որ այնտեղ խօսելու էք, այլ ձեր Հօր հոգին կըխօսի ձեր մէջէ նզբայրը եղբօրը, հայրը որդուն կըմատնի մահուան, որդիքը կըյարձակուեն հայրերի վրայ և կըսպանեն նրանց: Դուք իմ պատճառով ամեն կողմից ատելութեան կըհանդիպէք, բայց ով որ մինչև վերջը կըհամբերի, նա կըփրկուի:

Եթէ ձեզ այս քաղաքում կը հալածեն, փախէք
ուրիշ տեղ, եթէ այդտեղ էլ կը հալածեն, փախէք ու-
րիշ տեղ, ճշմարիտ եմ ասում ձեզ, դեռ Աւետարանը
քարոզած չէր լինիլ Իսրայէլի բոլոր քաղաքներում,
ահա մարդու որդին կը գայ: Աշակերտը բարձր չէ իրա
վարդապետից և ոչ էլ ծառան իրա տիրոջից. բաւա-
կան է աշակերտի համար, եթէ նա լինի ինչպէս իրա
վարդապետը և ծառայի համար, եթէ նա լինի ինչպէս
իրա տէրը: Եթէ տանտիրոջ անուանեցին բեհեղե-
քուղ, որքան աւելի պիտի անուանեն նրա սպասա-
ւորներին: Այսուհետեւ մի վախենաք նրանցից, որով-
հետեւ չըկայ ոչինչ ծածռւկ, որ չըյայտնուի և ոչինչ
գաղտնի, որ չիմացուի: Ինչ որ ձեզ ասում եմ խա-
ւարի մէջ, այն ասացէք լոյս տեղ և ինչ որ ձեր
ականջին է ասուած, գուք այն քարոզեցէք կտուրնե-
րի վրայ: Ամենեին մի վախենաք նրանցից, որոնք
ապանում են մարմինը առանց հօգուն վլասել կարե-
նալու, բայց վախեցէք աւելի նրանից, որ կարող է
հագին ու մարմինը միասին կորցնել գեհենի մէջ: Զէ
որ երկու ձնձուկը մի դանդի են վաճառում, սակայն
նրանցից ոչ մինը գետին չի ընկնում առանց ձեր
Հօր թոյլաւութեան: Ձեր գլխի մազն անգամ համա-
բուած է, Ուրեմն մի վախենաք, որովհետեւ գուք ա-
ւելի արժէք, քան թէ ձնձուկների բազմութիւնը:
Ով որ ինձ կը խստառվանի մարդկանց առաջ, ես էլ
նրան կը խստառվանեմ իմ Հօր առաջ, որ երկնքումն
է: Եւ ով ինձ կուրանայ մարդկանց առաջ, ես էլ
կուրանամ նրան իմ Հօր առաջ, որ երկնքումն է:

(Մատ. Ժ. 19—33)

Յիսուս նախագուշակում էր այն անթիւ հալածանքնե-
րը ու փորձանքները, որ գալու էին աշակերտների գլուխը:
Յորդորում էր զգոյշ լինել փորձանքի միջոցին, եթէ պա-
տահի, որ վտանգաւոր, նեղ տեղն ընկնեն, ամենեին չըպի-
տի վախենան կամ յուսահատուեն, այլ միխթարուեն իրանց
սրտի մէջ, որ Աստծու կամքը կատարում է:

Զ. Ոչ խաղաղութիւն, այլ սուր.

«Յիսուս շարունակեց խօսքը. «մի կարծէք թէ
եկայ երկրի վրայ խաղաղութիւն տարածելու: Խաղա-
ղութիւն տարածելու չեմ եկել, այլ սուր: Որովհետեւ
ես եկել եմ որդին հօրից բաժանելու, դուստը մօ-
րից և հարսն իրա սկեսրից և մարդու թշնամիքը կը
լինեն իրա ընտանիքի անդամները: Ով իրա հօրը կամ
մօրն աւելի կըսիրէ քան թէ ինձ, նա ինձ արժանի
չէ, ով իրա տղին կամ աղջկանն աւելի կըսիրէ քան
թէ ինձ, նա արժանի չէ ինձ»:

(Մատթ. Ժ. 34—37)

Յիսուսի գործունէութեան նպատակը կոիւն ու խոռո-
վութիւնը չէին. Նա հաւատացած էր հին մարդաբէների պէտ
թէ ժամանակով զալու է խաղաղութեան թագաւորութիւնը
երբ թրերից խոփէր պիտի շինեն և սուխներից մանգաղներ
եթէ հակառակ իրա խաղաղասիրութեան, Յիսուս հարկա-
գրուած լինէր կոռելու և վիճելու, գրա յանցանքը կըլինէր
արտաքին ծէսերով լի կըօնի պաշտպաններինը: Յիսուս
նման էր այն թժկին, որ կարեկցելուց ուզում էր հիւան-
դին օգնել, մեծ կարևորութիւն ըստալով պատճառած ան-
խուսափելի ցաւին:

Հ. Աշակերտութիւն.

«Յիսուս շարունակեց. «ով իրա խաչը չի առնիլ
և իմ ետեղ գալ, նա ինձ արժանի չէ: Ով գտնում է
իրա կեանքը, նա կըկորցնի այն և ով իրա կեանքը
կըկորցնի իմ պատճառով, նա կըգտնի այն: Ով ձեզ

ընդունի, ինձ է ընդունում և ով ինձ ընդունի, ընդունում է ինձ առաքողին։ Եւ ով այս փոքրիկներից մէկին մի բաժակ ցուրտ ջուր խմացնի իրու իմ աշակերտի, ճշմարիտ եմ ասում ձեզ, նա իրա վարձը չի կորցնի»։ (Մատթ. Ժ. 38—42):

Անշուշտ աշակերտների համար հաճելի չէր, որ Ցիսու-
սի քարոզի մէջ խաղաղութեան հետ սրի անունն ևս հնչուում
էր: Բայց Ցիսուս նրանց մխիթարում էր, ոգերեղով այն
յուսով, թէ նրանց գործն առանց վարձատրութեան չի մը-
նալ—երկնքի արքայութեան ծառայել՝ նոյն է թէ Աստծու
կամքը կատարել. նրանք իբրև Աստծու կամակատարներ
կը վարձատրուեն ճշմարիտ կեանքով, որ բարձրագոյն երջան
կութիւնն է:

Ա. մ փ ո ո և մ. Ո՞վ էր, որ հրեայ ժաղովրդին արհամար-
նելու տեղ կարեկցում էր. Ժաղովրդի կրօնական վիճակն ինչ
տպառորսութիւն էր անուան Յիսուսի վրայ: Քարոզութեան զբ-
նացած աշակերտներն ինչըն միայն հրեաներին պիտի աւետա-
րանէին: Ինչն քարոզութեան համար վարձ ընդիւմի գերցնեին:
Ինչն աշակերտները ապրուստի հո խոր շատ ընդիւմի գբա-
զուեին: Ի՞նչ զիսի տուրքեր կարող էին ընդունել: Ինչերի կը
հանդիպէին իրաւոց կոչումը կատարելիս: Վտանգներից ազատ
մնալու համար միամտութեան հետ ուրիշ ինչ յատկութիւն
պիտի ունենային: Մրկնքի արքայութեան քարոզը ինչ յեղափո-
խութիւն կը գցէր ընտանիքների մէջ: Յիսուս ինչից նարկա-
գրուած պիտի խաղաղութեան տեղ սուր բերէր: Ներկայումս
նվիրեր են Յիսուսի հայտացրներն ու գաղափարները տարա-
ծաղները:

Համեմատ. համար կարդալ Մատթ. Փ. 1—14:

**17. ԻՆՉՈՒ ՅԻՍՈՒՄԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՊԱՍ ԶԵՆ
ՊԱՀՈՒՄ**

Ա. Պատ կամ ծուր պահելը.

«Յովհաննէսի աշակերտներն ու փարիսեցիք ծոմ
էին պահում։ Ժողովրդից եկան Յիսուսին հարցըրին.
«Ինչու Յովհաննէսի ու փարիսեցիների աշակերտները
ծոմ են պահում, իսկ քո աշակերտները չեն պահում»։
Յիսուս ասեց. «Միթէ կարող են հարսանիքի մարդի-
կը (մակառներ) ծոմ պահել, քանի որ փեսան նրանց
հետ է. ոչ, քանի որ փեսան իրանց մէջն է, չեն կա-
րող ծոմ պահել։ Օրեր անցնելուց ետ երբ փեսան հե-
ռանայ, այն ժամանակ կըպահեն»։

(Uwpl. B. 18-20)

Հրէական պահքը Մովսէսի օրէնքով տարին միայն
մէկ օր է, այն էլ քաւութեան տօնին, որ գալիս էր 7-րդ
ամսի 10-րդ օրը: Բայց հրէաների մէջ կամաւոր պահքը
ընդունուած էին, կամաւորները սովորական էին դարձել,
սովորականները օրինական, ուստի Յիսուսի ժամանակ ան-
չափ շատացած էին ծոմի կամ պասի օրերը: Ոչ միայն
ամեն մի եօթնակի - շարաթի մէջ երկու օր պաս էին, այլ
ամսաթուի հաշուող 36-ի չափ պասի օրեր ևս սահմանուած
էին ցաւալի աղէտների պատճառով, առանց հաշուի առնե-
լու կամաւոր պասի օրերը՝ Պահքը - ծոմապահութիւնն այս-
պէս էր. արեի մայր մտնելուց սկսած 24 ժամ պիտի ան-
սուաղ մնային, իրաւունք կար միաժում ուտեի, խոյս
տալով մնընդարար կերակուրներից, այդ միջոցին սովորա-
տալով մնընդարար կերակուրներից, այդ միջոցին սովորա-
բար աղօթք էին անում, չէին աշխատում, քուրծ էին հագ:
նում, մոխիր էին ցանում գլխներին, չէին լուացում, չէին
օծում, բորբիկ էին ման գալիս:

Փարփսեցիք իբրև աւանդապահներ՝ պասն ու ծովը
պահելով կամենում էին անսուազութեան ու ապաշխա-

բութեան միջոցով ժողովրդին նախապատրաստել փրկութեան օրուայ համար, Պահքը նրանց համար կրօնական պարտականութիւն էր, ուստի շատ զարմանում էին, որ դրա վրայ շատ քիչ ուշադրութիւն էին դարձնում այն անձինք, որոնք լուրջ խօսում են Աստծու արքայութեան գալստեան մասին:

Բ. Առակներ կարկատանի եւ տկերի մասին.

«Յիսուս ասեց. «ոչ ոք նոր, անթափ կտորը չէ զցում հնացած հանդերձի վրայ, եթէ ոչ՝ նոր կտորը վերցնում հանում է հին հանդերձից նրա բոլոր զօրութիւնը, յետոյ աւելի խիստ է պատուում. — նոր գինին չեն ածում հին տկերի մէջ, ապա թէ ոչ տկերը կը պատառուեն, գինին կը թափուի և տկերը կը կորչեն. այլ նոր գինին ածում են նոր տկերի մէջ, երկուսն էլ մնում են անվնաս»: (Մարկ. Բ. 21—22)

Յիսուս իրա քարոզութեամբ յայտարարում էր հին ուխտի դադարումը և նոր ուխտի կանգնումը նոր սկըզբունքների հիման վրայ, Առհասարակ յայտնի է, որ հին, նստած զինու վարժուած մարդը խկոյն նորը խմելու չեվարժուած: Այդպիսու համար հինը միշտ հաճելի է թւում, մինչև ճաշակը նորին ընտելանայ: — Հրէաները սովորաբար քաղցուն կարասների մէջ չէին պահում, այլ տկերի, ուստի քաղցուն եփ գալիս, երբ տիկը լաւ կպրած չէր, փերթում, պատուում էր:

Ա. մ փ ո փ ո և մ. ի՞նչ տեսակ պահքեր կային հրեաների մէջ: Փարիսեցիք ինչ հայեացը ունիին պասի կամ ծոմի մասին: Յիսուս աշակերտների արարքն ինչնվ էր արդարացնուած Յովհաննեսի աշակերտները պասի վերաբերմամբ ի՞նչպէս էին: Հին մարգարեները զօհի, պասի մասին ի՞նչ էին ասել:

Համեմատ. համար կարդալ Մատթ. Թ. 14—16. Ղուկ. Ե. 33—39:

18. ՈՐԴՈՒԻ ԽՆԴՐՈՒԱԾՆԵՐԸ ԵՐԿՆԱԻՈՐ ՀՕՐԻՑ— ՏԵՐԱԽՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Ա. Աշակերտները խնդրում են Յիսուսին, որ իրանց աղօթքը ուսուցանէ.

«Մի օր Յիսուս մի տեղ առանձնացած աղօթում էր, երբ աղօթքը վերջացրեց, աշակերտներից մէկը մօտեցաւ և ասեց. «Տէր, սովորցրու մեզ աղօթելը, ինչպէս Յովհաննէսը սովորցրել է իրա աշակերտներին: Յիսուս ասեց. «Երբ դուք աղօթքի կենաք. ասացէք այսպէս...»: (Ղուկ. Ժ. 1—2)

Հրէական բարեպաշտութեան գլխաւոր յատկանիշներից մէկն էր երկար աղօթելը: Յիսուս իրա հետեղներին այլ ուղղութեամբ էր տանում. պարտաւորեցնում էր, որ ձգտեն Աստծու արքայութեան և Աստծուց խնդրեն մշակներ նրա համար: Աղօթքին որոշ ձեւ տալ, կը նշանակէր աղօթքի էռթիւնը թուլացնել: Բայց որովհետեւ Յիսուս ինքը առանձնացած աղօթելու սովորութիւն ունէր, յօժարուեց աշակերտների խնդիրը կատարել: Կամենում էր մի ընտիր աղօթքով նրանց հոգին կրթել, որ Աստծու շնորհած բարիքն ու ողորմութիւնը առանց գոհութիւն մատուցնելու չընդունեն:

Բ. 1. Խնդրուած. «Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն բու: (Մատթ. Զ. 9)

Հին իսրայէլացիք Տիրոջ անունը սրբացնում էին անթիւ զոհերի ու ծէսերի միջոցով. յետոյ մարգարէները այդ պաշտամունքների ու զոհերի փոխարէն պահանջեցին արդարութիւն, ընկերսիրութիւն: Յիսուսին հետեղը պիտի իւընդրէ՛ Երկնաւոր Հայր, Սուրբ լինի քո հոգին իմ մէջ» որ ինձ ուժ, գորութիւն տայ, որ կարենամ քեզ ծառայել և քո անուան պատիւ բերել:

Գ. 2-րդ խնդրուած. «Եկեսցէ արքայութիւն քո» (Մատթ. Զ. 10):

Յիսուս առել էր՝ Աստծու արքայութիւնը կըզայ այն ժամանակ, երբ մարդիկ սրտով, ներքին աշխարհով կը բարեփոխուեն, կը սիրեն ընկերին, կը դադարեն մամոնային ստրուկ մնալուց: Յիսուսի աշակերտը Հօրը պիտի խնդրէր՝ թող քո արքայութիւնը մտնի իմ հոգու մէջ: Որովհետև Աստծու, սիրոյ արքայութիւնը, արդարութիւնը տարածուելու են կենդանի խօսքի քարոզութեան միջոցով, ուստի այս հատուածեն պատշաճ կըզայ նոյնպէս այս խնդրուածը՝ Հայր, առաքիր այնպիսի աշակերտներ, որ աշխարհի համար դառնան աղ և լոյս:

Ե. 3-րդ խնդրուած. «Եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի» (Մատ. Զ. 10)

Մարգարէի քարոզութիւնից յայտնի է, որ Աստծու կամքն էր. «Թո ունեցածից բաժին հանիր քաղցածին, կարոտեալին, այսինքն կարեկից սիրտ ունեցիր»: Յիսուս ասում էր՝ իրաւախոն եղիր հակառակորդների հետ, մի գատի մէկի՝ նրան զրպարտելու դիտումով. ամեն բանից առաջ աշխատիր ձեռ բերել Աստծու արքայութիւնը: Յիսուսին այս մտքով հետևողը պիտի ասէր՝ երկնաւոր Հայր, ինձ ուժ և կարողութիւն տուր, որ յաղթելով ընչասիրութեան, մարմական ցանկութեան և վրէժխնդրութեան կարենամ քո կամքը կատարել:

Ե. 4-րդ խնդրուած. «Զհաց մեր հանապազորդ տուր մեղ այսօր»: (Մատ. Զ. 11)

Այստեղ խնդրածը լոկ հացին չի վերաբերում, հարկ չըկար ազօթքով Աստծուց հաց խնդրել. անթիւ բարենք ունենք Աստծու ջնորհով ստացած՝ կեանք, առողջութիւն, զգայարաններ, մտաւոր ունակութիւններ, ծնողներ ևն, ևն. Ինչպէս զաւակները ծնողներից ստացած ընծաների համար գոհութիւն են յայտնում, նոյնպէս մենք իրեն երախտապարտներ գոհութիւն պիտի մատուցաններ Աստծուն. Աստծուց ստացած վերոյիշեալ բարիքները ամենօրեայ հացի պէս անհրաժեշտ են, ուստի Յիսուսին հետեւ ողը պիտի խնդրի, որ Աստծուած անպակաս անի:

Զ. 5-րդ խնդրուած ռեւ թող մեղ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց զպարտապանաց:» (Մատ. Զ. 12)

Յիսուս գիտէր, որ սխալուելը մարդու համար բնական է, ուստի յորդորում էր ներողամիտ լինել դէպի մեղաւորները, պարտապանները (իրկու պարտապաններ և մեղաւոր կինը): Յիսուս պահանջում էր զո՞ն անողից նախգնալ հաշտուիլ եղրօր հետ, քէնը սրտից հանել: Ով ուրիշից մեծանոգութիւն է պահանջում, առաջ ինքը մեծանոգի պիտի լինի:

Է. 6-րդ խնդրուած. «Եւ մի տանիր զմեղ ի փորձութիւն»: (Մատ. Զ. 13)

Մարդ չըկայ, որ աշխարհի մէջ փորձութեան չըհանդիպի: Փորձութիւնները լինում են զանազան, մէկը կուլ է գնում ազանութեան ու սկսում ամեն մի անսուրբ միջոցով հարստութիւն դիզել, երկրորդը՝ բարկութիւնից կըակ կտրուած՝ կամենում է իրան խօսքով վիրաւորողին խփել սպանել, մի ուրիշը կհանքի անյաջողութիւնից վհատուած ուզում է ոճիր գործել, չորրորդը գայթակղուել է, կամենում է անհաւատարմութիւն անել վարած պաշտօնի մէջ: Կեանքն անթիւ փորձութիւններ է գնում մարգուս առաջ, բայց դրանից այն ժամանակ ազատ ու ապահով կըմընայ, երբ մաքուր սիրտ և հաստատուն կամք ունենայ: Յիսուսին հետևողը Աստծուց այդ երկու բանը պիտի խնդրի, որ այս ու այն արտաքին առիթը չըդառնայ նրա համար փորձութիւն:

Ը. 7-րդ խնդրուած. «Այլ փրկեա զմեղ ի չարէ» (Մատ. Զ. 13)

Այստեղ խօսքն այն չարիքի մասին է, որ իբրև կսկիծ առաջ է գալիս գործած յանցանքի զգացումից: Այդ կսկիծը առիթ է զառնում զզման զգացմունքին, որով մաքրում է մարդու ներքին աշխարհը: Այդ աեսակ կսկիծը ծառայում է իբրև փորձաքար: Աւանց ներքին ապրումի չըկայ բարեւուած առօր առօր առօր:

փոխութիւն։ Ազօթքի առարկան լինում է տարբեր, երբեմն
արտայայտում է վիշտ, երբեմն սրտի փափագ, երբեմն
գործած յանցանքի խոստովանութիւն, երբեմն զղջում ու
բարեփոխուելու ցանկութիւն ևն։

Թ. Խնդրողին չի մերժուիլ.

«Յիսուս խօսքը շարունակեց. «Ես ձեզ ասում
եմ, խնդրեցէք, կըստանաք, որոնեցէք, կըգտնէք,
դուռը ծեծեցէք, առաջներիդ կըբացուի: Որովհետեւ
ամեն մի խնդրող ստանում է, ով որ որոնում է, գրտ-
նում է և բաղիսողի առաջ դուռը բացւում է: Ո՞ր հայրը
կըլինի ձեզանից, որ որդին հաց ուզի, նա քար տայ
նրան: Կամ ձուկն ուզի, կարիճ տայ նրան: Ուրեմն
եթէ դուք ձեր չար տեղով գիտէք բարի պարզեներ
տալ ձեր որդիկերանց, որքան աւելի ձեր երկնաւոր
Հայրը սուրբ հոգի կըտայ նրանց, որ խնդրում են
նրանից»:

Ա մ փ ո փ ո ւ մ. Աշակերտներն ի՞նչ խնդրեցին Յի-
սուսից: Ինչի՞ց դրդուած արին այդ, Վարդապետն ինչո՞ւ
կատարեց նրանց խնդիրը, Ի՞նչ հոգի եւ ուղութիւն է տի-
րուամ նրա ուսուցած աղօքքի մեջ: Ի՞նչ բան է աղօքքը, ինչ
բովանդակութիւն է ունենամ:

Համեմատ. համար կարդալ Ղուկ. ԺԱ 2-4, 9-13

19. ՅԻՍՈՒՄ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ.

Ա. Ծովհաննէսի քանտարկուելը եւ Եիսուաին հարցմունք տալը

«Յովիհաննէսը բանտարկուած միջոցին երբ լսեց Քրիստոսի գործերը, իրա աշակերտներից երկուսին ուղարկեց նրա մօտ և հարցրեց. «արդեօք դժւ ես,

որ պիտի գայ, թէ ուրիշն սպասենք։ Յիսուս պատասխան տուեց և ասեց Նրանց. «Ճնացէք, պատմեցէք Յովհաննէսին, ինչ որ լսեցիք ու տեսաք, անակոյրերը տեսնում են; կաղերը մանեն գալիս, բորոտները մաքրում են, խուլերը լսում են, մեռեները յարութիւն են առնում, աղքատները աւետիք են լսում և երանելի է նա, ով որ իմ զօրութեան վրայ չի կասկածիլ» (Մատթ. ֆԱ. 2-6)

Հերովդէս մեծը երկրորդ կնոջից ունէր աղջիկ թռո՛
Հերովդիալա անունով. երրորդ կնոջից ունէր մի տղայ՝ Փի-
լիպպոս անունով, որ կին առաւ իրա եղթօր աղջիկ Հերով-
դիալային, որից ծնուեց Սալոմէն. Չորրորդ կնոջից ունե-
ցաւ ուրիշ որդի՝ Հերովդէս Անտիպաս, որ գարձաւ Գալիլի-
այի չորրորդապետը: Սա ամուսնացած էր Աբարիայի թա-
գաւորի աղջկայ հետ, բայց Հերովդաղիան վարժից թեթև կին
լինելով՝ թողեց իր ամուսնուն ու եկաւ յաւնի կերպով ապ-
րեց Անտիպասի հետ: Ամուսնուց դեռ բաժանուած չէր. այդ բա-
նըն ընդհանուրի զայրոյթը շարժեց, բայց նվ կըհամար-
ձակուէր թագաւորի ընտանիքին նկատողութիւն անել, Յովի-
հանսէսը, որ մարդարէի պաշտօնով գործել սկսել էր Հոռմի
հիմարկութեան 779 թ. Յորդանանի մօտերքում, այժմ
զուրս էր եկել Գալիլիայի կողմերը քարոզելու: Անտիպասն,
իբրև հոչակաւոր մարդարէի, սրան հրաւիրեց իրա մօտ մի
քանի հարցերի պատասխան տալու: Անեղիկիւզ անապա-
տականը դէպեից օգտուելով բացարձակ յայտնեց թագաւո-
րին, որ օրէնքի դէմ է ուրիշի չարձակուած կնոջը տանը
պահել: Այդ բանի վրայ կատաղեց Հերովդիալան, և այնքան
գրգռեց Անտիպասին Յովիհանսէսի դէմ, որ շուտ նրան կա-
լանաւորել տուեց թեթսան քաղաքի մօտերքում քարոզելիս.
շղթայակապ դրին բանտը, առաջ Մեռեալ ծավի մօտակայ-
քում էր, յետոյ փոխադրեցին Տիբերիա քաղաքը:

Յովհաննէս առաջին անգամ Յիսուսին հասդիպելիս
մեծ տպաւորութիւն էր ստացել այժմ լուսէ էր նրա աղ-

գու քարոզների ու բժշկութիւնների մասին. յանկարծ նրա
մէջ այս հարցը դարձեց. «Միթէ սա է լինելու երկնային
արքայութիւն բերողը»: Նրա աշակերտները չափազանց ան-
հանդիստ էին, որ մի ուրիշը խլում է իրանց վարդապետի
վառքը: Նրանց հանգստացնելու համար Յովհաննէսն ասում
էր. «ոչ ոք չի կարող ինքն իրան երկնըի առաքեալ անուա-
նել և աշողութիւն ունենալ, եթէ Աստծուց այդ կոչումը
ստացած չէ»: Աշակերտները կասկածում էին Յիսուսի Մե-
սիա լինելու մասին, որովհետեւ նրա աշակերտները օրէն-
քի պատուիրած ծէսերը չէին պահում: Յիսուսի գործունէ-
ութիւնը նրանց երեակայած Մեսիայի պատկերը չէր: Այդ
կասկածը փարատելու համար էր, որ բանտարկուած Յով-
հաննէսը մարդիկ ուղարկեց նրա մօտ:

Բ. Յովհաննէսի Հովթիւնը,

«Երբ որ Յովհաննէսի աշակերտները գնացին,
Յիսուս պկսեց նրա մասին ժողովրդի հետ խօսել.
Քինչ տեսնելու համար էիք անապատ գնացել, արդեօք
մի եղէզ, որ զարժւում է հողմից։ Դուրս էիք եկել
ուրիշ ինչ տեսնելու, արդեօք մի մարդ, զարդարուած
փափուկ հանդերձներով։ Նրանք, որ երևելի հանդերձ
են հագնում և ապրում են փարթամութեան մէջ,
թագաւորի պայտաներում են։

Յիսուս խօսքը շարունակեց. «Դուքս եկաք ուրիշ
ինչ աեսնելու, արդեօք մի մարգարէ։ Այս, ասում
եմ ձեղ, նա առաւել է քան մի մարգարէ։ Որովհետև
նա է, որի համար զբուած է. «ահա կուղարկեմ իմ
հրեշտակը ձեր առաջ, որ պատրաստի ճանապարհ-
ները, որոնցով ընթանալու էք»։ Ճշմարիտ եմ ասում
ձեղ, կանանց ծնունդների մէջ չի եղել աւելի մեծ
քան Յովհաննէս. Մկրտիչը՝ Բայց երկնքի արքայու-
թեան միջի փոքրիկն աւելի մեծ է քան թէ նա։

Բայց Յովհաննէս Մկրտչի օրերից մինչև այժմ
երկնքի արքայութիւնը բռնադատում է և բռնաւորներն
են յափշտակում այս: Որովհետեւ բոլոր օրէնքները ու
մարգարէները մինչև Յովհաննէս մարգարէացան, եթէ
կամենում էք ընդունել, նա է Եղիան, որ գալու է.
ում ականջը ընդունակ է լսելու, թող լսի:»

(U.S. Pat. & T. L. 7-15)

Յիսուսին մեծ վիշտ էր պատճառում, որ իրա ժամանակից ամենամեծ անձը – Յովհաննէսը, լիակատար չէր ըմբռնում նրա գործունէութիւնը: Ճիշտ է, բարձր էր գնահատում Յիսուս նրա անվեհներութիւնը, բարյական լրջութիւնը, որով յանդիմանութիւն էր կարդում այխարհի զօրեղների երեսին, բայց չէր թագցնում իրա հայեացքի տարբերութիւնը նրանից: Յովհաննէս աշխարհից փախչում էր անապատ, Յիսուս ընդհակառակ գործում էր աշխարհի մէջ, աշխարհի համար: Յովհաննէս ասում էր՝ ով օրէնքը սրբութեամբ չըկատարի, նրա գլխին թափուելու է աստուածային անշէջ հուրը, իսկ Յիսուս հաւատում էր, որ մարդը Աստծու որդին է, ինքնայօժար պիտի կատարի աստուածային կամքը: Յովհաննէսը թէև երկնքի արքայութեան համար շաւիդներ էր պատրաստում, իրա ապաշխարութեան քարոզներով մարդկանց սրտերը մեղքերից մաքրում, այնուամենայնիւ Յիսուսի աչքում մնում էր գալրձեալ օրէնքի մարդ, որի բարեպաշտութիւնը սկիզբ էր առել ու աճել երկիւղից, սակայն երկնքի արքայութիւնը չի գալ բուռն ուժի միջոցով՝ այլ Աստծու կամքով:

Ա. մ փ ո փ ո ւ մ. Ո՞վքեր էին Հերովդիաղան, Փիլիպպսը
և Հերովդես Անտիպասը. Ինչն կալանաւորուեց Յովհաննես
Մկրտիչը. Ո՞ւմ զգրծունենութեան վրայ էին նախանձում նրա
աշակերտները. Յովհաննես ինչն աղակերտներ ուղարկեց Յի-
սուսի մօս. Յիսոս ինչ հայեաց ուներ Յովհաննեսի վերա-

բերմամբ։ Յովիաննէսի ուղղութիւնը ինչո՞վ էր տարբերում
նրանից։
Համեմատ. համար կարդալ Ղուկ. է. 18—30

20. ՅԻՍՈՒՍԻ ԳՈՐԾՈՒՆԷՌԻԹԻՆԸ ԾՈՎԱՓՆԵԱՅ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

Ա. Հրապարակի մանուկներ.

«Յիսուս ասեց. «Ում նմանեցնեմ այս ազգին,
նման է այն մանուկներին, որոնք նստում են հրա-
պարակներում և բարձրածայն կանչում են իրանց
ընկերներին և ասում. «Մենք փող փշեցինք և դուք
պար չեկաք, մենք ողբեր ասինք ե դուք լացու կոծ
չարիք»։ Յովիաննէսն եկաւ, չէր ուտում, չէր խմում,
նրա համար ասում են՝ գե կայ նրա մէջ։ Եկաւ մար-
դու որդին, նա թէ ուտում է և թէ ըմպում, նրա
համար ասում են՝ ահա մի ուտող և արբեցող մարդ,
քարեկամ է մաքսաւորներին և մեղաւորներին, և
իմաստութիւնը պիտի արդարանայ իրա որդիներից»։
(Մատթ. ԺԱ. 16—19)

Յիսուս իրա ունկնդիրներից պահանջում էր, որ իրա
խօսքերի համեմատ շարժուեն ու գործեն։ Փարիսեցոց փոյթը
չէր նրա ասածները, նրանք զեռ անբաւական էին, որ Յի-
սուս իրանց տառծով չի շարժուում։ Յիսուսի քարոզներին ա-
ւելի ուշ դարձրին ձկնորսները, մաքսաւորները, որոնք
հրէանների աչքում ոչ մի համարմունք չունէին։ Երբ Յով-
հաննէսը պահեցողութիւն էր պահանջում, գալիքացիք
իրանց օրն անց էին կացնում կերուխումով, իսկ երբ Յի-
սուս սիրով աւետարանում էր թէ մարդս Աստծու որդին է,
նոյն գալիքացիք կամենում էին Յիսուսին աղաշխարհոց

դարձնել, բազմաթիւ պաս ու ծոմերով նրան նեղել։ Տեսնելով
որ դրանք անուղղելի են, Յիսուս յոյսը դնում էր յետագայ
աերնդի վրայ։

Բ. Կշտամբանք ծովափնեայ քաղաքներին.

«Այն ժամանակ Յիսուս սկսեց նախատել այս
քաղաքներին, որտեղ շատ հրաշքներ էր գործել և
նրանք չէին ապաշխարել։ «վայ քեզ Քորագին, վայ
քեզ, Բեթայիդա, եթէ ձեր մէջ եղած հրաշքները,
զօրութիւնները Տիւրոսի և Սիդոնի մէջ կատարուէին,
վաղուց նրանց բնակիչները կապաշխարէին քուրձ
հագնելով և գլխներին մոխիր ածելով։ Բայց ասում
եմ ձեզ, դատաստանի օրը աւելի հեշտ կըլինի Տիւրոսի
և Սիդոնի երկրի համար, քան թէ ձեզ։ Եւ դու, Կա-
փառնայում քաղաք, որ սինչե երկինք բարձրացել
ես, մինչե գժոխիր կըքաշանաս, որովհետե եթէ քո մէջ
եղած զօրութիւնները Սոողոմի մէջը կատարուէին,
անշուշտ մինչե օրս էլ գոյութիւն կունենար։ Այդ պատ-
ճառով ասում եմ ձեզ, սողոմացոց երկրի համար աւելի
հեշտ կըլինի դատաստանի օրը, քան թէ քեզ համար։»
(Մատթ. ԺԱ. 20—24)

Հրէանները Յիսուսից պահանջում էին մեսիական նշան-
ներ։ Յիսուս այդպիսի բաներ չէր խոստացել, եռանդով շա-
րունակում էր երկնքի արքայութեան մասին քարոզել։ Այդ
պատճառով աւանդապահ հրէանները նշանակութիւն չէին
տալիս Յիսուսի քարոզներին։ Ամենից շատ աշքի էին ընկ-
նում ծովափնեայ մեծամիտ քաղաքները, որոնք շարունա-
կում էին զեղիս ու անբարոյական կեանք վարել։

Գ. Տղաներ ու հարստահարուածներ։

«Գոհութիւն եմ մատուցանում քեզ, Հայր, եր-
կընքի ու երկրի տէր, որ այս ծածկել ես իմաստուն-
5

ներից, պիտուններից և յայտնել տղաներին։ Այս՝ գոհութիւն քեզ, Հայր, որովհետև այդպէս ես կամեցել։ Ամեն բան ինձ տրուած է իմ Հօրից։ Որդուն ոչ ոք չի ճանաչում, բացի Հօրից և Հօրը ոչ ոք չի ճանաչում, եթէ ոչ որդին և միայն նա, ում որդին կըկամենոյ յայտնել։

Եկէք ինձ յօտ ամեն հարստահարուածներ և բեռնաւորներ, ես ձեզ թեթևութիւն կըտամ։ Վերց-ըէք իմ լուծը ձեր վրայ և ինձանից ուսէք, որովհետև հեզ եմ և սրտով խոնարի և դուք հանգստութիւն կըգտնէք ձեր հոգու մէջ։ Որովհետև իմ լուծը քաղցր է և իմ բեռը թեթև։ (Մատթ. 25—30)

Յիսուսի համակրութիւնը տկարների ու տառապեալների կողմն էր, նա իրան անշափ երջանիկ էր համարում, որ կատարում էր հայր Աստծու կամքը։ Ուր էլ շրջում էր, նրան առանձին սիրով շրջապատում էին տղաներն ու հարստահարուածները։ Այդ տկար դասակարգերից խրախուսուելով՝ երկնաւոր Հօրը գոհութիւն էր մատուցանում։

Ա. մի փունմ. Խճզո՞ւ Յիսուս ցանկալի ընդունելուրին զբգտաւ ծովափնեայ, վաճառաշամ քաղաքներում։ Աւանդապան նրեաներն ի՞նչ նշաններ եին պահնաջում Յիսուսից։ Յիսուս ինչո՞ւ եր դատապարտում ծովափնեայ քաղաքներին։ Կատարեալ աստուածյայտնուրինն ինչո՞վ երեւաց Յիսուսի մէջ։

Համեմատ, համար կարդալ Ղուկ. է. 31—35, Ժ. 13—15, 21—22; Յովհ. ԺԲ. 34—36

21. ԵՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. Ո՞րտեղ եւ ո՞ւմ էր քարոզում։

Յիսուս մեծ մասամբ կոչ էր անում խեղճերին, զրկուածներին, վաստակեալներին, բեռնաւորներին,

որոնք ոչ մի կողմից մխիթարութիւն չունեին։ Գիտունները, ուարքիները նրան արհամարհում էին, որովհետև նա Մեծ ատեանի անդամ չէր, հարուստներն ու երեկոի իշխանները ուշ չէին դարձնում նրա վրայ, տեսնելով որ անտուն, դէս ու դէն թափառում է։ Յիսուսին ուրախացնողները ապաշխարող մեղաւորներն էին, որոնք նոր հոգի էին ստացել, լսելով Յիսուսի բերանից, թէ Աստուած ներել է նըրանց նախկին յանցանքները։ Այդ մեծ աւետիք էր նրանց համար։

Յիսուս Տիբերեա ծովի ափից հեռանալով բարձրացաւ մի լեռ, որ Կափառնաումից մօտիկ էր, լեռան երկու գագաթների մէջ գտնուած ընդարձակ տափարակի վրայ մնաց զիշերը և աղօթքով անցկացրեց։ Առաւօտն իրա շուրջը ժողովելով աշակերտներին ու բազմութեան, սկսեց ուսուցանել։

Բ. «Երանի աղքատաց հոգով, զի նոցա է արքայութիւն երկնից» (Մատ. Ե. 3)

Հոգով աղքատ պիտի հասկանալ այն տեսակ անձանց, որոնք ինչքան էլ առաջ են գնում մաքի զարգացումով, գարձեալ համարում են իրանց թերի և ամեն լուզէ ձգտում են հոգու, մտքի պակասը լրացնել։ Հոգու աղքատութիւն մարդու մէջ զգացում է այն ժամանակ, երբ իրան համեմատում է բարձր, գերազանց առարինութիւններ ունեցող ների հետ։ Բայց փարիսեցին տաճարի մէջ իրան համեմատելով մաքսաւորի հետ զուզանում էր, որ նրան մասն չէ։ Յիսուս երանի էր տալիս իրա մեղերը խոստովանողին, իրանից բարձրին ձգտողին։ այդպիսի անձինք արգէն միքայլ առաջ են անցնում կատարելագործութեան մէջ։ Հէնց այդ առաջ անցնելու ձգտումի մէջն է նրանց երանութիւնը։ Հոգով աղքատներին խոստացուած երկնը արքայութիւնը

Նիւթական բան չէ, այլ երեմիա մարգարէի գուշակած նոր ուխտը, որի միջոցով աստուածային օրէնքը գրւում է մարդկանց սրտերի մէջ: Հոգով աղքատները սրտով փափառւմ են Աստծու կամքը լիութեամբ կատարել, ուստի նըրանք կոչւում են բազարացիք այն արքայութեան, որ երկրի վրայ սկսւում է և երկնքում իրա լրումը գտնում:

Գ. «Երանի սգաւորաց, զի նոքամ մ'սիթարեսցին»
(Մատթ. Ե. 4):

Անկարելի է հսթագրել, որ Յիսուս երանի տար երկրաւոր կորուստի համար լաց ու սուգ անողին, որի կոկիծի հիմը շահն չէ: Նոյնպէս երանի չէր տալ սիրելի աղքականի, քարեկամի կորուստը սղացողներին, որոնք վշտանում են միայն այն պատճառով, որ իրանց անձին վնաս հասաւ: Քննակառակ Յիսուսի ասած սգաւորները նըրանք են, որ իրանց մեղքը, սխալը հասկանալով, զղջման արժամառներ են թափում, ծանր զոհաբերութիւն յանձն առնելով կամենում են սրա, նրա վիշտը թեթևացնել: Այն անձինք, որոնք իրանց զդայուն սրտով ամենին ցաւակից ու կարեկից են, կատարում են Աստծու կամքը: Այդ կէտին մարդիկ հասնում են անկեղծ զդացումի միջոցով, ինչպէս մաքսաւորն էր ու անառակ որդին:

Դ. «Երանի հնզոց, զի նոքա ժառանգեսցին զեռ կիրաւ»
(Մատթ. Ե. 5)

Յիսուս երկիր ժառանգել ասելով ամենին աչքի առաջ չունէր աշխարհակալ մարդկանց, ինչպէս են՝ Ավելասուանդը Մակեդոնացին, Յուլիոս Կեսարը, Լավոլէօնը և այլն: Այստեղ իշխողը սուրն է, այդ զօրեղներին հպատակւում էր մարդն արտաքուստ, իսկ ներքուստ ատում էր նըրանց: Յիսուսի ասածը աշխարհի գանձերին էլ չէր վերաբերիլ, դըքանք անցաւը ժառանգութիւն են, այն էլ յայտնի է, որ յաճախ մարդը չէ գանձերի վրայ իշխում, այլ գանձերն են մարդու սրտի վրայ իշխում: Յիսուսի ասած հեղերը այն անհատներն են, որոնք իրանց հոգու մեծութեամբ նուաճում

են մարդկային սրտերը, նրանք իռնաքն են ու ծառայում են ուրիշներին, հեղ բնաւորութեամբ թշնամիների չարութեանը և անարդանքին, համբերում: Նա երանելի էր համարում հեղութիւնը, որպէս զի իրան հետեղները այդ հոգեւոր յատկութիւնը ձեռ բերեն:

Ե. «Երանի որ քաղցեալ եւ ծալատի իցեն արդարութեան, զի նոքա յազեսցին»:
(Մատթ. Ե. 6):

Երկար ժամանակ քաղցած ու ծարաւ եղողը ուժասպառ է դառնում ու մենում: Այդ վաճանգին չենթարկուելու համար մարդու ձգտում է իրա քաղց ու ծարաւին գոհացում տալ, բայց Յիսուսի յիշածը հացի ու ջրի սասին չէ, նրա ասածը բարձր է, երբ մէկը ձգտում է արդարութեան, ցանկանում է այն ունենալ, ինչպէս խիստ սոված ու ծարաւ մարդը հացն ու ջորբ: Յիսուսի հայեացքով այդպիսին երանելի է: — Հրէ աներն արդարութիւնը որոնել էին արտաքին արարողութիւնների մէջ, սակայն ընտիր մարգարէքը պահարակել էին այդ ձեի աստուածպաշտութիւնը ասելով՝ արդար է այն մարդը, որ Աստծու կոմքը գրած ունի սրտի մէջ, երբ քարեղն սրտի փոխարէն ըւնի մսեղէն, Աստծու սիրով լի մի սիրու: Սաւորու, որ յետոյ Պողոս դարձաւ հրէական ծէսերի ու ծոմերի կատարման մէջ ներքին խաղաղութիւն չէր դառն, քաղցած հոգով փնտրեց Յիսուսի քարոզած արդարութիւնը: Այդ տեսակ փնտրողներն ընդունում են մի գիճ կեանք, որ հետզետէ ներքնապէս լրանում է ու զուարթանում: Դրանք երբէք չեն յագենում, (յազեցողները զառնում են անտարբերներ) այլ միշտ իրանց հոգու ներսը զգալով քաղց ու ծարաւ, ձգտում են պակասը լրացնել:

Զ. «Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւնը զացին»:
(Մատթ. Ե. 7):

Սա կապուած է վերև ասածների հետ: Զի կարելի աստուածային ողորմածութիւն արտայայտել սրան, նրան ողորմութիւն բաժանելով, այդ կընշանակի անել ի ցոյցը մարդկան, այդտեղ մեր եսն է սոտիպողը և ոչ թէ ողորմա-

ծութեան զգացմունքը, որ բդիսում է սրտից: Մի գործողութիւն պիտի դրդուած լինի ներքին զգացումից, կարեկցութիւնից, որ կոչուի ողորմածութիւն և անողն էլ իրան զգայ երջանիկ, ինչպէս Սամարացին էր: Այդպիսիները վազում են դէպի կեանք, որ իրանց ողորմածութիւնը գործադրեն, առանց այդ բանի նրանք ապրել չեն կարող: Ողորմածութեան մէջ երանելի լինելը մի պտուղ է, որ աճում է միայն կեանքի ծառի վրայ: Ով որ անկիղծ կարեկցութիւն զգացել է, նա միայն կարող է Աստծու ամենողորմ սէրն ըմբռնել:

Հ. «Երանի այնոցիկ, որ սուրբ են սրտիք, զի նոքա զԱստուած տեսցեն:» (Մատ. Ե. 8):

Սրտով մաքուրները պիտի տեսնեն Աստծուն, ասուած է այստեղ, բայց խօսքը մարմնաւոր աչքով տեսնելու մտախն չէ, որովհետև մեր ըմբռնած Աստծուածը հոգի է, նրան հասարակ աչքով չի կարելի տեսնել: Մաքուր սրտերը կարող են զգալ Աստծուն, որովհետև այդ տեսակ սրտերին են մատչելի վեհ, աստուածային առաքինութիւնները: Ապականութիւններով լեցուն սրտերը ընդունակ չեն իրանց մէջ տեղաւորելու և պահպանելու ոչ ճշմարիտը, ոչ գեղեցիկը և ոչ բարին:

Հ. «Երանի խաղաղաբարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոշեսցին:» (Մատ. Ե. 9)

Խաղաղաբար մարդիկ Աստծու որդիք են: Խաղաղութիւն տարածողները պիտի ազատ լինեն նախանձից, ատելութիւնից, չըկամութիւնից, Սրտի մէջ խաղաղութիւն կըտիրի այն ժամանակ, երբ այնտեղից արտաքսուած են կրքերն ու չար հակումները, այդպիսի սիրտը կըհատեի խղճի ձայնին, որ Աստծու ծարնն է: Ով որ կարենայ, ուրիշների սրտերն այդ դրութեան մէջ զնել: Նա խաղաղաբար է: Միայն նա կարող է այդ պարագայում ուրիշների առաջնորդել, ով ինքը մաքուր ու անկեղծ սիրտ ունենալով խաղաղութիւն է ձեռ բերել: Խաղաղութիւն տարածողները պիտի

Գլուխուեն Աստծու որդիք, որովհետև նրանք են, որոնց մէջ քնակում է Աստծու Սուրբ հոգին:

Թ. «Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից»: (Մատ. Ե. 10)

Աշխարհիս երեսին աւանդապահները, հնապաշտները միշտ դէմ են եղել նոր գաղափարների, արհամարհել և հալածել են բոլոր իմաստուն, ճշմարտախօս մարդկանց, Հրէաներն անարգեցին իրանց մարդարէներին, որոնք ժողովրդի բարին կամենալով, նրան մոլորուած վիճակում կարեկցելով քառողում էին մաքուր կրօն, որ նրա միջոցով Արարչին պաշտեն ու ձգտեն նրան նմանուել:

Ժ. «Երանի է ծեզ, յորժամ նախատիցեն զծեզ եւ հալածեցեն եւ ասիցեն զամենայն բան չար զձէնչ տոտ՝ վասն իմ: Ցնծացէք եւ ուրախ լերուք, զի վարձ ծեր բազում են յերկինս»: (Մատ. Ե. 11—11)

Յիսուս երանի էր տալիս նոյնպէս աշակերտներին, եթէ արդարութեան ճանապարհով գնան ու նրա համար հալածուեն: Կրած հալածանքների համար վարձ կըստանան երկնըում, ապագայ սերունդները նրանց անունը օրհնութեամբ կըյիշեն: Իրօք այդպէս էլ է, մեր հկեղեցին միշտ յիշում է Յիսուսի անունով նահատակուածներին, սուրբ վկաներին:

Ա. մ փ օ փ ո ւ մ: Յիսուս Աւետարանը քարոզում էր զթիւսարապիս նմ համար: Ի՞նչ պիտի ակնկալեին վաստականորերն ու բեռնառերեք Յիսուսից: Ո՞վքեր են նոզով աղքատները, որոնց երանելի էր համարում Յիսուս: Ի՞նչ սպառնորերի էր երանի տայիս: Ինչիք մէջն էր միսիքարաւրինը, որ նրանց խստանում էր: Ո՞վքեր են նրա ասած հեզ անձնութիւնների լինեն աշխարհի ժառանգները: Ե՞րբ է մէկը բը, որոնք պիտի լինեն աշխարհի ժառանգները: Այդպիսի բան քաղցած ու ծարաւ լինում արդարութեան համար, ի՞նչ բան ողորմածաթիւնը եւ որտեղից է բդիս ում: Յիսուսի հայեաց-

քով ի՞նչ էր նշանակում Աստծուն տեսնել: Ինչո՞ւ միայն սբրտով մաքուրերը կարող էին նրան տեսնել: Ինչո՞ւ խաղաղաբարերը Աստծուն որդիք ախտի կսզնեին: Աշխարհի վրայ մեծ մասամբ մվեր էն նախածուել: Յիսուս ինձո՞ւ էր հայածողներին երանի տալիս: Ի՞նչ վարձ էր խոստանում նրանց: Համեմատ, համար կարդալ Ղուկ. Զ. 20—26.

22. ՅԻՄՈՒՍ ԵՒ ՇԱԲԱԹ ՏՕՆԵԼԻ

ա. Հասկ պոկելով շաբաթ կոտրելը:

«Պատահեց այնպէս որ Յիսուս շաբաթ օրն անցնում էր արտերի միջով: Աշակերտներն քաղցած էին, սկսան հասկեր պոկել, բռան մէջ հաղաղել և հատիկներն ուտել: Փարիսեցիք երբ տեսան այս բանը՝ ասին. «քո աշակերտներն այնպիսի բան են անում, որ ամեննեին վայել չէ շաբաթ օրը»: Յիսուս նրանց պատախանեց. «Միթէ չէք կարդացել, թէ ի՞նչ արին. Դաւիթն ու իրա հետի մարդիկ քաղցած միջոցին, նըրանք մտան Աստծու տաճարը և կերան առաջաւորութեան հացերը, որ օրէնքով միայն քահանաներին էր պատկանում, ոչ Դաւիթն իրաւունք ունէր ձեռտալու և ոչ նրա ընկերները: Կամ միթէ չէք կարդացել օրէնքի մէջ, որ շաբաթ օրերին քահանաները կոտրում էին սրբազն շաբաթը և անմեղ համարում: Բայց ասում եմ ձեզ, տաճարից մեծն այստեղէ, եթէ հասկանայիք թէ ի՞նչ է նշանակում՝ ողորմութիւն եմ կամենում և ոչ զոհ, այնժամանակ գուք չէք դատապարտիլ անմեղներին: Որովհետև շաբաթի տէրը մարդու որդին է»: (Մարկ. Բ. 23—26)

Փարիսեցոց հասկացողութեամբ շաբաթ օրը սուրբ պահելը աստուածպաշտութեան մի մասն էր: Աստուած էր

Մովսէսի միջոցով այդ պատուէրը տուել, ով չըկատարէր, կընշանակէ դէմ էր լինում Աստծուն: Մարգարէներն արդէն որոշել էին արժանաւոր բարոյական օրէնքների և հասարակ պատուէրների, ծէսերի մէջ եղած տարբերութիւնը և ընդունել էին միայն առաջինները՝ իրեն աստուածային ձշմարիտ պատուիրաններ: Յիսուս դէմ էր անտեղի ծէսին, նրա հայեացըով մարդիկ իրաւունք ունեն շաբաթ պահելը, բայց այդ պահեն այնպէս յարմարեցնել, որ օգտաւէտ լինի թէ մտաւոր և թէ հոգևոր կեանքի համար:

Դպիրները, օրինականները շաբաթի մասին եղած պատուիրանով զոհ չէին եղած. ուստի որոշել էին 39 գլւաւոր աշխատանքներ, որ շաբաթ օրը պիտի արգելուէին, օրինակ՝ սերմել, հնձել, կասել, միրգ քաղել, մի բան կապել, կապածն արձակել, ասեղ բանեցնել, գրել, կրակ անել, կրակ ու ճրագ հանգնել են.. Դպիրները համոզուած էին, եթէ հրէաններն իրանց բնակած տեղերում, ինչպէս հարկն է, պատուիրանները երկու եօթնիակ անշեղ կատարեն, իսկոյն իսրայէլը կազմառուի օտար լիից:

Քահանաներին թոյլատըւում էր շաբաթ օրը տաճարում զոհ, ողջակէզ անել, նաշին ալիւրն ու շուրջ շաղախել, բաղարձ թիւել, որովհետև փարիսեցոց կարծիքով Աստծուած զոհ ու պատարագ էր կամենում, իսկ քաղցած աշակերտների հասկ պոկելն ու ուտելը իրեն մեղք արգելում էին, որ Մովսէս ինքը թոյլատըել էր: (Մով. V գիրք ի. 25)

Բ. Գոսացած ձեռի զուժումը.

«Յիսուս այնտեղից գնաց և մտաւ հրէից ժողովարանը: Այնտեղ մի մարդ կար, որի կուռը գոսացած էր: Ամենն էլ սպասում էին թէ արդեօք կըթագի՞նը նրան շաբաթ օրը, որ չարախօսեն նրա վրայ: Յիսուս ասեց մարդուն, որի ձեռը գոսացած էր. «արի մէջտեղ կանգնիր»: Յետոյ հարցըց հակառակորդներին՝ ի՞նչ է վայել շաբաթ օրը, բարի բան

գործել թէ չար. հոգի ապրեցնել թէ կորցնել. Նրանք միացին լուս: Յիսուս լի ցասումով նայեց նրանց երեսին, անշափ տրտմեց նրանց սրտերի կուրութեան վրայ, յետոյ դառնալով մարդուն ասեց. «մեկնիր կուռըդու նա գոսացած կուռը մեկնեց և կուռը ողջացաւ: Փարիսեցիք Հերովդէսի մարդկանց հետ շուտով դուրս եկան, խորհուրդ արին իրար հետ թէ ինչ հնարով Յիսուսին սպանեն»: (Մարկ. Գ. 1—6)

Յիսուսի հակառակորդները թոյլատրում էին փոսն ընկած ոչխարին շաբաթ օրն աղատել, իսկ հիւանդ մարդուն ճար ու դարման տալ արգելում էին, Եթէ անասունին կարգելով կարելի էր շաբաթը կոտրել, ևս առաւել հարկաւոր էր մարդ արարածին օգնել բարութիւն անելով: Բայց այդ բանը փարիսեցիք չէին ընդունում, որովհետև նրանք աւելի շահասէր էին քան թէ կարեկից: Եթէ արդարասէր լինէին, պիտի շնորհակալ լինէին Յիսուսից, որ նրանց կրօնական կեանքի սիսլը հասկացնում էր, բայց, չէ, նըրանք դէմ էին, վախենալով իրանց համարմունքը ժողովը դի առաջ կորցնել: Եւ քանի Յիսուս նրանց յաղթելով ամօթապարտ էր անում, այնքան հակառակորդները ատելութեամբ լցւում էին դէպի նա:

Ամփոփում. Փարիսեցոց կարծիքով շաբարն ի՞նչ բան էր: Մարգարիկներն ի՞նչ բանին աւելի արծեք եին տուել: Դիպիքներն ի՞նչ աշխատանքներ եին արգելել շաբաթ օրը: Յիսուսի հայեացքն ի՞նչ էր շաբարի մասին, ինչո՞ւ էր ասում մարդը մեծ է, քան թէ շաբարը: Փարիսեցիք ինչո՞ւ էին դատապարտում աշակերտների արարքը: Յիսուս ի՞նչ օրինակոյ պաշտպանեց աշակերտներին:

Համեմատ. համար կարդալ Մատ. ԺԲ. 1—16, Ղուկ.
Զ. 6—10

23. ՅԻՍՈՒՍ ԵՒ ԻՐԱ ԱԶԳԱԿԱՆՆԵՐԸ.

Ա. Ազգականները ի՞նչ կարծիք ունեն նրա մասին.

«Աշակերտների հետ նոյնպէս մի քանի կանայք՝ Մարիամ Մագթաղենացին, Յովհաննան, Շուշանը և ուրիշները ներս եկան: Ժողովուրդը նորից խոնուեց նրա շուրջը: Այնպէս ուշագիր լսում էին նրա խօսքերը, որ ժամանակ չէին տալիս հաց ուտելու: Նրա ազգականները լսելով նրա մասին տարածուած լուրերը, գնացին նրան բռնելու, որովհետև կարծում էին թէ այսահարուել է: (Մարկ. Գ. 20—21)

Աշակերտներին քարոզութեան ուղարկելիս Յիսուս ըլք քաշուեց յայտնել, որ Աւետարանի քարոզութիւնը ընտանիքի անդամների մէջ երկպառակութիւն պիտի գցի: Հին հայեացքների ու կարգերի կողմնակիցներին անուանում էր մեռելներ: Հաւանական է, որ Յիսուսի մայրն էլ չըմբռնէր, թէ իրա որդին ի՞նչ բարձր ու վեճ սկզբունքների վրայ է խորհում: Լսել էր, որ հրապարակ մանելով պայքարում է օրէնքի պաշտպանների դէմ, մայրը կամեցաւ յետ կացնել նրան վտանգաւոր քայլից: Նրա հետ էին իրա տեհրոջ (Կղէոպասի) որդիքը, որոնց մօր անունը նոյնպէս Մարիամ էր: Հրէանների մէջ այն կարծիքն էր աիրում, որ ով նախնեաց օրէնքի դէմ է, նա կամ ոճրագործ է կամ խելագալ:

Բ. Յիսուսի կարծիքով ո՞վեր էին նրա ազգականները:

«Եկան մայրը, եղբայրները, մեծ բազմութեան պատճառով չըկարացին ներս մտնել, կանգնեցին դուրս և մարդ ուղարկեցին կանչելու: Եղբ Յիսուս

ժողովրդի մէջ նստած քարոզում էր, մէկը ներս մըտաւ և ասեց. «ահա մայրդ և եղբայրներդ դուրսը կանգնած քեզ են կանչում»: Յիսուս պատասխանեց և ասեց. «մի է իմ մայրը և որոնք են իմ եղբայրները»: Այդ հարցից ետ աշըը մաս ածեց իրա շուրջ նստող աշակերտների վրայ և ասեց. «ահա թէ մայրս և թէ եղբայրներս, որովհետեւ ով կատարում է Աստծու կամքը, նա իմ եղբայրն էլ է, իմ քոյրն էլ, իմ մայրն էլ»: (Մարկ. Գ. 31-35)

Յիսուս անշուշտ գիտէր, որ մայրն ու աղքականները դէմ են իրա բռնած ուղղութեան, գուցէ շատ անգամ վէճ ու զրոյց էլ ունեցած լինէր նրանց հետ և շատ արդեւք ների հանդիպած: Այժմ վճռական վայրկեանն էր, պիտի ասէր թէ մւամ էր աւելի հնազանդելու. երկրաւոր մծրը, թէ երկնաւոր հօրը:

Ա.մ փոփոխ. Աւետարանի քարոզութեան պատճառունի ու նոր կարգերի կողմեակիցների մէջ ի՞նչ կը ծագէր: Յիսուս ի՞նչպիսի մտածողներին եր աւուանում մեռելներ: Նրա աղքականներն ի՞նչ լարդիք էին կազմէ: Մայրն ու հօրեղբօր որդիք ինքո՞ւ էին եկել քարոզութեան տեսքը: Յիսուս աւելի ո՞ւմ կամեցաւ ննազանդուել, Միք ներելի՞ է ձենդի կամ քին դէմ զնալ: Ե՞րբ և ներելի, ո՞նչ օրինակներ կարող եք բերել պատմութիւնից, կեսնքից:

Համեմատ. համար կարգալ. Մատ. ԺԲ. 46-50 Ղոկ.
Ը. 19-21

24. ԻՆՔՆԱԲԵՐԱԲԱՐ ՀԱՅՆՈՂ ՀՈՒՆՁ

Ա. Փորձուած երկրագործը

«Փարիսեցիք ու սադուկեցիք մօտենալով Յիսուսին, փորձելու մոքով խնդրում էին, որ երկնքից նշաններ ցոյց տայ: Նա պատասխանեց և ասեց նը-

րանց. «չար և շնացող ազգը նշան է խընդրում, բայց նրան այդ չի արուիլ, Յովեան մարդարէի ցոյց տուած նշանն է հարկաւոր նրան: Այսպէս է Աստծու արքայութիւնը, ինչպէս մի շինական սերմ է գցում հողի մէջ, գիշերը քնում է, ցերեկը վեր է կենում, բայց տեղեկութիւն չունի թէ սերմերն ինչպէս են բանում ու աճում, որովհետեւ հողն ինքը առաջ բերում է խոտը, յետոյ հասկը և վերջը հասկի միջի ատոք ցորենը: Եւ երբ պտուղը համառում է, շուտավ ուղարկում է մանգաղը, որովհետեւ եկել է հնձի ժամանակը»:

(Մատ. ԺԲ. 1-3: Մարկ. Գ. 26-29)

Յայտնի է Յիսուսի ժամանակակից հրէաների թիւը կարծիքը երկնքի արքայութեան գալստեան մասին: Մի զօրեղ իշխան պիտի յայտնուէր Մեսիա անունով ու հրաշքով ազատէր հրէաներին ամեն նեղութիւնից: առանց հրաշքի չէր կարելի հռոմայեցոց յաղթել: այդպէս էին հաւատատացած հրէաները և գրա համար նշան էին պահանջում Յիսուսից, որ իրա Մեսիա լինելը ապացուցանի: Անփորձ մանուկները կարծում են թէ հատիկի աճումը կախուած է յաձախ ջրելուց և եռանգով հսկելուց, իսկ փորձուած շինականը, ըստինակառակ գիտէ, որ սերմած հատիկն իրա աճելու ժամանակն ունի և այդ կախում ունի այդ կենսատու ուժից, որ Աստուած գրել է հատիկի մէջ: Յիսուս դէմ էր նշանների, հրաշքների միջոցով գործելուն, որովհետեւ նրա քարոզած երկնքի արքայութիւնը հռուսոր տեսակի էր. նրա հասունանալը, զարգանալը պիտի լինէր աստիճանաբար և այդ կախում ունէր ունկնդիրների զգացումների ու արտերի ինքնազործունէութիւնից:

Ա.մ փոփոխ. Յիսուսի ժամանակակիցներն ի՞նչ կարծիք ունեին երկնքի արքայութեան գալստեան մասին: Յիսուսից ինչո՞ւ նշաններ էին պահանջում: Ն.ս ի՞նչն էր գերա-

դասում, նրանցը թէ քարո՞զը: Յիսուսի երկնքի արքայութեան գալուստն ինչից կախում ուներ: Աշակերտներն ի՞նչ պիտի ուսանեին փորձուած երկրագործից: Ուսուցիչն արդեօք կարո՞ղ է սի օրում ամեն ինչ աշակերտներին ուսուցանել.

Համեմատ. համար կարդալ Ղուկ. Հ. 11—12

25. ՏԵՍԱԿ ՏԵՍԱԿ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐ

Ա. Զանազան գետիններ.

«Յիսուս նորից սկսեց քարոզել ծովափին, մեծ բազմութիւն խոնուեց նրա չորս կողմը: Յիսուս ստիպուած եղաւ նաւ մտնել և նստել այնտեղ, բոլոր ժողովուրդը մաց ցամաքում, ափին շարուած: Յիսուս առակներով նրանց շատ բան էր ուսուցանում և բացատրում ըստ իրա վարդապետութեան: Այժմ էլ ասեց. «լսեցէք, ահա դուրս եկաւ դաշտը մի երկրագործ սերմ ցանելու: Սերմ զցելու միջոցին մէկն ընկաւ ճանապարհի մօտ, բայց մի թռչուն եկաւ ու կերաւ այն: Ուրիշ սերմ ընկաւ ապառաժի վրայ, ուր հողը քիչ էր, շատ շուտ ծլեց, բայց որովհետև գետինը հիւթ չունէր, արել ծագելուն պէս գլուխը կախ զցեց և որովհետև արմատները խոր չէին, չորացաւ Երրորդ սերմ ընկաւ փշերի մէջ. Փշերը բարձրացան, նրան խեղեցին, նա չըկարաց պտուղ տար: Չորրորդն ընկաւ պարարտ հողի մէջ և աճելով սիրուն բարձրացաւ ու պտուղ բռնեց, որը երեսնապատիկ, որը վաթունապատիկ և որը հարիւրապատիկ», Յիսուս այս առակի բացատրութիւնը չասեց, կամենում էր, որ իրանը մտածեն ու իմանան, ուստի խօսքը վերջացրեց այսպէս, որում ականջն ընդունակ է լսելու, թող լսի:

(Մարկ. Դ. 1—9)

Յիսուս գործունէութեան ճանապարհին անթիւ խոչընդուների պիտի յաղթէր: Ազգականների կարծիքով նա այսահարուած էր, փարիսեցոց կարծիքով նա սատանայի աջակցութեամբ էր գործում, ժողովուրդը հիանում էր նրա քարոզներից ու գործերից, բայց չէր ըմբռնում նրա գալըստեան իսկական նպատակը: Նրան հետևելու փափակ ունեցողները երբ աչքի առաջ էին բերում Յիսուսի մատնացոյց արած զրկանքները, ընտանիքի անդամների մէջ ծագելիք երկպառակութիւնները, հին բարեկամներից իսպառ հեռանալու տկարանում էին իրանց որոշման մէջ: Ժողովրդի միջից գլխաւորապէս մեղաւորները, անչափահասները, հարցատահարուածներն էին նրա կարեկցութիւնը վայելել: Նըրանը էլ կազմում էին նրա ուրախութիւնը:

Ա. մ փ ո փ ո ւ մ. Երկրազործի արտերի բերբերի նման Յիսուսի բարոզուրեան հետեւանիքներն էլ ամեն տեղ միատեսակ չէին: Փարիսեցիք ու դպիրները ո՞ր սերմերն էին: Ծովափնեայ քաղաքների բնակիցները ո՞ր սերմերն էին: Փշերի մէջ ընկած սերմերը ո՞ր մարդիկն էին: Պարարտ հողի մէջ ընկածներն ի՞նչ մարդիկ էին: Յիսուս ի՞նչու զոն էր մնամ մինչեւ անգամ չնչին արդիւնքից, ի՞նչպիսի անմատներն էին նրա միտրաբուրին կազմողները, Միք. սերմնացանը պիտի նասանատուի, երբ մի գետնի վրայ բերքն անաջող է լինում:

Համեմատ. համար կարդալ Մատ. Ժ. 1—9, Ղուկ. Հ. 4—8:

26. ԱՌԱԿՆԵՐ ԵՐԿՆՔԻ ԱՐՔԱՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ա. Որոմը ցարենի մէջ

«Յիսուս ուրիշ առակ մէջ բերելով ասեց. «Երկնքի արքայութիւնը նման է այն մարդուն, որ ընտիր սերմ ցանեց իրա ազարակում: Այն մարդու ըընած միջոցին եկաւ նրա թշնամին, ցորենի մէջ որում

ցանեց ու գնաց: Երբ ծղնօտը բարձրացաւ և հասկ բռնեց, այն ժամանակ երևաց որոմը: Տիրոջ ծառաները մօտեցան, ասին. «Տէր, չէ՞ որ ընտիր սերմ ցանեցիր քո ագարակում, այս որոմը մրտեղից է»: Տէրն ասեց նրանց. «թշնամի մարդ է արել այդու: Ծառաներն ասին, «կամենում ես, որ գնանք, բաղոտենք, դէն ածենք»: Տէրը պատասխանեց. «Ոչ, կարող է պատահել, որ որոմը քաղելիս ցորենն էլ նրա հետ պոկէք, դէն զցէք: Մողէք, երկուսն էլ միասին աճեն մինչև հասնելը, հնձի ժամանակ հընձւորներին կասեմ՝ առաջ որոմը պոկոտեցէք և խրձեր կապեցէք այրելու համար, յետոյ ցորենը հաւաքեցէք իմ շտեմարանների մէջ»: (Մատթ. ԺԴ. 24—30)

Յովհաննէսը Միսիայի մասին ասել էր՝ ձեռին ունենալու է հորսելի, կալը պիտի քամի, ցորենը ժողովի մի կողմ, իսկ ցորենն այրի անշէջ կրակով: Ուրեմն ոչ մի խընայում: Իսկ Յիսուս իրա աւետարանով նոր ուղղութիւն բերեց, նա մեղաւորներին կամ թշնամիներին ոչ թէ կամենում էր ջնջել կամ այրել, այլ որոնել նրանց և քաղցը ու մհծանողի վարժունքով ուղղել, դարձի բերել: Մարդկանց հարկաւոր է ոչ թէ սպանել, այլ համոզել, ժամանակ դալ, որ նրանց չար հակումների հետ բարի հակումներն էլ հասունանան: Ամբողջ ընտանիք ինչու ջնջել. նրա մէջ չարեցի հետ կըլինին և բարիներ, պիտի թողնել, որ վերջինները փթթեն, բացունա: Ահա թէ ինչ է նշանակում որոմը թողնել մինչև հասնելը:

Բ. Մանանեխի հատիկ

«Յիսուս մի ուրիշ առակ մէջ բերելով ասեց: «Երկնքի արքայութիւնը նման է մանանեխի հատին, որը մարդ վերցնելով սերմեց իրա ագարակի մէջ: Նա բոլոր սերմերից փոքր է, բայց երբ աճում է, ա-

ելի մեծ ու բարձր է քան թէ միւս բանջարեղէնները, ծառի նման բան է դառնում, մինչեւ անդամ երկնքի թռչունները գալիս են, նրա ոստերի վրայ թառ լինում»:

(Մատթ. ԺԳ. 31—32)

Յիսուս իրա քարոզութիւնից ստացած արդիւնքը համեմատում էր հատիկի հետ, բայց ինչպէս Աստուած մանանեխի հատիկից ծառի նման բոյս է հանում, այնպէս էլ աշակերտներն այնպիսի ուժ պիտի ստանան, որ կարճ ժամանակում աշխարհի երեսը լցնեն Աւետարանի հետեւղներով: Այդ բանը գլուխ կըգայ մարդկանց սրտերի նորոգումով, ամեն տեղ կըտիրէ ընկերսիրութիւնը, մարդասիրութիւնը, մարդիկ Աստծուն կըդիմեն իրբեկ իրանց հօր առանց միջնորդի և առանց զոհի ու կաշառքի, ցեղական ատելութիւնն իսպառ կըվերանայ, մեղաւորների վրայ կընայեն իրբեկ հիւանդների և կաշխատեն բժշկել:

Գ. Թթու խմոր

«Յիսուս ուրիշ առակ էլ բերեց ու ասեց. «Երկնքի արքայութիւնը գարձեալ նման է խմորին, որ տանտիկինն առնելով թաղում է երեք գրիւ ալիւրի մէջ մինչեւ բոլորը խմոր է դառնում» (Մատթ. ԺԳ. 33):

Յիսուս իրա վարդապետութիւնը համեմատում էր թթու խմորի հետ, որ այժմ էլ նրա յատկութիւնը ցոյց տայ: Խաղը կամ թթու խմորը ազդում է ալիւրի վաղաղի վրայ և կարճ ժամանակում նրան հասցնում, խմոր դարձնում: Յիսուս հաւատացած էր, որ իրա աշակերտները իրանց սրտի, հոգու մէջ առած Աստծու արքայութիւնը կըթափանցեն յետագյում բազմահազար ժողովուրդների մէջ ու նրանց հաղորդակից կանեն իրանց նոր ուղղութեան ու նոր կեանքին: Այդ ուղղութեան ջնորհով մարդիկ Աստծուն կը սիրեն իրբեկ հայր և իրանց ընկերներին իրբեկ եղբայր:

Դ. Հաւ ու վատ ձկներ.

«Ցիսուս ասեց. «Երկնքի արքայութիւնը դարձեալ նման է ուռկանին, որ ծովս է գցած, նրա մէջ ժողովւում են ամեն տեսակ ձկները Երբ որ լցւում է, հանում են ցամաք և նստելով ընտրում են՝ լաւերը լաւ ամանների մէջ և վատերը դէն են զցում։ Այսպէս կըլինի և աշխարհի վերջում, կրգան հրեշտակները և կըբաժանեն չարերին արդարների միջից։ Նրանց կածեն հնոցի կրակի մէջ, այնտեղ ցաւից լաց կըլինեն և ատամները կրկրճռտենա։»

(Մատ. ԺԳ. 47—50)

Ցիսուս աշակերտներին ասել էր՝ ձեզ պիտի մարդկանց որսորդ դարձնեմ, որ նրանց սրտերը որսաք երկնքի արքայութեան համար։ Ձկնորսները փորձով գիտէին, որ խելացի բան չէ ջրի մէջ ուռկանը բաց անել ձկների լաւն ու վատը ջոկերու համար. այնպէս էլ մարդկանց որսի հետ է, Աւետարանը բարողելիս չի կարելի բարերից ջոկել։ Ցիսուս դրա համար ժամանակ էր զնում մինչեւ աշխարհի վերջը, որովհետեւ այդ միջոցին ընդհանուր կարծիք կար տարածուած, թէ աշխարհը պիտի վերջանայ։

Ա. Խ Ո Փ Ո Խ Ո Մ. Որոմի երեւալու պատճառն ինչ էր. Մարդու մէջ ջար հակումների նետ ուրիշ ինչնք կարող են լինել։ Ընտանիքը միքէ միայն ջար անդամներից է բաղկացած լինում. Ի՞նչ է նշանակում որոմը բողնի մինչեւ հասնելը։ Հակառակորդին խսկոյն սպանե՞լի է գերադասելի, թէ նրան համոզելով ուղղելը, դարձի բերելը. Քրիստոնեուրեան մեծառք ինչպիսի հատիկից առաջ եկաւ, Երկնքի արքայուրիւրը ինչո՞վ է նման ալիրի մէջ քաղած խաղին։ Երկնքի արքայուրեան մէջ ընդունելիս արդեօր կարելի է անարժանը արժանաւորից որդել։

Համեմատ. համար կարդալ Մարկ. Դ. 30—32, Ղուկ. ԺԳ. 18—21

27. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ ՎԱԽՃԱՆԸ

Ա. Յովհաննէսի մահը.

«Հերովդէսը լսեց Ցիսուսի մասին, որովհետեւ ամեն տեղ տարածուել էր նրա անունը, ասում էր՝ ահա Յովհաննէս Մկրտչը յարութիւն է առել մեռելներից, զրա համար հրաշքներ են լինում նրա ձեռովից Ուրիշներն ասում էին թէ նա Եղիան է, ոմանք էլ պնդում էին թէ նա մարգարէ է կամ մարգարէներից մինը։ Երբ լսեց Հերովդէսը, ասեց. «Շ, սա Յովհաննէսն է, որի գլուխը ես կտրեցի, նա յարութիւն է ասել մեռելներից։»—Որովհետեւ Հերովդէսն ինքը մարդիկ ուղարկեց, Յովհաննէսին բռնել տալով զրեց բանտը, նրա եղբայր Փիլիպոսի կին Հերովդիադայի պատճառով, որին ինքը կին էր դարձրել։ Յովհաննէսն ասում էր Հերովդէսին թէ՝ օրէնք չի, որ դու քո եղբօր կնոջ հետ ապրես, քանի որ նա զաւակ ունի։ Հերովդիադան ոխակալել էր Յովհաննէսի դէմ, ցանկանում էր սպանել նրան, բայց չէր կարողանում։ Որովհետեւ Հերովդէսը երկիւղ էր քաշում Յովհաննէսից, նրան ճանաչում էր իբրև արդար ու սուրբ մարդ, պահպանում էր նրան, նրանից լամաշատ բան կատարում էր և քաղցրութիւնով նրան լսում։ Բայց մի օր պատահեց, որ Հերովդէսն իրածննդեան տօնին ընթրիք էր տալիս իրա նախարարներին, հազարապետներին և Փալիլիայի մեծամեծներին, Հերովդիադայի դուստրը կաքաւեց այդտեղ ու շատ դուր եկաւ թագաւորին և բազմականներին։ Հերովդէսն ասեց աղջկանը՝ «ինդրիր ինձնից, ինչ

որ կամենում ես, խնդրածդ տալու եմ»: Երդումով կրկնեց. օսամ, թագաւորութեանս կէսն էլ խնդրես, տալու եմ»: Աղջիկը մօր մօտ գնաց ու դարձաւ թագաւորին ասեց. «կամենում եմ, որ այժմ ևեթ մի սկուտեղի վրայ տաս ինձ Յովհաննէս Մկրտչի գլուխը» Թագաւորը շատ տիմրեց, բայց որովհետեւ երդուել էր բազմականների առաջ, չըկարաց խնդրը մերժել, շուտով դահիճ ուղարկեց բանդը, հրամայեց բերել Յովհաննէսի գլուխը: Բերին սկուտեղի մէջ, նա տըւեց աղջկան, նա էլ տարաւ իրա մօրը: Երբ աշակերտները լսեցին, եկան վերցըին մարմինը և դրին գերեզմանի մէջ»: (Մարկ. Զ. 14—29)

Հրէայ ժողովուրդը խիստ յարկում էր Մկրտչին, տեսնելով նրա աներկիւղ շարժուելը և վաղուց սպասած Մեափայի թագաւորութեան մօտենալու մասին քարոզելը: Հերովդէսը նրա քարոզածը երկրաւոր թագաւորութիւն կարծելով, ահը սրտում ասում էր՝ չըլինի սա ժողովուրդը իմ դէմ ոտքի կանգնեցնի: Բացի այդ՝ նա Յովհաննէսին ատում էր, թէ ինչո՞ւ Հերովդիադայի հետ ապրելը շնութիւն էր համարում և իրաննախատում: Յովհաննէսն անզգոյշ լինելով ընկել էր նրա ձեռով բանդը, վերջն էլ զլխատուեց: Աշխարհի վրայ միշտ բարոյախօս անձեր տանջուել, սպանուել են նրա պէս, որովհետև նրանց կոչումը պահանջել է կոիւ մզել իւրանց ժամանակի բարոյական մոլորութիւնների դէմ:—Որովհետև Հերովդէսը կրքից կուրացած ժամանակն էր սպանել տուել Յովհաննէսին, ուստի կիրքն անցնելուց ետ խիզճը նրան տանջում էր, միշտ մտածում էր սպանուած մարդարէի վրայ: Յետոյ Յիսուսի գործունէութեան ու քարոզի մասին լսելով կարծում էր թէ Յովհաննէսը յարութիւն է առել: Խիզճը զարթել էր, հանգիստ չէր տալիս նրան:

Ամ փոփում. Հերովդէսն ինցպիս էր հասկանամ արքայուրին խօսքի իմաստը: Ի՞նչ ազդեցուրին էր անօսմ

Յիսուսի քարովուրեան լուրը Յովհաննէսի սպանողի վրայ: Ինչո՞ւ էր տանցում Հերովդէսը: Միք նրա մանուան մէջ միայն քազանորն էր մեղաւորը: Միք Հերովդիադան չէր կարող ուրիշ կերպ վարուել, ինչո՞ւ էր նրան թշնամի: Մայրն ո՞ւմ գործիք դարձրեց իրա արիւնու ծրագիրն իրադորելու համար:

Համեմատ. համար կարդալ Մատթ. ԺԴ. 1—12.

ՅԻՍՈՒԻՍ ԵՒ ՀԻՆԳ ՀԱԶՈՐԻՆ ԿԵՐԱԿՐԵԼԸ

Ա. Յիսուս ցանկանում էր հանգստանալ.

Աշակերտները երկրի մէջ տարածուած քարոզում էին ժողովրդին, որ աշխատի: Շատ դեեր էին հանում, իւղով օծում էին հիւանդներին և բուժում: Վերջն առաքեալները ժողովուեցին Յիսուսի մօտ և պատմեցին մանրամաս, ինչ որ արել ու քարոզել էին: Յիսուս ասեց աշակերտներին. «Եկէք գնանք առանձին, անբնակ տեղ և փոքր ինչ հանգիստ առնենք: Այսպէս ասելու պատճառն այն էր, որ անթիւ մարդիկ գնում գալիս էին նրանց մօտ և միջոց չէին տալիս հաց ուտելու: Նաւ նստեցին ու գնացին առանձին անապատ տեղն: (Մարկ. Զ. 12—13, 30—32)

Յիսուս աշակերտներին ուղարկել էր ժողովրդի մէջ, որ իրանց ուժերը փորձեն ինքնազլուխ գործելով: Աշակերտները կամքի պակասութեան, անվատանութեան պատճառով շատ լըուել էին իրանց գործունէութեան արդիւնքից. վերադարձած նրանք պատմում էին վարդապետին իրանց կրած տպաւորութիւնները: Յիսուս անփորձների համար բնական գտնելով լըուելը, կամենում էր առանձին լինել նրանց հետ և նրանց մէջ զարթած տարակոյսները փարատել:

ը. Հինգ հազար հոգու կերակրելը.

«Միթարութեան կարօտ հարստանարուած անձինք, երբ նրանց գնալը տեսան, զանազան քաղաքներից մեծ բազմութեամբ ժողովեցին, ոտով հասան այնտեղ, մօտեցան Յիսուսին և աշակերտներին։ Յիսուս այդ ահազին ամբոխին նայելով՝ խղճաց նրա վրայ, որ անհովիւ ոչխարի պէս թափառում էր։ Յիսուս մոռացաւ իրա յոգնութիւնը, սկսեց եռանդով քարոզել և ուսուցանել։

Երբ բաւական ժամանակ խօսեցել էր, աշակերտները մօտեցան, ասին. «տեղս անապատ է, քանի օր կայ, արձակիր բազմութիւնը, որ գնայ մօտակայ ագարակները, գիւղերը որևէ ուտելու բան գնի, որովհետեւ այստեղ ուտելու ոչինչ չունի»։ Յիսուս պատասխանեց. «դուք ուտելիք տուէք նրանց»։ Աշակերտներն ասին. «պիտի գնանք 200 դահեկանի հաց առնենք, որ դրանց կշտացնենք»։ Յիսուս հարցրեց. «քանի նկանակ ունէք, գնացէք, տեսէք»։ Իմացան և ասին նրան. «հինգ նկանակ ունենք և երկու ձուկ»։ — Լաւ, ասեց Յիսուս և պատուիրեց խումբ խումբ նստացնել կանաչ խոտի վրայ։ Բազմութիւնը դասդաս նստեց, մի տեղ հարիւր, մի տեղ յիսուն։ Յիսուս ձեռն առաւ հինգ նկանակն և երկու ձուկը, նայեց դէպի երկինք, օրհնեց, կտոր կտոր արեց նկանակները և յանձնեց աշակերտներին, որ տան ժողովրդին։ Երկու ձուկը նոյնպէս բաժանեց։ Նստած բազմութիւնը կերաւ և կշտացաւ, Մնացած կտորներով 12 սակառի լցրին, ձկներից էլ աւելացաւ, Ուտողները 5000 հոգի էին»։

(Մարկ. 2. 33—44)

Յիսուս կամենում էր աշակերտների հետ զրուցել և նրանց լըուելու գլխաւոր պատճառները հասկացնել. բայց անապատ եկող բազմութիւնը խափանեց այդ մտադրութիւնը, նա կարօտ էր հոգեոր մնունդի, ու այդ ստանալու համար Յիսուսին էր դիմում։ Յիսուս խիստ կարեկցեց անառաջնորդ մնացած ժողովրդին, և սկսեց միթարել, կեանքի հացը մատակարարել։ Աշակերտներին նոյնպէս յորդորեց, որ քարոզեն, միթարենն նրանք հաւատ չունենալով իրանց ուժերի վրայ խուսափում էին։ Զէին կարողանում այնպէս ազդել ունկնդիրների վրայ, որ նրանք դառնան մի սիրտ և մի հոգի։ Յիսուս շարունակեց անխոնջ քարոզել և ահազին բազմութեանը յագեցնել հոգով ու մարմնով։

Ա. մ փ ո փ ո ւ մ. Աշակերտներն ինչն էին դրամ ժողովրդի մեջ։ Նրանց լիման պատճառն ինչ կարող էր լինել։ Յիսուս ո՞ւր ցանկացաւ հանգիստ անել։ Յօգինած ժամին ինչպէս ընդունեց հոգեւոր սեւոնդի կարօտ ամբոխին։ Ի՞նչպէս խրախուսեց աշակերտներին։ Այժմ ո՞վեր են Յիսուսի աշակերտների վիճակում։

Համեմատ. համար կարդալ Մատ. 15—21, Ղուկ. Թ. 12—17, Յով. 2. 5—13

29. ՅԻՍՈՒՍ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՓԱՐԻՍԵՑԻՔ

ա. Բողոք աշակերտների դ՛մ.

«Յիսուսի մօտ էին ժողովուած փարիսեցիք և մի քանի գպիրներ, որոնք եկել էին Երուսաղէմից։ Նրանք տեսան, որ աշակերտներից մի քանիսը անկուայ ձեռներով էին հաց ուտում, տրտընջացին, բամբասեցին և Յիսուսին հարցրին. «Ի՞նչու քո աշակերտները չեն հետեւում ծերերի աւանդութեան, այլ անլուայ ձեռներով են հաց ուտում»։ (Մարկ. է. 1—3)

Բարեպաշտ հրէաների մօտ ճաշի սկզբում ձեռներ

լուանալը ոչ թէ սոսկ մաքրութեան պատուէր էր, ինչպէս
մեղ մօտ է, այլ կրօնական ամուր ծէս էր, չըկատարողը
Աստծու առաջ յանցաւոր էր: Երբ հրապարակից տուն էին
հասնում, հաց չէին ուտում, մինչև չէին մաքրում: Շատ
սովորոյթներ աւանդաբար պահպանում էին, օրինակ՝ բա-
ժակների, կաւէ ամանների, պղնձների ու անկողինների լը-
ւանալը: Երուսաղէմի փարիսեցիք լսելով, որ Յիսուս Քա-
լիլիայում իրա աշակերտների հետ քարոզներ է առում ընդ-
դէմ ազգային կարգերի ու աւանդութիւնների, շտապեցին
այնուղ, որ չարիքի առաջն առնեն և իրանց վարկը պահ-
պանեն:

Բ. Աստուածային պատուիրանների՞ն լսել թէ աւանդութիւններին

«Յիսուս պատասխանեց նրանց. «Յսային շատ-
լաւ մարգարէացաւ ձեզ պէս կեղծաւորների համար
ասելով՝ այս ժողովուրդն ինձ շրթունքներով է պատ-
ւում, իսկ սրտով շատ հեռու է ինձանից: Զուր են
պաշտում ինձ, որովհետև ուսուցանում են մարդկան-
ցից պատուիրած վարդապետութիւններ»: Եւ ապա
դառնալով՝ ասեց նրանց. «Դուք անտես առնելով
Աստծու պատուիրանը ընդունում էք մարդկանց ա-
ւանդութիւնները: Աստծու պատուիրանն անուշադիր
էք թողնում, որ ձեր աւանդութիւնները հաստատէք:
Մովսէսն ասել է. «պատուիր հօրդ ու մօրդ և ով հօ-
րից և մօրից չարախոսի, մահով մեռնի»: Իսկ դուք
ասում էք. «Երբ մէկը իրա հօրը կամ մօրն ասի՝ կոր-
բան, այսինքն պատարագ Աստծուն, ինչ որ ինձանից
ստանալու էիր: Եւ այլս թոյլ չէք տալիս, որ հօրը
կամ մօրը օդտակար լինի: Այդպիսով անարգում էք
Աստծու խօսքը ձեր աւանդութիւնով, որ դուք էք յօ-
րինել: Կատարում էք ուրիշ սրանման բաներ»: Մօս-

կանչելով բոլոր ժողովրդին ասեց. «Լսեցէք ամենդ
և մտքերիդ մէջ պահեցէք, ինչ որ դրսից մարդու
մէջ է մտնում, այն չի կարող մարդուն պղծել, այլ
այն է մարդուն պղծողը, ինչ որ բերանից դուրս է
գալիս: Ում ականջները լսելու ընդունակ են, թող
լսենա:

(Մարկ. է. 6—16)

Զնչին բաների համար բարձրացրած փարիսեցոց աըր-
տունջը կրօնի հետ ոչ մի կապ չունէր, իրանց հեղինակու-
թիւնը ոտնակոխ էր լինում, ահա սա էր նրանց ցաւը: Յի-
սուս երկար վէճի չըրունուեց հակառակորդների հետ, մի կողմ-
ծէս ու ծիսակատարութիւն էր, միւս կողմ սէր ու կարեկցու-
թիւն: Իբրև դրուած կարգերը վերացնող ու վերանորոգող,
նա մատնանշեց վնասները, որոնք բղիում են նրանց թիւր
աստուածպաշտութիւնից:

զ. Կոյրը կոյրին առաջնորդ.

«Այն ժամանակ Յիսուսին մօտեցան աշակերտները
և ասին. «Գիտես, վարդապետ, փարիսեցիք այդ խօս-
քը լսելիս գայթակղուեցին»: Յիսուս պատասխանեց.
«այն տունկը, որ իմ երկնաւոր հայրը չի տնկել, կը
հանուի: Ուշ մի դարձնէք նրանց վրայ, իրանք կոյրեր
են և կոյրերի առաջնորդներ կարգուած, երբ կոյրը
կոյրին առաջնորդի, կը սիալուի և երկուսն էլ կընկ-
կոյրին առաջնորդի, կը սիալուի մէջ»:

(Մատ. ԺԵ 12—14)

Յիսուս յանդիմանեց փարիսեցոց նրա համար, որ ծի-
սական սովորոյթներն ամուր պահում էին, Աստծու յաւի-
տենական բարոյական օրէնքներն անտես անում, օգնու-
թեան կարօտ ծնողներին անխնամ թողնում էին, թէ մենք
տաճարին կուրբան ու զոհ ենք խոստացել: Իրանց զալու
նպատակն էր Յիսուսի հեղինակութիւնը կոտրել ժողովրդի
աչքում, բայց իրանք ամօթահար եղան, ճարահատուած

մտածեցին նրան սպանել ու այդպիսով զօրեղ հակառակորդից ազատուել:

Ամփոփում. Փարիսեցիք ինչ պատճառով զանգատեցին Յիսուսի աշակերտների վրայ. Նրանց տրտունջներին Յիսուս ինչ կերպ պատասխանեց. Կոյր առաջնորդները զօրեղ հակառակորդներից ազատուելու համար ինչ ստոր միջոցների դիմեցին. Ի՞նչ տարերութիւն էր նկատում մարզարեների ու փարիսեցոց աստուածպահութեան մէջ:

ՅՈ. ՅԻՍՈՒԽ ԵՒ ՔԱՆԱՆԱՑԻ ԿԻՆԸ

Ա. Քանանացի կնոջ պատասխանը.

«Յիսուս Գալիլիայից վեր կացաւ, եկաւ Տիւրոսի և Սիդոնի սահմանները և տուն մտնելով չէր կամենում, որ իրան ճանաչեն, բայց չըկարաց ծածուկ մնալ: Նրա գալստեան մասին լսեց մի կին, որի գուստը չարչարտում էր պիղծ դեից: Եկաւ ընկաւ նրա առաջ: Կինը հեթանոս էր և ասորա-փիւնիկեան ցեղից, աղաչում էր նրան. որ դեմք հանի իրա աղջկանից: Յիսուս ասեց նրան. «Թող տուր դեռ մանուկները կշտանան, լաւ չէ մանուկների հացն առնել և շների առաջ զցել»: Կինն այդ խօսքին այսպէս պատասխանեց. «տէր, շներն էլ կերակրում են մանուկների սեղանի փշրանքներով»: Յիսուս ասեց. «այ կին, քո այդ պատասխանի համար վեր կաց, հանգիստ գնա, դեղուրս գնաց քո աղջկանից»: Կինը գնաց իրա տուն, տեսաւ աղջկանը դեից ազատուած ու պարկած անկողնի մէջ»: (Մարկ. է. 24—30)

Թշնամիների ձեռից Յիսուս բարւոք համարեց խոյս տալ դէպի Տիւրոսի Սիդոնի կողմերը, որ հեթանոսական գաւառներէին. Գալիլիայից հեռանալու պատճառը ոչ վհատութիւնն էր, ոչ էլ Հերովդէսից կամ փարիսեցիներից զգացած ահը, այլ լուրջ հոգատարութիւնը իրա սկսած գործի համար: Զէ

որ նա կարող էր սպանուել հակառակորդների ձեռով, եթէ աշակերտները իրրե մշակներ պատրաստ չըլինէին, ինչպէս հարկաւոր է, կարող էր նրա նորածիլ արտը չորսանալ: Հարկադրուած յետ քաշուեց բարոզութիւնից առժամանակ և զրադուեց աշակերտներին ուսուցանելով, որ առաջելական ծանր կոչումը նրանց համար միտ ու արիւն դարձնի: Այնքան ազատ ժամեր չունէր, որ կարենար հեթանոսների մէջ քարոզութեամբ կամ բժշկութեամբ զբաղուել: Գերադասութիւն տալիս էր հրէաներին, որոնց մէջ բարողել էին մարդարէները հին ժամանակներից սկսած:

Ամփոփում. Յիսուս ինձն էր նեռանում Պայիլիայից. Նրա զլսաւոր հոգսն ինչ էր: Հերանոս կինն ի՞նչ խընդրեց նրանից: Յիսուս ինձսն ցուրտ կերպով մերժում էր նրա խնդիրը, ի՞նչ խելացի խօսք ասեց բանանացի կինը: Հրեաներն ի՞նչով էին զերադասների միւս ծողավարներից:

Համեմատ. համար կարդալ Մատ. ԺԵ 21—28

ՅԻ. ՊԵՏՐՈՍԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

Ա. Մարդկանց կարծիքները.

«Յիսուս իրա աշակերտների հետ գնաց Փիլիպիայի կեսարիայի գիւղերը, այսինքն Հրէաստանի հիւսիսակողմը, ճանապարհին գնալիս հարցնում էր աշակերտներին. «մարդիկ ի՞նչ են ասում, թէ ով է մարդ կերտներին. «մարդիկ ի՞նչ են ասում, թէ կին ասում է դու որդին»: Նրանք պատասխանեցին. «մէկն ասում է դու Յովիանէս լրկրտիչն ես, ուրիշներ ասում են՝ դու Եղիան ես, միւսները թէ՝ դու Երեմիան ես կամ մարդարէներից մէկը»: Յիսուս նրանց հարցրեց. «իսկ դուք ի՞նչ կարծիք ունէք իմ մասին, ես ով եմ»: Սիմօն Պետրոսը պատասխան տուեց և ասեց. «ոու Քրիստոսն ես, կինդանի Աստծու որդին»:

(Մատթ. ԺԶ. 13—16)

Յովհաննէսի գլուխատման լուրը լսելու. օրից Յիսուս ըզ-
գուշանում էր Հերովդէսի մարդկանցից. Օրինականները նոյն-
պէս հետապնդելուց չէին դադարում, այդ պատճառով Յի-
սուս ստիպուած էր իրա քարոզութեան տեղերը փոփոխել և
հեռու քաշուելով նույիրուիլ տշակերտների նախապատրաս-
տութեան գործին. Այդ թափառումների միջոցին էր, որ
ցանկացաւ իմանալ թէ մարդիկ ինչ կարծիք են կազմել իրա
անձի մասին, որ յետոյ եզրափակի, թէ աշակերտներն ինչ
կամեն.

Ա. Պետքոսը երկնքի արքայութեան բանալի-
ներ պահող.

Այդ լսելով Յիսուս ասեց. «Երանի քեզ. Յովհանի որդի Սիմոն, մարմինն ու արիւնը չէին, որ
քեզ այդ յայտնեցին, այլ իմ Հայրը, որ երկնքումն
է. Ես էլ քեզ ասում եմ. զու վէմ ես, այդ վէմի
վրայ կըկառուցանեմ իմ եկեղեցին, դժոխքի դոները
չեն կարող նրան յաղթահարել. Քեզ կըտամ երկնքի
արքայութեան փականները, ում որ մի անգամ կը
կապես երկրի վրայ, կապուած կըլինի երկնքում և
ում որ կարձակես երկրի վրայ, արձակուած կըլինի
երկնքում» Այս խօսակցութիւնից ետ Յիսուս աշա-
կերտներին սաստեց, որ չըլինի թէ որեէ մէկի յայտ-
նեն թէ նա Քրիստոն է, այսինքն Մեսիան»:

(Մատթ. ֆԶ. 17—20)

Մարդու մէջ բարեփխում է տեղի ունենում, երբ գը-
րաւում է մի առաքինի, զօրեղ անձնաւորութիւնով։ Պետ-
քոսն երկար ժամանակ Յիսուսի հետ էր, տեսել էր նրա
կեանքը, գործունէութիւնը ու ակամայ հնթարկուել նրա
խօսքի ուժին. գիտէր, որ նա անհուն սիրում էր երկնաւոր
չօրը և կարեկցում իսրայէլի ազգին. Նա ցանկացաւ մի
խօսքով արտայայտել այն ամենը, ինչ որ սիրտն զգում էր.

«Դու Մեսիան ես, Աստծուց առաքուած Փրկիչը», աս հրէայ
ժողովրդի աչքում ամենավեհ կոչութիւնը, համոզուեց, որ իրա ջանքը
գուր չի անցել. աշակերտներն իրա մահից ետն ևս կա-
պուած կըման և կաշխատեն ուրիշներին ևս կապել երկնքի
արքայութեան հետ. Որովհետեւ ամենից առաջ Պետքոսն ըզ-
գաց Յիսուսի մեծութիւնը, ուստի նա վէմ կըդառնայ և
դիմադրութիւն ցոյց կըտայ աշխարհի մէջ չարի թագաւո-
րութեան. Բայց Յիսուս արգելեց այդ խօստովանութիւնը
բերանէ բերան տարածել, նրա ցանկութիւնն էր, որ ամեն
մինը փորձելով, ապրելով կազմի իրա դաւանանքը։

Ա. մ փ ո փ ո և մ. Հերօվիկասի ու փարիսեցոց նետապըն-
դամբր խօս տալու համար սրտեղերք եր քափառում. Հրէ-
աներն ինչ կարծիքներ են կազմել մարդու սրդու մասին.
Պետքոսի մէջ ինչպէս եր հասունացել իրա դաւանանքը. Յի-
սուս ինչո՞ւ արգելեց տարածել, որ ինքը Մեսիան է. Մեր մէջ
ինչպէս պիտի զարքի հաւատն և դաւանանքը։

39. ՍՈՒԻՐԻ ԳԱՂԱՓԱՐԻ ԾԱՌԱՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՆՉ ՊԻՏԻ ԱՆԵԼ

Ա. Գալիք շարչարանքների մասին.

«Յիսուս սկսեց ուսուցանել աշակերտներին և ա-
սել. «Ամարդու որդին պիտի անչափ չարչարուի, ա-
նարգուի հրէայ ծերերից, քահանապետներից, դպիր-
ներից, սպանուի և երեք օրից ետ յարութիւն առնիւ։
Բացարձակ ասում էր այս խօսքերը. Պետքոսը Յիսուս-
ուին մի կողմ քաշեց և սկսեց հակամառել նրա հետ
այդ մասին. Նա զուռ գալով նայեց աշակերտներին
ու Պետքոսին սաստելով ասեց. «Հետացիր ինձանից,
սատանայ, որովհետեւ զո միտքը աստուածային բանե-
րի վրայ չէ, այլ մարդկային»։ (Մարկ. լ. 31—33)

Երուսաղեմի փարիսեցոց ու զպիրների գալու օրից Յիսուսի համար անկարելի դարձաւ Գալիլիայում խաղաղ քառողելն ու գործերը, իւրաքանչիւր քայլին հետեւում էին նըւրան ու խանգարում: Եթէ ծածուկ սպանուէր հակառակորդներից, նքա գործունէութիւնը կը մոռացուէր գաւառի մի անկիւնում, ուստի որոշեց զնալ Երուսաղէմ ու տեղն ու տեղը խորտակել փարիսեցոց կորստաբեր ազգեցութիւնը և վերջ տալ իրա գործունէութեան այնպիսի կենարոնում, որ ամենն էլ իմանան իրա քարոզութեան և ուղղութեան մասին: Պետրոսը հաւատում էր, որ իրա սիրած Քրիստոսը՝ Մեսիան կարող է հրէայ ժողովրդին բարեփոխել, ապագայ թագաւորութեան համար նախապատրաստել, բայց մտքով հրբէր չէր անցնում, որ նա կարող էր տանջանք կրել ու մեռնել. դրա համար էլ չէր կամենում, որ Յիսուս զնայ Երուսաղէմ: Բայց Աստծու կամքն էր, որ մարդու որդին իրա կոչման հաւատարիմ մնալու: Համար կեանքն էլ զոհէր:

Բ. Աշակերտների վիճակը.

«Յիսուս իրա մօտ կանչեց աշակերտներին, ժողովրդին և ասեց. «ով ուղում է իմ ետեից զալ, թողուրանայ իրա անձը, վերցնի իրա խաչը և զայ ետեւիցու: Որովհետեւ ով կամենայ իրա անձն ապրեցնել, կը կորցնի նրան, իսկ ով կը կորցնի իրա անձը ինձ համար, Աւետարանի համար, նա կապրեցնի նրան, թէ չէ ինչ օգուտ մարդուն, որ բոլոր աշխարհը սեպէ հականի, բայց իրա անձն քաստայ, կամ ինչ փըրկանք կարող է տալ իրա անձի համար:

(Մարկ. 6, 34—37)

Աշակերտների սուրբ պարտականութիւնն էր շարունակել ապագայում վարդապետի գործը—ծառայել Աստծու արքայութեան. դրա համար նրանք պիտի զինուած լինէին սիրով ու անձնութեամբ, Եթէ ցանկանում էին սուրբ զաղակարն առաջ տանել, հոգիներ վաստակել, իրանք ես պատ-

րաստ պիտի լինէին հարկաւոր ժամին իրանց կեանքը զոհ բերել. Անձնութերութեան շաւլով գնացող աշակերտին Յիսուս խոստանում էր ճշմարիտ յաւիտենական կեանք:

Գ. Քարերը հաց կարծնել. «Յիսուս մկրտութիւնից ետ հոգու դըրդմամբ քաշուեց անապատ, որ սատանայից փորձուի: Այդտեղ 40 օր, 40 գիշեր ծոմ պահելով վերջապէս քաղց զգաց: Փորձիչը նրան մօտենալով ասեց. «Եթէ դու Աստծու որդի ես, հրամայիր, որ այս քարերը հաց դառնան»: Նա պատասխանեց ու ասեց. «Գրուած է, թէ միայն հացով չի ապրիլ մարդ, այլ ամեն բանով, որ դուքս է գալիս Աստծու բերանից»:

(Մատթ. ۷. 1—4)

Հրէայ ժողովուրդը չէր կարողանում երեակայել, որ իրա Մեսիան որ և է բանի կարիք ունենար: Ուստի Յիսուս իբրև Մեսիա պիտի հոգար մի բարեկեցիկ կեանք ստեղծել թէ իրա համար և թէ իւրայինների, բայց գիտենք որ Յիսուս այդ չէր անիւ, չէր յօժարուիլ երկու տէրերի ծառայել: Նրա պատուէրն իրա հետեղուներին այս էր՝ ապրել ու շնչել Աստծու հետ միացած, և արտաքին կեանքի հոգսերը թողնել երկնաւոր չօր վրայ:

Դ. Աշտարակի վրայից գցիր քեզ.

«Այն ժամանակ սատանան Յիսուսին վերցնելով տարաւ Երուսաղէմ. կանգնացրեց տաճարի աշտարակի գլխին և ասեց. «Եթէ Աստծու որդի ես, գցիր քեզ այստեղից ներքե, որովհետեւ գրուած է թէ հրամայուած է հրեշտակներին քո վերաբերմամբ, որ քեզ այնպէս բարձրացնեն իրանց ձեռների վրայ, որ ոտըդ ամենսին քարի չըդիպչի»: Յիսուս կրկին պատասխանեց. «գրուած է թէ քո տէր Աստծուն չըփորձես»:

(Մատթ. 7. 5—7)

Հըլէական հայեցողութեամբ Մեսիան ամենայն հը-
քաշը ու նշան կարող էր անել իր գերբնական զօրութիւնսվ,
Բայց Յիսուս բոլորովին տարբեր հայեացքի էր այդ ժամին
սահաւանդ դէմ էր Աստծուն ամեն կերպով փորձելուն կամ
անտեղի կերպով խորհուրդ տալուն, թէ նա—Աստուած ի՞նչ-
պէս պիտի մարդուն օգնի: Հարկաւոր չէ լինել մեծամիտ,
մնափառ:

Ե. Ողջ աշխարհի տիրելլ.

«Սատանան դարձեալ ասեց նրան ու տարաւ
խիստ բարձր լեռան գլուխ, այնտեղից ցոյց տուեց
աշխարհի բոլոր թագաւորութիւնները, նրանց փառքը
և ասեց. «այս ամենը, ինչ որ տեսնում ես, քեզ կը
տամ ընկիր առաջս ու երկրպագիր ինձ»: Այն ժա-
մանակ Յիսուս ասեց նրան. «Կորիր աչքիցս, սատա-
նայ, որովհետեւ դրուած է, թէ միայն քո տէր Աստ-
ծուն երկրպագիր և նրան ծառայիր»: Սրանից ետ
սատանան թողեց, հեռացաւ, իսկ հրեշտակները մօ-
տեցան Յիսուսին և սկսան ծառայել նրան»:

(Մատթ. Դ. 8—11)

Հըլէաների կարծիքով Մեսիան պիտի ձգտէր աշխար-
հակալութեան և փառք ու պատուով իրան շրջապատէր: Յի-
սուս դէմ էր այդ ձգտումին, եթէ նա ևս անձնատուը լինէր
իշխանասիրութեան, փառասիրութեան, այդ կընշանակէր
ոչ թէ սրբազն գաղափարին, Աստծուն ծառայել, այլ նիւ-
թին, սատանային:

Ամ փոփում. Յիսուս իրա ջարճարանները յիշելով
ո՞ւմ էր կամենում նախապատրաստել: Երեւ մանուան վտանգ
կար, ինըն էր զնում Երասադիմ: Ինըն էր զայրանում Պետ-
րոսի վրայ, ինչ պարտաւորութիւններ էր զնում աշակերտ-
ների վրայ: Հրեայ ժողովուրդը Մեսիային զօրութեան կողմից
ինչպէս էր երեւակայում: Հստ Յիսուսի Մեսիան հոգնեն պի-

ինչպէս էր երեւակայում: Հստ Յիսուսի Մեսիան հոգնեն պի-
տի ծառայէր թէ մարմնան, Աստծուն թէ սատանային: Աշ-
խարհի որդին եւ Աստծու որդին ինըո՞վ են տարբերում ի-
րարից:

Համեմատ. համար կարգալ Մատթ. Ժ. 21—28, Ղուկ.
Թ. 22—26, Ժ. 27 Մարկ. Ա. 12—13, Ղուկ. Դ. 1—13:

33. ՔԱՆԻ ԱՆԳԱՄ ՊԻԾԻ ՆԵՐԵԼ

Ա. Ի՞նչպէս վարուել մեղանչողի դէմ.

«Եթէ եղբայրդ քո դէմ մեղանչել է, գնա և նը-
րան յանդիմանիր, երբ նա և զու մենակ էր: Եթէ
նա քեզ յսի, նշանակում է եղբօրդ վաստակեցիր: Եթէ
քեզ չըլսի, հետդ վերցրու մէկ կամ երկու հո-
գի. որովհետեւ երկու կամ երեք վկաների բերանով
կը հաստատուի ամեն բան: Իսկ եթէ նրանց էլ չըլսի,
ասա եկեղեցու համայնքի մէջ, եթէ համայնքին էլ
չի լսիլ, այն ժամանակ նա քո աչքում թող լինի ի՞նչ-
պէս հեթանոս, նրա հետ ամեննին դործ մի՛ ունե-
նալ»:

(Մատթ. Ժ. 15—17)

Սխալուածին կարելի է դարմանել, որ մոլորութիւնից
ետ դառնայ: Երբ առանձին յանդիմանելը չի ազդում, պի-
տի կրկնել շատերի ներկայութեամբ, որ նրանցից պատկա-
ռի ու գէշ ընթացքից ձեռ վերցնի: Երբ այդ միջոցն էլ
չազդի. նշանակում է անուղղայ է իրեւ հեթանոս, պիտի
ամեն յարաբերութիւն խզել նրա հետ:

Բ. Քա՞նի անգամ պիտի ներել.

«Այն ժամանակ մօտեցաւ Պետրոսը և ասեց.
«Ճէր, քանի անգամ եղբօրս ներեմ, եթէ նա մեղան-
չի. եօթն անգամ բաւական է»: Յիսուս նրան ասեց.
«Ես քեզ չեմ ասում եօթն, այլ եօթանասուն անգամ
եօթն»:

(Մատթ. Ժ. 21—22)

Անկարելի է չըզայրանալ, երբ մարդու խիստ վիրառում են, թերեւս ոմանք ընդունակ են զայրոյթը առժամանակ զսպած պահել: Այդ բանը փորձով գիտէր Պետրոսը, ուստի կամեցաւ վարդապետից տեղեկանալ, թէ մինչեւ ինչ տեղ պիտի իրան զսպել ու ներել մեղանչողին: Յիսուսի հայեացքով հարկաւոր էր առվերջ ներել, մինչև որ ներելը դառնայ մարդու համար բնական, իսկ վրէժ առնելը հակաբնական:

Ա. մ. փ. ո. մ. Մեղանճողին ուղղելու համար Յիսուսի ի՞նչափսի միջոցներ էր առաջարկում: Աշակերտներն ի՞նչպիսի վերաբերութին դեպի իրանց վիրաւորողները: Պետրոս ի՞նչ մտքով տուեց իրա հարցը: Յիսուսի հայեացքով ներելը: Ի՞նչպէս պիտի դառնար մարդու համար:

Համեմատ. համար կարդալ Ղուկ. Ժէ. 3—4

34. ՅԻՍՈՒՍ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Ա. Սամարացիք Յիսուսին օթեան չըտովին.

«Երբ Յիսուս տեսաւ, որ երկրից իրա վերանալու օրերը մօտեցել են, հաստատ վճռեց Գալիլիայից գնալ Երուսաղէմ. իրանից առաջ մարդիկ ուղարկեց, որ օթեանի պատրաստութիւն տեսնեն: Նրանք զընացին մտան սամարացոց գիւղերից մինը, բայց ըընակիչները Յիսուսին չընդունեցին, որովհետև իմացան, որ Երուսաղէմ է գնում»: (Ղուկ. Թ. 51—53)

Յիսուս իրա գործունէութեան սկզբում աշակերտներին արգելել էր սամարացոց մէջ քարողել՝ համարելով հրէաներին աւելի պատրաստ Աւետարանն ընդունելու: Փորձերը ցոյց տուին ընդհակառակը, ուստի իրա ժողովը համար իրեւ մարդասիրութեան օրինակ հանդիսացը ողորմած սամարացու առակը: Յիսուս սամարացիներին թէպէտ վնաս չէր տուել, բայց չէ որ հրէայ էր, իսկ սամարացու համար ազգային պարտականութիւն էր թշնամի ժողովը:

Բ. Աշակերտները զայրացան.

«Երբ աշակերտներից Յակոբոսն ու Յովաննէսն այս տեսան, ասին. «Տէր, կամենում ես, որ խնդրենք երկնքից կրակ թափուի և նրանց ջնջիս: Յիսուս նրանց դառնալով սաստեց. «Դուք միթէ չըգիտէք, թէ որ հոգուն պիտի հետեւէք: Զէ որ մարդու որդին եկել է մարդկանցհոգիքն ապրեցնելու և ոչ թէ կորցնելու: Յետոյ աշակերտները Յիսուսի հետ գնացին ուրիշ գիւղ:»

(Ղուկ. Թ. 54—57)

Հրէաները այլազգի տեսնելիս երեսները շուռ էին տալիս, որ ողոյն չըտան, իսկ սամարացոց միշտ պիղծ ու շուռ էին կանչում: Բայց աշակերտները մոռանալով իրանց ժողովրդի ամբարտաւան վարմունքը, սկսում էին զայրանալ սամարացոց արարքների դէմ: Այդ ցոյց է տալիս, որ նըրանք կուրացած են հին ատելութեամբ և ոչ վերածնուած Յիսուսի ներողամիտ վարդապետութեամբ, որ վնտրում էր կորածին և մեծահոգութեամբ ներում մեղանչողին:

Ա. մ. փ. ո. մ. Գալիլիայից դեպի Հրէաստան կարճ ճանապարհը ո՞ւ տեղով էր: Սամարացիք ինչո՞ւ օրեւան չեին տալիս Յիսուսին: Աշակերտներն արդեօք իրաւունք ունեի՞ն նըրանց դէմ զայրանալու: Հրէաներն ի՞նչպէս էին վարսում այլազգիների հետ, Յիսուս ի՞նչ բառերով հաւկացրեց աշակերտներին իրանց սխալը:

35. ՅԻՍՈՒՍԻ ՀԱՅԵԱՑՔԸ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ա. Ամուսնաթողութիւն

«Յիսուս ճանապարհը շարունակելով գնաց Հրէաստանի սահմանները, Յորդանանի միւս կողմը (Պիրէա): Ժողովուրդը մեծ քազմութեամբ դիմաւորում էր նրան: Յիսուս իրա սովորութեան համեմատ դար-

ձեալ ուսուցանում էր քարոզելով։ Իսկ փարիսեցիք մօտենում էին և փորձելու մտքով հարցնում։ «արդեօք վայել բան է, որ ամեն մի պատճառի համար մարդ իրա կնոջն արձակի»։ Յիսուս պատասխանեց նրանց և ասեց. «Մովսէսը ձեզ ի՞նչ է պատուիրել»։ Նրանք ասին. «Մովսէսը պատուիրել է բաժանման թուղթ գրել և արձակել»։ Յիսուս ասեց նրանց. «Մովսէսը ձեր խստասրտութեան պատճառով գրեց ու տուեց ձեզ այդ պատուիրանը, բայց արարչագործութեան սկզբից Աստուած ստեղծեց մինն արու և միւան էզ. ուստի մարդը պիտի թողնի իրա հօրն ու մօրը և գնայ իրա կնոջ ետեից. Երկուսը կը գառնան մի մարմին։ Նրանք այնուհետեւ կը համարուեն ոչ թէ երկու, այլ մի մարմին։ Ուրեմն այն, ինչ որ Աստուած միացրեց, մարդ իրաւունք չունի բաժանել»։ Երբ տուն դարձան, աշակերտները նոյն բանի մասին հարցրին։ Յիսուս ասեց. «Եթէ մի մարդ իրա կնոջն արձակի առանց պոռնկութեան պատճառի և ուրիշին առնի, նրա արածը շնութիւն է, կամ եթէ կինը հեռանայ մարդուց և ուրիշի կին դառնայ, նրա արածն էլ շնութիւն է»։ (Մարկ. ֆ. 1—12)

Ինչպէս միշտ փարիսեցիք այս անգամ էլ Յիսուսին չէին դիմում բան ուսանելու մտքով, այլ փորձելու Մովսէսն ամուսնաթողութիւն թոյլատրել էր, հրէան իրան գուր չեկող կնոջը կարող էր արձակել, տալով նրան հեռանալու թուղթը։ Յիսուսի հայեցքով ամուսնական հաւատարմութիւնն անխախտ պիտի պահուէր։ Դրանով նա Մովսէսի պատուիրանը չէր վերացնում, այլ հասկացնում էր, որ Մովսէսը եղել է իրա ժամանակի որդին և այն ժամանակուայ բարերի համեմատ էլ կարգադրութիւն է արել. և այդ կարգադրութիւնը ծառայել է իրեն չափ նրանց հայրերի

բարքերի կոպտութեան ու ապականութեան։ Երբ որ մարդ ու կին իրարու հետ շաղկապուած են սրտի, համոզմունքի թելադրութեամբ, դրանց ընկերութիւնը, հաւանական է որ կը լինի անխղելի».

Ս. մ փ ո փ ո մ. Ի՞նչ դիտաւորսեամբ էին նետեսում փարիսեցիք Յիսուսին։ Արդեօք կարելիս էր Մովսէսի ժամանակի բոլոր օրենքները յեսազայ ժամանակներում կետ առկետ կատարել։ Երեւ Յիսուս ամուսնարողուրիսնը պախարակեր, փարիսեցիք ի՞նչ կանելին նրա դեմ։ Յիսուս ի՞նչ հայեցք ուներ ամուսնուրիսն մասին։

Համեմ. համոր կարդալ Մատթ. ժթ. 1—9 Ղուկ. ԺԶ

ՅԵ. ՅԻՍՈՒԻՍ ԵՒ ՄԱՆՈՒԻԿՆԵՐ.

Ա. Յիսուսը մանուկների բարեկամ

«Յիսուսի մօտ ծնողները երեխաներ էին բերում, որ ձեռ դնի նրանց գլխին, բայց աշակերտները չէին թողնում, սաստում էին բերողներին։ Երբ Յիսուս այդ բանը տեսաւ, բարկացաւ ու ասեց. «Թողէք երեխաները գան ինձ մօտ, մի արգելէք ու հեռացնէք նրանց, որովհետեւ այդպիսիներին է պատկանում երկընքի արքայութիւնը։ Ճշմարիտ եմ ասում ձեզ, մեծերից ով Աստծու արքայութիւնը չի ընդունիլ մանուկի նմաննա չի մտնիլ այնտեղ»։ Այս ասելուց ետ Յիսուս գրկեց մանուկներին, ձեռը գրեց նրանց գլխներին և օրհնեց»։

(Մարկ. ֆ. 13—16)

Աշակերտների աշխարհայեցքը հրէականից շատ չէր փոխուել. Նրանց կարծիքով Յիսուս իրեն Մեսիա պիտի շրջապատուած լինէր ուժեղ տղամարդկանցով և ոչ թէ թոյլ կանանցով ու երեխաներով, դրանցով հոսմայեցոց ուժը, զօրութիւնը չէր կարող փշրիլ։ Ուստի զայրանում էին աշակերտները ծնողների վրայ, որ քարոզութեան միջոցին մանուկներ էին բերում վարդապետի մօտ։ Յիսուս ընդհակառակն մեծ սիրով գրկում և օրհնում էր փոքրիկներին, որով հետեւ նա այլ կերպ էր զգում և մտածում։ Նրանց մէջ տես-

նում էր Աստծու արքայութեան իսկական քաղաքացիներ, որովհետև նրանք ոչ ոքից չէին չարախօսում, սուտ չէին երդում, գատարանի միջնով ոչ ոքի տուն չէին խլում, հրէայի ու այլազգու մէջ տարբերութիւն չէին դնում, որ մէկին սիրեն և միւսին ատեն: Ծնողների բուռն ցանկութիւնն էր, որ հրաշագործ ու բբուր ձեռը գիպչէր իրանց սիրասուն զաւակներին: Սրանք մեծացած ժամանակ քաղցրութեամբ կըյշէին Յիսուսից ստացած օրհնութիւնը:

Ա. մ փ ո փ ո մ: Աշակերտների կարծիքով նվեր պիտի շրջապատէին Յիսուսին: Ծնողներն ի՞նչու եին մանուկներին բերում Յիսուսի մօտ: Աշակերտներն ինչպէս եին վերաբերում դէպի այդպիսի ծնողները: Յիսուս ինչո՞ւ էր մանուկներին աւելի սիրում: Նրանց ի՞նչպիսի յատկութիւններից զորկ եին չափանաները:

Համեմատ. համար. կարդալ Մատթ. ԺԹ. 13—15 Ղուկ.
ԺԲ. 15—17

37. ՄԵԾԱՏՈՒՆ ՊԱՏԱՆԻՆ ԵՒ ԱՌԱԿՆԵՐ ԵՐԿՆՔԻ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ա. Օրինապահ հրէայ:

«Երբ մանուկներին օրհնելուց ետ Յիսուս ճանապարհ դուրս եկաւ որ գնայ, ահա մի մեծատուն եկաւ, ծունկ չոքեց նրա առաջ և հարցրեց. «Բարի վարդապետ, ինչ անեմ, որ յաւիտենական կեանքը ժառանգեմ: Յիսուս ասեց. «Ինչու ես ինձ անուանում բարի, ոչ ոք չըկայ բարի բացի Աստծուց: Դու գիտես այս պատուիրանները՝ շնութիւն մի անիլ, ըսպանութիւն մի անիլ, մի զողանալ, սուտ վկայութիւն մի տալ, պատուիր քո հօրն ու մօրը»: Մեծատունը պատասխանեց. «Վարդապետ, այդ ամենը մանկութիւնից սկսած մինչև օրս կատարել եմ, ասա, ուրիշ ինչ կայ թերի, որ լրացնեմ»: (Մարկ. Ժ. 17—20)

Յարուստ երիտասարդը Մովսէսի սահմանած բոլոր պատուիրանները կատարել էր, ուրեմն նա իբրև հրէայ կացով էր իրան երջանիկ համարել ու գոհ մնալ իրա վիճակով, բայց նրա հոգու մէջ զգացուած ծարաւը նրան հանգիստ չէր տալիս, իմացածով բաւական չրմնալով, որ նշան էր հոգու աղքատութիւն, ցանկացաւ Յիսուսի քարոզած լաւագոյն կեանքին էլ ծանօթանալ:

Բ. Յիսուսի պահանջը:

«Յիսուս նայեց նրա կերպարանքին, հաւանեց ու ասեց. «Եթէ բան է պակաս քեզ, եթէ կամենում ես կատարեալ լինել, գնա ինչ ունես, չունես, վաճառիր ու տուր աղքատներին, որ երկնքում գանձ ունենաս: Վերցրու խաչը և եկ իմ ետևից»: Այս խօսքի վրայ մեծատունը յոնքերը խոժառեց և տիսուր արտում հեռացաւ, որովհետև անշափ հարստութիւն և կալուածներ ունէր»: (Մարկ. Ժ. 21—22)

Յիսուսի աշքում բաւական չերեացին յաւիտենական կեանք ժառանգելու համար երիտասարդի կատարածները, նրան առաջարկեց հրաժարուել ունեցած երկրաւոր բարիքներից, իրա աշակերտների պէս խզել ամեն կապ ծնողների ու ազգականների հետ: Այս առաջարկը սարսափահար արեց երիտասարդին: Անշուշտ նա մտածում էր՝ եթէ հարստութիւնը բոլորովին ձեռից թողնեմ, իմ կեանքը ինչը նման կըլինի, այժմ մեծատուն եմ, կարող եմ ողորմութիւն բաժանել, եթէ չունեռ լինեմ այս ձկնորսների նման, ով ինձ յարգանքով գլուխ կըտայ:

Գ. Հարստութիւն եւ երկնքի արքայութիւն:

«Յիսուս այս ու այն կողմնայեց ու ասեց աշակերտներին. «տեսն ում էք թէ որքան դժուար է հարստութիւն ունեցողի համար երկնքի արքայութիւն մտնելը»: Աշակերտները նրա խօսքերի վրայ ապշած մնացին, իսկ Յիսուսնրանց դառնալով խօսքը շարունակեց. «Այս,

հրդիք, անչափ դժուար է հարստութեան ու գանձի վրայ յոյս դնողին Աստծու արքայութիւն մտնելը։ Աւելի հեշտ է հաւատալ, որ ուղար ասղի ծակով անցկենայ, քան թէ մեծատունը Աստծու արքայութիւն մտնի։ Աշակերտներն աւելի զարմացած Յիսուսի խօսքերի վրայ իրար մէջ խօսում էին. «ուրեմն ովկ կարող է ապրել։ Յիսուս աչքերը նրանց վրայ դարձնելով ասեց. «մարդկանցից այդ անհնարին է, բայց Աստծու կողմից ամեն ինչ հեշտ է»։

(Մարկ. Փ. 23—27)

Մեծատուն պատանին անկարող եղաւ ընդունել Յիսուսի առաջարկը այն պարզ պատճառով, որ նրա մէջ աւելի զօրեղ էին հարստութեան սէրը ու զրկանքների սարսափը, քանի թէ յաւիտենական կեանք ունենալու ձգտումը։ Յիսուսի մօտից հեռացաւ անգոն ու վշտու սրտով, ցանկանում էր բարձրագոյնը, բայց որովհետև այդ ձեռ բերելու չամար կամքի ուժ չունէր, ակամայ վշտանում էր. այդ ցոյց էր տալիս, որ նա աւելի մարմնաւոր մարդ էր բան թէ հոգեոր։

Դ. Ազարակի միջի զանձը.

«Այս առիթով Յիսուս ասեց հետեւեալ առակը. «Երկնքի արքայութիւնը դարձեալ նման է ագարակի մէջ ծածկուած գանձին, որ մի մարդ գտնելով թագցրեց։ Այդ խնդութիւնից գնաց, վաճառեց իրա ունեցած չունեցածը և գնեց այն ագարակը»։

(Մատթ. Փ. 44)

Կարող է պատահել, որ մշակը մի մեծատան ագարակում բանելիս ու իրա քաղցած զաւակների ու կնոջ վրայ մտածելիս յանկարծ նրա բահը դիպչի մի կոշտ բանի։ Եթէ նայի, տեսնի առջելը մի կարսոսուկիներով ու թանկագին քարերով լիք, արդեօք խելօք չի լինի, որ խուփը ծածկի ու գնաց իրա տուն ու տեղը ծախի ու այդ ագարակը գնի, իրա սե-

հականը դարձնի։ Ի հարկէ գանձի զոյութեան մասին տեղեկութիւն չունեցողները նրա վրայ կընայեն իբրև խելազարի վրայ, որ զաւակներին զրկում է օթեանից ամայի դաշտը գնելու համար։

Ե. Պատուական մարզարիտներ։

«Յիսուս խօսքը շարունակեց «կրկին նման է երկնքի արքայութիւնը այն վաճառական մարդուն, որ վնատրում էր գեղեցիկ մարգարիտներ։ Երբ գտաւ մի պատուական մարգարիտ, գնաց, ինչ ունէր, չունէր վաճառեց և ձեռ բերեց այն մարգարիտը։»

(Մատթ. Փ. 45—46)

Յիսուսի հայեացքով երկնքի արքայութիւնը հասկացող մարդու համար պիտի լինի ամենաթանկագին բանը։ Եթէ ցանկանում է այնտեղ գնալ, պիտի յօժարուի ամենամեծ զոհաբերութիւնն անհի, եթէ զրա համար ըիչ է ինչը, ըստացուածքը, պիտի վրան դնի կեանքն ևս։

Ա. մ փ ո փ ո մ. ի՞նչն էր ստիպում մեծատուն պատանեան գալ Յիսուսի մօտ։ Մինչեւ այդ օրը ի՞նչ պաստիքաներ էր կատարել։ Յիսուս ի՞նչ առաջարկ արեց. ինցայիս ազդեց այդ մեծատան վրայ։ Յիսուս ի՞նչ կարծիք յայտնեց հարատենելի վերաբերմամբ։ Լաւազոյն բանը ձեռ բերելու համար ինչ պետք էր անել, ի՞նչ բաների նմանեցրեց Յիսուս երկնքի արքայութիւնը։

Համեմատութեան համար կարդալ Մատ. Փ. 16—26

Ղոկ. Փ. 18—27

38. ԱՇԱԿԵՐԾՆԵՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Ա. Զոհարերութիւն եւ հատուցում.

«Պետրոսն ասեց. «Տէք, ահա մենք ամեն ինչ թողինք ու եկանք քո ետեից, մեղինչ վարձատրութիւն է լինելու»։ Յիսուս ասեց. «Ճշմարիտ եմ ասում, չը կայ մէկը, որ թողած լինէր տունը կամ հայրն ու մայրը կամ եղբայրներն ու քոյրերը կամ որդիքը կամ

ագարակները իմ համար կամ Աստծու արքայութեան համար ու այժմ ներկայ ժամանակում չըստանար հարիւրապատիկ աւելի տներ, եղբայրներ, քոյրեր, և մայրեր, որդիներ և ագարակներ հալածանքների հետ միասին և ապագայ աշխարհում էլ յաւիտենական կեանք, բայց շատերը, որ առաջիներ էին, կը դառնան յետիններ և յետինները կը դառնան առաջիններ»:

(Մարկ. Փ. 28—31)

Յիսուս դէպի երուսաղէմ էր գնում: Աշակերտները կարծելով թէ մեսիական դադափարն իրականանալու վրայ է և շուտով իրանց վարդապետը Մեսիայի թագը զիխին պիտի գնի, սկսան իրանց գործունէութիւնը, կրած նեղութիւնները մէջ տեղ բերել ու վարձատրութեան պահանջ անել: Այդ պահանջի առիթով Յիսուս կարիք չըհամարեց յանդիմանել նրանց, գիտէր որ շուտով նրանց ցնորդները օգն են են ցնդուելու: Կրած նեղութիւնների համար հատուցում խոստացաւ, այն է, կորցրած երկրաւոր բարիքների փոխարէն ամենողորմ Աստուածը շնորհելու էր նրանց երկնային բարիքներ: Սակայն շեշտեց հետեւեալը՝ թող ոչ ոք չըգոռոզանայ իրա սրտում, թէ եթէ Յիսուսի հետ շատ ամիսներ է շրջել, շատ էլ պիտի վարձատրուի: Ո՞չ, կարող է պատահել, որ ուշ կոչուած մշակը հարկաւոր վայրկեանում մեծ զոհաբերութիւն յանձն առնելով աւելի բարձր կանգնի: բան թէ իրա հետ շրջած աշակերտները:

Բ. Իրա կրելիք շարչարանքի մասին.

«Մեծ բազմութիւն խոնուած բարձրանում էր գէպի երուսաղէմ: Յիսուս ամենից առաջ էր քայլում. հետը գնացողները զարմանում էին և երկիւղ կը ում նրա համար: Յիսուս երկրորդ անգամ 12 աշակերտներին կանչեց առանձին, սկսեց նրանց պատմել թէ, ինչեր են պատահելու իրան: «Ահա բարձրանում ենք գէպի երուսաղէմ, մարդու որդին կը մատնուի քահա-

նայապետների ու դպիրների ձեռը, նրան մահուան կը դատապարտեն, հեթանոսների ձեռը կը ցցեն, նրան կը ծաղրեն, կը ծեծեն, նրա վրայ կը թքեն, կը սպանեն նրան և երրորդ օրը յարութիւն կաւնի»:

(Մարկ. Փ. 32—34)

Պետրոսի խոստովանութեան միջոցին Յիսուս արդէն խօսեցել էր կրելիք չարչարանքի մասին, այժմ ուզում էր հասկացնել, որ սրբազն գործը զոհաբերութիւն է պահանջում, բայց աշակերտները գծուար էին լմբռնում այդ, ինչպէս երևաց վարձատրութեան համար բարձրացրած սրաննեց: Երկրորդ անգամ խօսեց այդ մասին, որ աշակերտներին ընտելացնի չարչարանք կրելու դադափարի հետ, որ մի գուցէ ապագայ պայմաններն աննպաստ լինելով վը հատուեն:

Գ. Զերեղիայի որդոց ցանկութիւնը.

«Երկու աշակերտներ՝ Յակոբոսն ու Յովհաննէսը նրան մօտեցան և ասին. «Վարդապէտ, մենք կամենում ենք, որ գու մեր խնդիրը կատարես»: Յիսուս հարցըց. «Ի՞նչ էք կամենում, որ ձեզ համար անեմ»: Նրանք ասին. «Թոյլ տուր, որ քո վառքին մասնակցենք, մէկս քո աջ կողմը նստենք, միւսը քո ձախ կողմը»: Յիսուս պատասխանեց նրանց. «Հէք իմանում թէ ինչ էք խնդրում. արդեօք կարմղ էք խմել այն բաժակը, որ ես պիտի խմեմ կամ այն մկրտութիւնով մկրտուել, որով ես պիտի մկրտուեմ»: Նրանք ասին. «այն, կարող ենք»: Յիսուս ասեց նրանց. «այն բաժակը, որ խմելու եմ, կը խմէք և այն մկրտութիւնով, որ մկրտուելու եմ, կը մկրտուէք, բայց իմ աջ ու ձախ կողմ նստացնելը ինձանից չի կախուած, որ ձեզ տամ, այդ նրանցն է, որոնց համար պատրաստուած է»: Միւս 10 աշակերտները այս

լսելով բարկացան Յակոբի և Յովհաննէսի վրայ:
(Մարկ. Ժ. 35—41)

Փառասէր ձգտումներից աշակերտները ձեռ չէին վերցնում: Յիսուս Պետրոսից ետ ստիպուած էր միւս երկու ինքնավստահ աշակերտների առաջ պահանջներ դնել, որ նրանք զգան թէ ինչ ծանր զոհարերութիւններ է դնում նրանց վրայ առաքելական կոչումը, բայց նրանք անփորձ լինելով չէին ըմբռնսւմ ապագայ գործունէութեան բոլոր ծանրութիւնը, ուղղակի յայտնում էին, որ իրանք ամեն բանի պատրաստ են, միայն այն լինի, որ փառաւոր պաշտօններ ստանան: Սակայն ով զոհարերութիւն անում է վարձ ընդունելու գիտաւորութեամբ, նրա գործունէութիւնը բարոյական արժէք չունի:

Դ. Երկրի արքայութիւն եւ երկնքի արքայութիւն: Յիսուս աշակերտներին կանչեցիրա մօտ և ասեց. «Պիտէք, որ հեթանոս ժողովուրդների իշխան համարւողները տիրում են նրանց վրայ և նրանց մեծամեծները իշխում են նրանց: Բայց այդպիսի բան չըպիտի լինի ձեր մէջ, այլ ձեր մէջ ով կամենում է մեծ լինել, նա պիտի ձեզ սպասաւոր լինի: Եւ ձեզանից ով կամենայ առաջնը լինել, թող լինի ձեր ամենի ծառան: Որովհետեւ մարդու որդին չի ելել, որ նրան ծառայեն, այլ որ ինքը ծառայի և իրա անձը փրկանք տայ շատերի փոխարէն»: (Մարկ. Ժ. 42—45)

Յիսուսի հայեացքով ինչ որ երկրային թագաւորութիւնների մէջ կատարուել էր, երկնային թագաւորութեան մէջ դրա հակառակը պիտի կատարուէր: Երկրայինում մեծերն ու զօրեղները ուժով նուաճում են միւս ազգերին և ամեն ինչ նրանց ձեռից խլում, երկնայինում ընդհակառակ մէկը պիտի ծառայի միւսին և նա է լինելու այնտեղ ամենամեծը, ով մեծ լինելու ամենաին ձգտում չունի, այլ անձնուիրաբար սրտեր է վաստակում Աստծու համտր:

Ա. մ փ օ փ ո ւ մ. ի՞նչ վարձատրութիւն էին պահանջում աշակերտները: Նրանց մէջ դեռ ինչ զազափարն էր խօսում: Յիսուս ի՞նչպէս սպառնաց այն աշակերտներին, որոնք վարդապետի հետ երկար շրջելով մեծամուսած, վարձատրութեան տարօրինակ պահանջներ էին անում: Արդեօք կարո՞ղ էր ուղ եկողը աւելի բարձր լինել վաղ եկողից: Ի՞նչ դիտաւորներեամբ էր զնում Յիսուս Երուսաղեմ եւ ի՞նչ դիտաւորնեամբ աշակերտները: Յիսուս ինչը՞ո նորից լիշեցրեց կրելիք ջարճարանի մասին: Երկրային մեծամեծներն ինչո՞վ են զանազնում երկնային մեծամեծներից:

Համեմատ. համար կարգալ Մատ. ԺԹ. 27—30, ի. 17—28, Ղուկ. Ժ. 30. ԺԸ. 28—30:

39. ՈՉ ԹԷ ԽՈՂԱՂՈՒԹԻՒՆ, ԱՅԼ ԵՐԿՊԱ-
ՌԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Երկպառակութեան հուր եւ չարչարանքի մկըրտութիւն. «Յիսուս ասեց աշակերտներին. «Ես եկայ հուր գցելու երկրիս վրայ և ինչպէս կուզէի, որ նա արդէն բորբոքուած լինէր: Մի մկրտութիւնով ես պիտի մկրտուեմ և ինչպէս պապակած սպասում եմ դրա կատարմանը: Միթէ կարծում էք, որ ես եկայ խաղաղութիւն տալու երկրին, ոչ, ասում եմ ձեզ, այլ երկպառակութիւն: Որովհետեւ այտուենետեւ հինգ հոգին մի տան մէջ երկու մաս կըբաժանուեն, երեքը երկուսի դէմ, երկուսը երեքի: Հայրը կըբաժանուի որդուց, որդին հօրից, մայրն աղջկանից, աղջիկը մօրից, սկեսուրը հարսից և հարսն սկեսուրից»: (Ղուկ. ԺԲ. 49—53)

Յիսուսի փափագն էր՝ իրա մէջ բնակուող նոր հոգին բորբոքելիրա ժամանակակիցների սրտերում նոյնպէս, որ այդ հրեղն շունչի միջոցով մաքրուեն նրանք անձնասիրութեան ու ընչասիրութեան ախտերից: Բայց նախառեանում էր, որ

այդ ներքին մկրտութիւնը միայն սակաւների մէջ տեղի կունենայ, մեծամանութիւնը կը մնայ դարձեալ հին հոգուն և ուղղութեանը կպած, նորը կը համարուի իրեւ խանգարմունք աստուածահաճոյ կարգերի: Այսպիսով խաղաղութեան քարոզը պիտի դառնար կուի հրաւէր. Յիսուսին հետևողը ուղէր չուզէր, ազգականների սէրը պիտի զոհէր յանուն եր՝ կընքի արքայութեան:

Բ. Ով չի կարող Յիսուսի աշակերտ լինել.

«Ճատ ժողովուրդներ գնում էին Յիսուսի ետեւից, դարձաւնրանց և ասեց. «Եթէ մէկն ինձ մօտ գայ և չատէ իրա հօրը, մօրը, կնոջը, զաւակներին, եղբայրներին և քոյրերին, դրա հետ նոյնպէս և իրա անձը, նա չի կարող իմ աշակերտ լինել: Ով իրա խաչը չառնի և իմ ետեւից գայ, նա չի կարող իմ աշակերտ լինել»: (Ղուկ. ԺԴ. 25—27)

Աշակերտները իրեւ հրէաներ շարունակում էին հաւատարիմնեալ մեսիական գաղափարին, ուշ չըդարձնելով վարդապետի կողմից եղող ծանուցումներին. նրանք յոյսները չէին կտրում Աստծու արքայութեան մէջ մեծամեծ պաշտօններ ստանալուց. ամեննին գաղափար չունէին գալիք սոսկալի հալածանքների, զրկանքների մասին, Յիսուսի ակնարկած չարչարանքները թեթև անցողական բաներ էին համարում. այդ էր պատճառը, որ Յիսուս շեշտեց կրկին, թէ ինչ ու ինչից են զրկուելու իրա խսկական աշակերտը կոչուելու համար:

Գ. Աշտարակ շինել եւ պատերազմ՝ անել.

«Ձեզանից ով կը լինի, որ ուզենայ աշտարակ կանգնեցնել, նախօրօք չընստի և ծախսը չըհաշուի, թէ արդեօք շէնքն աւարտելու միջոց ունի: Մի գուցէ թէ՝ երբ հիմքը զցի և չըկարենայ աւարտել ու ծաղրի առարկայ դառնայ տեսնողների աչքում: Նըրանք կասեն՝ ահա այս մարդն սկսեց շէնքը և չըկարաց վերջացնել, կամ որ թագաւորը կը լինի, որ կա-

մենայ ուրիշ թագաւորի դէմ կոուել, առաջուց չը նստի խորհրդածելու, թէ արդեօք 10 հազարով կարո՞ղ է դիմագրել նրան, որ իրա վրայ գալիս է 20 հազարով: Երբ չի կարող, քանի որ հեռու է, պատգամաւոր կուղարկի և խաղաղութիւն կը խնդրի, Այսպէս էլ ձեզանից ամեն մինը, որ չի հրաժարուիլ իրա ունեցածից, չի կարող ինձ աշակերտ համարուել: Աղը լաւ բան է, բայց եթէ աղն ինքը անհամ լինի, էլ ինչնիվ կարող է համովանալ: Նա ոչ իրեւ հող պիտանի կը լինի և ոչ իրեւ աղը, կը մնայ միայն դէն շպրտել: Ով լսելու ընդունակ ականջ ունի, թող հասկանայ»:

(Ղուկ. ԺԴ. 28—35)

Յիսուս վերջին անգամ օրինակների միջոցով նրանց ցոյց տուեց վիճակի ամբողջ լրջութիւնը, ծանրութիւնը և առաջարկեց, որ քանի երուսաղէմ չեն մտել, հանգիստ ու խաղաղ մտածելով քննեն իրանց, արդեօք կամքի ուժ կունենան իրա յիշած պայմանները կատարելու և հալածանքի պայքարի միջոցին իրանց խոստովանութեան հաստատ մընալու: Չը մոռացաւ յիշունել, որ ով շտապով խոստում անի ու չըկարենայ այդ ի կատար ածել անձնուէր գործունէութեամբ, նա կը դառնայ խաղք ու խայտառակ նայողների աչքում:

Ամփոփում. Յիսուս ի՞նչով նորից յիշեցնում էր աշակերտներին լուրջ մտածել իրանց կրօման ծանրութեան վրայ: Յիսուս ի՞նչիմէջ էր գտնում կեանքի նպատակը: Ինչո՞ւ էր զենում դէպի ման, նախօրօք աշակերտներն ինչ պիտի իմանալին: Զեր անցած դասերից ո՞ւմ էր նանաշում իբրեւ մեծութիւններ երկնքի արքայուրեան մէջ, ի՞նչով էին զանազանով դրանք Զեբեդիայի որդիներից: Կուսակրօն ինչպիսի անձինք կարող են մեծ համարուել երկնքի արքայուրեան մէջ:

40. ԱՅԻFFԻ ՄՇԱԿՆԵՐ

Ա. Զանազան ժամանակ վարժուած մշակներ.

«Յիսուս վարձատրութեան մասին խօսքը շարունակելով ասեց. «առաջինները կը գառնան յետին. Ներև և յետինները առաջիններ, որովհետև երկսքի աղքայութիւնը նման է մի տանուտէր մարդու, որ առաւտովը դուրս եկաւ այգու համար մշակներ վարձելու: Մշակների հետ օրը մի դահեկան խօսելով ուղարկեց իրա այգին: Ժամը 3-ին դուրս եկաւ, ուրիշ մշակներ տեսաւ հրապարակում պարապ կանգնած, նրանց էլ ասեց. «դուք նոյնպէս գնացէք իմ այգին, ինչ որ արժանն է, կը տամ ձեզ»: Նրանք էլ գնացին: Պարձեալ վեց ժամին և ինն ժամին դուրս եկաւ այգու տէրը և մշակներ վարձեց: Ժամը 11-ին, երբ օրը մթնելու մօտ էր, դուրս եկաւ, տեսաւ պարապ կանգնած այլ մշակների. «ինչու էք այստեղ պարապ կանգնել»: - «Ինչ անենք, մեզ վարձող չեղաւ»: Տանուտէրն ասեց. «դուք նոյնպէս գնացէք այգին, ինչ որ արժանն է, կը տանաք»:

Հրէաստանում, ինչպէս բոլոր արեկելեան երկրներում, օրն սկսւում է արեկի ծագումով. դա համարւում է ներկայ հաշով առ. ժամի 6-ը. իսկ հին հաշով ժամի 1-ը. Աւետարանի մէջ յիշուած 3-րդ ժամը մեր հաշուով կըլինի առ. 9 ժամը, այնտեղ յիշուած 6 րդ ժամը կրիխի մեր կէսօրը, այսինքն 12 ժամը. Այնուհետեւ, յիշուած 9-րդ և 11-րդ ժամերը կըլինեն մեր հաշից զի՞ի 3-րդ և 5-րդ ժամերը:

Բ. Տիրոջ վարձատրութեան կերպը:

«Երբ մթնեց, այդու տէրը վերակացուին ասեց.
«կանչիր մշակներին և նրանց վարձը տուր սկսած

յետին եկողներից մինչև առաջիները։ Հինգերորդ ժամին—իրիկնադէմ եկողները ներկայացան և մի դահեկան ստացան։ Վաղ առաւօտից աշխատողները, որ կարծում էին թէ իրանք աւելի կըստանան, նրանք էլ մի-մի դահեկան ստացան։ Դրա համար տրտընջացին տան տիրոջ վրայ և ասին թէ՝ դրանք յետինները մի ժամ են աշխատել, ինչո՞ւ ես դրանց հաւասարացնում մեզ հետ, օրուայ ծանրութիւնն ու տօթը մենք ենք կրել։ Տէրը պատասխանեց նրանցից մէկին և ասեց. «այ ընկեր, ես բեզ քո վարձից չեմ զըկում, ինչ որ խոստացել եմ, վճարում եմ, ստացիր քո վարձը և գնա լուռ ու մունջ։ Ես եմ ու կամենում եմ յետին եկողին էլ նոյնքան տալ, որքան որ քեզ, քո ի՞նչ գործն է, միթէ իրաւունք չունեմ, իմ ունեցածը տնօրինելու այնպէս, ինչպէս իմ կամքն է։ Կամ ինչո՞ւ քո աշըը նախանձում է, որ ես բարի եմ։ Այդ լաւ չէ»։

Մշակների կարծիքով իրանց վարձատրութեան չափը պիտի
տի կախում ունենալը ժամանակի տեսողութիւնից ու ծանր
աշխատանք կրելուց, Բայց տէրը կարող էր աչքի առաջ
ունենալ աշխատանքի տեսակը, թերևս մշակի ազնիւ բնոյ-
թը, նրա հիւանդ վիճակը կամ զաւակների թիւը: Վաղ վար-
ձուղները յօֆար չէին, որ ուշ վարձուղներն իրանց հաւա-
սար վարձատրուեն, բայց բարեսիրա տէրը ամենին հաւա-
սար տալով անշուշտ մտածում էր այսպէս՝ Յ-ըդ ժամին
վարձուղները կըփափագէին առաւօտանց վարձուել ու գործի
գնալ. նրանք ինչ մեղաւոր են, որ գործ չեն գտել, միթէ
նրանց ընտանիքները քաղցած պիտի մնան: Շատ կարելի է
ուշ վարձուղն աւելի շատ երեխաներ ունի, կամ գուցէ կի-
նը մեռել է ու որբերը թողել է նրա վզին, կամ գուցէ
մայր ունի տանը, անդամալոյժ, մահճում պարկած են. են:
Ցիսուսի աշակերտները մտածում էին ճիշտ շուտ վարձուող

մշակների պէս և ցանկանում էին աւելի մեծ բաժին ու վարձ ստանալ, որովհետև վարդապետի հետ տարիներ շարունակ շրջել են:

Ա. մ փ ո ւ մ. Աշակերտների կարծիքով ով պիտի մեծ բաժին ստանար երկնքի արքայութեան մէջ, Յիսուսի հայեացքով վարձատրութիւնն ինչպէս պիտի լիներ. Այս վարձաբաժանութեան եղանակը ինչ ազդեցութիւն կաներ աշակերտների վրայ. ի՞նչ կարելի է ուսանել այգու մշակ ներ առակից:

41. ԶԱՔԷՌՍ ՄԱՔՍԱՀՈՐ

Ա. Մաքսատորը դիմաւորեց Յիսուսին.

«Յիսուս Գալիլիայից գալիս մտել էր Երիքով քաղաքը և շրջում էր: Այստեղ Զաքէսս անունով մարդ կար, նա մաքսապետ էր ու հարուստ մեծատուն: Վաղուց ցանկանում էր տեսնել, թէ ով է Յիսուս, բազմութեան միջից չէր կարողանում տեսնել, որովհետեւ հասակով կարձ էր: Առաջ շտապեց, բարձրացաւ մի ժանտաթղենու վրայ, որ այնտեղից նայի, որովհետեւ նրա մօտով էր անցնելու»: (Ղուղ. ԺԹ. 1—4)

Զաքէսսը շատ հարուստ մաքսապետ էր և լստ երկոյթին իրա կեանքից դժգոհ: Անշուշտ լսել էր Գալիլիայի ուխտաւորներից Յիսուսի մասին, որ նա բարեկամութիւն է անում մեղաւորների ու մաքսաւորների հետ: Այդ լուրի վրայ նրա սիրտը լցուել էր յոյսով և վստահութիւնով, ուստի ցանկացաւ նազարեցի մատչելի վարդապետին դիմաւորել, որ նրա միջոցով հոգու խաղաղութիւն գտնի: Թէև բաւական ուշ բայց կամենում էր այգու մշակ վարձուել երկնքի արքայութեան համար:

Բ. Յիսուս իջեւանեց Զաքէսսի մօտ.

Երբ Յիսուս այնտեղ հասաւ, նայեց վերև և ասեց. «Զաքէսս, շտապիր, ներքեւ արի, այսօր արժան

եմ տեսնում քո տանը հանգստանալց: Զաքէսսն շտապով իջաւ և ընդունեց նրան ուրախ ուրախութիւնով: Երբ որ այս տեսան, ամենքը տրանջացին ու ասին, «տեսուէք, մեղաւոր մարդու տանն իջնանեց»:

(Ղուղ. ԺԹ. 5—7)

Գիտենք, որ աւանդապահ հրէաները հաշտ աչքով չէին կարողանում նայել Յիսուսի գործունէութեան վրայ: Մեղաւորների հետ բարեկամութիւն անողը վարկարեկ, անուանարկ էր: Յիսուս փարիսեցոց կարծիքն արհամարհելով օգնութեան ձեռ էր մեկնում ամեն ընկածի ու տկարի: Զաքէսսը ուշ երկող մշակներից մինն էր. Յիսուսը՝ բարեսիրտ տանուաէրը, որ արդէն աչքերում կարգացել էր նրա սրտի փափագը: Հարուստ մաքսապետը նեղութիւն չէր կրիլ ծառ բարձրանալ, եթէ Յիսուսի հետեւող գառնալու միտք չուներ: Որպէսզի օգնի Զաքէսսին իրա սրտում տեղի ունեցող պայքարից յաղթող դուրս գալու, Յիսուս կամեցաւ նրա տանն իջնանել և նրա դարձը դիւրացնել:

Գ. Զաքէսսը կամեցաւ նոր մարդ դառնալ.

«Սակայն Զաքէսսն եկաւ կանգնեց Տիրոջ առաջ և ասեց. «Ճէր, երբ արժան տեսաք իմ տանն իջնելու, կարողութեանս կէսը տալու եմ աղքատներին, բացի այդ՝ եթէ որևէ մէկին զրկանք եմ հասցրել, պատիկը կըհատուցան եմ նրան»: Յիսուս ասեց չորս պատիկը կըհատուցան եմ նրան»: Այսօր փրկութիւն իջաւ այս տան վրայ, ունրան. «այսօր փրկութիւն իջաւ այս տան վրայ, ուրովիետեւ սա ևս Աբրահամի որդի է»: Յետոյ դառնանալով փարիսեցներին ասեց. «ես ճշմարտութիւնն եմ ուսացանում ամեն մէկի, ով կամենում է ճշմարտութիւն ուսանել: Դուք ձեզ արդար համարելով կարծում էք թէ, ճշմարտութիւնը ճանաչում էք, ուստի կարիք չունէք որևէ բան ուսանելու: Ուրեմն մնում է միայն մեղաւորներին ուսուցանել: Բայց ինչպէս կա-

ըող են նրանք ճշմարտութիւնն ուսանել, երբ մենք նրանց չըմօտենանք։ Մարդու որդին սյն նպատակով է եկել, որ փնտրի ու ապբեցնի կորածին։

(Հուկ. ԺՇ. 8-10)

Հըէաների արհամարհանքը, փարիսեցոց կոպիտ անալ-
գանքներն այնքան ուժեղ չէին եղել, որքան ուժեղ էր Յի-
սուսի սիրալիր վերաբերմունքը մաքսապետի սրտի համար,
անհուն ցնծութիւն պատճառեց նրան հոչակաւոր վարդա-
պետի այցելութիւնը, հաւատաց, որ ինքը գեռ կորած չէ,
քանի որ Աստծու մեծ մարգարէն իրան ընդունում է իրուն
Աբրահամի որդի: Այդ այցելութիւնը մեծ շնորհ համարեց
իրա պէս մեղաւորի համար և երախտագէտ սրտով իրա
կարողութեան կէսը զրեց Յիսուսի տրամադրութեան տակ
առդատներին բաժանելու, զրկուածներին սփոփելու համար:

Ա մ փ ո փ ո ւ մ. Հրեաներն ինցպէս եին վերարերում դեպի մաքսաւորները. Հարուստ Զաքէոսն ինչն զո՞ն չէր իրա կեանքից. Ինչից երեւաց, որ նա հոգու խաղաղութիւն էր փետրում. Յիսոսն ինչո՞ւ զնաց մաքսապէտի տուն. Զաքէոսն այգու մշակների ո՞ր կարգին էր պատկանում. Ո՞վքեր եին, որ նախանձում եին Զաքէոսի ընդունած շնորհին. Զաքէոսն ինչ- չա՞վ տարբերուեց մեծատուն պատանուց.

42. ՅԻՍՈՒԽԻ ՄՈՒՏՔԸ ԵՐՈՒՍԱԼԵՄ

Ա. Արմաենի ոստերով դիմաւորելը.

«Երբ մօտեցել էին Ելուսաղէմին, Զիթենեաց լեռան և գտնւում էին Բէթփագէ և Բէթանիա գիւղերի գիմաց, Յիսուս աշակերտներից երկուսին զիմելով ասեց. «Գնացէք այն գիւղը, որ ձեր հանդէպն է, հէնց որ մանէք, մի կապած աւանակ կըգտնէք, որի վրայ դեռ ոչ ոք չի նստած, արձակեցէք և բերէք այստեղու Եթէ ձեզ հարցնող Կրիխին, թէ այդ ի՞նչ

էք անում, պատասխանեցէք, որ Տիրոջը հարկաւոր է,
շուտով յետ կուղարկի»։ Նրանք գնացին և գտան ա-
ւանակին փողոցում դռան մօտ կապած և արձակե-
ցին։ Այստեղ կանգնողները հարցրին. «Ի՞նչ էք անում,
ինչու էք արձակում աւանակը»։ Նրանք պատասխա-
նեցին ինչպէս Յիսուս պատուիրել էր և նրանք թոյլ
տուին։ Աւանակը բերին Յիսուսի մօտ, նրա վը-
րայ գցեցին իրանց վերարկուները. Յիսուս հեծաւ ա-
ւանակը։ Ուխտաւոր բազմութիւնից շատերն իրանց
հանդերձները տարածում էին ճանապարհին, ուրիշ-
ներն էլ աքմաւենի ծառի ոստեր էին կտրում և ճա-
նապարհի վրայ էին փռում։ Յիսուսի թէ առջնից
գնացողները և թէ ետևից եկողները աղաղակում էին
և ասում. «Ո՛վսաննա Բարձրեալին, օրհնեալ լինեա
դու, որ գալիս ես Տիրոջ անունով։ Օրհնեալ լինի բո-
թագաւորութիւնը, որ եկել է մեր Դաւիթ հօր անու-
նով, խաղաղութիւն լինի երկրում և փառաբա-
նութիւն բարձրում»։ (Մարկ. Ժ. 1-10)

Հատ հրէական սովորութեան Գալիլիայի ուխտաւորները ուրախ արամադրութեամբ զնում էին Դաւթի սրբազնքաղաքը, որ նրա տաճարում առն ու հանդէս կատարենց Նրանք իրանց երկրի մարգարէին տեսնելով իրանց մէջ, սկսեցին ոգեսրուած սաղմոսներ երգել և միւս ուխտաւորների սրտերում կենդանացնել Սիօնի մասին եղած գուշակութիւնները: Աշակերտները լսելով բազմահազար ժողովրդի այդ ոգեսրութիւնը և ցնծալից աղաղակները, աւելի ամբապնդում էին իրանց ակնկալութեան մէջ, այսինքն, որ իրանց վարդապետը հրէական Մեսիան է:

Բ Յիսուս յաց եղաւ Նրուտաղէմի վրայ.

«Երբ մօտեցաւ երուսաղէմին, նայելով վըան լաց
եղաւ և ասեց. «Ուր էք թէ զոնէ այսօր իմանայիր»

ճանաչէիր քո խաղաղութիւնը, բայց այժմ այս ամենը ծածկուած է քո աչքերից: Քեզ համար կը գան այնպիսի օրեր, երբ թշնամիներդ շուրջդ պատմէշներ կը դնեն ու կը պաշարեն քեզ, կը նեղեն, կը ձնշեն քեզ ամեն կողմից, ոտնակոխ կանեն քեզ ու քո որդկերանց, չեն թողնիլ քար քարի վրայ մնայ, պատճառն այն, որ դու չիմացար քո այցելութեան ժամանակը»:

(Ղուկ. ԺԹ. 41—44)

Յիսուս գոհ չէր, որ ժողովուրդն իրան հրէական Մհ. սիայի տեղ ընդունելով հրճում է: Անշուշտ կը պահանջէին, որ նա փշը հոռմայեցոց զօրութիւնը: Յիսուս ինչու կը կամենար, որ աղքատ ու խտաւորները կամ հասարակ ժողովուրդը զործիք դառնար վարիսեցոց ու քահանայալետների ձեռին: Յիսուս նայում էր ովսաննա կանչողների վրայ ու սրտի վշտից լաց լինում, որովհետեւ իրա քարոզները զուր էին անցել այդ ժողովրդի համար. այժմ կոյը ասածնորդների շնորհով աւելի սխալ ընթացք էր բանել

Դ. Տաճար մարքըլը.

«Եկան Երուսաղէմ: Յիսուս մտաւ տաճար և սկսեց արտաքսել տաճարի մէջ առուտուր անզներին, հատավաճառների սեղանները դէս դէս ցըիւ տուեց, աղաւնեվաճառների աթոռները կործանեց, թոյլ չէր տալիս, որ ոքմին որևէ անօթ անցկացնի տաճարի միջով: Ուսուցանում էր նրանց և ասում. «միթէ չէ զրուած թէ իմ տունը աղօթքի տուն պիտի կոչուի բոլոր հեթանոս ազգերի համար և դուք այս դարձրիք աւազակների այր»: Երբ գալիրները և քահանաները լսեցին այս, մտածում էին թէ ինչ նընարքով նրան կորցնեն: Բայց վախից սիրտ չէին անում Յիսուսի վրայ ձեռ բարձրացնել, որովհետեւ ժողովուրդը զարմացած էր նրա ուսուցանելու վրայ»:

(Մարկ. ԺԱ. 15—18)

Տաճար կառուցանող չերովդէն առանձին խնամքով պարգարել էր նախագաւիթը, ուր կանգնում էին աղօթելու զանազան աշխարհներից կրօնակը հեթանոսները կամ օրէնքի պահանջած սրբութիւնը չունեցող հրէաները: Տաճարի վիրակացու վևտացիք ուշ չէին դարձնում նախագաւթիք վրայ, անասնավաճառներին լուսայափոխներին թոյլ է-թի վրայ, անասնավաճառներին լուսայափոխներին թոյլ է-թին տալիս այդ տեղը բռնել և տուրք վճարել տաճարի օգին: Լումայափոխները նստած, ժողովրդի տուրքերը վեածում էին երբայական զրամների, մարմարէ սիւների բորբը լի աղաւնիների վանդակներով, ոչխարների, եզների լորբը լի աղաւնիների վանդակներով, ոչխարների, եզների բազմութեամբ: Դրանց ու աղաղակը թոյլ չէին տալիս աղօթսւոր հեթանոսներին տաճարի երգեցողութիւնից որևէ ըան լսելու: Առեւրականների աղմուկն ու անասունների մայներն ամեն ինչ խանգարում էր: Յիսուս այս անկարգութեան վրայի մարգարեի խօսքերը զէնք առած, տաճարի նախագաւիթը մաքրեց անպատշաճ ըազ-մութիւնից: Թահանայապետները գոհ լինելու փոխարէն մասս վիրաւորուեցին թէ ինչու Յիսուս բռնաբարում է ի-լանց իրաւունքները:

Դ. Ովսաննա կանչելը.

«Տաճարի մէջ տղաները աղաղակելով ասում էին. «Ովսաննա Դաւթի որդուն»: Քահանապետները և զըպիլները խիստ բարկացան ու դարձան Յիսուսին հարցպիլները լիստ բարկացան ու դարձան Յիսուսին հարցպիլն. զէսում ես, թէ ինչ են ասում դրանք»: Յիսուս պատասխանեց, «Այո, լսում եմ, միթէ չէր կարդացել այն խօսքը թէ օրէնութիւնը զրուած է տղաների ու ծծկեր մանուկների բերանում»: Յիսուս թողեց իրա հակառակորդներին, զուրս գալով քաղաքից զնաց աշակերտների հետ հեթանիա և այնտեղ հանգստացաւ»:

(Մատթ, ԻԱ. 14—17)

Տօնախմբութեան մասնակցողների մէջ շատ էին տղաներ, դրանք Յիսուսին սիրում էին, նրան տեսնելով ուրա-

խացած Ովստննա էին կանչում: Հակառակորդները տղաների բացականչութիւնն ընդունում էին իրքեւ անարգանք իրանց ակնկալած Մեսիայի հասցէին: Նրանք զայրոյթից կը ակ էին կտրում, երբ նկատում էին, որ նազարէթցի չքաւորութիւնը յանդկնում է ովստննաներ ընդունել—Մեսիայի տեղը բռնել.

Ա. մ փ ո ւ մ. Յիսուս ի՞նչ քափորով ու հանդեսով մտաւ Երուսաղէմ: Ի՞նչ ներգրածուրին կաներ հանդիսաւոր մուտք քաղաքի բնակիցների վրայ: Յիսուս ինչո՞ւ էր լաց լինում Երուսաղէմի վրայ: Ինչի՞ց դրդուած մաքրեց տաճարին նախազաւիրը: Նրա հակառակորդները ինչո՞ւ էին զայրանում տղաների բացականցութեանց վրայ:

Համեմատ, համար կարգալ Մատ. ԻԱ. 1—13 Ղուկաժ. 27—40. 45—48 Յով. ԺԲ. 14.

43. ՅԻՍՈՒՍԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒԹՅԱՆՔԸ ԴԵՊ ԶԼՃԱՑՈՂՆԵՐԸ

Ա. Բողոքաւորներ շնացող կնոջ դէմ.

«Յիսուս միւս առաւօտը դարձեալ եկաւ տաճար, ժողովուրդը խոնուեց նրա շուրջը. Յիսուս սկսեց նըրանց ուսուցանել: Քահանաապետներն ու փարիսեցիք մի կնոջ բռնել էին շնութեան մէջ: Բերին նրա առաջ կանգնեցրին ու ասին. «Այս կինը յայտնի կերպով շնութիւն է անում. Մովսէսի տուած օրէնքների մէջ հրամայուած է այսպիսիներին քարկոծել, այժմ դու ի՞նչ ես ասում դրա մասին»: Այս ասում էին նրան փորձելու մտքով, որ պատճառ ունենան նրան ամբաստանելու»: (Յովի. Ղ. 1—6)

Յիսուսի հայեացքով ամուսնութիւնը միաբանութիւն էր երկու սրտերի, հաւասար իրաւունքներով ու պարտաւորութիւններով: Յոփութիւնը, լինէր մարդու թէ կնոջ կողմից, պղծում էր այդ ուխտը: Հնում այդպիսի ըմբռնում չը

կար, կինը համարւում էր տղամարդի ապրանք, որից նա երբ կամենար կարող էր ձեռ քաշել, Բայց եթէ կինը մարդուն թողնէր, գրանով բռնաբարում էր տղամարդի իրաւունքը, այդ տեսակ կինը իմաստ պատիժ էր կրում: Արդարութիւնը պահանջում էր, որ տղամարդն էլ հաւատարիմ մնար իրակնողը:

Բ. Յիսուսի կտրած վծիող.

«Յիսուս գլուխը կախած մատով գրում էր գետնի վրայ: Երբ նրան ստիպեցին, որ հարցին պատասխանի, Յիսուս վերև նայելով նրանց ասեց. «Ովոր ձեր մէջ անմեղ է, թող առաջին քարը նա վերցնի և խփի նրան»: Գլուխը կրկին խոնարհեցնելով միայն Յիսուս և նրա առաջ կանգնած կինը: Յիսուս հարցրեց նրան. «Այ կին, ուր են քեզ բերողները, միթէ չեղաւ մէկը, որ քեզ դատապարտի»: Կինն ասեց՝ «Ոչ, տէր»: Յիսուս դարձաւ ասեց. «Ես նոյն պէս չեմ դատապարտում քեզ, գնա և այսուհետև մի մեղանչիլ»:

(Յովի. Ղ. 7—11)
Յիսուսին քաջ ծանօթ էր իրա հակառակորդների բարոյական պատկերը, չէր կարող խօսքով նրանց համոզել, որ հրապարակի մէջ յանցանք քրքրելը կնոջն օգուտ տալու փոխարէն նրա բարոյական զգացումը կը թացնէր, Բողոքաւորների հարցերի դէմ լուս մնալով կամենում էր միջոց տալ, որ նրանք իրանց անցեալը վեր յիշեն ու տեսնեն, արդեօք պէս աւանդապահների մէջ կմյ մի հատիկ անմեղ իրանց պէս աւանդապահների մէջ կմյ մի հատիկ անմեղ հոգի: Երևաց որ չըկայ, ուստի ամօթից հեռացան:

Գ. Փարիսեցին եւ մաքսաւորը.

«Այն մարդկանց, որոնք պարծենում էին իրանց մէջ թէ իրանք արդար են և ուրիշները արհամարհելի, Յիսուս ասեց այս առակը. «Երկու մարդ բարձրա-

ցան տաճարն աղօթելու, մէկը փարիսեցի էր, միւսը մաքսաւոր: Փարիսեցին մի կողմ կանգնած, առանձին աղօթում էր այսպէս «Գոհութիւն քեզ, Աստուած, որ ես ուրիշ մարդկանց պէս ոչ յափշտակող եմ, ոչ շնացող եմ և ոչ այս մաքսաւորի պէս եմ: Այլ շաբաթուայ մէշ երկու օր պաս եմ պահում և տասանորդ եմ տալիս իմ բոլոր ստացուածքից»: Մաքսաւորը մի կողմ կանգնած, անգամ չէր կամենում աչքերը երկինք բարձրացնել, այլ կուրծքը ծեծում էր և ասում. «Աստուած, ողորմիր ինձ մեղաւորիս»: Ասում եմ ձեզ, սա գնաց իրա տուն աւելի արդարացած քան թէ նա: Որովհետեւ ամեն մինը, որ իրա անձը կըբարձրացնի, կըխոնարհուի և ով կըխոնարհեցնի իրա անձը, կըբարձրանայ»:

(Ղուկ. Ժ. 9—14)

Այստեղ փարիսեցին ինքնահաւանի կատարեալ տիպ է, հոգու աղքատութեան նշոյլ չըկայ. որովհետեւ նա իրան համեմատում է արատաւոր մարդկանց հետ: Ուստի և գոյն է իրա կացութիւնից: Բայց մաքսաւորը փշրուած սրտով զգում է իրա թերութիւնները և աղերսում է Աստուն ներողամիտ լինել դէպ իրան պէս մեղաւորը: Անկեղծ զղջումի հետ կայ և հոգու աղքատութիւն. համակըելի տիպ է:

Դ. Ճշմարիտ եւ կեղծ հնազանդութիւն:

«Յիսուս տաճարում բարողելիս քահանայապետ ների ու ժողովրդի ծերերի առաջ այս առակն ասեց. «մի մարդ երկու որդի ունէր, առաջնին ասեց. «Որդի, գնա մեր այգում բանիր»: Որդին պատասխանեց, «չեմ կամենում», բայց յետոյ զղջաց ասածի վրայ ու գնաց: Հայրը միւսին ասեց, «Որդի, գնա մեր այգում բան շինիր»: Երկրորդ որդին պատասխանեց, «կըգընամ, հայր», բայց չը գնաց: Հիմի ձեզ եմ հարցնում

«Այս երկուսից ո՞րն իրա հօր կամքը կատարեց»: Ծերեն ու քահանապետներն ասին. «առաջին որդին»: Այն ժամանակ Յիսուս ասեց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ մաքսաւորները ձեզանից առաջ կըմտնեն եր կընըի արքայութիւնը: Որովհետեւ Յովիաննէս եկաւ ձեզ մօտ արդարութեան ճանապարհով, դուք նրան ձեզ մօտ արդարութեան ճանապարհով, դուք տեսնելով զոնէ վերջը չըդդհաւատացիք, բայց մաքսաւորներն ու պոռնիկները հաւատացին, դուք այդ տեսնելով զոնէ վերջը չըդդհաւատացիք, որ հաւատաք նրան»: (Մատթ. ԻԱ, 28—32)

Յիսուսի հայեացըով գործը գերադասելի էր գատարկ խոստումից. սոսկ բառերով արտայայտուած անձնուիրութիւնը քիչ էր, կարեկցութիւնը, ընկերութիւնը պիտի գործով ցոյց տրուէր, որ կատարուէր ճշմարիտ աստուածագործով ցոյց տրուէր, որ կատարուէր ճշմարիտ աստուածագործով ցոյց տրուէր: Յիսուս մարդարէների պէս ողորպաշտութեան պահանջը: Յիսուս մարդարէների պէս ողորպաշտութիւն (սէր) էր փնտրում և ոչ զոհ (ծէս):

Ա. մ փ ս փ ո ւ մ. Հնում կինը տղամարդի ի՞նչն էր համարում: Միքէ արդարութիւն էր, որ անհանատարմութեան համար կինը պատժուէր, իսկ տղամարդն ազատ մնար: Շնացոյ կինոցն ինչն, եթի Յիսուսի առաջ բելել: Ի՞նչ հանգամանցոյ կինոցն ինչն, եթի Յիսուսի առաջ բելել: Ի՞նչ հանգամանցոյ կինոցն ինչն, եթի Յիսուսի առաջ բելել: Ի՞նչ օրինակ ասեց Յիսուս ծլմարիտ եւ կեղծ հնազանդութիւնը ցոյց տալու համար: Ի՞նչու յայտնի մեղասուններն ունենալի շուտ կըմտնէին երկնիք արքայութիւնը, քան թէ փարիտնեցու պէս արդար համարուսողները:

44. ԶԱՐ ՄՇԱԿՆԵՐԸ ԵՒ ԹԱԳԱԼԻՈՒԻ ՀԱՐՍԱՆԻՔԻ ՃԱՇԸ.

Ա. Այգու մշակները:
«Յիսուսը քահանապետներին և ժողովրդի ծերերին այս առակները պատմեց. «մի առանւատէը մարդ

այգի տնկեց, չորս կողմը ցանկապատ արեց, մէջը հնձան փորեց, աշտարակ շինեց և յանձնելով մշակներին ինքը գնաց հեռու աշխարհ։ Երբ պտղի ժամանակը մօտեցաւ, ծառաներ ուղարկեց մշակների մօտ, որ պտուղները բերեն։ Այդու մշակները բռնեցին նրա ծառաներին, որին տանջեցին, որին սպանեցին, որին քարկոծեցին։ Տէրն երկրորդ տնզամ աւելի շատ ծառաներ ուղարկեց, մշակները նրանց հետ էլ նոյնկերպ վարուեցին։ Վերջն իրա որդուն ուղարկեց նրանց մօտ ասելով՝ կարելի է իմ որդուց ամաչեն, բայց մշակները որդուն տեսնելիս իրանց մէջ ասին. «Սա է միակ ժառանգը, եկէք սրան սպանենք և նրա ժառանգութեան տէր դառնանք»։ Բռնեցին նրան, այդուց դուրս տարան և սպանեցին։ (Մատթ. իԱ. 33—39)

Ամովս մարգարէն իրա ազատաշունչ քարոզների համար իսրայէլի թագաւորութիսնից հեռացուեց. Եսային իրա համարձակ քարոզութեան համար սղոցւելով սպանուեց, իսկ երեսեան անսասելի տանջանքներ կրց իրա մարգարէութիւնների պատճառով։ Հերթը Յիսուսին էր եկել, որ անխընայ հարուածում էր քահանայապեաններին, որովհետև սըրանք իրանց արբանեակներով նոյն մոլորուածներն էին, ինչ որ մարգարէններին հալածողները իրեւ տուճարի ազգեցիկ պաշտօնեաներ կամենում էին Աստծու որդու հետ այնպէս վարուել, ինչպէս այգու մշակները ժառանգի հետ։

Բ. Դատաստան կտրելը։

«Յիսուս շարունակեց խօսքը. «Այժմ ձեզ եմ հարցնում, երբ այն այգու տէրը գայ, ի՞նչ կանի մշակներին։ Ծերերն ու քահանապետներն ասին. «Ճարագործներին խիստ կը պատուհասի, իսկ այգին կըտայ ուրիշ մշակների, որ պտուղները ժամանակին տիրոջը տան»։

(Մատթ. իԱ. 40—41)

Քահանայապետներն այստեղ ձեռով իրանց դատաստանը կտրեցին, իրեն այգու (Հրէաստանի) մշակներ սպանում էին ծառաներին (մարգարէններին), պտուղներ (հոգեոր) չէին կամենում տալ այգու տիրոջը, այգու տէրն (հայր Աստուած) էլ կրգար, կըպատժէր չաք մշակներին (տաճարի պաշտօնեաններին) ու այգին կըտար ուրիշ ժքաջան մշակների (լուսամիտ անձերի), որոնք այգին կըմշակէին ոչ լոկ մարմնաւոր վայելքներ քաշելու, այլ և հոգեոր կեանք զարգացնելու, որով կատարած կըլինէին չօր կամքը։

Գ. Ապերախտ հրաւիրեալները եւ նրանց պատիժը։

«Յիսուս դարձեալ մի առակ ասեց ծերերին ու քահանայապետներին. «Երկնքի արքայութիւնը նման է մի թագաւորի, որ իրա տղի հարսանիքն էր անում։ Իրա ծառաներին ուղարկեց, որ հարսանիքի հրաւիրեալներին կանչեն։ Նրանք չուզեցին գալ։ Երկրուդ անդամ ուղարկեց ծառաներ և ասեց. «Ասացէք իմ հրաւիրեալներին, որ իմ ճաշն արդէն պատրաստ է, արջառները, մսացուները մորթուած են, եկէք հարսանիք»։ Հրաւէրը բանի տեղ չըդնելով հրաւիրեալներից մէկը գնաց իրա արտը, միւսն իրա առեւտրին։ Միւսները բըռնեցին ծառաներին, ծաղը ու ծանակ անելով սպանեցին։ Թագաւորն այդ լսելով բարկացաւ, զօրք ուղարկեց, ոչնչացրեց սպանողներին և քաղաքը կրակի բերան տուեց։ Նրանից ետ իրա ծառաներին ասեց. «Հարսանիքը պատրաստ է, բայց հրաւիրեալներն արժանի չէին, այժմ գնացէք գէպի ճանապարհների բերանները, ում որ պատահէք, կանչեցէք հարսանիք»։ Ծառաները դուրս գնացին ճանապարհները և ժողովեցին ում որ հանդիպեցին, լաւ թէ վատ և հարսնքատունը լցրին բազմականներով։

(Մատթ. իԲ. 1—10)

Այս առակով Յիսուս անարգում է անարժան հրէաներին, որոնք համոզուած էին թէ միայն իրանք են Եհովայի ընտրեալ ժողովուրդը, սակայն պատմութիւնից յայտնի է, որ Նրանք շատ անգամ ապերախա գտնուեցին դէպի Տէրը, չըկատարելով նրա պատուիրանները։ Այժմ Յիսուս բացարձակ յայտնում էր, որ երկնքի արջայութիւն մտնելու պիտի հրաւիրուեն մաքսաւորները, մեղաւորները, հեթանօսները։ որովհետեւ ընտրեալ ժողովրդի անդամները անարժան են։

Դ. Առանց հարսանեկան հագուստի հիւրը։

Երբ թագաւորը մտաւ հարսանիք բազմական-ներին նայելու, տեսաւ մի մարդ առանց հարսանե-կան հանդերձից Նրան ասեց. «Ընկեր, ինչի՞ ես մտել այստեղ, երբ հարսանիքի հագուստ չունես»։ Մարդը լոեց. Այն ժամանակ թագաւորն ասեց ծառաներին. «Դրա ոտներն ու ձեռները կապեցէք ու տարէք դրսի խաւարը գցեցէք, այնտեղ լաց կը լինի և ատամները կը կը ճատեցնի։ Որովհետեւ շատերն են կանչուած, բոյց քչերն են ընտրուած»։

(Մատթ. ԽԲ. 11—14)

Արևելքում ընդունուած սովորութեան համեմատ թա-գաւորը ձաշում էր առանձին, հրաւիրեալներն առանձին։ Մեծ հանդէսների ժամանակ հրաւիրեալներին բաշխուում էր տօնական ճերմակ հանդերձ, որ հագնում էին սովորական շորի վրայ։ Երբ հիւրերից մէկն այդ հանդերձը չունէր, նշան է թէ վատնել էր, թագաւորն իրան անարգուած համարելով արտաքսում էր այդպիսուն իրա տնից։

Ամփոփում. Յիսուս այզու առակով ինչ էր ուզում հաս-կացնել հակառակորդներին. Անպարտամանաջ նրէաներին ինչ առակով կամեցաւ սրափեցնել. Ի՞նչ էր նշանակում տօնական հանդերձ ունենայ։

Համեմատ, համար կարեալ Մարկ. ԺԲ. 1—11, ԺԴ. 16—24 Ղուկ. Ի. 9—18.

45. ՄԵՍԻԱՆ ԵՒ ՀՌՈՄԱՅԵՑՈՅ ԻՇԽԱ-ՆՈՒԹԻՒՆԸ

Ա. Հարկադրամ։

«Փարիսեցիք մի կողմ քաշուած խորհուրդ էին անում թէ ի՞նչ միջոց գտնեն, որ Յիսուսին իրա խօսքերի հիման վրայ որոգայթի մէջ զցեն։ Միքանիսը նրանցից հերովդէսի մարդկանց հետ զնացին նրա մօտ և ասին. «Վարդապետ, գիտենք, որ դու ճշմարիտ ես քո խօսքերի մէջ և Աստծու ճանապարհը ճշմար-տութեամբ ես ուսուցանում, առանց ոչ ոքից քաշուե-լու, որովհետեւ մարդկանց արտաքինը քեզ համար նշանակութիւն չունի։ Այժմ ասա մեզ քո կարծիքը, արդեօք մենք պարտաւոր ենք կայսրին հարկ տալ թէ ոչ։ Յիսուսը գուշակեց նրանց խորամանկութիւ-նը և ասեց. «Ինչու համար էք ինձ փորձում, կեղծա-ւորներ։ Յոյց տուէք հարկ վճարելու դրամը։ Նրան-ցոյց տուին մի դրամ։ Յիսուս ասեց. «Ո՞ւմն է այս պատկերը կամ դիրը։ Նրանք ասին. «Կայսրինն է»։ Այն ժամանակ Յիսուս պատասխանեց. «Գնացէք դուք էլ, ինչ որ կայսրինն է, կայսրին տուէք, ինչ որ Աստ-ծուն է, Աստծուն։ Երբ այս խօսքերը լսեցին, դար-մացան ու թողնելով նրան հեռացան։

(Մարկ. ԺԲ. 13—19)

Յիսուսի օրով երկրի մէջ պատրող դրամները կը ում էին չոռմի կայսրների պատկերները, այնինչ Մովսէսի պա-տուէրով հրէաներն իրաւունք չունէին պատկեր գործե-լու։ Այդ վերաբերում էր դրամին ևս. դրա համար տաճա-րի տուրքը վճարում էին երբայական դրամով, որի վրայ գլխանկար չըկար։ Հրէաներն իրեն Աստծու ժողովուրդ չէ-

ին յօժարում կայսրին հարկ տալ, հոռմայեցիք բռնի ուժ գործ դնելով, սպանելով ու խաչելով ճնշեցին ապստամբութիւնը: Եթէ Յիսուս հրէաներին ասէր՝ պիտի հոռմայեցոց հարկ տալ, իրա վարկը կըկորցնէր ժողովրդի աչքում, եթէ ասէր՝ չըպիտի տալ, այն ժամանակ կերևար իրբեւ հակապետական մարդ և իրա թշնամիներին առիթ կըտար իրա դէմ կուսակալին բողոքելու: Յիսուսի հայեցքով՝ հոռմայեցոց դրամ բանեցնողը, նրանից օդուուզը պիտի խոստովանէր կայսրի իշխանութիւնը, իսկ ինըը ոչ մի դինար չունէր գրպանում, ինչպէս հարկ վճարէր: Մնում էր ծառայել Աստծուն:

Ամփոփում. Մեսիան ի՞նչ զօրութեամբ պիտի երեւան գար եւ հոռմայեցոց ի՞նչ պիտի աներ: Յիսուսի հակառակորդների հարցը ի՞նչ նպատակ ուներ: Յիսուս ի՞նչպէս լընեցրեց Երանց, Հրեան իբրեւ նպատակ քա՞նի տեսակ պարտականութիւն ուներ:

46. ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԿԵԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ա. Սաղուկեցոց հարցմունքը.

«Սադուկեցիք, որ պնդում էին թէ յարութիւն չրկայ, եկան Յիսուսի մօտ և հարցըին. և վարդապետ, Մովսէսը մեզ համար գրել է, եթէ մէկի եղբայրը մեռնի, կին թողնի, բայց զաւակ չըթողնի, նրա եղբայրն առնելու է նրա կնոջը, որ նրա համար ժառանգ յարուցանի: Մեզ մօտ եօթ եղբայրներ կային, առաջինը կին առաւ, առանց զաւակ թողնելու մեռաւ, երկրորդն առաւ նրա կնոջը, մեռաւ ու նա էլ զաւակ չըթողեց: Նոյն կերպ եղաւ երրորդի հետ եօթն եղբայրներն էլ նրան կին առան ու անզաւակ մեռան, ամենից վերջը մեռաւ կինը: Այժմ ասա, յարութեան ժամին երբ ամենըը վերկացած կըլինեն,

արին կըլինի այն կինը, որովհետեւ եօթն էլ նրան կին ընդունեցին»: Յիսուս պատասխանեց և ասեց. «Ճեր ասածն ապացուցանում է, որ դուք մոլորուած էք, որովհետեւ ոչ գիրն էք հասկանում և ոչ Աստծու զօրութիւնը: Մեռելներից յարութիւն առած միջոցին ոչ կին կառնեն և ոչ մարդու կըգնան, այլ կըլինեն հըկին կառնեն և ոչ մարդու կըգնան, այլ կըլինեն հըկեցտակների պէս երկնքում: Սակայն մեռելներու յարութիւն առնելու մասին միթէ չէք կարգացել Մովսէսի գրքում, որ մորենու մօտ ասեց նրան. «Ես եմ Աբրահամի, իսահակի և Յակոբի Աստուածը: Նա Աստուած էք ոչ թէ մեռելների, այլ կենդանիների: Դրա համար շատ մոլորուած էք»:

(Մարկ. ԺԲ. 18—27)

Յիսուս փարիսեցոց չարամտութիւնը փշրելուց հետ սկըսեց պայքարել միւս կուսակցութեան հետ, որ հոգու անմասութեան չէր հաւատում: Սադուկեցիք իրանց տուած հարցով ուղում էին ցոյց տալ իրանց լուսամտութիւնը և կոտցով հեղինակութիւնը ժողովրդի աչքում: Յիսուս քեւ Յիսուսի հեղինակութիւնը ժողովրդի աչքում: Յիսուս իրա պատասխանով հասկացրեց սադուկեցոց, թէ ո՞քան իրա պատասխանով հասկացրեց սադուկեցոց, թէ ո՞քան իրա պատասխանով հասկացրեց սադուկեցոց, այսինքն նրա հայեցքերի ըմբռնում ունեն անժահութեան մասին. նրա հայեցքը ըով՝ անմահութեան չըհաւատալ, կընշանակէ կասկածել Աստծու զօրութեան ու բարութեան վրայ:

Ամփոփում. Ի՞նչ դիբք ունեին սադուկեցիք նրեւաների մեջ: Մովսէսի ի՞նչ կարգադրութիւն էր արել անզաւակ մեռաջինը: Սագուկեցիք ի՞նչ նպատակով հարց տուին: Յիսուսուի հայեցքով յարութիւն առածներն ի՞նչպէս են լինում: Այժմ արդեօք կասկած չի՞ ծագում յարութեան մասին:

Համեմատ. համար կարգալ Մատթ, ԻԲ. 23—33, Ղուկ. Ժ. 27—39

47. ԱՄԵՆԾԳԼԻԱՍԻՈՐ ՊԱՏՈՒՔՐԸ

Ա. Դպրի տուած հարցը.

«Փարիսեցիք ականջ էին դնում թէ Յիսուս ինչպէս պապանձեցրեց սաղուկեցոց։ Այդ վիճաբանութիւնից ետ մի դպիր դիմեց Յիսուսին այսպիսի հարցով։ «ասա, վարդապետ, ո՞րն է առաջին պատուիրանը։ Յիսուս պատասխանեց. «ամենազլխաւորնայս է՝ լսիր, Խրայէլ, Տէրը՝ քո Աստուածը մի հատէ, սիրիր քո Տէր Աստծուն քո բոլոր սրտով, քո բոլոր մտքով և քո բոլոր զօրութիւնով, սա առաջին պատուիրանն է։ Երկրորդը սրա նման՝ սիրիր քո ընկերին ինչպէս քո անձը, սրանցից մեծ պատուիրանայլս չըկայ։» (Մարկ. ԺԲ. 28—31)

Յայտնի է, որ դպիրների գասակարգը հրէաների մէջ մեծ հեղինակութիւն էր վայելում իրրե հին զրուածները մեկնող։ Այդ ժամանակի ռաբբիների մէջ յաճախ յարուցւում էր այն վէճը թէ՝ ո՞րն է Մովսէսի պատուիրանների մեծը և ո՞րն է փոքրը։ Մի դպիր բարձր կարծիք ունենալով Յիսուսի հոգու վեհութեան վրայ, եկաւ նրա հետ այդ ինդրի մասին խօսելու և բան ուսանելու և ոչ թէ ուրիշների պէտ Յիսուսին փորձելու և որոգայթի մէջ գցելու։

Բ. Դպիրը Երկնքի արքայութեան մօտեցած.

«Դպիրն ասեց նրան. «զու ճիշտ պատասխանեցիր, վարդապետ, ճշմարիտ ասիր, թէ մի հատ է Աստուած, նրանցից զատ ուրիշը չըկայ։ Բոլոր սըրտով, բոլոր մտքով ու զօրութիւնով նրան սիրելը և ընկերին էլ մեր անձի չափ սիրելը աւելի բարձր է, քան թէ ողջակէզներ ու զոհեր անելու սովորութիւնը։ Յիսուս տեսնելով թէ ինչ իմաստութիւնով

է խօսում, ասեց նրան. «զու հեռու չես Աստծու արքայութիւնից, այդպէս վարուիր և դու յաւիտենական կեանք կունենաս։» (Մարկ. ԺԲ. 32—34)

Յիսուս նկատեց, որ դպիրը կարդացել է մարգարէները և լաւ ըմբռնել աստուածսիրութեան, ընկերսիրութեան արժէքը, ուստի զգում է, որ ծիսական օրէնքը միայն երկրորդական արժէք ունի, Յիսուսի հայեցքով դպիրը հեռու չէր Աստծու արքայութիւնից. նրան միայն պակաս էր անձնուրաց գործունէութիւն, ինչպէս մեծատուն պատանուն Մի բանի հաւատալը բաւական չէ, պիտի նոյնը գործ դարձնել։

Ամփոփում. Դպիրների պաշտօնն ի՞նչ էր. Փարիսեցոց կարծիքով աստուածպաշտութեան մէջ զլխաւոր բանն ի՞նչ էր. Յիսուսի կարծիքով ամենազլխաւոր պատուիրանն որն էր. Դպիրն ինչն էր այդ նարցը տալիս, Յիսուս ինչից նկատեց, որ դպիրը մօտեցել էր Աստծու արքայութեան. Դըպիրն ի՞նչ էր պակասում երկնքի արքայութեան քաղաքացի դառնալու համար։

Համեմատ. համար կարդալ Մատթ. ԻԲ. 34—40, Ղուկ. Ժ. 25—28 :

48. ՈՂՈՐՄԱԾ ՍԱՄՄՐԱՅԻ

Ա. Դպրի միւս հարցը.

«Յիսուս ուսուցանում էր ժողովրդին, որ բոլոր մարդիկ մի հօր որդիք են և զբա համար Աստծու ամբողջ օրէնքը աստուածսիրութեան և ընկերսիրութեան մէջ է։ Դպիրը իբրև օրէնքների մեկնաբանող կամենում էր Յիսուսին ցոյց տալ, որ բոլոր մարդիկ միատեսակ չեն և զանազան ազգերի անհատներ չեն կարող համահաւասար որդիք համարուել Աստծու մօտ, ուստի հարցըց։ «վարդապետ, դու քարոզում ես, որ

ալիտի ընկերին սիրել, բայց ո՞վ է իմ ընկերը, ասա,
որ սիրեմ»: Յէսուս նրա հարցման պատասխանեց հե-
տեւալ առակով»: (Ղուկ. Փ. 29—30)

Ամենազլիսաւոր պատուիրանի իմաստը պարզ չէր գըպ-
րի համար, ուստի ուզեց իմանալ թէ ով է լինելու իրա ըն-
կերը: Հրէաները միայն իրանց ցեղակիցներին էին ընկեր
համարում և օգնում, դրա համեմատ էլ փոքր ու թեթև էր
երեսում նրանց մեծ պատուիրանի զրած պարտաւորութիւ-
նը: Այժմ ցանկանում էր ճիշտ որոշել ընկերսիրութեան
շրջանակը, քանի որ Յիսուս ընկեր խօսքը այլապէս էր ըմ-
բռնում:

Բ. Տաճարի պաշտօնեաները.

«Մի հարուստ հրէայ Երուսաղէմից գնում էր Ե-
րիքով, պատահեց այնպէս, որ ճանապարհին ընկաւ
աւաղակների ձեռը. Նրան մերկացրին, վիրաւորեցին
շատ տեղից, կիսամահ վիճակում թողին և հեռացանք:
Այդ ճանապարհով անցնում էր մի քահանայ, տեսաւ
վիրաւորին, բայց առանց ուշ դարձնելու անցաւ,
գնաց: Յետոյ այդ տեղով եկաւ մի զետացի, նա էլ
տեսաւ վիրաւորին ու զանց անելով հեռացաւ»:

(Ղուկ. Փ. 30—32)

Յիսուս այս առակով կամեցաւ ցոյց տալ թէ ի՞նչպէս
մէկը միշտ կարող է լինել տաճարում—Աստծու տանը, իր-
ու պաշտօնեայ կարգալ ու լսել մարգարէի գրուածները ու
անկարեկից լինել դէպի իրա նմանը և միայն իրա կաշուի
վրայ մտածել:

Դ. Ողորմած այլազգին.

«Մի սամարացի ճանապարհորդելիս եկաւ, այդ-
տեղով անցկացաւ, վիրաւորին տեսաւ թէ չէ, գու-
թը շարժուեց: Մօտեցաւ վէրքերը փաթաթեց վրան
ածելով ձէթ ու զինի, յետոյ դրեց գրաստի վրայ,

հասցրեց մի պանդոկ ու ինչպէս հարկն է խնամեց-
չետեսալ օրը երբ հեռանում էր, զրպանից երկու
դահեկան հանեց, պանդոկապետին տուեց և ասեց.
«Հոգ տար սրա վրայ, միամիտ կաց, ինչ որ ծախ-
սած կըլինես, միւս անդամ վերադառնալիս կընատու-
ցանեմ քեզ»: Յիսուս դարձաւ օրինականին հարցրեց.
«Ի՞նչ ես կարծում, այն երեք մարդկանցից ով ընկեր
կամ մերձաւոր դարձաւ աւազակի ձեռ ընկած մար-
դուն»:—«Ի հարկէ նա, ով որ սէր ցոյց տուեց և ո-
ղորմաց նրան, պատասխանեց օրինականը: Այն ժա-
մանակ Յիսուս ասեց. «բարի, ուրեմն գնա, դու էլ
այնպէս վարուիր»:

(Ղուկ. Փ. 33—37)

Այստեղ Յիսուս անկարեկից հրէաների հանդէպ գուրս
է բերում կարեկից սամարացուն, որի ցեղակիցներին իս-
է բերում կարեկից սամարացուն, որովհետև Աստծու գոյու-
թիւնը ամեն տեղ էին դաւանում և ոչ թէ միայն Երուսա-
թիւնը տաճարում: Սամարացու կեանքը կարող էր վտանգի
դէմի տաճարում: Սամարացու կեանքը կարող էր վտանգի
ենթարկուել բայց նա չըփախաւ քահանայի ու զետացու
միանալու աղամորդուն նեղ վիճակում՝ ինքն ի-
պէս, այլ տեսնելով աղամորդուն նեղ վիճակում՝ ինքն ի-
պէս, ասեց. «Եյս վիրաւորը քեղանից զատ ուրիշ օգնական
չունի, հետևապէս դու ես սրա ամենամօտ ընկերը, օգնիր»:
Անձնազոն սէրը միայն ընդունակ էր այլպէս մտածելու:

Ամփոփում. Հրէաների ո՞ւմ իին ընկեր համարում
եւ օգնում: Յիսուս իրա ըմբռնած ընկերսիրութեան շրջանակն
ի՞նչ առակով բացատրեց: Ո՞վիեր անկարեկից զտնուեցին դէ-
պի մերձիման վիրաւորը: Սամարացին ինչ մտածելով այդ-
պէս վարուեց: Յիսուսի պահանջած աստուածպաշտութիւնն
ի՞նչ առաւելութիւն ուներ:

49. ԳԱԼԻԼԻԱՑՈՅ ՍՊԱՆՈՒԵԼԸ ԵՒ
ԱՆՊՏՈՒԴ ԹՁԵՆԻ

Ա. Յիսուսի կարծիքը կեանքի մասին.

«Յիսուս լսեց թէ ինչպէս պատմում էին, որ Պի-ղատոսը սպանել է գալիլիացոց և նրանց արիւնը խառնել գոների արիւնի հետ և պատմում էին, որ Սելովամի աշտարակը փլուել է 18 հոգի տակովը ա-րել։ Յիսուս այդ առիթով ասեց ժողովրդին. «Ի՞նչ էք կարծում, միթէ այդ գալիլիացիք, որ այդքան տան-ջանք կրեցին, աւելի մեղաւոր էին, քան թէ միւս-ները։ Կամ աշտարակի տակ ճմլուող 18 հոգին աւե-լի մեղաւոր էին, քան թէ երուսալէմում բնակուող մարդիկ։ Ոչ, ասում եմ ձեզ, ամենս էլ զիտենք, որ այդ մարդիկ ոչնչով մեզնից պակաս չէին։ Ինչ որ նրանց, պատահել է, կարող է ամեն վայրկեան մեզ էլ պատահել։ Եթէ չէք կամենում կորչել, պիտի ա-պաշխարէք, խիղճներդ մաքրէք։» (Ղուկ. ԺԳ. 1—5)

Նախապաշտամունք կար հրէաների մէջ. շատերը կար-ծում էին թէ դժբաղութիւն ուղարկողը Աստուած է և ով փորձանքի է հանդիպում, գործած մեզը փոխարէնն է։ Բա-րեկեցիկ վիճակ ուսնեցողն իրան համարում էր արդար, Աստծու սիրելի, դրանով ընդվզած՝ կարիք չէր զգում կա-տարելագործուելու հոգեպէս։ Յիսուս դէմ լինելով այդ նա-խապաշտամունքին, աշխատում էր ապահով անձանց նոյնպէս սպաշխարութեան կոչել, խիղճը մաքրել, կամենալով հաս-կացնել, որ Աստծոց շնորհուած կեանքը մի ժամանակամի-ջոց է կատարելագործութեան համար։

Բ. Անպտուղ թզենին.

«Յիսուս այս առակն էլ ասեց. «Մի մարդ այգու

մէջ մի թզենի էր տնկել. ժամանակ անցնելուց ետ եկաւ նրա վրայ պտուղ որոնելու, չըկար. այգեպա-պանին ասեց. «ահա երեք տարի է, գալիս եմ այս թզենու վրայ պտուղ որոնելու, չեմ գտնում. կտըիր նրան դէն զցիր, ինչու գետնի վրայ զուր տեղ բըռ-նի»։ Այգեպանն ասեց. «տէր, այս տարի էլ թաղ մը-նայ, զրա չորս կողմը փորեմ, աղբ ածեմ, շատ կա-րելի է պտուղ բռնի։ Եթէ չի բռնիլ, եկող տարի կտըիր, դէն զցիր»։ (Ղուկ. ԺԳ. 6—9)

Հայր Աստուած չի կամենում մեղաւորի մահը, այլ նը-րա դարձը վատ ճանապարհից։ Յիսուս նոյնպէս այս առա-կով հասկացնում էր, որ հրէայ ժողովուրդը ժամանակամի-ջոց ունի. Եթէ այդ միջոցով չըկատարելագործուի, արժա-նի գործ ու պտուղ ցոյց չըտայ, անպատճառ պիտի կտըուի ու դէն զցուի։

Ամփոփում. Պիդատոսն ի՞նչպէս եր վարուել գալիլիացոց նետ։ Վտանգից ազատ մնացածներն ի՞նչպէս եին զատում սպանուածների վրալ. ի՞նչ նախապաշտմունք կար հրեանե-րի մէջ։ Յիսուսի հայեցրով կեանքը մս բդուն ինչի՞ նամար եր տուած։ Ո՞ւմ զգուշացնելու համար ասեց Յիսուս անպը տուղ բգենու առակը։ Միքէ ընտրեալ ժողովրդի անդամները կատարելագործութեան կարիք չունեին։

50. ՅԻՍՈՒԻՍԻ ԿՇՏԱՄԲԱՆՔԸ ՓԱՄԻ-
ՍԵՑԻՆԵՐԻՆ

Ա. Փարիսեցիք ամբարտաւան եւ մեծամիտ.

«Յիսուս խօսքն ուղղեց բազմաթիւ ժողովրդին, աշխապատճերին ու ասեց. «Մովսէսի աթոռին նստել են գալիրներն ու փարիսեցիք։ Ամեն բան, որ նրանք ձեզ ասում են, ընդունեցէք ու կատարեցէք, բայց նրանց գործքերին մի հետեւէք, որովհետև իրանց ա-

սածն իրանք չեն կատարում, Ռանը և դժուարատար բեռներ են կապում և դնում մարդկանց ուսերին, բայց իրանք մատով չեն կամենում շարժել: Ինչ որ ասում են, մարդկանց առաջ պարծենալու համար է, լայնացնում են իրանց գրապանակները և երկարացընում իրանց հանդերձների քղանցները: Սիրում են ընթրիքների վրայ առաջին տեղն ունենալ, ժողովարանների մէջ առաջին կարգում նստել, հրապարակներում ողջոյններ ընդունել և մարդկանցից կոչուել ուարի, ուարի: Բայց դուք ոչ ոքի վարդապետ մի կանչէք, որովհետև ձեր ուսուցիչը մէկն է և ամենդէլ եղբայրներ էք: Երկրի վրայ ոչ ոքի հայր մի կանչէք, որովհետև ձեր հայրը մէկն է, որ երկնքում է: Այս ու այն անձին ուսուցիչ մի անուանէք, որովհետև ձեր ուսուցիչը Քրիստոն է: Զեր միջի մեծը թնդի ձեր սպասաւորը: Ով որ բարձրացնի իրանձը, կընուաստանայ և ով նուաստացնի իրան, կը բարձրանայ:

(Մատթ. իգ. 1—12)

Փարիսեցիք ժողովրդի հոգեոր առաջնորդներն էին. իրարև ջերմեռանդ աւանդապահներ՝ զործ էին ածում գրապանակաղօթատուփ, որի մէջ դրած էր մագաղաթի փաթեթ, վրան զրած զանազան տներ Ս. Գրքից. այդ գրապանակը կաշուէ քուղով ամրացրած էր ձախ թէկի վրայ, Դրա նման ուրիշ տուփ ամրացնում էին ճակատի վրայ մաղերին կպած: Բարեպաշտ հրէան հանդերձի չորս քղանցներին պիտի ունենար հիւսէններ—քինջեր: Այդպիսի մոլեւանդները բնական է, որ դէմ լինէին կրօնական որևէ բարեփոխութեան: Յիսուս եկել էր Երուսաղէմ պայքար մղելու այդպիսիների դէմ, որոնք կեղծ ու պատիր ընթացքով, խորհուրդներով երկնքի զոները փակում էին ժողովրդի առաջ:

Բ. Փարիսեցիք կեղծաւորներ:

«Յիսուս շարունակեց խօսքը. «Վայ ձեզ դպիր-

ներիդ և կեղծաւոր փարիսեցիներիդ, որովհետև երկնքի արքայութիւնը փակում էք մարդկանց առաջդուք չէք մտնում և մտնողներին էլ խանգարում էք: Վայ ձեզ դպիրներիդ և կեղծաւոր փարիսեցիներիդ, որովհետև կլանում էք այրիների տները, սիրում էք կեղծաւորաբար աղօթքը երկարացնել. Վրա համար մեծ պատասխանատութեան կենթարկուէք: «Վայ ձեզ դպիրներիդ և կեղծաւոր փարիսեցիներիդ, վճարում էք անանուխի, սամիթի, չամանի անուշաղիը, անուշաղիը թողնելով օրէնքի ամենակարեոր կէտերը՝ դատաստանը, ողորմութիւնը, հաւատութը. նախ և առաջ այս ծանրակշիռ բաները պիտի լատը. նախ և առաջ միւս անկարևորները: Դուք կոյր կատարէք, յետոյ միւս անկարևորները: Դուք կոյր առաջնորդներ, որ մժղուկները քամում էք և ուղտերը ողջ ողջ կլանում:

«Վայ ձեզ դպիրներիդ և կեղծաւոր փարիսեցիներիդ, որովհետև մաքրում էք բաժակի և սկաւառաներիդ, միայն զրսի կողմը և ներսկինը թողում լի յակի միայն զրսի կողմը ու կեղտովք: Կոյր փարիսեցի, նախ փշտակութիւնով ու կեղտովք: Կոյր փարիսեցի, նախ սրբիր բաժակի ու սկաւառակի ներսը, որ նրանց գուրսն էլ մաքուը լինի:

«Վայ ձեզ դպիրներիդ ու կեղծաւոր փարիսեցիներիդ, որովհետև նման էք սուաղած դամբարանների. նրանք զրսից գեղեցիկ են երեւմ, բայց ներսից լի են մեռեների ոսկորներով և ամեն տեսակ պըղդութիւնով: Դուք նոյնպէս զրսից մարդկանց երեւմ էք արդար, բայց ներսից լի էք կեղծաւորութիւնով և անօրէնութիւնով»:

(Մատթ. իգ. 13—14, 23—28)

Փարիսեցոց ու դպիրներին վայ տալով անարգում էր

Գ. Փարիսեցիքը մարգարէսպանների իսկական
գաւազներ։

«Վայ ձեզ դպիրներիդ և կեղծաւոր փարիսեցիներիդ, որովհետև շինում էք մարգարէների շիրիմները և զարդարում արդարների գերեզմանները, յետոյ ասում էք՝ եթէ մեր նախնիների օրով լինէինք, մարգարէների արիւն թափելուն չէինք մասնակցիլ։ Դրա նով ուրեմն վկայում էք ձեր անձերի մասին, որ մարգարէներին կոտորողների որդիքն էք։ Երբ այդպէս է, ուրեմն լրացրէք ձեր նախնիների չափո»։

(Ушаков. №. 29—32)

Հին հրէաները մարգարէներին հալածում, սպանում էին, թէ ինչու նրանք Աստծու օրէնքների դէմ անպատկառ լեզու են բանեցնում. յետազայ սերունդները մարգարէների քարողածներն ընդունեցին իբրև աստուածային յալտառ-թիւններ, բայց նրանց գրուածներին հետեւում էին միայն արտաքրուստ: Յիսուս այժմ մարգարէների պէս անխնայ մտրակում էր ժամանակակից կեղծաւորներին, որոնք նրա վեհ հողին ըմբռնելու ընդունակ չէին, ուստի կատաղում էին ու մտածում իրանց հանգիստը վրդուփոյին սպանելու:

Դ. Ի՞նչ դատաստան կտրեց նրանց վրայ:

«Օձեր, իմի ծնունդներ, ինչպէս պիտի փախ-
չէք գեհենի դատաստանից։ Դրա համար ձեզ մօտ ու-
ղարկում եմ մարդարէներ, իմաստուններ, գայիրներ։

Նրանցից շատերին կըսպանէք, խաչ կընանէք, շատեռին կըտանջէք ձեր ժողովարանների մէջ և կընալածէք քաղաքից քաղաք, որպէս զի ձեր գլխին ընկնի երկրի վրայ թափուած բոլոր անմեղ արիւնը, արդար Աբէլի արիւնից սկսած մինչև Բարուքի որդի Զաքարիայի արիւնը, որին սպանեցիք տաճարի և սեղանի մէջ տեղը: Ճշմարիտ եմ ասում ձեզ, այն ամենը կընկնի սերկայ սերնդի վրայ: (Մատթ. իգ. 34—36)

Փարիսեցիք յարգող էին ձևանում այն մարդարէներին,
որոնց ուղղութեան դէմ այժմ պալքար էին մղում։ Այդ
պատճառով Յիսուս նրանց անուանեց մարդարէսպանների
գաւակներ։

Ե. Երուսաղէմի ճակատագիրը:

«Երուսաղէմ, Երուսաղէմ, գուռորում էլլը
մարդարէներին և քարկոծ անում քեզ մօտ ուղար-
կուածներին, քանի քանի անգամ կամեցայ քո մա-
նուկներին ժողովել ինչպէս հաւն իրա թերի տակ է
ժողովում ձագերին, բայց դու չըկամեցար։ Մօտե-
նում է ժամանակը, երբ ձեր տունը կըլինի ձեր գըլ-
խին աւերակ, բայց հաստատ եմ ասում, ինձ այլևս
չէք տեսնիլ մինչև այն օրը, երբ կասէք՝ օրհնեալ լի-
նի նա, որ եկել էր Տիրոջ անունով։»

Յիսուս գիտէր, որ Երուսաղէմն է Նզել մարգարէների-
Աստծու ծառաների սպանողների որջը, չընայած որ իրա կա-
տաղի հակառակորդներն էլ այդտեղ էին բնակուած, բայց և
այնպէս զայրանալու փոխարէն կարեկցում էր քաղաքին, որ
ամբարտաւանօրէն յետ է մղում գէպի ինքը պարզած ազա-
տարար բազուկը:

Ամփոփում: Յիսոսս ի՞նչ քերպարիսենք բառաց գուշը դիսէցոց երեսին, ի՞նչու կը նրանց մէծամիտ, ամբարտաւան

անուանում։ Ինչի՞ մեջն էր կայանում փարիսէցոց ու դպիրների ընթացքի անբարոյական կողմը։ Ինչո՞ւ էր Յիսուս նրան մարգարեսպիններ անուանում։ Երուսալեմի վրայ նայելիս ինչո՞ւ զայրանալու փոխարեն կարեկցում էր։

Համեմատ։ համար կարդալ Մարկ. Ժ. 38—40, Ղուկ. Ի. 45—47

51. ԱՅՐՈՒ ԼՈՒՄԱՆԵՐԸ

Ա. Մեծատան եւ այրու տուրքերը։

«Յիսուս տաճարում կանգնած գանձանակի հանդէպ, դիտում էր թէ ժողովուրդն ինչպէս էր գանձանակի մէջ պղինձ զրամներ զցում։ Շատ մեծատուններ մօտեցան, մեծաքանակ գումարներ զցեցին, եկաւ մի այրի և գանձանակ զցեց երկու լումայ, որ հաւասար է մի նաքարակիտին (կոպէկ)։ Յիսուս աշակերտներին կանչեց իրա մօտ և ասեց. «Ճշմարիտն եմ ասում ձեզ, այն տառապեալ այրին աւելի շատ զցեց գանձանակի մէջ քան թէ միւսները, որովհետեւ հարուստներն իրանց աւելորդ ունեցածից տուին, իսկ նա իրա չքաւորութիւնով ապրուստի համար տնտեսածը զցեց գանձանակի մէջ»։ (Մարկ. Ժ. 41—44)

Երուսալեմի տաճարում 13 տուփերով զանազան նըպատակների համար գանձանակ էին ժողովում։ Յիսուս դիտում էր կանանց գաւթից, տեսաւ որ մեծատունները խոշոր գումարներ էին ծղում իրեն տասանորդ իրանց եկամուտների, իսկ աղքատ այրին միայն չնչին բան զցեց։ Յիսուս զերադասեց այրու տառըը, որովհետեւ այդ նրա ամբողջ տնտեսած գումարն էր, նրա արարքի մէջ կար թէ անձնագոհութիւն և թէ անկեղծ բարեպաշտութիւն, որովհետեւ նա հաւատացած էր, թէ տաճարին նուիրելով նուիրում է Աստծուն։

Ամ փոփում. Տուրքեր ժողովելու համար տաճարի մէջ

քանի զանձատուի էր դրուած, Ալրի կանայր ի՞նչ դիրք աւնեին հրեից մէջ, Յիսուս ինչո՞ւ այրու չնչին տուրքը գերազանց օրինականների խոշոր տուրքերից։ Ի՞նչ տարբերուրիւն կայ սամարացու եւ այրու զոհաբերուրիւնների մէջ։ Այժմեան ճարեգործուրիւնները դուր չին զայր Յիսուսին։ Համեմատ։ համար կարդալ Ղուկ. Ի. 1—4

52. ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՏԱՃԱՐԸ ԵՒ ՄԱՐԴՈՒԻ ՈՐԴՈՒ ՕՐԸ

Ա. Տաճարի կործանումն ստոյգ, ըայց ժամն անյայտ և երբ Յիսուս տաճարից զուրս էր գալիս, աշակերտներից մէկն ասեց. «Վարդապետ, նայիր, տեսինչ քարեր են, ինչ շինուածք է»։ Յիսուս պատասխան կանց և ասեց. «տեսնում ես այս հոյակապ շէնքերը, խանեց և ասեց. «տեսնում եմ ասում ձեզ, այնպիսի օրեր վրայ կը հաճամարիտ եմ ասում ձեզ, այնպիսի օրեր վրայ կը հաճամարիտ են որ սրանցից ոչ մինը չի մնալ քար քարի վրայ։ Երկինք ու երկիր կանցնեն, բայց իմ խօսքերը չեն անցնիլ։ Սակայն այդ օրի ու ժամի մասին ոչ ոք չը անցնիլ։ Սակայն այդ օրի ու ժամի մասին ոչ ոք չը անցնիլ։ Մարդու կը եշտակները, ոչ մարդու որդին, գիտէ, ոչ երկնքի հրեշտակները, ոչ մարդու որդին, գիտէ, ոչ օրից։ (Մարկ. Ժ. 1—2, 31—32)

Աշակերտների վրայ տաճարի հոյակապ շէնքը խոր տըպատրութիւն էր անում, նրա պատերը, կարծում էին, յապատրութիւն էր անում, նրա պատերը, կարծում էին, յապատեան անսասան են մնալու ընութեան արհաւիրքների դէմ։ Փարիսեցիք նոյնպէս հաւատացած էին, որ հաստահիմ պատերի պէս անխախտ են մնալու նրա մէջ կատարուող ծէսերն ու արարողութիւնները։ Սակայն Յիսուսի վրայ այլ տպաւորութիւն էին թողնում թէ տաճարը և թէ նրա մէջ եղած աստուածպաշտութիւնը։ Համոզուած էր, որ շուտ կը կործանուին պատերը, կը փոխուեն ծէսն ու պաշտամուքը, մտքերն իրա քարոզած մտքերն են, որ անմահ կը մնան յաւիտեան։

Բ. Մարդու որդու գալուստը նոյնպէս անյայտ է:

«Յիսուս ասեց. «Ինչպէս որ եղաւ նոյի օրերը՝ այնպէս կըլինի և մարդու որդու գալուստը, ինչպէս որ ջրհեղեղից առաջ ուտում խմում էին, կին էին առնում, մարդու էին գնում, մինչև նոյի տապան մտնելու օրը: Ոչինչ չըգիտէին, մինչև ջրհեղեղն եկաւ և վերցրեց ամենին, այնպէս կըլինի և մարդու որդու գալը՝ Եթէ այն ժամին երկու հոգի լինեն ազարակում, մէկը կըվերցուի, միւսը կըթողնուի, եթէ մի երկանքի վրայ երկու հոգի աղալիս լինեն, մինը կըվերցուի, միւսը կըթողնուի»: (Մատթ. իԴ. 37—41)

Յիսուս քաջ դիտակ լինելով մարդկային թուլութեան, աշխատում էր իրա ունկնդիրներին զգուշացնել ծուլութիւնից, որ այսօրուայ անելիքը վազուայ յուսով չըթողնեն, պատրաստ լինեն հաշիւ տալու Աստծուն իրանց ստացած կեանքի մասին, օրերը չանցկացնեն միայն զուարձութիւնների մէջ, որովհետեւ մարդու որդին կարող է անակնկալ զալ դատաստան անելու:

Գ. Պատրաստ տէրը եւ անփոյթ ծառան:

«Աչքաբաց եղէք, որովհետեւ չըգիտէք թէ ձեր տէրը որ ժամին կըզայ: Բայց այս իմացած եղէք, եթէ տանտէրն իմասնար թէ ինչ ժամանակ կըզայ գողը, զարթուն կըմնար և չէր թողիլ, որ իրա տունը կտրեն: Սրա համար դուք էլ պատրաստ եղէք, որովհետեւ մարդու որդին կըզայ այն ժամին, երբ չէր սպասում: — Ով կըլինի այն հաւատարիմ և իմաստուն ծառան, որին տէրը վերակացու նշանակեց միւսների վրայ, որ հսկէ և ժամանակին կերակուր տայ նրանց: Երանի կըլինի այն ծառային, եթէ տէրը դ առնայ ու տեսնի ամեն ինչ իրա ասածի պէս կատարած. ճըշ-

մարիտ եմ ասում ձեզ, որ նրան կառավարիչ կընշանակի իրա բոլոր կալուածների վրայ: Բայց եթէ չար ծառան մտքումն ասի, գիմ տէրն ուշացաւ, չի գալ ու սկսի ծեծել իրա ընկերներին և ուտել խմելով ման գայ արքեցողների հետ: Յանկարծ տէրը լոյս կընկնի այնպիսի օր, երբ ծառան չէր սպասում և այնպիսի ժամին, որ չէր իմանում: Նրան միջից կըկարի, կեղծաւորների վիճակին կըհացնի, այնտեղ կըլինի լաց ու ատամների կըճըտոց»: (Մատթ. իԴ. 42—51)

Յիսուս ցանկանում էր, որ իրա ունկնդիրները միշտ պատրաստ ու զգաստ լինեն այն տանտիրոջ պէս, որ տէղեկութիւն ունէր զողի գալու մասին և երբէք չըմնալ անհոգ կութիւն ունէր զողի գալու մասին և երբէք չըմնալ անփոյթ այն չար ծառայի պէս, որ ասում էր, «Է՛, տէրս և անփոյթ այն չար ծառայի պէս, որ ասում էր, Եյդպիսին յանուշ կըզայ, ևս իմ ցանկացածը շարունակեմ»: Եյդպիսին յանուշ կարծ տեսնում է մահն առաջին:

Դ. Իմաստուն եւ յիմար կոյսեր:

«Յիսուս ասեց. «Երկնքի արքայութիւնը նման է տամն կոյսերի, որոնք լապտերներ վերցրին որ գուրս տիսային գիմաւորելու: Նրանցից հինգն իմաստուն էին, հինգը յիմար: Յիմարները լապտերները տուն էին, հինգը յիմար: Երեսաները վերցրին, բայց մոռացան հետները ձէթ վերցնել, իսկ վերցրին, բայց մոռացան հետները ձէթ վերցրին լապտերներիմաստունները ամաններով ձէթ վերցրին լապտերների հետ: Երբ տեսան, որ փեսան ուշանում է, ամենը ըստ հետներուց ննջեցին ու քննեցին: Կէս գիշերին ձայն յոգներուց ննջեցին ու քննեցին: Կէս գիշերին ձայն տուն թէ՝ ահա փեսան գալիս է, գուրս եկէք գիմաւորելու: Խսկոյն բոլոր կոյսերը վեր թուան և իրանց լապտերները պատրաստելու ետնից կացան: Յիմարներն ասին իմաստուններին՝ ձեր ձէթից մեզ էլ տըւէք, մեզ լապտերները հանգչում են: Իմաստունները պատասխանեցին՝ ձէթը կարող է մեզ ու ձեզ չըբա-

ւականացնել, աւելի լաւ է, դուք գնացէք վաճառականների մօտ և գնեցէք ձեզ համար։ Հէնց որ նրանք գնացին գնելու, փեսան եկաւ. ովքեր պատրաստ էին, նրա հետ մտան հարսանիք և դուռը փակուեց։ Յետոյ եկան միւս կոյսերը և ձայն տուին՝ տէր, տէր, դուռը բաց արա: Նա պատասխանեց և ասեց. Հշմարիտ եմ ասում, ձեզ չեմ ճանաչում: — Ուրեմն արթուն կացէք, որովհետև չէք իմանում թէ մարդու որդին ո՞ր օրը և ո՞ր ժամին կըդայա։ (Մատ. Ի�. 1—13)

Յիսուս այս առակով կամենում էր գարձեալ զգուշաց-
նել իրա հետևողներին, որ չըծուլանան, միշտ ուշիմ ու
պատրաստ լինեն. ինչ որ անհրաժեշտ է, իրանց հետ վերց-
նեն: Անհոգութեամբ չքննեն, եթք կարելի է թերին լրացնել
կամ յոյսները ուրիշների վրայ կըդնեն, թէ չէ մահը փեսայի
պէս անակնկալ լոյս կընկնի ու քեզ չըգտնի անպատրաստ,
խաւար միճակում:

Ա. մ փ ո փ ո և մ: Տաճարն ի՞նչ տեսակ շենք էր, ի՞նչ տպաւարութիւն էր անսամ աշակերտների վրայ։ Փարիսեցաց կարծիքով ի՞նչ էր առելի տեսական լինելու։ Յիսուսի հայեացքով ամենից տեսական ի՞նչն էր լինելու։ Ինչո՞ւ Յիսուս իրունետեղներին յօրդորում էր զգաստ, պատրաստ լինել։ Իմաստուն եւ լիմար կոյսերի առակազ մարդիկ ինչի՞ց պիտի զգուշանալին։

Համեմատ, համար կարդալ Մատթ. Ժ. 34—36. Մարկ. Ժ. 24—27, 32—37 Ղուկ. Ի. Ա. 25—27, 34—36

53. ՃԵՄԱՐԻՏ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԼԻԹԻՒՆ ՏԻՐՈՉ
ՕՐՈՒԱՅ ՀԱՄԱՐ

Ա. Քանքարներ.

«Յիսուս այս առակն ասեց. «մի մարդ օտար
երկիր էր գնում. իրա ծառաներին կանչեց և իրա
ունեցածը նրանց յանձնեց, մէկին 5 քանջար տուեց,
միւսին 2, երրորդին 1. իւրաքանչիւրին իրա կարո-

դութեան համեմատ և գնաց իրա ճանապարհը։ Փա-
մանակ անցնելուց ետ տէրը վերադարձաւ և ծառա-
ներից հաշիւ պահանջեց։ Առաջին ծառան մօտ եկաւ
ասեց. առէր, դու ինձ տուիր 5 քանքար, ահա նրանց
վրայ ուրիշ հինգ քանքար էլ աւելացրել եմ։ Տէրն
ասեց նրան. «ընտիր և լաւ ծառայ, որովհետեւ քիչ
քանի մէջ հաւատարիմ էիր, քեզ շատի վրայ կառա-
վարիչ կըկարգեմ, արի մասնակցիր քո տիրոջ ուրա-
խութեանը»։—Երկրորդ ծառան եկաւ և ասեց. «տէր,
ինձ երկու քանքար տուիր, ահա ուրիշ երկուսն էլ
շահել եմ։ Տէրն ասեց. «ազնիւ և բարի ծառայ, ո-
րովհետեւ այդ քչի մէջ հաւատարիմ էիր, քեզ շատի
վրայ կառավարիչ կըկարգեմ, մտիր քո տիրոջ ուրա-
խութիւնը»։—Երրորդ ծառան, որ մէկ քանքար էր
ստացել, եկաւ և ասեց. «Տէր, գիտէի, որ դու մի
խիստ մարդ ես, հնձում ես այն տեղից, ուր չես փուել. վա-
ցանել, ժողովում ես այն տեղից, ուր չես փուել. վա-
խեցայ ձեզանից, գնացի և թագցրիքո քանքարը գետ-
նի տակ. ահա ստացիր քո տուած քանքարը»։ Տէրը
բարկացած պատասխանեց. «գու չար և վատ ծառայ,
եթէ գիտէիր, որ չըցանած տեղից հնձում եմ և չը
փուած տեղից ժողովում եմ, ինչու չէիր իմ արծա-
թը սեղանաւորներին յանձնում, որ գայի իմ գումա-
րը տոկոսներով պահանջէի։ Այժմ առէք դրանից այն
քանքարը և տուէք 10 քանքար ունեցողին։ Որովհե-
տեւ ով ունի, նրան դարձեալ կըտրուի, իսկ ով չունի,
եղածն էլ կառնուի։ Այն անպիտան ծառային տարէք
զրսի խաւարը, թող այնտեղ լայ և ատամները կրծը-
տի»։ (Մատթ. հե. 14-30)

(U.S. Pat. No. 14-30)

Քանքարի քանակը ըստ յունականի՝ 2000 ոռութ էր՝ ըստ հոռմէականի՝ 3500 ու.։ Քանքարն այստեղ նիւթական շրպիտի համականալ: Յիսուս դրանով աչքի առաջ ունէր Աստծու արքայութեան հոգին, որ գրել էր իրան հետեւողների մէջ: Ամեն մի աշակերտ այդ հոգեոր զրամագլուխը պիտի շահեցնէր երկնքի արքայութեան օգտին գործելով, ոչ որ իրաւունք չունէր ասելու՝ իմ ուժը քիչ է կամ իմ դործունէութեան շրջանը փոքր է, իւրաքանչիւրն իրա ուժի համեմատ պիտի գործի: Պարտաճանաչ, խելօք մարդիկ անշահ, ապարդիւն չեն թողնում աստուածաշնորհ ձիրքերը, աշխատում են հոգեոր կեանքը ճոխացնել իրանց մէջ և այդպիսով դառնում են մասնակիցներ Հօր կեանքին: Դրանք հաւատարիմ ծառաներն են. բայց աշխարհում կան անազնիւ, վատշուէրանձինք, որոնք երկիւզ կրելով կորցնել մարմաւոր կեանքը, ոչ տեղից շարժուել են կամենում, ոչ քրտինք թափել. մընում են ծոյլ, անգործ, վերջը տրտնջում են, թէ ինչնու իրանցից անձնազութիւն է պահանջում: Ահա երբորդ ծառանւթիւն է. Ոշխարներն ու այծերը.

«Յիսուս ասեց. «Եթե մարդու որդին գայ իրա փառքով, հետն էլ նրա բոլոր հբեշտակները, այն ժամանակ կը բազմի իրա փառքի գահի վրայ, բոլոր ազգերը կը ժողովուեն նրա առաջ, դրանց կը բաժանի իրարից, ինչպէս հովիւը ոչխարներին բաժանում է այծերից: Ոչխարները կը կանգնեցնի իրա աջ կողմը և այծերը ձախ կողմը: Այն ժամանակ թագաւորը կասի աջակողմեաններին՝ եկէք իմ Հօր օրհնուածներ, ժառանգեցէք արքայութիւնը, որ աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստուած է, որովհետեւ երբ քաղցած էի, ինձ կերակրեցիք, երբ ծարաւ էի, ինձ խըմեցրիք, օտար էի, ձեզ մօտ օթեւան տուիք, մերկ էի, ինձ հաղակներին կամ այսինքն ուրիշներին զթալու, օգնելու—առաջի մէջ ներկայ անում են ոչխարների գերում իրքն Հօր օրհնուածներ, իսկ նրանք, որոնք գերազանելով մարմաւոր կեանքը վազում են սին վայելքների ետեկից, ու իրանց զրկում իսկական կեանքից—առակի մէջ կոչւում են այծեր—ձախակողմեաններ կամ անիծուածներ: Առա-

տեսանք քեզ քաղցած ու կերակրեցինք, կամ ծարաւ ու խմեցրինք: Ե՞րբ տեսանք քեզ օտար տեղ ու օթեւան տուինք, կամ մերկ և հազցրինք: Ե՞րբ տեսանք քեզ հիւանդ կամ բանդի մէջ և այցելութեան եկանք թագաւորը կը պատասխանի նրանց՝ ճշմարիտ եմ ասում, երբ այս փոքրը եղբայրներից մէկին այդ թէ ինձ էր արել: Յետիւնը արել էք, այդ նոյնն է թէ ինձ էր արել: Յետոյ կասի ձախակողմեաններին՝ հեռու ինձանից, անիծուածներ, գնացէք յաւիտենական կը ակը, որ պատրաստուած է սատանայի և նրա հրեշտակների համար, որովհետեւ քաղցեցի, ինձ չըկերակրեցիք, ծարաւցի, չըխմացրիք, օտար էի, ձեր տունը շընգունցիք, մերկ էի, չըհազցրիք, հիւանդ ու բանդարկուած էի, այցելութեան չեկաք: Այն ժամանակ նըրանք կը պատասխանեն՝ տէր, Երբ տեսանք քեզ քաղցած, ծարաւ, մերկ, օտար, հիւանդ, բանդարկուած և քեզ ծառայութիւն չարինք: Թագաւորը կը պատասխանի նրանց՝ ճշմարիտ եմ ասում, երբ այս փոքրերից մէկին ծառայութիւն չարիք, այդ նոյնն է թէ ինձ չարիք: Ուստի դուք կը գնաք յաւիտենական տանջանքը» իսկ արդարները յաւիտենական կեանքը:

(Մատթ. ԻԵ. 31—46)

Յիսուս ոչխարների ու այծերի առակով կամեցաւ ցոյց տալ երկու տեսակի մարդ կանց: Այն մարդիկ, որոնք հասկանում են թէ հոգեոր կեանքը նրանց տրուած է Հօր կամքը կատարելու համար—այսինքն ուրիշներին զթալու, օգնելու—առաջի մէջ ներկայ անում են ոչխարների գերում իրքն Հօր օրհնուածներ, իսկ նրանք, որոնք գերազանելով մարմաւոր կեանքը վազում են սին վայելքների ետեկից, ու իրանց զրկում իսկական կեանքից—առակի մէջ կոչւում են այծեր—ձախակողմեաններ կամ անիծուածներ: Առա-

Ջինները կարեկից, գթասիրտ տիպերն են, վերջինները անտարբեր, անկարեկից:

Ամփոփում. Քանիքարի քանակը ի՞նչ գումարի եր հաւասար: Յիսուս ի՞նչ քանիքարների մասին եր խօսում: Ի՞նչ է նշանակում Տիրոջ օր կամ անեղ դպտաստանի օր: Մառաւերն ի՞նչպիս վարուեցին ստացած քանիքարների ներ: Ի՞նչ վարձատրաբեան արժանացան հաւատարիմները եւ ի՞նչ պատժի ծոյլը—ջարը: Յիսուսի աշակերտները—հետեւողներն ի՞նչ դրամազնակն են ստացել Երանեից:

54. ՅԻՍՈՒԽՈ ՔՈՐՈԾ ՄԻՄՈՆԻ ՏԱՆՀ.

Ա. Հակառակորդների խորհություն:

«Երկու օրից ետ լինելու էր զատիկը և բաղար-
ջակերաց տօնը։ Քահանայապետներն ու դպիրները
խորհուրդ էին անում թէ ինչպէս նենգութիւնով բըռ-
նեն Ցիսուսին և սպանեն, բայց յետոյ ասում էին՝
լաւ չէ այս տօնի միջոցին անել, չըլինի թէ ժողո-
վրդի մէջ խոսվութիւնն ծագիւ։ (Մարկ. ԺԴ. 1—2)

Յիսուսի հակառակորդները, որ գլխաւորապէս Մեծ առեանի անդամներն էին, համոզուած էին, որ եթէ նա շարունակի ամեն քայլում իրանց վարկը զցել ժողովրդի աչքում, իրանց հեղինակութիւնը հողի կը հաւասարուի: Երկար ժամանակ նրա հետ վէճի բանուեցին, հետապնդեցին, որ խանգարեն, բայց եղբ տեսան բոլոր ջանքերը զուր է անցնում, վճառեցին ոպասել: Սիսետրիօնի անդամները հաւատացած էին, որ աստուածային գործի պաշտպանութիւնը պահանջում է այդպէս վարուել: Մնում էր խորամանկութիւնով նըրքան բռնել, զգուշութեան համար արտաքին դատավարութեան ձևերը վրան կատարել ու յետոյ մեռցնել:

Բ. Բորոտ Սիմոնի տան դէպքը:

«Երբ Յիսուս գտնվում էր Բեթանիայում և բոցուած Սիմօնի տանը նստած էր, ներս եկաւ մի կին,

ձեռին ունէք նարդեան, ազնիւ, մեծագին իւղով լի՛
շիշ. այն շիշը կոտրելով իւղը թափեց Յիսուսի գլխի
վրայ: Աշակերտների չարութիւնն եկաւ, նրանք ա-
սում էին՝ ինչո՞ւ զուր կորցնել այդ տեսակ իւղը. կա-
րելի էր վաճառել, 300. դահեկանից աւելի կրտային,
ու այդ գումարը բաժանել աղքատներին: Ամենն էլ
շատ զայրացել էին կնոջ վրայ: Յիսուս ասեց նրանց-
ոհանգիստ թողէք զրան, մի մեղադրէք, ոտ մի բարի-
գործ արեց իմ անձի վերաբերեալ. ամեն անդամ աղ-
քատներ ունէք ձեզ հետ, երբ կամենաք, կարող էք
նրանց բարութիւն անել, բայց ինձ չէք կարող միշտ
ձեզ հետ ունենալ: Դա ինչ որ ունէք ու կարող էք
անել, արեց և կանխապէս խնկեց, օծեց իմ մարմինը
իբրև պատանելու նշան: Ճշմարիտ եմ ասում ձեզ,
ուր էլ քարոզուի այս Աւետարանը աշխարհի երեսին,
դրա արածը ևս կըխօսուի դրա յիշատակի համար»:
(Մարկ. ԺԴ. 3—9)

Յիսուս զգալով իրա վախճանի մօտենալը, զնաց վեր-
ջին անդամ Բեթանիա իրա բարեկամներին հրաժեշտ տալու:
Հնիքրեքի միջոցին մի կին մտաւ տուն և մի շիշ նարդոսի
Ըստ թափեց նրա վրայ. թանկ բան էր, արծէր 30 ոռութիւ,
իւղ թափեց նրա վրայ. թանկ բան էր, արծէր 30 ոռութիւ,
այդ գումարով կարելի էր մի գերի անել: Աշակերտներն ափ-
սոսալով իւղի կորսուի վրայ, զանազան դիտողութիւններ
էին անում, բայց Յիսուս, որ անթիւ ցաւագար կանանց
բժշկել էր, կնոջ այդ գոհարերութիւնն ընդունում էր իբրև
նշան ելախտագիտութեան:

Գ. Աշակերտոց մասնիչ:

« Յուղա իսկարովտացին, որ մէկո էր քեալներից, այդտեղից վեր կացաւ, գնաց քահանայա-
պետների մօտ, որ Յիսուսին մատնի նրանց ձեռը-
Երբ հակառակորդներն այդ լսեցին, շատ ուրախացան»

լոստացան, որ նրան ալթաթ կըտան: Դրանից ետ
նա յարմար առիթ էր որոնում, որ Յիսուսին մատ-
նի՞ւ:

(Մարկ. ՓԴ. 10—11)

Յուղան էլ միւս աշակերտների պէս հաւատացած էր,
որ Յիսուսը Մեսիան է, միւսների պէս նա ևս յոյս ունէր
բարձր պաշտօն ստանալու: Կարծել էր, որ շուտով Յիսուս
Երուսաղէմից հոռմայեցոց կարտաքսի և իրա թիկնապահ
աշակերտներին վայելուչ պաշտօններ կըտայ: Բայց որ օրի
վրայ հիսաթափեցնող արարքներ էր տեսնում, օրինակ Յի-
սուս ասում էր—տուրք տուէր հոռմայեցոց, մի հետեւէք փա-
քիսեցոց: Յուղան, որ ջերմեռանդ հրէայ էր, չէր կարողա-
նում հասկանալ թէ ինչպէս կարելի է հայրենասէր փարի-
սեցուն անարգել և հոռմայեցու պէս թշնամուն սիրել: Այդ
բաւական չէր, Յիսուս դեռ գուշակում էր Երուսաղէմի ու
նրա տաճարի կործանումը: Յուղան երկար տատանուելուց
հետ իրա մէջ հրաժարուեց Յիսուսին Մեսիա ընդունելուց.
այդ դառ հիսաթափութիւնը Յուղային այնտեղ հասցրեց,
որ վճռեց իրա երբեմնի սիրած վարդապետին մատնել քա-
հանայապետների ձեռը, որոնք այժմ նրա կարծիքով հրէա-
կան ազատութեան պաշտպաններն էին:

Ա. Ո Փ Ո Ա. Յ. Յիսուս ինչն վտանգաւոր անձ էր հա-
մարեսմ քայանապետների համար: Մ' էծ ատեանի անդամ-
ները զիսաւորապէս ինչ էին պաշտպանում: Յիսուս Երա-
ֆայում ինչ բարեկամներ սևեր: Ո՞վ եր նրան երախտագի-
տուրեան նշան ցոյց տուազը: Ի՞նչ շարժառիթից զայրացան
աշակերտները: Յուղան ինչն ապերախտ քայլ արեց: Ի՞նչ
կասկածեր էին ծագել նրա հուլու մէջ:

Համեմատ. համար կարգալ Մատթ. ԻԶ. 1—16. Յովի,
Ժ. 2—8

55. Ո Տ Ն Ա Լ Ո Ւ Ա Յ Ե Խ Խ Ո Ր Ը Ր Ի Ք

Ա. Ունալուայ:

«Յիսուս իմանում էր, որ հայրն ամեն ինչ իրա

Ճեռն է տուել, թէ ինքն Աստծուց է եկել և կրկին
Աստծու մօտ է գնում, վերկացաւ ընթրիքի սեղանից,
որ պատրաստած էր Երուսաղէմի մէջ Յովհաննէ»
Մարկոսի զարդարած վերնատանը, վերարկուն վէր
դրեց, առաւ մի դենջակ, մէջքը կապեց, ջուր ածեց
կոնքը և սկսեց լուանալ աշակերտների ոտները և մէջք
կապած դենջակով սրբել: Երբ ոտները լուացաւ վեր-
ջացրեց, կրկին վերարկուն հագաւ, սեղանին բազմեց
ու խօսեց. «Գիտէք թէ արդեօք ինչու արի այս: Դուք
ինձ կանչում էք՝ վարդապետ և տէր, և չէք սխալ-
ում, որովհետեւ ես այդպէս եմ: Սյժմ եթէ ես վար
դապետ և տէր լինելով ձեր ոտները լուացայ. Դուք
աւելի պարտական էք իրար ոտներ լուանալ: Սրանով
ձեզ մի օրինակ տուի, ինչպէս որ ես ձեզ ծառայե-
ցի, այնպէս էլ դուք ծառայեցէք իրար: Երանի կըլի-
նի ձեզ, եթէ այս կատարէք»:

(Յովհ. ՓԴ. 3—5, 12—15, 17)

Հրէաների մէջ սովորութիւն էր, երբ բազմականներն
իրանց տեղերը բռնում էին, սեղանի մեծը բաժակ առնելով
ձեռը փառք էր տալիս Աստծուն նուիրած առատ բերքերի՝
ցորենի, գինու համար: Ալդ բաժակից խմում էին բոլոր
բազմականները, Յետոյ բերում էին կոնք, ջրաման, զենջակ,
ամենն էլ ձեռները լուանում էին, ապա հաց ուտելն սկսում:
(Այսպիսի սովորութիւն կայ և հայ գիւղերում): Յիսուս ա-
շակերտներին անհուն խոնարհութեան օրինակ տալու հա-
մար լուաց նրանց ոտները վերնատան մէջ:

Բ. Վերջին անգամ զգուշացրեց:

«Ընթրիքի ժամանակ Յիսուս դարձաւ աշակերտ-
ներին ու ասեց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեր
միջից մինը մատնելու է ինձ և այն էլ նա, որ հետո
մի ամանից ուտում է»: Աշակերտները լսեցին տըրա-
մի ամանից

մեցին և սկսան մէկ մէկ դիմել ու հարցնել՝ միթէ ես եմ, տէր, միթէ ես եմ, տէր: Յիսուս պատասխանեց նրանց. «Ձեր տասներկուսիցդ նա է, որ ձեռը մխեց սկաւառակի մէջ: Մարդու որդին գնում է այն ընթացքով, ինչպէս նրա համար գրուած է, բայց վայ կըլինի այն մարդուն, որի ձեռով մարդու որդին կըմատնուի: Լաւ էր, եթէ այդ մարդը ամեննեին ծընուած չըլինէր»:

(Մարկ. ԺԴ. 18—21)

Յուղան իրեկ դանձապահ մօտ էր լինում Յիսուսին. սա զենջակ կապելուց ետ ոտներ լուանալն սկսեց նրանից ու շարժուածքից գուշակեց սրտինը: Վարդապետը մեղմ կերպով աշխատում էր մոլորուած աշակերտի խիզճ զարթեցնել, որ զդայ իրա զգուելի մտադրութիւնը: Յուղային ուղիդ ճանապարհի բերելու համար Յիսուս ընտրել էր սիրալիր, քնքոյց եղանակ, ամեննեին չէր կամենում ասել բացարձակ դու ես մատնիչը, որ միւսների առաջ ամօթահար չանի: Նրա նպատակն էր, որ յանցաւորն ինքը իրա սիսալն զդայ ու դարձ գայ:

Գ. Արէք այս իմ յիշատակի համար. «Բնթրիքի միջոցին Յիսուս հացն առաւ ձեռը, օրհնեց և կտրելով տուեց նրանց և ասեց. «Առէք, կերէք, դա իմ մարմինն է»: Եւ բաժակը ձեռն առնելով գոհացաւ և տուեց նրանց, ամենը խմեցին այն բաժանից: Յիսուս ասեց նրանց. ևսա իմ արիւնն է նոր ուխտի, որ շատերի համար թափւում է: Ճշմարիտ եմ ասում ձեղ, այլեւս չեմ խմելու որթի բերքից մինչեւ այն օրը, երբ այս նոր կըխմեմ Աստծու արքայութեան մէջ»:

(Մարկ. ԺԴ. 22—25)

Յիսուսի անձնաւորութեան միջոցով աշակերտները շաղապուած էին իրար հետ: Գլխաւորն այժմ պիտի նրանց միջից հեռանար ու աշակերտների ուսերի վրայ էր մտում

նրա ստեղծած սրբաղան գործի շարունակելը: Այդ բանը կը յաջողուէր այն ժամանակ, եթէ միացնող կապը մնար անխղելի, եթէ վարդապետի հոգին շարունակէր ապրել նրանց մէջ և եռանդ տար: Այս ամենն զգում էր Յիսուս, ուստի սրտի փափազն ու ակնկալութիւնները նրանց յայտնեց. «Մարդմաւոր կեանքը պահպանող հացն ու զինին ճաշակելիս թող յիշեն իրան, իրա կենդանի յիշատակը կըդառնույ նըրանց հոգեկոր կեանքը մնունդը»:

Ա. մի ո փ ո և մ. Հրեաները հաց ուտելուց առաջ արեւելեան ի՞նչ սովորութիւն էին գործադրում: Յիսուս ի՞նչ նպատակով լուացաւ աշակերտների ոտները: Յիսուս ինչի՞ց գուշակեց Յուդայի օրոշումը: Ինչո՞ւ իրապարակով չէր նախատում: Հաց ու զինով ի՞նչ օրինակ էր տալիս: Վերջին ընթիրին ի՞նչ խօրհնուրդ դարձաւ քրիստոնեաների համար:

Համեմատ. համար կարդալ Մատթ. հԶ. 17—29, Մարկ. ԺԴ. 12—17, Ղուկ. իԲ. 7—23, Յով. ԺԳ. 21—30

56. ՅիՍՈՒՍ ԳԵԹՍԵՄԱՆԻ ՊԱՐՏԻԶՈՒՄ

Ա. Աշակերտների խոստումը. «Խորհրդաւոր ընթրիքի վերջում օրհնութիւն երգելուց ետ աշակերտները վարդապետի հետ գնացին դէպի Զիթենեաց լեառը: Յիսուս ասեց նրանց. «այս գիշեր դուք ամենդ ինձանից գայթակղուելու, հեռանալու էք, որովհետեւ գրուած է թէ՝ կըզարկեմ հովուին և ոչխարները կըցրուեն: Բայց իմացէք, յարութիւն տանելուց ետ ձեզանից առաջ կըզնամ Գալիլիա»: Պետրոսը պատասխանեց. «Տէք, թէկուզ ամենն էլ գայթակղուենու երես թեքեն քեզանից, միայն ես այդ անողը չեմ»: Յիսուս ասեց նրան. «Ճշմարիտ եմ ասում քեզ, հէնց դու այս գիշեր մինչեւ աքաղաղի երկու անգամ կանգու ալս գիշեր մինչեւ աքաղաղի երկու անգամ կ'ուրանաս»: Պետրոսն իրախոսքի վրայ աւելի պնդելով ասում էր. «ոչ, տէր,

եթէ հարկաւոր լինի, կեանքս էլ կըտամ քեզ համար, քայց քեզ չեմ ուրանալ»։ Այդպէս հաւատացնում էին և միւս աշակերտները։ (Մարկ. ԺԴ. 26—31)

Դեթսեմանէն Զիթենեաց լեռան ստորոտումն էր. մի երեսին Բեթվագէն էր, միւս ստորոտում Բեթանիան. Քաղաքից դուրս գալով Յիսուս քայլերն ուղղեց գէպի Գիթսեմանէ, «որ նրա սովորական գիշերային օթևաններից էր. Մեսիայի ակնկալութեամբ ոգելորուած աշակերտները խոստանում էին անբաժան մնալ վարդապետից և զո՞ն բերել նրա համար իրանց կեանքն ու արիւնը։ Նրանց համար մինչ այդ վայրկեանն անհասկանալի էր Յիսուսի ակնարկած արքայութիւնը, որտեղ ամենաաւագը պիտի ծառայէր կըտսերագոյնին։

Բ. Աղօթքի ժամը. «Եկան գիւղը, որի անունն էր Գիթսեմանի, Յիսուս աշակերտներին ասեց. «Նըստեցէք այստեղ, մինչև ես գնամ աղօթք անեմ»։ Իրա հետ վերցրեց Պետրոսին, Յակոբոսին, Յովիաննէսին և մտաւ պարտէզը։ Նրա վրայ տիրութիւն և զարհուրանք եկաւ. Այն ժամանակ ասեց աշակերտներին. «Հոգիս տիրուր է մահու չափ, մնացէք այստեղ և աղօթքեցէք»։ Ինքը մի քիչ առաջ գնալով երեսի վրայ ընկաւ գետնին և աղօթում էր, որ եթէ հնար է այդ ժամն իրանից հեռացնէ։ Ասում էր. «հայր, հայր, քո ձեռին ամեն բան հնարաւոր է, այս բաժակն ինձանից անցկացրու, բայց ոչ ինչպէս ես եմ կամենում, այլ ինչպէս դու»։ Դրանից ետ եկաւ աշակերտների մօտ և տեսաւ նրանց քնոտած։ Պետրոսին դիմեց. «Սիմօն, միթէ քնել ես, տես, մի ժամ գոնէ չըկարացիր արթուն մնալ»։ Արթուն կացէք և աղօթք արէք, որ փորձութեան մէջ չընկնէք։ Հոգիս յօժար է ամեն տեսակ զրկանք կրելու, բայց հոգիս տկար է»։

Յիսուս դարձեալ գնաց, նոյն կերպ աղօթեց։ Վերադարձաւ աշակերտներին կրկին քնած գտաւ. նրանց աչքերը ծանրացել էին ու չէին իմանում թէ ի՞նչ պատասխաննեն նրան։ Երրորդ անգամ եկաւ աղօթեցու տեղից ու ասեց նրանց. «Քնեցէք այսուհետեւ և հանգստացէք, որովհետեւ վերջը հասել է և ժամն եկել, շուտով մարդու որդին մատնըւում է մեղաւորների ձեռը։ Ուրեմն վեր կացէք գնանք, որովհետեւ ինձ մատնողը մօտեցաւ»։ (Մարկ. ԺԴ. 32—42)

Յիսուս կամաւոր կերպով պատրաստում էր մահուան. հակառակորդների հետ անվերջ պայքարելը, վերջին օրերի սրտամազ մտածմունքները կարող էին նրան լոգնեցրած լինել. իբրև մահապարտ յիշելով խաչի վրայ մեռնելը բնականաբար սոսկում կըզգար. կեանքի ճգնաժամերին սովորանա գիմում էր հայր Աստծու օգնութեան աղօթելով։ բար նա գիմում էր հայր Աստծու օգնութեան աղօթելով։ Այդպէս էլ արեց վերջին ժամին, բայց աշակերտները, ու Այդպէս էլ արեց վերջին ժամին, բայց աշակերտները, մէջ ընչ օրօրում էին իրանց Մեսիայի թագաւորութեան մէջ բարձր պաշտօններ ստանալու յոյսերով, ի՞նչ կըհասկանային թէ աղօթող վարդապետի հոգու մէջ ինչ՞ո են անցնում։

Գ. Յուղան որոշումն իրագործեց. «Եյս խօսքը դեռ Յիսուսի բերանումն էր, որ խսկարովացի Յուղան երեւաց, նրա ետեւից մեծ բազմութիւն արերով և բըերով զինուած։ Նրանց մէջ կային քահանայապետներ, դպիրներ, ծերեր։ Մատնիչն այսպիսի նշան պետներ, գպիրներ, ծերեր։ Մատնիչն այսպիսի նշան էր տուել. «ում որ ես կըհամբուրեմ, նա է, բոնեցէք և զգուշութեամբ տարէք»։ Յուղան մօտեցաւ և Յիսուսին ասեց. «ուարբի, ուարբի և համբուրեց նրան։ Ամբոխն ու զինուորները թափուելով կալանաւորեցին։ Յիսուսի մօտ կանգնողներից մէկը սուը քաշեց քահանայապետի ծառայի վրայ և ականջը կտրեց։ Յիսուս դարձաւ իրան կալանաւորողներին ասեց.

ասրերով և բրերով էթ դուրս եկել, ինձ իրեւ աւազակի բռնելու։ ԶԵ որ ամեն օր տաճարում ուսուցացանում էի, ինչո՞ւ չըբռնեցիք, երեխ նրա համար, որ կատարուեն մարդարէի գրածները։ Այն ժամանակ բոլոր աշակերտները թողին և փախան։

(Մարկ. ԺԴ. 43—50)

Յուղան հեռացել էր իրա որոշումն ի կատար ածելու համար։ Աշակերտները միարան խոստացել էին վարդապետին պաշտպաննել և կարծելով թէ նիւթական արքայութեան համար են կռուելու, մէկը նրանցից սուր ևս վերցըն էր։ Բայց մեծ հիասթափութիւն պատեց նրանց, երբ այդ օրհասական վայրկեանին Յիսոս արգելեց աշակերտներին սուրբարձրացնել։

Ա. մ. թ ո փ ո ւ մ. Գերսեմանէն նւր էր գտնում։ Աշակերտներն ինչ էին որոշել։ Յիսուսի տիսրելու պատճառն ինչ էր։ Ճգնածամերին Յիսուս ոնմ էր դիմում, ի՞նչ օգնութիւն կը տար նրան ադօրէլ։ Յիսուսի վրա ինչպէս կազդէր աշակերտների անհոգ քնելը, ի՞նչ տեսակետով էին խոստանում պաշտպանել Յիսուսին։ Վերջն ինչո՞ւ աշակերտները բռին նրան ու փախան։

Համեմատ, համար կարդալ Մատթ. ԻԶ. 31—56, Ղուկ. ԻԲ. 39—54, Յովհ. ԺԳ. 31—38, ԺԸ. 2—12

57. ՅԻՍՈՒՍ ՄԵԾ ԱՏԵԱՆԻ ԱՌԱՋ

Ա. Վկաների ցուցմոնքները. «Յիսուսին գիշերը տարան կայիթափա քահանայապետի մօտ։ Այնտեղ ժողովուեցին նոյնպէս բոլոր քահանայապետները, դպիրները և ծերերը։ Պետրոսը հեռուից հետեւում էր Յիսուսին, մինչեւ գնաց մտաւ քահանայապետի գաւթի ներսը, նստեց սպասաւորների հետ և կըակի մօտ տաքանում էր։ Իսկ քահանայապետներն ու ողջ ա-

տեանը Յիսուսի դէմ ցուցմոնքներ էին որոնում, որ կարենան նրան սպանել, բայց չէին գտնում։ Նատ կարենան նրան սպանել, բայց չէին գտնում։ Միշտերը նրա դէմ սուտ վկայութիւն էին տալիս, միշտերը նրանց ասածներն իրար չէին բռնում։ Ուրիշներին նրանց ասածներն իրար չէին կենում, նրա դէմ այսպէս սուտ վկայը վեր էին կենում, նրա բերանից, որ ասում էր՝ այս ձեռագործ տաճարը կը քանդեմ և երեք օրում այս ձեռագործ տաճարը կը քանդեմ և երեք օրում այս կը հինեմ ուրիշը, որ ձեռագործ չըլինի։ Սակայն այս վկայութիւնն էլ բաւական չեղաւ։

(Մարկ. ԺԴ. 53—59)

Յիսուսին տարել էին գիշերային հարցաքննութեան ենթարկելու։ Մեծ ատեանի անդամների միահամուռ ցանկութիւնն էր Յիսուսին սպանել։ Դատաւորները հետաժում չէին նրան կամ աշխարհութեան, նրանք աշխատում էին լոյս հանել վկային աշխարհութեան, որոնք ցոյց տային, թէ Յիսուսի գործունէութիւնը ներ, որոնք ցոյց տային, թէ Յիսուսի գործին, իրան հոչակում է հիմնովին վկայակար է հրէից ազգին, իրան հոչակում է Մեսիա, գուշակում է տաճարի կործանումը, կարճ խօսքով՝ Մեսիա, գուշակում է Աստծուն, իսկ մահուան դատապարտելու հահայինոյում է Աստծուն։ Իսկ մահուան դատապարտելու համար այս վերջին կէտը կարեւը էր։

Բ. Յիսուսին հարց ու փորձի ննջարկելը. «Այն ժամանակ քահանայապետը ատեանի մէշտեղ գալով տապահան պահանայապետը Յիսուսին. Փինչո՞ւ ոչ մի բան չես պատահարցրեց Յիսուսին. Փինչո՞ւ ոչ մի բան չես ասում ըստ խանում, տեսնում ես, որանք ինչե՞ր են ասում ըստ խանում, կանգնած էր և ոչինչ չէր պաղէմ։ Յիսուս լուռ կանգնած գարձեալ նրան գիմեց տապահանում։ Քահանայապետը գարձեալ նրան գիմեց հարցնելով. «արդեօք դու ես Քրիստոսը, օրհնեալ հարցնելով. «արդեօք դու ես Քրիստոսը, օրհնեալ Աստծու որդին։ Յիսուս պատասխանեց. «այս, ինչ Աստծու որդին։ Յիսուս պատասխանեց. «այս, ինչ մարդու դու ասիր, ես եմ, բայց կըտեսնէք մարդու որդուն դու ասիր, ես եմ, բայց կըտեսնէք ամպերի գօրութեան աջ կողմից նստած և երկնքի ամպերի գրայ գալիս։ Քահանայապետն իսկոյն իրա պատմութիւնը այսպէս վկաներ ասեց. «մեզ այլևս վկաներ ինչ աշաները պատառելով ասեց. «մեզ այլևս վկաներ ինչ

հարկաւոր են, ահա լսեցինք սրա բերանից հայնոյանքը, ինչ կարծիք էք յայտնում: Նրանք ամենը Յիսուսին դուրս բերին մահապարտ. Միքանին սկսան երեսին թքել, ձորձ փոելով նրա գլխին, խփում էին կոռուփով և ասում. «գուշակիր, ո՛վ Քրիստոս, թէ ով էլ, որ բեզ խփեց», Սպասաւորներն ապտակում էին նրանք:

(U.S.P.L. & P. 60-65)

Փարփսեցիք ու սազուկեցիք տարբեր շահերով իրար
ներհակ կուսակցութիւններ էին. այս գիշեր միացել էին
Յիսուսին զատապարտելու համար. Յիսուս ակնյայտնե-
տեսնում էր, որ Սենեարիոնի զլխառոնները մարդկանց հար-
կացրում են իրա զէմ սուտ վկայութիւն տալու, սրտի խող-
քում զգուում էր դրանց ստոր արարքից ու մնում լուս Դա-
տապարտելու համար հարկաւոր էր մի պատրուակ գտնել,
որ Յիսուս Աստծուն հայիոյել է:

Ամփում. Դատավարութեան արտաքին ձևականութիւններ կատարելու համար Յիսուսին զիշերով ուր տարած Դատաւորները Յիսուսին հարցաքննելիս ինչ էին փնտրում. Յիսուս ինչո՞ւ էր լուս. մեռմ ցուցմունքների և ուաշ. Նրան դատավարտելու համար ի՞նչ կետ էր կարեւորը. Յիսուսի որ խօսքերից նետեացրին քահանայապետները, որ նա Աստծուն հայնուել է.

Համեմատ. համար կարդալ Մատթ. իշ. 57-68, Ղուկ.
իթ. 54-71, Յով. Ժ. 13-24

58. ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ
ՎԱԽՃԱՆԸ

Ա. Պետրոսի ուրացութիւնն ու զղոսմը.

«Քանի դեռ Պետրոսը ներքեւ գտավումն էր, քահանայապետի աղախիններից մէկը եկաւ տեսաւ Պետրոսին տաքանալիս, նայեց երեսին ու ասեց. «Դունոյնպէս նադովըեցի Յիսուսի հետ էիր»: Պետրոսն

ուրացաւ և ասեց. «Հեմ ճանաչում նրան և չեմ իմա-
նում թէ դու ի՞նչ ես ասում»։ Դուրս եկաւ արտա-
քին գաւիթը, լսեց որ աքաղաղը կանչում է, Աղա-
խինը նրան կրկին տեսաւ և իրա շուրջ եղողներին
յայտնեց. «Սա նրանցից է»։ Պետրոսը դարձեալ ուրա-
ցաւ։ Քիչ յետոյ Պետրոսի շուրջ եղողները դարձան
նրան ասին. «արդարեւ դու նրանցից ես, որովհետեւ
գալիքացի ես և խօսք ու զբոյցդ էլ վկայում են»։
Պետրոսը գլուխն ազատելու համար սկսեց նզովել
նրան և երդուելով ասել. «Հաւատացէք, որ ես ըոլո-
րովին չեմ ճանաչում այն մարդուն, որի մասին դուք
խօսում էք»։ Հէնց այդ ժամանակ աքաղաղը երկրորդ
անգամ կանչեց. Պետրոսը յիշեց Յիսուսի խօսքը, թէ
մինչև աքաղաղի երկու անգամ կանչելը դու ինձ ե-
րեք անգամ կուրանաս։ Դրա վրայ սկսեց դառնագին
(Մարկ. ԺԴ. 66—72)
լալ»։

Պետրոս հետևելով Յիսուսին, հաւատացած էր ու
սրտում թէ Մեսիային է հետևում, որին Տէրը պիտի պաշտ-
պանէր թշնամիների գէմ: Համոզուած էր, որ իրա վարդա-
պետը պիտի լոյս հանէր այն զօրաւոր բարեմանութիւն-
ները, որոնցով ըստ հրէական ըմբռնումի Մեսիան պիտի-
օժտուած լինէր: Բայց նա չըգփատէր ինչպէս զսպել սրտի
վրդովմունքը, երբ տեսնում էր գիտերն իրա աջքի առաջ
ծաղրում են, խփում են Յիսուսին ու նա կանգնած ոչ ընդ-
դադրում է և ոչ բողոքի ձայն հանում: Այդպէս ծաղը ու
գիմանում է և ոչ բողոքի ձայն Պիտրոսն իրքի հրէայ ամա-
ծանակի ենթարկուած անձին Պիտրոսն իրքի հրէայ ամա-
չում էր Մեսիա-Քրիստոս անուանել: Սրտի մէջ ծագած այդ
կասկածը մի կողմից, կալանաւորելու երկիւղը միւս կողմից
ստիպեցին ուրանաւ իրա սիրած վարդապետին: Բայց այդ
տեսեց կարծ միջոց, որովհետեւ Յիսուսի գուշակութիւնը յի-
շելով սկսեց արածը զզջալ ու լալ:

Բ. Մատոնիչի մահը:

«Երբ լուսացաւ, քահանայապետներն ու ժողովրդի ծերերը խորհուրդ արին Յիսուսի մասին, որ նըրան սպանեն, թէները կապկապած առան, գնացին և և յանձնեցին պոնտացիք։ Պեղատոս դատաւորի ձեռքը

Երբ մատոնիչ Յուդան տեսաւ, որ Յիսուսին զուրտեղը մահապարտ յայտարարեցին, զղաց իրա արարքի վրայ, ստացած արծաթը տարաւ քահանայապետների ու ժողովրդի ծերերի մօտ և ասեց. «Ես մեղանչել եմ, որովհետեւ մահի մատոնեցի մի անմեղ արիւն»։ Նրանք պատասխանեցին, «մեզ ի՞նչ փոյթ, այդ քո գործն է»։ Յուդան արծաթը զցեց տաճարի մէջ և դուրս եկաւ, գնաց ու խեղուեց։ Իսկ քահանայապետներն արծաթը վերցնելով ասին. «արժան չէ, որ այդ փողը ընծայ ընդունենք, որովհետեւ արիւնի զին է»։ Իրանց մէջ խորհուրդ անելով որոշեցին այդ փողով գնել Բրուտի ազարակը օտարականներին թաղելու համար»։

(Մատթ. ԻԵ. 1—7)

Յուդան և Պեղատոսի նման Յիսուսին ընդունել էր իբրև Մեսիա և այդ հաւատով նրան հետեւ. Վերջը հիասթափուեց իրա ակնկալութեան մէջ, դառնացած սրտով կամեցաւ վրէժ հանել Յիսուսից թէ ինչու իրան խարել է։ Բայց զայրոյթն անցնելուց ետ սառ դատողութիւնը ցոյց տուեց, որ իրա կազմած կարծիքը սխալ է եղել, որ վարդապետը մի ազնիւ ու ընտիր հոգի է, որին չի կարողացել հասկանալ։ Խիզը զարթելով սկսեց նրան տանջել, սև արարքը դատապարտել, և սրտի հանգիստը խլել։ Նա չըգիտէր որ աստուածային սէրը կըների զղացող յանցաւորին, ընկաւ յուսահատութեան մէջ ու խղճի խայթից ազատուելու համար խեղդուեց։

Ա. մ. փոփոմ. Պեղատոսը Յիսուսին ի՞նչ էր էրեւակայում ի՞նչ էր սպասում նրանից, ինչից ստիպուած ուրացաւ իրա

վարդապետին, թոյց վերջն ինչն լաց եղաւ. Յիսուսի վերաբերմամբ Յուդան ի՞նչ էր հուատացած. Ինչից դրդուած մատնեց իրա վարդապետին. Զ արոյրն անցնելուց ետ ի՞նչ զգաց. Զզջալուց ետ ել ինչն էր խեղդուում. Յուդային պիտի կարեկցէլ թէ ոչ.

Համեմատ, համար կարդալ Մատթ, ԻԶ. 69—75. Ղուկ, ԻԲ, 55—62 Յով. ԺԸ. 26—27.

59. ՅիՍՈՒԻՍ ԵՒ ՊԻՂԱՏՈՍ

Ա. Յիսուս հովմէական դատաւորի առաջ։ «Առաւօտն խկոյն քահանայապետները խորհուրդ անելով ծերերի, դպիրների և բոլոր ատենականների հետ Յիսուսին կապկապած տարան և Պիղատոսի ձեռը տըւին։ Սա հարցրեց. «զո՞ւ ես հրէից թագաւորը»։ Յիսուս պատասխանեց. «այդ դու ես ասում»։ Քահանայապետները սաստիկ չարախօսում էին նրա վրայ, բայց նա ոչ մի պատասխան չէր տալիս. Պիղատոսը կրկին հարցրեց նրան. «ի՞նչո՞ւ ոչ մի պատասխան չես տալիս, տես թեզ վրայ ի՞նչքան ամբաստանութիւններ են դնում»։ Դրանից յետոյ էլ Յիսուս ոչ մի պատասխան չըտուեց, որի վրայ Պիղատոսը շատ զարմացաւ։

(Մարկ. ԺԵ. 1—5)

Հերովդէս մեծի յաջորդն էր Արքեղայոսը. հոռմայեցիք դրան տարագրելուց ետ Հրէսաստանը կառավարում էին դատաւորի միջոցով, որ նստում էր Կեսարիա և միայն տօների ժամանակ գալիս Երուսալէմ։ Այս անգամ դատաւորը պոնտացիք Պիղատոսն էր, որի առջև էլ իրան չէր պաշտպանում Յիսուս, որովհետեւ համոզուած էր թէ հոռմայեցի պաշտօնեան հետամուտ չի ճշմարտութիւն փնտրելուն, երբ Մինեգրիսի անդամներն իրան մահն են պահանջում. Աւելի շուտ կտտարելու էր ժողովրդի առաջնորդների պահանջը, քան թէ տեղիք տալու, որ մի գալիքացի քարոզչի պատ-

ճառով իրանից բողոքեն: Յիսուս դրա համար գերադասում
էր լուս մասը, քան թէ զուր տեղ խօսել:

Բ. «իղատոսն ու ժողովուրդը. «Ամեն տօնի ժամանակ
Պիղատոսն արձակում էր մի կալանաւոր, որի համար
հրէաները խնդրում էին: Այդ միջոցին կալանաւո-
րուած էր Բարաբրա անունով մէկը խոռվարաների
հետ, որոնք խոռվութիւն անելիս մարդ էին սպանել:
Ամբոխը բարձրածայն սկսեց աղաղակել և սովորա-
կանի համաձայն խնդրել, որ իրանց համար արձակի
Բարաբրային: Պիղատ ոսը նրանց պատասխանեց և ա-
սեց. «գուցէ կամենում էր, որ ձեզ համար հրէից
թագաւորին ազատ թողնեմ»: Նա գիտէր, որ քահա-
նայապետները նախանձից են մատնել Յիսուսին, և
նրանք են ամբոխին համոզել, որ Բարաբրայի արձա-
կումը խնդրի: Ուստի Պիղատոսը դարձեալ խօսելով
հարցրեց. «հասլա ինչպէս կըկամենաք, որ ես վա-
րուեմ հրէից արքայի հետ»: Քահանայապետների դըրդ-
մամբ գրգռուած ամբոխը գարձեալ աղաղակեց. «խա-
չել տուր նրան»: Պիղատոսը հարցրեց. «մնչ չարու-
թիւն է գործել, որ խաչել տամ որան»: Խոնուած
ամբոխը աւելի բարձր աղաղակում էր ու տում.
«լաչ բարձրացրու զրան»: Պիղատոսը կամենալով
ամբոխի սրտով գնալ, ազատ թողեց Բարաբրային,
խոկ Յիսուսին զանահարելով թոյլ տուեց, որ տանեն
խաչ բարձրացնեն»: (Մարկ. ֆե. 6—15)

Գալիքայից ու այլ տեղերից եկած ուխտաւոր ժողո-
վուրդը, որ երուսաղէմ մտնելիս Յիսուսին ովաննամ էր
կանչում, տեղաւորուած էր քաղաքի շրջակայրում: Վազ ա-
ռաւօտ, երբ Յիսուսի գլխին դատաստան էրն կտրում, գեռ
ուխտաւոր ժողովուրդը քաղաք չէր եկել: Քահանաներն ու
փարիսեցիները ժողովիլ էին բուն երուսաղէմացի ամբոխին,

նրան սրել կատաղեցրել էին Յիսուսի դէմ, որ նա գաւա-
ռից նկել է ու մեր ծէսերը, հնաւանդ սովորութիւնները
ծաղրում, անարգում: Ամբոխն իմանալով, որ նազովեցին
իսրայէլի Աստծուն ու տաճարին թշնամի է ու հոռմայեցոց
բարեկամ, բարձր գոռալով խնդրում էր Պիղատոսից, որ
նրան խաչել տայ:

Գ. Մահապարտի վիճակը. «Զինուորները Յիսուս
սին տարան ներսը, գաւթի մէջ, որտեղ հրապարակն
էր, և ամբողջ գնդին կանգնեցրին: Յիսուսին հազըր-
ըին կարմիր ծիրանի, գլխին գրին փշերից հիւսած
պսակ և սկսան նրա առջե գլուխ խոնարհեցնել ու
ասել. «ողջոյն բեկ, հրէից թագաւոր»: Ապա եղեգով
ծեծում էին նրա գլուխը, թքում էին երևսին և ծաղ-
րելու դիտաւորութեամբ ծունը զնում նրա առջեց
երբ ծեծելին ու ծանակելը վերջացրին, հանեցին
վրայից քղամիտն ու ծիրանին, հազըրին իրա հան-
դերձները և գուրս բերին, որ տանեն խաչելու»:

(Մարկ. ֆե. 16—20)

Սովորաբար մահապարտի հետ այժմ էլ շատ տեղերում
տմարդի մն վարեւեմ) իրեն մարդկային իրաւունքներից
զրկուածի: Զինուորները Յիսուսին ծաղրելու համար մի ե-
ղած անցը էին կրկնում: Ժամանակով եղիպատացիք մի մար-
դու զարդարում էին թագաւորի ծիրանիով, ձեռը պապի-
րուսի ձող տալիս, առջել չըքում ու ծաղրելով կանչում:
«հրէից թագաւոր, հրէից թագաւոր»: Այդ բանը պատահել
էր Աղէքսանդրիայի միջով անցնող Ազրիպայի հետ, այժմ
հոռմայեցիք կրկնում էին հրէայ Յիսուսի գլխին:

Ամփոփում. Հերովդես Մեծի յաջորդն նվ եղաւ. Արքեղայոսից
եւ Հրեաստանը ո՞վքեր էին կառ. ավարում, Յիսուս ինչո՞ւ իրան
չէր պաշտպանում Պիղատոսի առաջ, Յիսուսի խաջում պահան-
ջողը ո՞ր ծողովարդն էր: Փար խեցիք ու քահանայապետնե-
րը ամբոխին ի՞նչ էին հաւատ ացրել. Յիսուսին դատս պար-
տելիս Պիղատոսն ի՞նչ դիրք ը ուեց: Ի՞նչ առիրով էին ծաղ-
րում Յիսուսին:

Համեմատ. համար կարդալ Մատթ. իշ. 11—30, Ղուկ.
Իֆ. 1—5, 17—25, Յովհ. Ժ. 28—40. Ժ. 1—16.

60. ՅԻՍՈՒԽԾԻ ԽԱԶԵԼՈՒԹԻՒՆԸ

Ա. Դէպի Գողգոթա. «Երբ զինուորները Յիսուս
ախն տանում էին գէպի կառափնատեղը, տեսան մէկ
մարդու, Սիմօն Կիւրենացի անունով, հանդից վերա-
դառնալիս, բռնեցին, խաչը դրին նրա շալակին, որ
Յիսուսի ետևից տանի: Յիսուսի ետևից գնում էին
քաղմաթիւ մարդիկ ու կանայք, լաց ու կոծով սուտ
էին անում նրա համար: Յիսուս դարձաւ ու նրանց
ասեց. «Երուսաղէմի դուստրներ, իմ վրայ մի լաք,
այլ սգացէք ձեզ վրայ ու ձեր որդիկերանց վրայ: Ո-
րովհետև կըգան օրեր, երբ երանի կըտան ամունե-
րին, չըրեր որովայններին և այն ստինքներին, որ
մանուկ չեն կերակրել: Այն ժամանակ կասեն լեռնե-
ներին՝ ընկէք մեր վրայ, բլուրներ՝ մեզ ծածկեցէք
ձեր տակ: Որովհետև եթէ դալար փայտի հետ այս-
պէս են վարւում, ինչպէս պիտի վարուեն չորի հետո:
Քերին ուրիշ երկու չարազործներ ևս, որ նրա հետ
խաչեն»:

(Ղուկ. Իֆ. 26—32)

Յիսուսի թշնամիները—հակառակորդները ցնծութեան
մէջ էին, որ խաչել տալով նրան իրանց հեղինակութիւնը
կըփրկեն վտանգից: Յիսուսի անարդ մահը նրանք համա-
րում էին արդար հատուցում իսրայէլի Աստծու կողմից:
Այդ էր պատճառը, որ երբ ուժասպառ Յիսուսը ծանր խա-
չը կըելիս ընկնում էր, հակառակորդները կարեկցութեան
նշոյլ չէին երեացնում: Յիսուս իրա վիշտը ու տա-
ռապանքը մոռացած յորդուում էր Երուսաղէմի սգաւոր
կանանց, որ իրանց ապագայ սերունդների գլուխը լան, որ-
պէս զի նրանք էլ իրան չարչարոզների պէս անտարբեր,
խաւարամիտ հոգի չունենան:

Բ. Յիսուս եւ իրա թշնամիներ: «Երբ հասան
գողգոթա կոչուած տեղը, որ կառափնատեղն էր, նը-
րան տուին գինի լեղու հետ խառնած, երբ համը տե-
սաւ, չէր կամենում խմել: Զինուորները նրան խաչ
բարձրացրին, զիճակ գցելով իրանց մէջ բաժանեցին
նրա հագուստի կտորները, որպէս զի կատարուի մար
գարէի խօսքը. «Հանգերձներս բաժանեցին իրանց մէջ
և պատմութանիս վրայ վիճակ գցեցին»: Զինուորները
խաչից մօտ նստած հսկում էին նրան, նրա գլխավե-
րկ կպցրած էր մի տախտակ, որի վրայ գրած էր նը-
րա վնասակարութիւնը, թէ սա է Յիսուսը, հրէից
թագաւորը: Նրա հետ խաչեցին երկու աւագակների
ևս, մէկին աջ, միւսին ձախ կողմից: Ովքեր անցնում
էին, հայհոյում էին նրան և զլուխները շարժելով ա-
սում. «Վահ, զաւ, որ տաճարը քանդում էիր ու երեք
օրում նորից շինում, ազատիր քեզ, եթէ Աստծու որ-
դի ես և իջիր այդ խաչից»: Քահանայապետները զը-
պիրների և ծերերի հետ նոյնպէս ծաղրում էին և ա-
սում. «ուրիշներին ազատեց, իրան ազատել չի կա-
րողանում: Եթէ իսրայէլի թագաւորն է, թող այժմ
իջնի խաչից և մենք հաւատանք դրան: Նրա յոյսը Աստ-
ծու վրայ էր, թող այժմ փրկի դրան, եթէ դրան սի-
րում է, չէ որ ասում էր թէ ես Աստծու որդի եմ»:
Յիսուս իրան հայհոյողների համար Աստծուն խընդ-
րում էր. «Հայր, ներիր նրանց, որովհետև չըգիտեն,
թէ ի՞նչ են անում»:

(Մատթ. իշ. 33—43. Ղուկ. Իֆ. 34)

Զարմանալի է Յիսուսի անձնուիրութիւնը և մեծահո-
գութիւնը. խաչի վրայ անգամ իրա մասին չէր ցաւում, այլ
ինչպէս միշտ, միայն տառապող ժողովրդի մասին: Ամենին

չեր վշտանում քահանայապետների, փարիսեցիների ծաղրից, ընդհակառակ նրանց կարեկցում էր, որովհետև նրանք իրանց արարքով ցոյց էին տալիս ողորմելի տղիտութիւնը և բարոյական կոպտութիւնը:

Դ. Աւազակները: «Կախուած չարագործներից մինը հայիոյում էր Յիսուսին և ասում: «Հէ որ դու ես Քը-քիտուոր, փրկիր քեզ էլ, մեզ էլ»: Միւս ընկերը նը-րան սաստելով պատասխանեց. «Մի՛թէ չես վախենում Աստծուց, չէ որ դու էլ նոյն պատժի մէջն ես: Մենք գոնէ մեր գործած յանցանքների հատուցումն ենք կը-րում, իսկ սա ոչ մի վատ բան չի արել»: Յետոյ դարձաւ Յիսուսին ասեց. «Ճէր, յիշիր ինձ, երբ գա-լու կըլինես քո արքայութիւնով: Յիսուս ասեց նրան. «Ճշմարիտ եմ ասում քեզ, այսօր ինձ հետ կըլինես դրախտում»: (Ղուկ. իԳ. 39—43)

Յիսուսի հոգին անհուն տանջանքների միջոցին ճաշա-կեց մի քաղցր բերկրանք, մի անասելի ցնծութիւն: Յիսուս իրա հեղութիւնով աւազակներից մէկի սրտում առաջ էր բե-րել զղջում: Մինչև այդ օրը նա ապրել էր անազնիւ ճանա-պարհով, նրա հոգու աչքը մնացել էր փակ վեհի, բարձրի համար: Բայց երբ Յիսուսին տեսաւ իրա թշնամիների հա-մար աղօթելիս, նա զարմացաւ, նրա փակ հոգին բացուց, խաւար սիրտը աստուածային կեանքի շողով լուսաւորուց, և այդ շողը նրա սիրտը մտաւ փրկչի դէմքից:

Ե. Մայր եւ որդի: «Խաչին մօտիկ կանգնած էին Յիսուսի մայր Մարիամը, նրա մօր քոյրը կղէովափի Մարիամը և մազթաղենացի Մարիամը: Յիսուս երբ տեսաւ մօրը և իրա սիրելի աշակերտին, որ նրա մօտ կանգնած էր, դիմեց մօրը. «այ կին, ահա քո որդին: Ազա դարձաւ դէպի աշակերտը և ասեց. «Ահա քո մայրը»: Այդ ժամանակից սկսած աշակերտ Յովհան-

նէսը Մարիամին վերցրեց պահեց իրա մօտ»:

(Յովհ. ԺԹ. 25—27)

Յիսուս մի ժամանակ իրա ազգականներին մերժելով ասել էր. «Նա է իմ մայրը, իմ եղբայրը, ով աշխատում է երկնքի արքայութեան համար»: Այսօր իրա մահուան ժամին հոգաց նաև իրա մօր համար յանձնելով նրան աշակերտ Յովհաննէսի խնամքին: Վարդապետի կողմից Յովհաննէսին առաւելութիւն տալը զուր չէր, երախտագէտ աշակերտն ի-րա ապագայ գործունէութեամբ ապացուցեց, որ միանգա-մայն իւրացը էր Յիսուսի զգալու մտածելու և զործելու ձեւերը:

Ե. Զարշարանքի զագածնակէտին. «Յերեկուայ 6 ժամից (այժմեան հաշուով 12 ժ.) խաւար պատեց քոլոր երկրին երեք ժամու չափ: 9 ժամին Յիսուս բարձրածայն գոչեց. «Աստուած իմ, Աստուած իմ, ինչու թողիր ինձ»: Այստեղ կանգնողներից ոմանք լը սելով այդ ասում էին. «Եղիա մարգարէին է կանչում դա»: Նրանցից մէկն շտապով վերցրեց, քացախի մէջ սպունգը թաթախեց, եղէզի ծայրին ամրացնելով մօ-տեցրեց նրա բերանին, որ խմի: Միւսներն ասում էին. «Ապասէք, տեսնենք, արդեօք եղիան գալի՞ս է օգ-նելու»: Երբ Յիսուս լեզուով քացախի համն առաւ, ասեց. «ամեն ինչ կատարուած է». յետոյ բարձրա-ծայն աղազակելով ասեց. «Հայր, քո ձեռն եմ աւան-դում իմ հոգին»: Այս ասելով շունչը փչեց: Այդ մի-ջոցին տաճարի վարագոյրը վերեկից ներքե կէս եղաւ, գետինը շարժուեց, քարերը պատառուեցին, իսկ հա-րիւրապետն ու նրա հետի զինուորները, որոնք Յի-սուսի վրայ հսկում էին, տեսնելով շարժումն ու բո-գոր եղածները, շատ վախեցին ու ասին. «Արդարե, աս Աստծու որդի էր»: Փողոված բազմութիւնը, որ

տեսել էր այս ամենը, կուրծքը ծեծելով վերադառնում էր: Հեռու կանգնած ականատես էին այս ամենին նրա ծանօթները, նրանց մէջ կային և շատ կանալք, որ եկել էին Գալիլիայից»:

(Մատթ. իէ. 45, 49, 51, 54—55, Ղուկ. իդ. 48)

Խաչելու երկու ձեզ կար, նախ մահապարտի ոտներն ու ձեռները տարածած ամրացնում էին թոկերով խաչի վըրայ, որ սովամահ լինելով շունչը վիչք: Սա անազորոյն տեսակն էր, տանջանքը տեսում էր շարաթներով, երկրորդ՝ մահապարտի ոտներն ու ձեռները բնեռում էին խաչի վրայ, մարմինն արիւնքամուելով մի քանի ժամից ետ անշնչանում էր: Յիսուսին խաչել էին երկրորդ տեսակով, Խաչեալի ցաւերը ու տանջանքները մեղմացնելու համար սովորաբար նրան խըմացնում էին թմրեցնող հեղուկ, որ պատրաստում էին մեծամեծների կանայք: Յիսուս հրաժարուեց այդ խմիչքն ընդունել, կամենալով մինչեւ վերջին վայրկեանը մնալ գիտակից իրա ցաւին ու չարչարանքին: Նրա միակ ապաւէնը հայր Աստուածն էր, որից օգնութիւն էր հայցում աղօթելով:

Ա մ փ ո փ ս ս մ: Խաչն ինքո՞ւ Յիսուսի շալակն իին տընել: Հակառակորդները նրա մահն ինչ էին համարում: Խաչելու քանի տեսակը կար: Թշնամիները ինչ էին անում խաչի մօտ: Խացուած Յիսուսն ինչ հոգսերով էր պաշարուած: Տանջանքի միջոցին ի՞նչ անակենկալ բերկրանք ճաշակեց նրա հոգին: Յիսուսի ո՞ր արարքը դարձի բերեց աւազակին: Ո՞ւմ յանձնեց մօրը խնամելու հոգսը: Ինչո՞ւ նրաժարուեց բմբեցնող խմիչքն ընդունելուց: Նրա յոյսը ո՞ւմ վրայ էր:

Համեմատ. համար կարդալ Մարկ. ԺԵ. 20—32, Ղուկ. իդ. 44—49 Յով. ԺԹ. 17—24, 28—30

61. ՅԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄԸ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Ա, Թաղումը. «Երբ որ մթնեց, եկաւ մի մեծատուն մարդ, Արիմաթիա քաղաքից, Յովսէփ անունով, որ եղած էր Յիսուսի աշակերտը: Սա ներկայացաւ

Պիղատոսին ու խնդրեց Յիսուսի մարմինը: Պիղատոսը հրաման արեց, որ մարմինը տան նրան: Յովսէփը մարմինը խաչից վերցնելով, փաթաթեց մաքուր կտաւներով և տեղաւորեց նոր գերեզմանում, որ փորուած էր վէմի մէջ և գերեզմանի դռանը իրը կափարիչ գլորեց մի քար ու գնաց»: (Մատ. իէ. 57—60)

Հակառակորդներն ի հարկէ կը հանգստանային տեսնելով Յիսուսի հոգին աւանդելը: Կարդապետը մեռած էր և աշակերտներն ահից ցաք ու ցրիւ եղած: Սակայն քահանայապետները զուր էին կարծում, թէ Յիսուսի քարոզած բանն էլ մեռաւ. ընդհակառակ, նրա բռնի մահը աւելի վասեց ու բորբոքեց թմրած սրտերը, որոնց մէջ պիտի յարութիւնառնէր զարմանալի քարոզչի պատկերը: Այդպիսի սրտերից մին էր արիմաթեցի Յովսէփը, որ իրա բարոյական պարտը համարեց Յիսուսի մարմինը խաչից վերցնելն ու թագելը:

Բ. Իւղարեր կանայք. «Կիւրակի ասաւոտ վաղ վաղ գերեզման եկան Մարիամ մազթաղինացին, Յով. հաննան, Յակոբի Մարիամը և ուրիշ կանայք և հետները բերին իւղ, խունկ, տեսան որ գերեզմանի բերանին գրած սալքարը հեռու է գլորած, ներս մըտան և չլցուած Յիսուսի մարմինը. Մինչ նրանք այդ պատճառով տրտմութեան մէջ էին, ահա լուսեղէն հագուստով երկու մարդիկ երևացին նրանց: Երբ նրանց տեսքից սարսափեցին և երեսները խոնարհեցրին գէպի երկիր, լուսափայլ մարդիկ ասին. «Ի՞նչու էք կենդանին որոնում մեռելների մէջ, նա այստեղ չէ, յարութիւն առաւ: Յիշեցէք թէ ի՞նչպէս խօսեց ձեզ հետ, երբ Գալիլիա էր. Նա ասում էր՝ մարդու որդին պիտի մատնուի մեղաւոր մարդկանց ձեռը, նըրան խաչ կըբարձրացնեն, բայց երեք օրից ետ յա-

ըութիւն կառնիս։ Կանայք յիշեցին այդ խօսքերը, դարձան ու պատմեցին այս ամենը 11 աշակերտներին և շատ ուրիշների։ Նրանց խօսքերը շաղփաղփութիւն երևացին և նրանց չը հաւատացին»։

(Ղուկ. ի՞՞. 1—11)

Յիսուսին հետևողների մէջ կային կանայք ևս, որոնց մասին արդէն խօսուած է. մինչ առաքեալները վախենում էին թաքստի տեղից դուրս գալ և քաղաքում ազատ շրջել, այդ կանայքն առաջինն եղան, որ ամենից շուտ յիշեցին Յիսուսին, իւղ և խունկ վերցրած դնացին այց նրա գերեզմանին, իրանց երախտագիտութիւնը ցոյց տալու համար։ Առաքեալները և ուրիշները առաջին անգամ Մարիամ մազթաղինացու բերանից լսեցին թէ Յիսուս յարութիւն է առել։

Գ. Թիտրոսին եւ միւսներին հրեալը. «Պեարոսն ինքը վերկացաւ, գնաց գերեզման, նայեց տեսաւ այնտեղ մնացած լոկ կտաւները, վերադարձաւ մտքի մէջ ղարմանալով եղելութեան վրայ. — Երևաց կեփային (Պեարոսին) և յետոյ 12 առաքեալներին, ապա երևաց 500 հոգուց աւելի հաւատացեալներին; որոնց շատերը գեռ այժմ կենդանի են. ոմանք մեռել են։ Եւ յետոյ երևաց Յակոբին, ապա բոլոր առաքեալներին։ Ամենից վերջը, ասում է Պողոս, երեւաց ինձ պէս մի անարգի, որովհետեւ ես առաքեալների մէջ տրուան եմ, չեմ էլ արժանի առաքեալ կոչուելու, որովհետեւ հալածեցի Աստծու եկեղեցին, Քրիստոսի հաւատացեալներին։»

(Ղուկ. ի՞՞. 12 Ա. Կորնթ. ԺԵ. 5—9)

Ճիշտ է աշակերտների մի մասը հիասթափուել էր Յիսուսի վերաբերժամբ, որ խաչուեց ու մեռաւ, մի մասն էլ փախել էր զէս ու զէն, բայց որովհետեւ հոգով կապուած էին նրա հետ, ծանօթ տեղերը յոջելիս մի առ մի յիշում էին նրա խօսքերը, մանաւանդ վերջին օրերի զրոյցները։ Սիրած վարդապետի պատկերը հետզետէ կենդանանում էր նրանց մտքի մէջ։ Ամենից առաջ Յիսուս երեաց Պեարոսին, ապա միւսներին։ Առաքեալները և միւս հաւատացեալները օր օրի վրայ այն հաստատ հաւատը կաղմեցին, որ Յիսուս ոչ միայն կենդանի է, այլև իրանց հետ է մինչև աշխարհի վերջը։ Հէնց այս հաւատն էր, որ դարձաւ հիմնաքարը քրիստոնէութեան։

Ա. Ա մ փ ո փ ո ւ մ. Քահանայապետների ու փարիսեցիների զանքն ի՞նչ էր։ Յիսուսի բննի մայց թմրած ոսպիների վրայ ի՞նչ պէս ներզործեց. Ո՞վ ամփակեց Յիսուսի. մարմինը. Ամենից առաջ ո՞վէր այցելեցին գերեզմանը։ Իւղաբեր կանաց ի՞նչ ոտին հրելուակները։ Աշակերտները վարդապետի հնջերն իրն յիշում, ի՞նչն էր կենացնաւում նրանց նազու մէջ։ Հետզինեւու նետեսողներն ինչի՞ մէջ համազուեցին։

Համեմատ. համար կարդալ Մատթ. Ի. 62—66, Ի. 1—10, Մարկ. Ժ. 42—46, Ժ. 1—11, Ղուկ. ի՞՞. 50—54, Յով. Ժ. 31, 38—42, Ի. 1—18.

62. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՇՆՉՈՒԽ, ԱՎՐՈՒԽ ԵՆ ԻՐԱՆՑ ՎԱՐԴԱՎԱՏՈՎ

Ա. Տրտում աշակերտները. «Աշակերտներից երկուսը միենոյն օրը գնում էին մի գիւղ, որ երուսաղէմից հեռու էր 160 ասպարիզով և կոչւում էր իմմաւուս։ Իրար հետ զրոյց էին անում անցած դէպքերի վրայ. Նրանց խօսելու և վիճելու միջոցին Յիսուս մօտեցաւ նրանց և հետները գնում էր։ Նըրանց աչքերը այնքան բռնուած էին, որ չէին կարողանում ճանաչել նրան։ Դարձաւ նրանց հարցրեց. Շինչու համար էր իրար հետ վիճում և ինչու էր այդպէս տրտմած։ Նրանցից նա, որի անունը կղէովպատէր, պատասխանեց. «Երուսաղէմում միայն դու ես, որ տեղեակ չես, թէ ի՞նչ է պատահել այնտեղ այս քանի օրու։ Յիսուս հարցրեց. «Ի՞նչ է պատահելր։ Նրանք ասին. Ամենք խօսում ենք այն Յիսուս նազովեցու մասին, որ մարգարէ մարդ էր, գործով և խօսքով հզօր էր Աստծու և բոլոր ժողովրդի առաջ։ Մեր քահանայապետները և իշխանները մահի գատապարտեցին և խաչ հանեցին։ Մենք այն յոյսն ունէինք, թէ նա է, որ պիտի փրկէ Խարայէլին բայց չը նայած այս ամենին, ահա արդէն երրորդ օրն է, որ այդ բանը պատահեց։ Սակայն մեր մօտի կանանցից ոմանք մեզ զարմացրին, նրանք ասին, որ վազ առաւտեան զերեզման են գնացել և Յիսուսի մարմինն այնտեղ չեն գտել։ Վերադարձան ամին, որ նրանք

հրեշտակների պատկերներ ևս տեսել են, որոնք յայունել են թէ Յիսուս կենդանի է։ Մեզանից ոմանք վագեցին գերեզման, գտան այնպէս, ինչպէս կանայք ասել էին, բայց նրան շըտեսան։ (Ղուկ. Ի՞. 13—24)

Յիսուսի մահից ետ, սարսափի սաստկութիւնն անցել էր, փախած, զանազան տեղերում թափուած աշակերտները կարողանում էին խմբուիլ, տպաւորութիւններն իրար հազորդել։ Յափշտակուած վիճակում խօսելիս կամ վիճելիս իրանց աչքերի առաջ տեսնում էին Յիսուսի պատկերը։ Որքան երկիւղն ու ճնշումը վիրանում էին աշակերտների սրտներից, այնքան պարզ ու կենդանի էր դառնում սիրած վարդապետի պատկերը նրանց մտքի, աչքի առաջ։ Սյս երկոյթները աւելի կրկնում էին այն ըոպէներին, երբ մրտզով վերադառնում էին այն ժամանակներին, երբ Յիսուս ապրում, շնչում էր իրանց հետ միասին։

Բ. Յարուցնալը։ «Ուղեկիցն ասեց աշակերտներին. «ճվ անմիտներ, ինչնու այդքան հեղգասիրու էր մարդարէների գրուածներին հաւատալու մէջ։ Զէ որ նրանց պէս Քրիստոս ևս պիտի չարչարուէր և մտնէր իրա փառքի մէջ»։ Եւ սկսած Մովսէսից և միւս մարդարէներից, ինչ որ իրա մասին գրքերի մէջ գրուած էր, բացատրում էր նրանց։ Երբ մօտեցան այն գիւղին ուր գնում էին, ուղեկիցը պատճառ բերեց թէ ինքն աւելի հեռու տեղ ունի գնալու։ Աշակերտները նրան ստիպեցին և ասին. «մեզ մօտ հանգստացիր, օրն արդէն միներու վրայ է»։ Յիսուս մտաւ այնտեղ, նրանց հետ հանգստանալու։ Երբ նրանց հետ ընթրիփի նստեց, հայն առաւ, օրհնեց, կարեց, նրանց տուեց։ Նրանց աշքերը բացուեցին, հէնց որ ճանաչեցին, նա աներկոյթ եղաւ նրանց աչքից։ Աշակերտներն ասին իրար. «զուր չէին մեր սրտերը ճմլըւում մեր մէջ, երբ ճանապարհ գալիս խօսում էր մեր հետ և մարդարէների գրուածները մեկնում»։ Խոկոյն վեր կացան և վերադառն երուսաղէմ, գտան 11 աշակերտների հետ և ուրիշներին միատեղ ժողովուած։ Սրանք յայտնեցին այս երկու սին. «արդարե, Տէրը յարութիւն առաւ և երկաց Սի-

մօնին։ Եւ նրանք էլ պատմեցին ինչ որ ճանապարհին էին պատահել էր և թէ ինչպէս նրան ճանաչեցին հաց կտրելու ժամանակ։ (Ղուկ. Ի՞. 25—35)

Աշակերտները ճանապարհ գնալիս, տիսուր սրտով Յիսուսին յիշելիս ոչ միայն սիրելի վարդապետի պատկերն էր կենդանանում նրանց յիշողութեան մէջ, այլ և նրա բացատրութիւնները մարդարէների գրածների մասին, խորհրդաւոր ընթրիփի միջոցին արտասանած պատուէրները ևն։ Աշակերտները լիովին գգում էին Յիսուսի այն խօսքերի ճշշմարտութիւնը, թէ ուր որ երկու կամ երեք հոգի ժողովուած լինէք իմ անունով. իմացէք, «որ ձեր մէջն եմ. Ամբապնդւած էր նրանց մէջ այն գիտակցութիւնը, որ Յիսուս կենդանի է և իրանց հետն է. Գլխաւորն այդ հաւատոն էր, միայն դրանով զինուած կարող էին աշակերտները վարդապետի տոեղծած գործը շարունակել—Աստծու արքայութեան համար աշխատե՛»։

Ա. մ. Փ. ո. Փ. ո. մ. Առաջին սարսափն անցնելուց ետ աշակերտներն ի՞նչ էին անում. Վարդապետի ի՞նչն էր կենդանանում նրանց մէջ. նեղի՞ մէջ էին նրանց համուած։

63. Յիսուսի Վերջին ՊԱՏՈՒԷՐՆ Եև Երկինք ՀԱՄԲԱՌՆԱԼԸ

Ա. Գնացէք, ուսուցէք բոլոր հեթանոս ժողովուրդներին։ «Ճամն ու մէկ աշակերտները գնացին Գալիլիա և բարձրացան այն լեառը, ուր ժամադիր էր եղել նրանց Յիսուս։ Աշակերտները նրան տեսնելուն պէս ընկան երեսի վրայ, երկրպագեցին, և մի քանիսը կտսկածի մէջ ընկան (երկուացան)։ Յիսուս մօտեցաւ նրանց, խօսեց հետները և ասեց. «ինձ տուած է ամեն տեսակ իշխանութիւն երկնքում և երկրի վրայ։ Ինչպէս հայրն ուղարկեց ինձ, նոյնպէս ես ուղարկում եմ ձեզ, գնացէք այսուհետև ուսուցէք բոլոր հեթանոս ժողովուրդներին, մկրտեցէք նրանց Հօր, Արդու և սուրբ Հոգու անունով և ուսուցէք նրանց պահպանելու այն ամենը, ինչ որ ձեզ պատուիրել եմ։ Եւ ահա ես ձեզ հետ եմ ամեն օր մինչև աշխարհի վերջը»։ (Մատթ. Ը. 16—20)

Յիսուս իրա հրապարակական գործունէութեան ժամանակամիջոցում անձնուէր սիրով ու կեանքի օրինակով բռ-

լորովին վաստակել էր աշակերտների սրտերը և նրանց դարձ-
րել երկնքի արքայութեան մշակներ, Անհրաժեշտ էր վեր-
ջին պատուերը տալ, որ նրանք շարունակէին իրանց պար-
տականութիւնը կատարել: Աշակերտներին, որոնք ոգևորուած
էին անմոռանալի վարդապետի յիշատակով, սարսափելի չէր
թւում պարտականութեան ծանրութիւնը, լիարոյս էին, որ
կարող կը ինսեն կատարել վարդապետի պատուերը, որ առա-
ջին անգամ իրանց քարոզութեան ուղարկելիս ասում էր,
«Դուք չեք, որ պիտի խօսէք, այլ երկնաւոր Հօր հոգին, որ
ձեր մէջն է»:

Բ. Երկինք համբառնայլը: «Յիսուս աշակերտնե-
րին տարաւ Զիթենեաց լեառը մինչեւ Բեթանիա և
ձեռները նրանց գլխին տարածելով օրհնեց նրանց:
Դրանից ետ վերադարձաւ երկինք, մի ամպ ծածկեց
նրան աշակերտների աշքից: Մինչդեռ նրանք անթարթ
աշքերով նայում էին նրա համբառնալու վրայ, ահա
երևացին երկու սպիտակազգեստ մարդիկ և ասին.
«Գալիքիացի մարդիկ, ի՞նչ էր աչքներդ դէպ երկինք
զցել: Այս Յիսուսը, ինչպէս ձեզանից բաժանուելով
վերացաւ երկինք, այնպէս էլ կը գայ»: Նրանք
երկրպագեցին և մեծ ուրախութիւնով դարձան երու-
սադէմ. միշտ հանապազ տաճարի մէջ էին, փառաբա-
նում էին Աստծուն և օրհնում»:

Ինչպէս Յիսուս պատուիրել էր, աշակերտներն սպասե-
ցին երուսաղէմում մինչև Պենտէկոստէ տօնի համսելը, որ-
պէս զի աշխարհիս զանազան տեղերից այգտեղ ժողովուող
հրեաներին քարոզեն Աստծու Աւետարանը: Իրեւ փրկչի ըս-
պասաւորներ իրանց սուրբ պարտականութիւնը կատարելու
համար յոյս ունէին կրելիք նեղութիւնների, զրկանքների
փոխարէն իրեւ վարձատրութիւն ստանալ Հայր Աստծու
տան մէջ յաւիտնական օթևաններ.

Ամփոփում, Յիսուս ի՞նչ էր պահանջում աշակերտներից
և փոխարէնն ի՞նչ խօստանում: Ինչո՞ւ էր պատուիրում Ե-
րուսադէմում սպասել: Աշակերտների կատարելիք պարտա-
կանութիւնն ի՞նչ էր, ի՞նչ վարձատրութիւն էին սպասում ի-
րանց ախտանիքի փոխարէն:

Համեմատութեան համար կարդալ Մարկ. ԺԶ, 15—19



ՑԱՆԿ

Էջ

| | |
|---|-----------|
| Նախաբան | 5 |
| 1 Յովհաննէս-վերջին մարդաբէն, 4 հատուած | 7 |
| 2 Յիսուսի մկրտութիւնը, 1 հ. | 11 |
| 3 Յիսուսը նոր արդարութեան քարոզիչ 8 հ. | 12 |
| 4 Կեղծ և ճշմարիտ բարեպաշտութիւն 3 հ. | 18 |
| 5 Այս աշխարհի բարիքների ուղիղ գնահատումը 3 հ. | 22 |
| 6 Յիսուս ժառանգութեան բաժանարար չէ 2 հ. | 25 |
| 7 Խելացի տնտես 1 հատուած | 27 |
| 8 Մեծատունն ու աղքատը 3. | 28 |
| 9 Երկնաբաղաբացոց թիւը և ճանաչելու կերպը 3 հ. | 31 |
| 10 Յիսուսի աշակերտները և նրանց յատկութիւնը 2 հ. | 34 |
| 11 Ո՛վ չէր կարող աշակերտ լինել Յիսուսին 3 հ. | 37 |
| 12 Յիսուս մաքսաւորների մէջ 1 հ. | 39 |
| 13 Փարիսեցու տան խնջորը 3 հ. | 40 |
| 14 Աստուածային փնտրող սէրը 5 հ. | 43 |
| 15 Զըգատել ոչ ոքի 2 հ. | 47 |
| 16 Յիսուսի զիթասրտութիւնը և աշակերտներին քարո- զիկու ուղարկելը 7 հատուած | 49 |
| 17 Ինչո՞ւ Յիսուսի աշակերտները պատ չեն պահում 2 հ | 55 |
| 18 Որդու խնդրուածները երկնաւոր Հօրից Տէրուն, | |
| | աղօթք 9 հ |
| 19 Յիսուս և Յովհաննէս Մկրտիչ 2 հ. | 57 |
| 20 Յիսուսի գործունէութիւնը ծովափ. քաղաք. 3 հ. | 60 |
| 21 Երանութիւններ 10 հ. | 64 |
| 22 Յիսուս և շաբաթ տօնելը 2 հ. | 66 |
| 23 Յիսուս և իրա ազգականները 2 հ. | 72 |
| 24 Ինքնաբերաբար հասնող հունձ 1 հ. | 75 |
| 25 Տեսակ տեսակ վարելահողեր 1 հ. | 76 |
| 26 Առակներ երկնքի արքայութեան մասին 4 հ. | 78 |
| 27 Յովհաննէս Մկրտչի վախճանը 1 հ. | 79 |
| 28 Յիսուս և հինգ հազարին կերտարկելը 2 հ. | 83 |
| 29 Յիսուս և երուսաղէմի փարիսեցիք 3 հ. | 85 |
| 30 Յիսուս և քանանացի կինը 1 հ. | 87 |
| 31 Պետրոսի խոստովանութիւնը 2 հ. | 90 |
| 32 Սուրբ գաղափարին ծառայել. համար ի՞նչ անել 5 հ | 91 |

| | |
|--|-----|
| 33 Քմնի անգամ պիտի ներել 2 հ. | 97 |
| 33 Յիսուս Երուսաղէմի ճանապարհն 2 հ. | 98 |
| 35 Յիսուսի հայեացքը ամուսնութեան մասին 1 հ. | 99 |
| 36 Յիսուս և մանուկներ 1 հ. | 101 |
| 37 Մեծատուն պատահին և առակներ երկնքի արքա՝ յութեան մասին 5 հ. | 102 |
| 38 Աշակերտների վարձառութիւնը 4 հ. | 105 |
| 39 Ոչ թէ խաղաղութիւն, այլ երկպառակութիւն 3 հ. | 109 |
| 40 Այգու մշակներ 2 հ. | 112 |
| 41 Զաքէոս մաքսաւոր 3 հ. | 114 |
| 42 Յիսուսի մուտքը Երուսաղէմ 4 հ. | 116 |
| 43 Յիսուսի վերաբերմունքը դէպի զղացողները 4 հ. | 120 |
| 44 Զօր մշակները և թագաւորի հարսանիքի ճաշը 4 հ. | 123 |
| 45 Մեսիան և հոռմայեցոց իշխանութիւնը 1 հ. | 127 |
| 46 Հանդերձեալ կեանքի մասին 1 հ. | 128 |
| 47 Ամենագլխաւոր պատուիրանը 2 հ. | 130 |
| 48 Ողորմած սամարացի 3 հ. | 131 |
| 49 Գալիլիացոց սպանութիւնը և անպատուղ թզենի 2 հ. | 134 |
| 50 Յիսուսի կշտամբանքը վարիսեցիներին 5 հ. | 135 |
| 51 Այրու լուժաները 1 հ. | 140 |
| 52 Երուսաղէմի տաճարը և մարդու որդու օրը 4 հ. | 141 |
| 53 Ճշմարիտ նախապատ. Տիրոջ օրուայ համար 2 հ. | 144 |
| 54 Յիսուս բոլոտ Սիմօնի տանը 3 հ. | 148 |
| 55 Ոտնալուայ և խորհրդաւոր ընթրիբ 3 հ. | 150 |
| 56 Յիսուս Գեթսեմանի պարտիզում 3 հ. | 153 |
| 57 Յիսուս Մեծատեանի առաջ 2 հ. | 156 |
| 58 Պետրոսի ուրացութիւնը և Յուդայի վախճանը 2 հ. | 158 |
| 59 Յիսուս և Պիղատոս 3 հ. | 161 |
| 60 Յիսուսի խաչելութիւնը 5 հ. | 164 |
| 61 Յիսուսի թաղումը և յարութիւնը 3 հ. | 168 |
| 62 Աշակերտները շնչում, ապրում են իրանց վարդա- պետով 2 հ. | 171 |
| 63 Յիսուսի վերջին պատուէրը և երկինք համբառ- նալ 2 հ. | 174 |

«Ազգային գրադարան



NL0158760

